Ի՞ՆՉ ԱՆԵԼ

գիտագործնական խորհրդաժողով

2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Կնտարես

ԻՆՉ ԱՆԵԼ
2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

գիտագործնական խորհրդաժողով

Վահարեա
Երևան
2019

ՀՏԴ 330.34(479.25):06
ԳՄԴ 65

Հրատարակությունը երաշխավորել է
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գրքի հրատարակումը նախաձեռնել և
տպագրությունը հովանավորել է
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը

Գործընկեր՝ ***ԷԿՈ նոմիկա*** *պարբերական*
Խմբագիր՝ ***Լուսյա Մեհրաբյան***

Ինչ անել 2. Տնտեսական հեղափոխություն. ընկալումը և գործարկումը: Գիտագործնական խորհրդաժողով / Խմբ.՝ Լուսյա Մեհրաբյան: Եր., Անտարես, 2019.– 208 էջ:

Հայ տնտեսագետների հետազոտական և վերլուծական հերթական հոդվածաշարը «Ինչ անել» խորագրի ներքո ներառում է նաև «Ինչպես»-ի որոնումները, որոնք տնտեսական հեղափոխության հաջող ընթացքին աջակցող գիտագործնական առաջարկների և հնարավոր գործողությունների համախումբ են: Ժամանակակից աշխարհում նույնիսկ ամենաբարդ խնդիրների լուծումները գիտության և արտադրության սերտ գործակցություն են պահանջում: Հեղափոխական զարգացումներն առավել սերտացում են ենթադրում: Տնտեսությունը, գործարարությունը նորարարություն են ակնկալում տնտեսությամբ զբաղվող գիտությունից: Ոլորտային գիտության գործնականության պահանջը դրված է նաև տնտեսագիտության առջև: Սույն ժողովածուն երկրորդն է, որ քննարկում է երկուստեք հետաքրքրության արդիական խնդիրները «ինչ անել» հարցի շրջանակում: Համաշխարհային տնտեսության զարգացումների ու ձեռքբերումների ինստիտուցիոնալ լուծումներին է միտված ինչ անելը և ինչպես անելը:

ISBN 978-9939-76-395-8

Անտարես

© ՀԱԳՄ, 2019
© ԵՊՀ տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետ, 2019
© Անտարես, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7
Արսեն Ղազարյան, Հայկ Սարգսյան

ԲԱԺԻՆ 1. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՇՈՒՐՋ

1. Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացման նոր ուղեգծի տեսլականը..... 10
Հայկ Սարգսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2. Տնտեսական հեղափոխությունը և դրա նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում 18
Աշոտ Մարկոսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էլյանորա Մաթևոսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

3. Տնտեսական հեղափոխություն, թե՞ բարեփոխումներ 41
Գագիկ Գալստյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

4. Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխության իրականացման շուրջ.....50
Միքայել Մելքումյան, ՀՀ Աժ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

5. Հասարակական նոր պայմանագրի հարցի շուրջ. պետություն-շուկա՝ վարքագծային նոր վերափոխումներ..... 54
Վահագն Խաչատուրյան, տնտեսագետ

6. Ինստիտուցիոնալ ծուղակներ կամ ինչպես կարող են ընդունված վարքագիծը աղքատ երկրները թողնել աղքատ, իսկ հարուստ երկրները՝ հարուստ 62
Ռուբեն Գևորգյան, FRM, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար, ֆ.մ.գ.թ, տ.գ.դ., պրոֆեսոր

7. Պետական կառավարման որակը պետության կայացածության համատեքստում..... 67
Կառլեն Խաչատրյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

8. Հայաստանի Հանրապետությունում և նրա հարևան երկրներում իրականացված վերափոխումների համեմատական արդյունավետության գնահատումը և վերլուծությունը 76
Սամսոն Դավոյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրոսական ծրագրի ղեկավար, տնտ. դոկտոր, պրոֆեսոր
Լուսյա Գալոյան, ՀՊՏՀ ԳՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտ. թեկ, դոցենտ
Ռոզա Կուրղինյան, ՀՊՏՀ ԳՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս

9. Մարդկային կապիտալի քանակական և որակական կորուստների հաղթահարումը՝ տնտեսական հեղափոխության կարևոր պայման 90
Գրիգոր Ղարիբյան, ԵՊՀ ՏԿՖ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր , ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

10. Կառավարման գիտությունը և պրակտիկան առանց հեղափոխական գիտության..... 101
Գրիգոր Վահանյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, UNIDO-ի միջազգային փորձագետ

ԲԱԺԻՆ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

1. ՀՀ պետական պարտքի ավելացման հնարավորություններն ու դրա ազդեցությունը համախառն ներքին արդյունքի վրա.....111
Արայիկ Հարությունյան, տնտեսագետ, Արցախի Հանրապետության նախկին վարչապետ
2. ՀՀ պետական բյուջեի եկամուտների և հարկային ծախսերի գնահատման արդյունավետության հիմնախնդիրները 117
Արա Քառյան, «Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն ՀԿ-ի նախագահ, տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ դոցենտ

3. «Ծուռ հայելիների» ալգորիթմը 133
Սևակ Հայրումյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության թեկնածու, /ИМЭМО РАН/

4. Ուղղակի հարկման համակարգի արդիականացման ազդեցությունը Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների վրա..... 147
Էդվարդ Սանդոյան, Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր
Հեղինե Պետրոսյան, Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ

5. Հայաստանի Հանրապետության ագրոբիզնեսի և գյուղատնտեսության ավելացած արժեքի շղթայի ձևավորման հնարավոր մոտեցումները.....155
Արամ Առաքելյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

6. Տնտեսական աճի վրա արժութային կարգավորման ազդեցության ուղիները (ՀՀ օրինակով) 167
Էդվարդ Սանդոյան, Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարիամ Ոսկանյան, Հայ-Ռուսական համալսարանի էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Անի Գալստյան, Հայ-Ռուսական համալսարանի էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,

7. Ստվերային տնտեսության գործոնային ազդեցությունները և պատ-ճառահետևանքային դրսևորումները 178
Ամալյա Սարիբեկյան, ԵՊՀ տնտեսագիտություն և կառավարում ֆակուլ-տետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հասմիկ Միսակյան, ԵՊՀ տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետի մագիստրոս, վարկավորման մասնագետ

8. Ագրարային ոլորտում հայ-իսրայելական համագործակցության զարգացման հնարավորությունները 192
Սամվել Ավետիսյան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալ-սարան, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, ավագ փորձագետ-հետա-զոտող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

9. Տնտեսական հեղափոխության եռամիասնության գործոնը 201
Արսեն Ղազարյան, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ

ԱՌԱՋԱԲԱՆ

Իշխանությունների նկատմամբ վստահությունը և արդյունավետ տնտեսավարման կարողունակությունը Հայաստանի տնտեսությունը բարձր որակավորմամբ աշխատուժով նոր տեխնոլոգիական ուղու վրա տեղափոխման նախապայմաններն են, որոնք կապահովեն երկրի զարգացման շեշտակի վերելքը, ինչքան էլ խոչընդոտ լինեն ցամաքային շրջափակումները՝ կապված ղարաբաղյան հարցի կարգավորման հետ: Արցախի հիմնախնդրի չլուծվածությունը յուրօրինակ տրանսակցիոն ծախք է գործարարության ծավալման հարցում, որի հաղթահարման ուղիղ ճանապարհը իշխանությունների կողմից գիտատեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացին առավելագույն օժանդակումն է՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրագործման լավագույն միջավայրի ստեղծումը:

Դեռևս անցյալ տարեվերջին հայ տնտեսագետների կողմից գիտավերլուծական զեկույցներ ներկայացվեցին «Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» գիտագործնական խորհրդաժողովին, որին մասնակից դարձան նաև բիզնես հանրության ներկայացուցիչներ: Առաջարկվում էին լուծումներ այն տարաբնույթ խնդիրների վերաբերյալ, որոնք ՀՀ անկախության տարիներին առաջացան արդյունավետ տնտեսական համակարգ կայացնելու ընթացքում: Մեկ տարի առաջ մեր երկրում իրողություն դարձավ քաղաքական հեղափոխությունը, որը սկիզբն է վերափոխումային գործընթացի, ինչը ներառում է տնտեսությունը և հանրային կյանքի ամենատարբեր ոլորտները: Տնտեսագիտական համայնքը և բիզնես հանրության ներկայացուցիչները իրազեկ են, որ տնտեսություններին առավել բնորոշ են իներցիոն զարգացումները: Միաժամանակ, պատկերացնում են, որ խորը ռեֆորմների ու իրավատնտեսական կարգավորումների իրականացման արդյունքում միայն կարող ենք դուրս գալ զարգացման նոր

ուղեծիր, նվաճել սոցիալ-տնտեսական առաջընթացի բնագծեր, կերտել բարեկեցիկ ու հզոր Հայաստան: Խորը ռեֆորմներն են այն երաշխիքը, որը կնպաստի պետական կառավարման համակարգի գերակա առաջնահերթություններից մեկի՝ բարձր աշխատավարձով աշխատատեղերի ստեղծումն իրողություն դարձնելու համար: Վերջին նպատակադրումը իրագործելի կդառնա, երբ որոշակիացվեն իշխանությունների սկզբունքները ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումից մինչև կրթական ու սոցիալական ծրագրեր կյանքի կոչելուն ուղղված տնտեսահիրավական կարգավորումների հարցում:

Գիտության ավանդը և երաշխավորությունները տնտեսությունների զարգացման գործում կատարյալին մոտ մրցակցային միջավայրի ստեղծումն է: Սոցիալ-տնտեսական զարգացման համակարգային վերափոխումների համար ոչ հաճախ պահանջված են դառնում ոչ ստանդարտ՝ հեղափոխական լուծումները:

Այսօր մենք կանգնած ենք այդ իրողության առջև, որը հետևանք է նախընթաց սոցիալ-տնտեսական քաղաքականության և զարգացումների: Ուստի, տնտեսական հեղափոխությունն իր համակարգային ընդգրկմամբ այլընտրանք չունի: Հուսով ենք, որ ներկա գիտագործնական խորհրդաժողովի զեկուցումները մեծապես կնպաստեն տնտեսական հեղափոխության ընկալմանն ու գործարկմանը:

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի արդյունաբերողների ու
գործարարների միության նախագահ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր

ԲԱԺԻՆ 1.

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՇՈՒՐՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԵԳԾԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
sargsyan.ysu@gmail.com

Նախաբան: Մեր երկրի սոցիալական և տնտեսական իրողությունների համարժեք բացահայտումը, դրանց համադրումը պոտենցիալ հնարավորությունների հետ անբավարար է իրագործված, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է պատճառահետևանքային կապերի ողջ շղթայով նեգատիվի կուտակման ու բացթողնված հնարավորությունների վերծանմանը:

Այս առումով առնվազն դեստրուկտիվ պետք է որակել հանդուրժողականությունը *տնտեսական պոպուլիզմին*, որը դրսևորվում է ինչպես ԶԼՄ-ներում, այնպես էլ երկրի պառլամենտում՝ տարբեր իրավատնտեսական կարգավորումների մասով օրենքների ընդունման ընթացքում: Տնտեսական պոպուլիզմի անթույլատրելի գործընթացը նախ և առաջ լուրջ հարված է հասցնում (վնասում է) բիզնեսի նկատմամբ պետության արդյունավետ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Իր հերթին, տնտեսական պոպուլիզմը չի նպաստում *տնտեսական հեղափոխության,* վերելքի ու թռիչքաձև զարգացման իրական նախադրյալների առկայության վերաբերյալ բոլոր լավատեսական պնդումների կյանքի կոչմանը[1]: Ավելին, այն նյարդայնացնում է հասարակության իրազեկ շերտին, ընդհուպ որոշ մասնագիտական շրջանակներին, որի հարուցիչը երկրում տիրապետող գաղջ մթնոլորտն էր: Վերջինիս մասին ժամանակին եղավ բարձրաձայնում, սակայն ոչ երբեք գործուն քայլեր՝ ուղղված այդ «գաղջությունը նոսրացնելուն», որն էլ նպաստեց 2018թ. ապրիլ-մայիսի հեղափոխական զանգվածի ձևավորմանը: Գաղջության

[1] Տնտեսական հեղափոխության հասկացութային ապարատի ակունքները և ընկալումները մեզ տանում են դեռևս նեոլիթի ժամանակաշրջան (Քրիստոսից առաջ XI-VI հազարամյակ), երբ տեղի ունեցավ երկրագործության և անասնապահության, այսօրվա եզրաբանությամբ՝ գյուղատնտեսական հեղափոխությունը: Մեր կարծիքով, հետագայում արդյունաբերական (Անգլիա՝ 19-րդ դար) ներկայիս՝ 4-րդ արդյունաբերական և բոլոր այլ հեղափոխությունները՝ իրենց բնույթով տնտեսական հեղափոխություններ են, որոնք պարտադիր չէ, որ շրջադարձեին, դիցուք, հիմնական սեփականատիրական հարաբերությունները: Տեխնոլոգիական և կառուցվածքային խորը ռեֆորմացիան, ինքնին, կարող է համընդգրկուն տնտեսական հեղափոխության հիմք հանդիսանալ:

բաղադրության բացահայտումը և այդ երևույթի վերացմանն ուղղված գործուն քայլերը, թերևս կարող էին միայն հետաձգել հեղափոխությունը: Սակայն ոչ ավելին:

Երկրում կուտակված տնտեսական խնդիրների խորը լուսաբանումն ու մտահոգությունները՝ տնտեսական հեղափոխության մեթոդաբանությամբ դրանք լուծելու առումով արմատական վերափոխումների անհրաժեշտություն են առաջացրել:

Առաջնահերթ փոփոխությունների շարքում են՝

1. Քաղաքական համակարգի հնարավոր դեֆոլտի կանխումը, որն իրագործելի է անհրաժեշտ սահմանադրական փոփոխությունների՝ առնվազն զսպման ու հակազդման կառուցակարգերի բարելավման մասով:
2. Հարստության ներուժի չվատնումն ու արդյունավետ գործադրումը,
3. Կրթության դերի բավարար չարժևորումը[1],
4. Լավագույնս կառավարման սոսկ իմիտացիայից զերծ մնալը[2],
5. Անորոշությունների կանխարգելմանը առավելագույն նպաստումը[3]:

1. Մուտք, խնդրի առաջադրում: **Սոցիալ-տնտեսական «բարեշրջված» զարգացումների առումով շուրջ երեք տասնամյակ «լավ օրի չենք»: Իրավիճակի նման ախտորոշման բոլոր հիմքերն ակնառու են: Այդ մասին քննական վերլուծությունների պակաս չկա, բազում են գիտավերլուծական հրապարակումները:**

---

[1] Կրթությունը որպես գերակա ռազմավարական մարտահրավեր սերտորեն առնչվում է տնտեսության օպտիմալ կառուցվածք ունենալու խնդրին:

[2] Պետական կառավարման արդյունավետ համակարգի ներդրումը պահանջում է չառաջնորդվել երկարաժամկետ ակնկալվելիք արդյունքների ստորադասմամբ կարճաժամկետ արդյունքներին, որը շատ հաճախ կորստաբեր է լինում: Այն ակներև է «կուտակում-սպառում» դիլեմայի առումով, որը դրսևորվում է ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ առևտրային կազմակերպություններում:
Օպտիմալ կառավարումը պետք է ուղղվի.
- Մասնակցային գործընթացների ու բաժնետիրացման նպաստավոր պայմանների ստեղծմանը,
- Բաշխման արդարացի հարաբերությունների արմատավորմանը «բաժանիր-ընտրիր» սկզբունքի գործադրման կառուցակարգերի ստեղծմամբ (բաժանողը դիմացինին է տալիս ընտրության հնարավորությունը, որն էլ արդարացի բաշխման չափանիշ է դառնում),
- Խուսափումը բարդ խնդիրների լուծումը պարզունակ սխեմաներում տեղադրելուց ու առաջ տանելու համառ փորձեր կատարելուց:

[3] Անորոշություններն առաջացել են ամենատարբեր ոլորտներում, մասնավորապես, բնակչության սպասումների իրականացման առումով: Որպես կանխատեսելիության և անորոշությունների չեզոքացման ինդիկատոր կարող է հանդես գալ, զորօրինակ, առաջիկա 5 տարիների կտրվածքով 150-200 հազար ներգաղթյալների պլանավորած ցուցանիշը ու դրան ուղղված տեսանելի ու բավարար միջոցների նախանշումը ծրագրային փաստաթղթերում:

Ելակետային նման իրողությունները խիստ պահանջարկված են դարձնում «ի՞նչ անելը» և «ինչպե՞ս անելը»՝ հոռետեսական սպասումները կանխարգելելու համար: Իրավիճակից հնարավորինս շուտ դուրս բերելուն ուղղված ծրագրային հիմնադրույթների մշակումից զատ, որևէ կերպ չպետք է հետաձգվեն խորքային բարեփոխումները, որի համար ստեղծված են առավելագույն նպաստավոր պայմաններ՝ իշխանությունների ձգտումը և ժողովրդավարության ձեռքբերումները:

Երկարատև՝ մինչև 2040թ. ժամանակահատվածի համար մշակվելիք *ծրագրային հիմնադրույթներում, որի հանձնառությունը մենք ստանձնում ենք, ներառված կլինեն* մակրոտնտեսական ցուցանիշների հաշվեկշռված համակարգը՝ զարգացման իր 12 բաղադրիչներով՝ տնտեսության իրական և ֆինանսական, արտաքին հատվածների մակրոբնութագրերը, սոցիալական ցուցանիշները և այլն: Ծրագրային հիմնադրույթներում ներառված կլինեն նաև.

- զարգացման սցենարները՝ հնարավոր ռիսկերի գնահատմամբ (պատերազմական գործողություններով ուղեկցվող հնարավոր համապարփակ շրջափակման իրավիճակից մինչև «լիարժեք խաչմերուկում» դիրքավորվելը),
- երկարաժամկետ կայուն զարգացմանը միտված կառուցվածքային ու ինստիտուցիոնալ բարեփոխումների վրա հիմնված տնտեսական քաղաքականության ուղենիշները[1],
- ինստիտուտների կայացվածության հետ մեկտեղ դիտարկվելու են ներկառուցված (встроенные) ոչ ֆորմալ ինստիտուտները, մարդկանց վարքագծային նախադրյալները և հասարակության կողմից ինստիտուտների ընկալումը բնակչության բարեկեցության բարձրացման համատեքստում[2]:

---

[1] Բարեփոխումների ձեռագիրը և բնույթը պետք է վերափոխվեն հիմնովին: Պետք է զերծ մնալ ռեֆորմատորների այն սխալների կրկնությունից, երբ փորձ է կատարվում ոչ նպաստավոր առաջավորը կուլտիվացնել, որը չի բավարարում հայկական տեխնոլոգիական, ռեսուրսային, մշակութային, ինստիտուցիոնալ ու երկրաքաղաքական սահմանափակումներին մի կողմից, և, մյուս կողմից, իմպլանտների ներդրումից, ինչպես, օրինակ՝ Արագածի փեշերին չպետք է փորձել աճեցնել մերձարևադարձային կուլտուրաներ: Չպետք է առանց բավարար ենթակառուցվածքների կրթության ոլորտում ներդնել բոլոնյան գործընթաց, առանց կայանատեղիների նախագծել բնակելի շենքեր, առանց ոռոգման և խմելաջրերի համակարգերի լիարժեք գործարկման զարգացնել գյուղը և գյուղատնտեսությունը, առանց «բժշկակենտրոն միջավայրի» չկառավարել կլինիկաներ և այլն, և այլն: Գոյություն ունեցող սահմանափակումներին բավարարող բարեփոխումների ունիվերսալ ալգորիթմներ գոյություն չունեն: Վերջնանպատակներին (օրինակ՝ արդար դատական համակարգ) տանող ճանապարհին կարող են ստեղծվել միջանկյալ ինստիտուտներ (մեր օրինակում՝ անցումային դատարաններ): Սահմանափակումները տարաբնույթ են՝ կապված քաղաքացիական մշակույթի, ապապետականացման և այլ խնդիրների հետ:

[2] Саргсян Г. Л., Геворгян Р. А. Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран, Вестник Московского университета. Серия 6. Экономика, N 1, 2019թ.:

2. Ինչ է կատարվել առ այսօր: ՀՀ կառավարությունները, խորհրդարանները միջազգային կազմակերպությունների գործելակերպին համահունչ, «կայունություն-զարգացում» երկընտրանքում նախապատվությունը տվել են կայունությանը՝ չդնելով երկարաժամկետ կայուն զարգացման նախադրյալների ստեղծման խնդիրը: ՀՀ տնտեսական քաղաքականությունը տարվել է նախագծված սոցիալ-տնտեսական զարգացման բնագծերի ներառմամբ, որոնք հիմնականում չեն նվաճվել, և ընդգրկվել են խոշորամասշտաբ ծրագրեր, որոնք հիմնականում չեն իրագործվել:

Ծրագրային ժամկետների ավարտից հետո գրեթե բացակայել են հաշվետվությունները ծրագրերի, ըստ էության, չկատարման մասին, բացակայել են վերլուծությունները տնտեսահիրավական կարգավորումների հետևանքների գնահատման առումով՝ սկսած փորձաքննություն չանցած, սակայն ընդունված օրենքների որակից մինչև դրանց կիրարկումը: *Չեն բացահայտվել խորքային պատճառները, որոնք արգելակել են զարգացումը:*

3. Սոցիալ-տնտեսական զարգացման օրակարգը: Տնտեսական զարգացումը պլանավորելիս ներկայումս չպետք է սահմանափակվել ճյուղային առաջնահերթությունների թվարկմամբ, քանի որ դրանք շատ արագ և հիմնովին կարող են վերափոխվել:

Ազգային մրցունակ տնտեսություն ունենալու առաջնահերթ գերակայությունների թվում պետք է լինեն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված օրակարգային խնդիրների լուծումները[1]:

Օրակարգային խնդիրների շրջանակը ձևավորվելու է առաջնահերթ հետևյալ գործողություններով. ձեռնամուխ լինելով սահմանադրական անհրաժեշտ բարեփոխումներին՝ ծրագրային հիմնադրույթների հենքի վրա պետք է մշակվի **ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացումը նոր ուղեծիր դուրս բերելուն միտված գործողությունների համապարփակ ծրագիրը**:

Տնտեսական զարգացման ներուժի ձևավորման ու գործադրման կառուցակարգերում վճռորոշ են դառնալու ինստիտուտների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձրորակ մարդկային կապիտալի գործոնները: Տարիներ շարունակ կարևորվել է, հաճախ նաև գերագնահատվել

[1] Հիմնավոր օպտիմալացման պարագայում չպետք է տեղի տալ ընդհուպ գործադուլային սպառնալիքներով դիմակայությանը (օրինակ՝ սփյուռքի և մշակույթի նախարարությունների աշխատակիցների բողոքները) և չառաջնորդվել հրապարակ նետված այնպիսի սին թեզով, ըստ որի՝ «կրճատելով աշխատողներին՝ մենք կրճատում ենք համախառն սպառումը և էլ ավելի իջեցնում ՀՆԱ աճի տեմպը»: «Վիճակը վատ է», 168 ժամ, դեկտեմբերի 22-24, 2018թ., https://168.am/2018/12/21/1060222.html:

մարդկային կապիտալը՝ ՀՀ քաղաքացին՝ իր հարուստ փորձով, գիտելիքներով ու ունակություններով[1]:

Զարգացման ներուժի բացահայտման ու առավելագույնս կենսագործման հարցում որևէ կերպ չպետք է ստորադասվի գիտությունն ու կրթությունը, մինչդեռ, երկրում դեռևս տարանջատված ու համակարգված չեն գիտության արդյունավետ կազմակերպման կառուցակարգերը: Գիտական ու կրթական համակարգերի մասշտաբային և մեր տնտեսության համար հիմնասյուն հանդիսացող խնդիրների արմատական լուծումները պահանջում են կոնցեպտուալ նորովի մոտեցումների առաջադրում: «Բարձրագույն կրթության և գիտատեխնիկական գործունեության մասին» միասնականացված և հետապնդվող նպատակներին ուղղված իրատեսական օրենքի ընդունումը նաև նախադրյալներ պետք է ստեղծի կենսական անհրաժեշտություն ունեցող գիտատար ռազմարդունաբերական համալիրի գործարկման ու զարգացման հիմնախնդիրների լուծման համար:

4. Մնուցման աղբյուրը բազմահարթակ ներդրումային համակարգն է: Հայաստանի հզորացմանն ուղղված ներդրումային ակտիվների համախումբը կարող է իրագործվել բազմահարթակ (եռաստիճան) ներդրումային ֆոնդերի միջոցով[2]: Համակարգի մասնակիցներն են լինելու՝

- Հայաստանի Սուվերեն ֆոնդը:
- Համահայկական ներդրումային ֆոնդը (Pan-Armenian Investment Fund):
- Հատուկ նպատակների համար ստեղծվող և մասնագիտացված ֆոնդերը:

Այս ֆոնդերը լինելու են փոխկապակցված և գործելու են փոխլրացման ու մասնագիտացման սկզբունքներով: Թիրախը լինելու է մի համակարգ, որի ակտիվները հեղինակների գնահատմամբ ապահովելու է Հայաստանի ՀՆԱ-ի լրացուցիչ 1,5-2,0% տարեկան հավելաճ:

Հայաստանի պարագայում, որտեղ առկա է բյուջետային պակասուրդ և պետական պարտք, սուվերեն ֆոնդի ստեղծման և ակտիվների գեներացման կառուցակարգերը տարբերվելու են միջազգային ֆինանսական շուկաներում շրջանառվող 8,0 տրլն ԱՄՆ դոլարին հասնող ակտիվներին տիրապետող երկրների կառուցակարգերից:

---

[1] Մեթոդիկաներից մեկով (The Human Capital Project, WB 2018) Հայաստանի համար մարդկային կապիտալի համաթիվը 57 է, այսինքն՝ մեր մարդկային կապիտալը 43%-ով ոչ արտադրողական է (մեթոդիկայի հիմքում ընկած են ամբողջական կրթության և լիարժեք առողջության հաշվարկային բնութագրերը):

[2] Ներդրումային ֆոնդերի կառուցվածքի ու գործադրման կառուցակարգերի մոտեցումները մշակվելու են «կորպորատիվ կառավարման» կենտրոն հիմնադրամի կողմից (խորհրդի նախագահ՝ Տ. Ս. Կարապետյան):

Հայաստանի Սուվերեն ֆոնդի սկզբնական ակտիվների ձևավորման աղբյուր են հանդիսանալու «հանրային նշանակության ձեռնարկությունները», որոնց կարգավիճակը սահմանվելու է օրենքով և ներառելու է հանքարդյունաբերության ձեռնարկությունները, ֆինանսական և մենաշնորհային դիրք ունեցող կազմակերպությունները, ընկերությունները, որոնց արժեթղթերը ցուցակված են ֆոնդային բորսայում:

Pan-Armenian Investment Fund-ի խնդիրը սփյուռքի ֆինանսական ներուժի վերափոխումն է՝ զգայական հայրենասիրությունից դեպի ինստիտուցիոնալ լուծումներ:

Առանցքային քննարկման առարկա պետք է հանդիսանան նպատակային և մասնագիտացված ներդրումային ֆոնդերի ձևավորման, ունեցվածքի կապիտալացման և համակարգի կառավարման հիմնահարցերը, որոնց կարևորագույն պայմանը բարեփոխումներն են:

Ինստիտուցիոնալ բարեշրջումների էությունը ներդրումների ռիսկայնության կրճատման առումով պետք է արտահայտվի նրանում, որ ներդրողը գործ ունենա բարենպաստ գործելու ու իր պաշտպանվածության օրենքով տրվող երաշխիքի և ոչ, դիցուք, նախարարի ու այլ բարձրաստիճան պաշտոնյայի հետ «ձեռքսեղմման երաշխիքի» հետ:

5. Նոր ուղեծիր դուրս գալու գրավականները ինստիտուցիոնալ և արժեհամակարգային բարեփոխումներն են: Տնտեսական հեղափոխությունը կարող է տեղի ունենալ, եթե բավարարվեն մի շարք պայմաններ:

- Արձանագրվի, որ երբ 2018թվականը երկրում ձևավորեց նոր իրավիճակ, բնավ չի նշանակում, որ ինքնաբերաբար փոխվեցին նաև տնտեսական որոշումների ընդունման կառուցակարգերը և ավանդույթները, ինչպես նաև տեղի ունեցավ արժեհամակարգի փոփոխութուն:

Քաղաքական էլիտաների փոփոխման գործընթացը կարող է ընթանալ շատ արագ, իսկ տնտեսական էլիտաները և համակարգերը դեռ կարող են մնալ կենսունակ՝ չենթարկվելով առանձնապես լուրջ փոփոխությունների, հարմարվելով քաղաքական նոր համակարգին՝ ժամանակի ընթացքում հարմարեցնելով հենց նույն համակարգը իրենց նպատակներին: Ներկա իրավիճակում սա ցանկացած բարեփոխումների գլխավոր մարտահրավերն է և, պետք է փաստել, որ սույն խնդրի լուծումները միայն ուժային մեթոդները լինել չեն կարող: Լուծման գլխավոր ճանապարհը համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումն է:

- Արձանագրվի, որ այն ինստիտուտները և արժեհամակարգը, որոնք այսօր մեր երկրում գոյություն ունեն, ձևավորվել են խորհրդային հզոր կայսրության փլուզման պայմաններում և փաստացի պատերազմական

իրավիճակում ու շրջափակումներով պայմանավորված, լրացուցիչ տրանսակցիոն ծախսերը բնավ չեն նպաստում սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեծիր դուրս գալու նպատակին[1]:

- Քաղաքական էլիտան պետք է կամք դրսևորի՝ այդպիսի բարեփոխումներ իրականացնելու համար և ունենա երկարաժամկետ պլանավորման հնարավորություն: Այս երկու պայմանները խիստ փոխկապակցված են, քանի որ ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքները կարող են տեսանելի լինել միայն երկարաժամկետ կտրվածքով: Հետևաբար, քաղաքական էլիտան ոչ միայն կամք և պատրաստակամություն պետք է ունենա, այլ նաև որոշակի վստահության քվե: Այսօր վստահաբար կարելի է փաստել, որ սա հենց այն պահն է, երբ այդ երկու պայմանները մեր երկրում կարող են արդյունավետ մեկտեղվել:
- Այս բարեփոխումները կարող են հաջողություն արձանագրել միայն քաղաքական, տնտեսական և արժեհամակարգային փոփոխությունների միաժամանակյա իրականացման պայմաններում: Ներդաշնակեցման սկզբունքը հաջողության գլխավոր նախապայմանն է: Բացի այդ գործողություններից՝ կարևոր նախապայման է նաև ինստիտուցիոնալ սահմանափակումների և պարտադրանքի կառուցակարգերի համադրության սկզբունքը:
- Անհրաժեշտ է գտնել ճիշտ համադրություն կառավարության ամենօրյա օպերատիվ աշխատանքների և երկարաժամկետ բարեփոխումների իրականացման միջև: Հաճախ այդ նպատակները կարող են ունենալ շահերի բախումներ և հակասել միմյանց, որոնցից խուսափելու, կամ գոնե մեղմացնելու համար որոշ երկրներում ստեղծվում են փորձագիտական խմբեր, որոնք օժտված են խորհրդատվական և մշտադիտարկում իրականացնելու գործառույթներով:

6. Օրակարգային գերխնդիրը պետության կայացվածությունն է սահմանադրականության մակարդակի բարձրացմամբ: Պետության կայացվածության առանձնացվող չափորոշիչներից են պաշտպանունակությունն ու անվտանգային խնդիրների բավարար լուծումները, իրավունքի գերակայությունը, քաղաքական ինստիտուտների կենսունակությունը, աշխատանքի արտադրողականությունը, վարչարարական

[1] Հայտնի է, որ «ոչ արդյունավետ» ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներն ունեն երկար գոյատևելու հատկություն: Ինստիտուցիոնալ հետազոտություններում դա հաճախ անվանում են ''QWERTY'' էֆեկտ կամ «ուղեծրի» էֆեկտ: Նոր ուղեծիր դուրս գալու իրական հնարավորությունը ենթադրում է արդյունավետ ինստիտուտների ձևափոխումը՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և գոյություն ունեցող արժեհամակարգը:

կարողությունների մեծացումը և այլն: Ինտեգրալ, ամփոփ չափորոշիչի դերում կարող է հավակնել երկրի բարեկեցության ցուցիչը:

Հայաստանի տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնողական» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարելավումներով: Սոցիալական և տնտեսական առաջընթաց կարող է երաշխավորվել միայն սահմանադրականության դեֆիցիտի հնարավորինս կրճատմանը համընթաց[1]:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ինստիտուտների համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները, դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կարգավորումների գործուն կառուցակարգեր: Մեր կողմից արդեն իսկ իրականացված վերլուծությունները ցույց են տվել, որ հանրապետության բարեկեցության ապահովման համար, որքան էլ վճռորոշ լինեն ձևավորված քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակն ու կարողունակությունը, միևնույն է, կարևոր նշանակություն ունենալու են ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:

Այսպիսով, արտաքին ուժերի շահերի սպասարկումից ձերբազատված բարեփոխումները և, վերջապես, տնտեսահիրավական կարգավորման ողջ զինանոցի գործադրումը, որն ուղղված է տնտեսական հեղափոխության իրականացմանը, այն է՝ զարգացման նոր ուղեգիծ դուրս գալու որոշակի նախադրյալների ստեղծմանը, պահանջում է *լուծումների ինստիտուցիոնալացում:* Սա է տնտեսական զարգացման արդի օրակարգը:

Սահմանադրականության մակարդակի բարձրացումը կարող է իրական երաշխիք հանդիսանալ բարեկեցիկ ու հզոր Հայաստանի կերտման գործում:

---

[1] Պատրանքներից զերծ պետք է մնալ և հասարակության համար չձևավորել արագ արդյունքների սպասումներ, որը միայն կնվազեցնի վստահությունը կառավարության նկատմամբ: Իրավունքի գերակայությունն ու հակակշիռների, զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը կընթանա ոչ շուտ քան 2-3 տարում: Մեր մտածողությունը ի վերջո կփոխվի ոչ շատ արագ: Հետևողական ու անշրջելի բարեփոխումները միայն կնպաստեն արդարության հասնելուն և կոռուպցիան իսպառ արմատախիլ անելուն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ashotmarkos@rambler.ru

ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ
տնտեսագիտության թեկնածու
meleonora06@rambler.ru

Հիմնախնդրի դրվածքը: Հնագույն ժամանակներից սկսած հասարակական գիտությունների ուսումնասիրության ամենակարևոր թեմաներից մեկը եղել է այն հարցի պատասխանի որոնումները, թե ինչպիսի՞ հանգամանքների դեպքում է ծագում տնտեսական հեղափոխության անհրաժեշտությունը, ինչո՞վ է պայմանավորված այդ երևույթի երևան գալը և, մասնավորապես, որո՞նք են դրա առաջացման նախադրյալներն ու պայմանները: Հետաքրքիր է նշել, որ մարդկային քաղաքակրթության անցած ժամանակահատվածում այդպես էլ չգտնվեց այդ հիմնախնդրի լուծման բոլորի կողմից միանշանակ ընդունելի բանաձևը, որը կպատասխաներ վերը նշված՝ առաջադրված հարցերին:

Աշխարհի այս կամ այն երկրում կամ երկրների խմբում տեղի ունեցող հատկապես տնտեսական հեղափոխությունները, ունենալով մի շարք ընդհանրություններ և ծագման (գենեզիսի) պատճառներ, այնուհանդերձ, դրանք դարձնում են առանձնահատուկ ոչ միայն երևույթի առաջացման, այլև սոցիալ-տնտեսական արդյունքների և հետևանքների տեսանկյունից: Դրանով իսկ տնտեսական հեղափոխությունները հանդես են գալիս կա՛մ որպես համընդհանուր փոփոխությունների մաս, կամ էլ նախորդում կամ հաջորդում են արմատական փոփոխություններին: Վերջին հանգամանքը կախված է կոնկրետ երկրում կամ երկրների խմբում ստեղծված «հեղափոխական իրադրությունից»՝ երբ «վերևինները» չեն կարողանում

կառավարել հին մեթոդներով, իսկ «ներքևիները» չեն ցանկանում ապրել գոյություն ունեցող պայմաններում:

Ինչպես ցույց է տալիս վերջին 20-30 տարիների աշխարհի բազմաթիվ երկրների փորձը, որոնցում տեղի են ունեցել հեղափոխություններ, դրանցում կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները, դառնալով բնակչության հիմնական մասի համար ապրելակերպի ծանր ու դժվարին պատճառ՝ առաջացնելով ընդհուպ մինչև կենսամակարդակի նվազում, հիմք են դառնում ամենից առաջ քաղաքական արմատական վերափոխումների (հեղափոխության), ինչին հաջորդում է տնտեսական հեղափոխությունը: Այդպես եղավ, երբ հեղափոխություններ իրականացվեցին 1990-ական թվականների սկզբին նախկին համայնավարական երկրների մեծ մասում, երբ անցում կատարվեց համայնավարությունից ազատ շուկայական հարաբերությունների[1], այդպես եղավ արաբական, միջինասիական առանձին հանրապետություններում և Ուկրաինայում: Այսինքն, ցանկացած երկրում հեղափոխության ամենակարևոր բաղկացուցիչը լինելով տնտեսությունը, այն հեղափոխության իրականացման տեսանկյունից ի հայտ է գալիս և՛ որպես դրդապատճառ, և՛ որպես այդ հեղափոխության գնահատման արդյունք, քանի որ (նորից այդ մասին է վկայում միջազգային փորձը), եթե տնտեսական վերափոխումները չեն բերում բնակչության մեծ մասի սպասումների (ակնկալիքների) իրականացման, ապա դրանք դառնում են շարունակական, և գործընթացը տևում է նույնիսկ տասնամյակներ: Այս առումով անկասկած է, որ տնտեսական հեղափոխությունը պետք է ունենա ինչպես ընկալման, այնպես էլ իրականացման բավարար խորություն, որպեսզի բավարարի այդ հեղափոխությունն իրականացնող բնակչության մեծ մասի սպասումները (ակնկալիքները): Դեպքերի և իրադարձությունների այդպիսի ընթացք ունեցավ նաև 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում իրականացված «թավշյա», ոչ բռնի, ժողովրդական հեղափոխությունը, որի քաղաքական մասը (հեղափոխության առաջին՝ քաղաքական փուլն) ավարտվեց 2018թ.-ի դեկտեմբերի 9-ին կայացած խորհրդարանական արտահերթ ընտրություններով, ինչի արդյունքում իշխող քաղաքական «Իմ քայլը» դաշինքը ստացավ խորհրդարանական մեծամասնություն՝ 70,4%-ը (88 տեղ): Դրան հետևեց ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի առաջ քաշած տնտեսական հեղափոխություն իրականացնելու անհրաժեշտության թեզը:

Տնտեսական հեղափոխության ընկալումը և չորրորդ՝ տեխնոլոգիական հեղափոխությունը: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում

[1] Այդ մասին տե՛ս, օրինակ, Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ. «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Եր., «Տիգրան Մեծ», 2003թ., 656 էջ:

գրեթե բոլոր երկրներում տեղի ունեցան տարբեր խորության և ուժգնության ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական վերափոխումների գործընթացներ: Ըստ որում, տնտեսական վերափոխումների լայնածավալ ծրագրեր նախաձեռնվեցին և իրականացվեցին նախկին համայնավարական երկրներում, որոնք միտված էին՝ նախ, հին տնտեսական կառուցակարգերի վերացմանը, այնուհետև՝ նորերի ներդրմանը: Այդ վերափոխումներն ունեին արմատական բնույթ, քանի որ ուղղված էին հասարակության տնտեսակարգի՝ սեփականության իրավունքի փոփոխությանը, որի արդյունքում համաժողովրդական (ունիտար) սեփականությունը վերափոխվեց գերակշռող մասնավոր սեփականության իրավունքի, որն էլ հիմք հանդիսացավ այդ երկրներում անցում կատարելու ազատ շուկայական հարաբերությունների: Իրենց հերթին, զարգացած երկրներում, որտեղ նման խնդիր դրված չէր, վերափոխումների ընթացքը վերաբերում է այսպես կոչված չորրորդ՝ տեխնոլոգիական հեղափոխության իրականացմանը: Բոլոր երկրների դեպքում էլ փոփոխությունների կրողը ամենօրյա կյանքի այս կամ այն կողմն է եղել՝ յուրաքանչյուրն իր չափով և մասնակցային առանձնահատկություններով:

Տնտեսական հեղափոխությունների ծագման (գենեզիսի) հետազոտողների խնդիրն այն է, որ, նախ՝ հասկանան փոփոխությունների և դրանց զարգացման սոցիալ-տնտեսական էությունը, այնուհետև՝ բացատրեն այդպիսի «հեղափոխական» փոփոխությունների ազդեցությունը մարդկության պատմության մեջ տեղի ունեցող գործընթացների վրա, բացահայտեն նաև հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանական (էվոլյուցիոն) ու հեղափոխական (ռեվոլյուցիոն կամ արմատական) վերափոխումների հարաբերակցությունը և դրանց միջև եղած փոխադարձ կապերն ու առնչությունները: Պետք է նկատել, որ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական այդ գործընթացի վերաբերյալ միասնական կարծիք գիտական շրջանակներում դեռևս ձևավորված չէ: Իսկ առանց այդ հասկացության հիմնական բնութագրիչ կողմերի գոնե ուրվագծման, անհնար է դրա իմաստի ինչպես ընկալումը, այնպես էլ բացահայտումն ու կիրարկումը: Ուստի, մեր նպատակն է լուծել խնդրի այս հատվածը, մասնավորապես՝ հստակորեն բացահայտել «տնտեսական հեղափոխություն» հասկացության բովանդակությունը, իմաստը, ինչպես նաև հիմնարար հատկանիշներն ու հիմքերը:

Ժամանակակից առումով «տնտեսական հեղափոխություն» հասկացությունը իմաստաբանության տեսանկյունից նախատեսում է փոփոխություններ հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներում և, առաջին հերթին, ընդլայնում է տնտեսագիտական հասկացությունների արհեստականորեն

ստեղծված նեղ սահմանումները: Բանն այն է, որ հասարակական կյանքի տնտեսական գործոններն իրենց ազդեցությունն են ունենում նաև ոչ նտեսական գործընթացների վրա (ինչպիսիք են՝ մշակութային կյանքը[1], կրոնական, ոչ ֆորմալ ինստիտուտները և այլն), անգամ եթե մենք չենք կարողանում բացահայտորեն տեսնել ու ընկալել դրանց միջև փոխկապվածությունը: Այս հանգամանքը ներկայումս հանդես է եկել և հանդես է գալիս որպես հասարակության տնտեսակարգի (բազիսի) ու դրա հիման վրա կառուցված հարաբերությունների (վերնաշենքի) ամբողջականության և միասնության հակադրությունների ու պայքարի դիալեկտիկա: Եվ, որպեսզի այդ հիմնախնդիրը կառավարելի դառնա, անհրաժեշտ է շեշտադրումը կատարել հասարակական կյանքի տնտեսական բաղադրիչների և գործոնների (կամ գործընթացների) վրա: Առաջին հերթին, ուսումնասիրության առարկա պետք է դառնան տնտեսական հեղափոխության չափելի տնտեսական գործոնները[2], որպեսզի հնարավոր դառնա ապահովել դրա գնահատումը: Այդպիսի ելակետային դրույթը կարող է որոշ մասնագետների համար ինչ-որ չափով սահմանափակ թվալ, սակայն մենք առաջարկում ենք ձեռնպահ մնալ այդպիսի գնահատականից, քանի որ ստորև կատարված վերլուծությունը ուղղորդվում է դեպի որակական չափանիշները և թույլ է տալիս ուսումնասիրել բարձրացված հիմնախնդրի այնպիսի կողմերը, որոնք սահմանային են տնտեսական և ոչ տնտեսական բնութագրիչների (առանձնահատկությունների) տեսանկյունից[3]:

Տնտեսական երևույթների քանակական չափման տեսանկյունից (ինչպես դիպուկ նկատել է ռուս գիտնական Դ.Մենդելեևը՝ եթե երևույթները չեն չափվում, ապա դրանք վերածվում են հեքիաթի) տնտեսագետների մեծամասնության շրջանում որոշակի համաձայնություն է ձեռք բերված, ըստ որի տնտեսության աճի մասին կարելի է արձանագրել, եթե ապահովվում են և՛ մեկ շնչի հաշվով համախառն ազգային արդյունքի, և՛

---

[1] Մշակութային կյանք ասելով չպետք է հասկանալ միայն, օրինակ, մշակութային այս կամ այն արժեքները (ստեղծագործությունները), քանի որ ցանկացած ազգի հիմնական մշակութային ոլորտը նյութական և ոչ նյութական բարիքների արտադրությունն է, որի շնորհիվ համաշխարհային շուկան ճշգրտորեն արժևորում ու գնահատում է այդ բարիքների կարևորությունը:

[2] Այս մոտեցումը համընկնում է արդյունաբերական հեղափոխության չորս ուսմունքներից (դպրոցներից) մեկի հետ, որն անվանում են «Մակրոտնտեսական դպրոց»: Տես, օրինակ, Mokyr Joel, editor (1999). “Editor’s Introduction: The New Economic History and the Industrial Revolution.” In The British Industrial Revolution: An Economic Perspective, Second Edition, edited by Joel Mokyr, pp. 1–127. Boulder: Westview Press, էջ 6-8:

[3] Օրինակ, «արդիականացում» գործընթացն, այնպես, ինչպես ուսումնասիրվում է սոցիոլոգիական և տնտեսագիտական ուսումնասիրությունների շրջանակում, ներառում է ուրբանիզացիայի (քաղաքակենտրոնացման) գործընթացը, որը որոշակի որակական վերլուծությունների մեջ կենտրոնական դերակատարում ունի: Տես Kuznets, Simon. Population, Capital and Growth: Selected Essays. New York: W.W. Norton and Company, Inc. էջ 168:

բնակչության կայուն աճի տեմպերը[1]: Ասվածը ճշմարիտ է գոնե առանձին երկրի ազգային տնտեսության մակարդակով: Այս առումով հատկանշական է, որ Նոբելյան մրցանակակիր Սայմոն Կուզնեցն ընդգծում է նշված երկու քանակական առանձնահատկություններն իր աշխատությունների մեջ[2]: Նշված երկու ցուցանիշները ծառայում են որպես Սայմոն Կուզնեցի՝ երկարատև տնտեսական աճի քանակական վերլուծության հիմնաքարեր: 1750-1950թթ. ժամանակահատվածում 14 երկրների համար իրականացված ծավալուն ուսումնասիրության արդյունքներով նա բացահայտեց քանակական օրինաչափությունների մի ամբողջ շարք և այդ օրինաչափություններն օգտագործեց սահմանելու «ժամանակակից տնտեսական աճ» հասկացությունը[3]: Ինչպես մեկ շնչի հաշվով համախառն ազգային արդյունքի, այնպես էլ բնակչության կայուն աճի տեմպերը խիստ կարևոր նշանակություն ունեն Ս.Կուզնեցի «ժամանակակից տնտեսական աճ» հասկացությունը բնութագրելու համար, սակայն նա էլ ավելի հեռու գնաց իր ուսումնասիրության մեջ՝ ներառելով այդ հասկացության մեջ նաև կառուցվածքային փոփոխությունները: Ուստի, շատ դեպքերում, «տնտեսական հեղափոխություն» հասկացությունը նույնացվում է Ս. Կուզնեցի «ժամանակակից տնտեսական աճ» հասկացության հետ: Այդ երկու եզրույթները նույնացվում են նաև այն պատճառով, որ ժամանակակից տնտեսական աճի հասկացությունը բավարար գիտական մակարդակով ու խորությամբ հիմնավորված և ուսումնասիրված է և, բացի այդ, մեծ նշանակություն և ավանդ է ունեցել գիտնականին 1971թ.-ին տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակ շնորհելու համար[4]:

Երկրի տնտեսական աճը կարող է սահմանվել որպես բնակչությանը բազմազան ապրանքներով և ծառայություններով մատակարարելու երկարատև կարողություն (հնարավորություն), որի հիմքում ընկած է տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ և գաղափարական այնպիսի ճշգրտումները, որոնք անհրաժեշտ են այդպիսի կարողություններն ապահովելու համար: Ընդ որում, այս սահմանման բոլոր երեք բաղադրիչները կարևոր են:

---

1 Տես, մասնավորապես, Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Հովասափյան Ա. «Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետաձգված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ», Եր., «Էդիթ Պրինտ», 2010թ., 246 էջ:

2 Տես, մասնավորապես, Kuznets, Simon. Population, Capital and Growth: Selected Essays. New York: W.W. Norton and Company, Inc. էջ 1:

3 Kuznets, Simon (1966). Modern economic growth: Rate, structure and spread. New Haven: Yale University Press.

4 Նշենք, որ Ս. Կուզնեցին 1971թ.-ին տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակ է շնորհվել «Տնտեսական աճի էմպիրիկ հիմնավորված մեկնաբանման համար, որը հանգեցրել է տնտեսական և սոցիալական կառուցվածքի և, ամբողջությամբ վերցրած, զարգացման գործընթացի նոր, ավելի խորը ընկալմանը» աշխատության համար:

Ապրանքների և ծառայությունների մատակարարման կայուն աճը տնտեսական աճի արդյունք է: Որոշ փոքր երկրներ կարող են իրենց բնակչության համար ապահովել եկամուտների աճ, սակայն այնպիսիք, որտեղ առկա են բնական (հանքահումքային) զգալի պաշարներ, կամ որոնք իրենց աշխարհագրական դիրքով հանդիսանում են արտադրության կազմակերպման ու արտաքին առևտրի հանգույցներ: Սակայն այդպիսի (փոքր) երկրների բնական պաշարները հիմնականում օգտագործվում են զարգացած երկրների կողմից՝ իրենց համար ապահովելով ավելի մեծածավալ ռենտա (այսպես է նաև Հայաստանի Հանրապետության պարագայում, որի արտահանման մեջ զգալի բաժին է կազմում հանքահումքային արտադրանքը): Եվ, թեև գոյություն ունեն սակավաթիվ փոքր «հաջողակ» երկրներ, որոնք իրենց սոցիալ-տնտեսական աճն ապահովել են բնական պաշարների անխնա շահագործման հաշվին, հետազոտողների համար գիտական որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ դրանք տիպական չեն արդի համաշխարհային տնտեսության օրինաչափություններին ու զարգացումներին: Այդ պատճառով էլ հիմնական շեշտադրումները կատարվում են այն ազգային տնտեսությունների ուսումնասիրության վրա, որոնց տնտեսական աճն ապահովվել է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ: Տեխնոլոգիաների զարգացումը տնտեսական աճի ապահովման անհրաժեշտ աղբյուրն է, սակայն դրանք միայն տնտեսական աճի անհրաժեշտ պայմանն ու ներուժն են, ու միայն տեխնոլոգիաների առկայությունը դեռևս բավարար չէ անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Ժամանակակից տեխնոլոգիաների առկայության պարագայում, դրանց լայնորեն և արդյունավետ կիրառումը պահանջելու է ինստիտուցիոնալ և գաղափարական փոփոխություններ, որոնք թույլ կտան ձեռք բերված նորարարական գիտելիքների պատշաճ կիրառումը:

Ժամանակակից տնտեսական աճի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են վեց բնութագրիչներ (բնութագրող ցուցիչներ կամ ցուցանիշներ), որոնք պետք է ապահովեն հասարակության և նրա յուրաքանչյուր անհատի դինամիկ և արդյունավետ առաջընթացը: Առաջին և առավել ակնհայտ բնութագրիչը՝ մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի և բնակչության թվաքանակի աճի բարձր տեմպերն են: Ընդ որում, այդ ցուցանիշների մեծությունները պետք է բազմապատիկ լինեն նախորդ տարիների տվյալ երկրների և աշխարհի մյուս երկրների ցուցանիշների համեմատ՝ առնվազն դիտարկվող վերջին կամ նախորդող տասնամյակում: Երկրորդ բնութագրիչը աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակն է, այսինքն՝ բոլոր ռեսուրսների միավորի հաշվով արտադրության ծավալների աճը, նույնիսկ այն դեպքում, երբ ռեսուրսների կազմում,

բացի աշխատուժից, ներառում ենք նաև մյուս գործոնները: Ընդունված է, որ անգամ այդ պարագայում աշխատանքի արտադրողականության ցուցանիշը պետք է բազմապատիկ լինի նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշին:

Երրորդ՝ տնտեսությունում պետք է ապահովվի կառուցվածքային վերափոխումների արագությունը: Կառուցվածքային վերափոխումների հիմնական ուղղվածությունը գյուղատնտեսական ոլորտներից դեպի ոչ գյուղատնտեսական ոլորտներ անցումն է, իսկ վերջին ժամանակաշրջանին բնորոշ գիծը՝ արդյունաբերական ոլորտներից անցումն է ծառայությունների ոլորտին: Կարող ենք հավելել նաև տնտեսության կառուցվածքում մի շարք այլ ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները, որոնցից են՝ սպառման կառուցվածքը, ներքին և արտաքին առևտրի հարաբերական մասնաբաժինների որոշակի հարաբերակցությունը, եկամուտների բաշխման մակարդակը բնակչության տարբեր խմբերի միջև և այլն:

Չորրորդ ոլորտը, որի փոփոխությունները պետք է դիտարկվեն ժամանակակից տնտեսական աճի տնտեսագիտության տեսանկյունից, հանրային կյանքի հետ սերտորեն կապված և չափազանց կարևոր ոլորտն է՝ գաղափարախոսությունը: Տնտեսության արդիականացման գործընթացի մասին խոսելիս, առաջին հերթին, մարդկանց գիտակցության մեջ պետք է տեղ գտնեն այդպիսի փոփոխությունների անհրաժեշտության կարևորությունը, և այն դիտարկվի արդի աշխարհի տնտեսական ինտեգրման ու գլոբալացման համատեքստում:

Հինգերորդ ցուցիչն այն է, որ տնտեսապես զարգացած երկրները, տիրապետելով ժամանակակից բարձր տեխնոլոգիաներին հատկապես տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում (ինչպես արդյունաբերության, այնպես էլ ռազմական արդյունաբերության ոլորտներում), ձգտում են ներազդել ողջ աշխարհի վրա՝ այդպիսով ստեղծելով միասնական աշխարհ (տնտեսական տարածություն), ինչը հնարավոր չէր նախորդ ժամանակաշրջանում:

Վեցերորդ՝ ժամանակակից տնտեսական աճի տարածումը, անկախ ամբողջ աշխարհում տեղի ունեցած մասնակի ազդեցություններից, սահմանափակված է այն հանգամանքով, որ աշխարհի այն երկրներում, որտեղ ապրում է բնակչության երեք քառորդը սոցիալ-տնտեսական ցուցանիշները դեռևս շատ հեռու են պահանջվող նվազագույն այնպիսի մակարդակներից, որոնք կարող են ապահովել ժամանակակից տեխնոլոգիաները, այդ տեխնոլոգիաների կիրառումը[1]:

[1] Ավելի մանրամասն տե՛ս “Modern Economic Growth: Findings and Reflections” https://www.

Անկասկած է նաև, որ յուրաքանչյուր երկիր, ելնելով տարածության և ժամանակի մեջ ունեցած իր մշակութային, քաղաքական, պատմական ու սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններից, կարող է ունենալ «տնտեսական հեղափոխության» իր սահմանումը, որը հնարավոր է նախ՝ չի կրկնում մյուս երկրների փորձը և, երկրորդ՝ տեղի է ունենում միայն տվյալ երկրում: Առանձին դեպքերում «տնտեսական հեղափոխություն» հասկացությունը նույնացվում է տեխնոլոգիական (կամ, ինչպես այժմ ընդունված է անվանել, չորրորդ արդյունաբերական) հեղափոխության հետ: Համընդհանուր կարծիք կա, որ չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը գլոբալ ազդեցություն կունենա ինչպես համաշխարհային, այնպես էլ տարբեր չափեր ունեցող ազգային տնտեսությունների վրա, և որը կրելու է այնպիսի խորը և բազմակողմանի բնույթ, որ գրեթե անհնար կլինի որևէ այլ մոդելով տնտեսության զարգացումը: Չորրորդ արդյունաբերական հեղափոխության դրսևորումներից է «թվային տնտեսության» երևան գալը և դրա արագ տարածումը ողջ աշխարհում:

Այդ տեսության հիմնադրույթներից մեկն այն է, որ տնտեսական աճը կարող է դադարել, և դրանում ոչ մի վատ բան չկա: Չորրորդ արդյունաբերական հեղափոխության ազդեցությունը տնտեսական աճի վրա (զրոյական աճի դեպքում), սակայն, այն հարցն է, որի շուրջ տնտեսագետները համաձայնության չեն գալիս: Մի կողմից, վատատեսները պնդում են, որ թվային հեղափոխության ամենակարևոր ներդրումները մարդկության կյանքում և տնտեսության մեջ արդեն տեղի են ունեցել, և ներկայումս դրանք գործնականում այլևս ազդեցություն չունեն: Լավատեսների կարծիքով տեխնոլոգիաներն ու նորարարությունները համաճարակի նման տարածման փուլում են և շուտով կհանգեցնեն աշխատանքի արտադրողականության և տնտեսական աճի թռիչքաձև բարձրացման: Որպես չորրորդ արդյունաբերական հեղափոխության հետևանք նշվում է սպառման ավելացումը՝ ապրանքների և ծառայությունների ավելի ցածր գներով, որը թույլ կտա անցում կատարել ավելի կայուն սպառման, որն էլ իր հերթին կհանգեցնի այսպես կոչված «պատասխանատու սպառման»:

Սակայն, չորրորդ արդյունաբերական հեղափոխության հնարավոր հետևանքները արտադրության ու սպառման աճի վրա կարելի է տեսնել միայն տնտեսական աճի միտումների և այլ գործոնների համատեքստում, որոնք ապահովում են այդ աճը:

Այսպես, 2008թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մեկնարկից մի քանի տարի առաջ աշխարհի մասշտաբով տնտեսական աճը

nobelprize.org/prizes/economic-sciences/1971/kuznets/lecture/.

կազմում էր մոտ 5% (ավելի հստակ՝ 2006թ.-ին՝ 4.29%, 2007թ.-ին՝ 4.21%[1]): Եթե այդ աճի տեմպը պահպանվեր, ապա այն թույլ կտար համաշխարհային ՀՆԱ-ն կրկնապատկել յուրաքանչյուր տասնհինգ տարին մեկ և դրանով լուծել միլիարդավոր մարդկանց աղքատության հիմնախնդիրը:

Որպես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ուղղակի հետևանք, շատերն ակնկալում էին, որ տնտեսությունը կվերադառնա արագ աճի նախկին մոդելին, ինչը, սակայն, մինչ օրս տեղի չի ունեցել: Համաշխարհային տնտեսությունը 2017թ.-ին արձանագրել է 3.13%[2] տարեկան աճ, որը 2010թ.-ից հետո ամենաբարձր ցուցանիշն է, սակայն ցածր է նախաճգնաժամային միջին մակարդակից: Մի շարք տնտեսագետներ կանխատեսում են «դարավոր անկման» հավանականությունը՝ հղում կատարելով «մշտական լճացման» երևույթին, որը Մեծ ճգնաժամի հետևանք էր: «Մշտական լճացումը» բնութագրվում է պահանջարկի անընդհատ նվազման իրավիճակով, որը հնարավոր չէ հաղթահարել անգամ զրոյական աճի և տոկոսադրույքների դեպքում:

Թեև այս գաղափարը վիճարկվում է գիտական շրջանակներում, այն ունի հիմնարար հետևանքներ: Այսինքն, եթե գաղափարը ճիշտ է, ապա համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպը կարող է նվազել, և կարելի է պատկերացնել ծայրահեղ սցենար, որի դեպքում համաշխարհային ՀՆԱ-ի տարեկան աճը կկրճատվի՝ հասնելով տարեկան 2%-ի, ինչը նշանակում է, որ 36 տարի կպահանջվի համաշխարհային ՀՆԱ-ն կրկնապատկելու համար:

Աշխատանքի արտադրողականությունն այն ամենակարևոր գործոնն է, որը թույլ է տալիս ապահովել երկարաժամկետ տնտեսական աճն ու բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Աշխատանքի ցածր արտադրողականությունը նվազեցնում է ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ցուցանիշը: Եվ այս հարցում տնտեսագետները միակարծիք են:

Անցած 10 տարիների ընթացքում համաշխարհային մասշտաբով աշխատանքի արտադրողականությունը (չափվում է որպես աշխատուժի արտադրողականություն կամ որպես արտադրության գործոնների համախառն արտադրողականություն) էականորեն չի փոփոխվել, չնայած տեխնոլոգիական առաջընթացի էքսպոնենցիալ աճին և տեխնոլոգիաներում իրականացված հսկայական ներդրումներին: Շատ հաճախ հնչող հարցը, թե ինչո՞ւ նորարարությունները չեն կարողանում բարձրացնել աշխատանքի արտադրողականության մակարդակը այս կամ այն երկրում, տնտեսագիտության ամենաչլուծված խնդիրներից մեկն է:

---

1 https://data.worldbank.org/indicator/ny.gdp.mktp.kd.zg?end=2017&start=1990

2 Նույն տեղում:

Ինչպես ապացուցել, որ աշխատանքի արտադրողականությունն իսկապես նվազում է: Հիմնական խնդիրն այն է, թե ինչպես պետք է գնահատել արտադրական գործընթացը՝ մուտքի և ելքի ժամանակ և դրանով իսկ որոշել աշխատանքի արտադրողականության մակարդակը:

Չորրորդ արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանում ստեղծված նորարարական ապրանքներն ու ծառայություններն ավելի ֆունկցիոնալ և բարձրորակ են, սակայն դրանք հիմնովին տարբերվում են ավանդական ապրանքներից ու ծառայություններից: Բազմաթիվ նոր ապրանքներն ու ծառայությունները չունեն մրցակիցներ, ուստի և ունեն զրոյական սահմանային ծախսեր և (կամ) մրցակցային շուկա են մտնում թվային հարթակների միջոցով: Նշված բոլոր գործոնները նվազեցնում են գները: Նման պայմաններում ավանդական վիճակագրությունը չի կարող արձանագրել ապրանքների և ծառայությունների արժեքի փաստացի աճը, քանի որ դրանց սպառողական ավելցուկը չի արտացոլվում տվյալ ապրանքի (ծառայության) վաճառքի ընդհանուր ծավալում կամ շահույթի ծավալի ավելացման մեջ:

Չորրորդ արդյունաբերական հեղափոխության ևս մեկ հիմնադրույթներից է, որ «պահանջարկի» տնտեսությունը փոխելու է իրերի վիճակը: Նշված դրույթը հիմնականում վերաբերում է հատկապես բազմաթիվ ծառայությունների, որոնց օգտագործումը տնտեսապես արդարացված է և բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Սակայն, քանի որ այդպիսի ծառայությունները հիմնականում «անվճար» են, դրանց արժեքը չի հաշվառվում: Այս հանգամանքը անհամապատասխանություն է ստեղծում ծառայության միջոցով ստեղծված արժեքի և այն աճի միջև, որն արտացոլվում է պաշտոնական վիճակագրության մեջ: Այն նաև ենթադրում է, որ մենք արտադրում և սպառում ենք ավելի արդյունավետ ձևով, քան դա ցույց են տալիս տնտեսական ցուցանիշները:

Հիմնական և անվիճելի դրույթներից է նաև այն, որ չորրորդ արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանում տնտեսական մրցակցության կանոնները տարբերվում են նախորդ ժամանակաշրջաններում գոյություն ունեցողներից: Միանշանակ է, որ մրցակցելու համար պետք է նոր մրցակցային ռազմավարություններ մշակել ու կիրառել:

Մրցունակ լինելու համար պետք է նորարարական լուծումներ ներդնել, ինչը նշանակում է, որ հիմնականում ծախսերի կրճատմանն ուղղված ռազմավարություններն ավելի արդյունավետ կլինեն, քան այն ռազմավարությունները, որոնք նորարարական զարգացումներ են նախատեսում:

Նշենք նաև, որ չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը տնտեսական աճի խթանման և համընդհանուր որոշակի խնդիրների լուծման

ներուժ ունի: Այնուամենայնիվ, մենք պետք է ընդունենք նաև դրա հնարավոր բացասական հետևանքները և կարողանանք կառավարել դրանք, մասնավորապես, այնպիսի հիմնախնդիրները, որոնք վերաբերում են անհավասարությանը, զբաղվածությանը, աշխատանքային շուկաներին, բնապահպանությանը և մյուս դժվարություններին, որոնք անխուսափելիորեն կուղեկցեն չորրորդ արդյունաբերական հեղափոխությանը:

Ուսումնասիրության տեսանկյունից շատ ավելի կարևոր է կանխորոշել, հասկանալ «տնտեսական հեղափոխություն» սաղմնային վիճակը և այն հնարավորությունները, հորիզոնները, որոնք բացվում են հանրապետության առջև:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխության նախադրյալները: Վերը շարադրվածից հետևում է, որ տնտեսական հեղափոխությունների անհրաժեշտությունն ամենից առաջ պայմանավորված է երկրում ձևավորված սոցիալ-տնտեսական այնպիսի պայմաններով, որոնց առկայությունից դժգոհ է բնակչության մեծ մասը, ինչն էլ պարարտ հող է ստեղծում և դառնում նախադրյալ նախ՝ քաղաքական, ապա և՝ տնտեսական հեղափոխության իրականացման համար: Այս ճանապարհին ամենակարևոր քայլը բնակչության զգալի մասի գիտակցության ու մտածելակերպի այնպիսի փոփոխությունն է, որը վերածվում է մարդկանց այնպիսի գործողությունների, որոնց նպատակը իրադրության կտրուկ կամ արմատական փոփոխությունն է կամ հեղափոխությունը: Այս գործում կարևոր է այն քաղաքական ուժի (կուսակցության) կամ բնակչության շերտի կողմից իրականացվող գաղափարախոսության պրոպագանդումը, որը մարդկանց առաջնորդում է դեպի նոր և հեղափոխական բնույթի փոփոխությունների ու միջավայրի ձևավորման:

Երկրի մասշտաբով ամենակարևոր և հիմնական ցուցանիշներից է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը, որը բնութագրում է, ըստ էության, հասարակության գործունեության արդյունավետությունը (հանրային աշխատանքի արտադրողականությունը) մեկ շնչի հաշվով, և ինչպես արդեն նշել ենք, ցանկալի է, որ այն աճի բնակչության աճին զուգահեռ: Սակայն, ինչպես վկայում են *աղյուսակ 1*-ի տվյալները, այս կարևոր մակրոտնտեսական օրինաչափությունը ՀՀ-ում 2008-2017թթ.-ին չի պահպանվել: ՀՀ բնակչության խոշոր չափերով արտագաղթի պայմաններում այն նույնիսկ նվազել է, ըստ որում, 2008-2016թթ.-ին այն նվազել է 404.3 ԱՄՆ դոլարով կամ բազիսային տարվա (2008թ.-ի) նկատմամբ նվազումը կազմել է ավելի քան 10%: 2017թ.-ի տվյալներով բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը ՀՀ-ում 2008թ.-ի համեմատությամբ

Աղյուսակ 1

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն նախկին ԽՍՀՄ երկրներում 2008-2017 թվականներին, ԱՄՆ դոլար

Երկրները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2016թ.-ը 2008թ.-ի նկատմամբ (աճը (+), նվազումը (-), ԱՄՆ դոլար	2017թ.-ը 2008թ.-ի նկատմամբ (աճը (+), նվազումը (-), ԱՄՆ դոլար	2008թ.-ի երկրների միջինի նկատմամբ, %	2017թ.-ի երկրների միջինի նկատմամբ, %
Հայաստան	4010.0	2993.8	3218.4	3526.9	3684.8	3843.6	3994.7	3617.9	3605.7	3936.8	-404.3	-73.2	59.6	56.4
Ադրբեջան	5574.6	4950.3	5842.8	7189.7	7496.3	7875.7	7891.3	5500.3	3880.8	4131.6	-1693.8	-1443.0	82.8	59.2
Բելառուս	6377.4	5176.3	6029.4	6519.2	6940.2	7978.9	8318.5	5949.1	5025.4	5727.5	-1352.0	-649.9	94.8	82.1
Էստոնիա	18094.5	14726.3	14638.6	17454.9	17421.9	19072.2	19949.6	17155.9	17736.8	19704.7	-357.7	1610.2	268.9	282.4
Վրաստան	3174.9	2706.6	2964.5	3725.1	4142.9	4274.4	4429.6	3764.6	3865.8	4057.3	690.9	882.4	47.2	58.1
Ղազախստան	8513.6	7165.3	9070.6	11634.4	12387.2	13890.9	12806.6	10509.9	7714.8	9030.4	-798.8	516.8	126.5	129.4
Ղրղզստան	966.4	871.2	880.0	1123.9	1177.9	1282.4	1279.8	1121.1	1120.7	1219.8	154.3	253.4	14.4	17.5
Լատվիա	16348.5	12219.4	11326.2	13702.7	13822.8	15061.9	15758.5	13639.7	14070.5	15594.3	-2278.0	-754.2	243.0	223.5
Լիտվա	14961.6	11837.4	11984.9	14357.7	14341.2	15693.8	16545.1	14289.1	14912.7	16680.7	-48.9	1719.1	222.3	239.0
Մոլդովա	1695.9	1525.5	1631.5	1970.6	2046.5	2243.9	2244.8	1832.5	1913.2	2289.9	217.3	594.0	25.2	32.8
Ռուսաստանի Դաշնություն	11635.3	8562.8	10674.9	14212.1	15154.5	15543.7	14125.9	9346.6	8759.0	10743.1	-2876.3	-892.2	172.9	153.9
Տաջիկստան	706.1	666.3	738.3	834.5	954.7	1040.2	1104.5	918.8	795.9	801.1	89.8	95.0	10.5	11.5
Թուրքմենստան	3904.5	4036.5	4439.2	5649.9	6675.3	7304.4	7962.4	6432.7	6389.3	6586.6	2484.8	2682.1	58.0	94.4
Ուկրաինա	3891.0	2545.5	2965.1	3569.8	3855.4	4029.7	3104.6	2124.7	2185.7	2639.8	-1705.3	-1251.2	57.8	37.8
Ուզբեկստան	1082.3	1213.3	1377.1	1564.9	1740.5	1907.6	2050.5	2137.6	2117.7	1533.9	1035.4	451.6	16.1	22.0
Երկրների միջինը	**6729.1**	**5413.1**	**5852.1**	**7135.8**	**7456.1**	**8069.6**	**8104.4**	**6556.0**	**6272.9**	**6978.5**	**-456.2**	**249.4**	**100.0**	**100.0**

Աղբյուրը. աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Համաշխարհային բանկի տվյալների էլեկտրոնային շտեմարանի (վերջին անգամ թարմացված է 21.03.2019թ.-ին)՝ https://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&series=NY.GDP.PCAP.PP.CD&country=# տվյալներով:

նույնպես նվազել է (73.2 ԱՄՆ դոլարով), որը կազմում է տվյալ խմբի երկրների միջին մակարդակի 56.4%-ը:

ՀՀ այս ցուցանիշը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների շարքում 6-րդն է (Տաջիկստանում՝ 11.5%, Ղրղզստանում՝ 17.5%, Ուզբեկստանում՝ 22.0%, Մոլդովայում՝ 32.8%, Ուկրաինայում՝ 37.8%): Նշված երկրների ցանկի թվարկումից պարզ է դառնում թե ինչու այդ հանրապետություններն «անհանգիստ» են և ինչու նրանցում իրականացվում կամ նկատվում են տարբեր մասշտաբների ու խորության քաղաքական (Ուկրաինա, Ղրղզստան, Հայաստան) և տնտեսական փոփոխություններ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխություն նախաձեռնելու անհրաժեշտության մասին են վկայում նաև *աղյուսակ 2*-ի տվյալները, որոնք վերաբերում են հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների վատթարացմանը 2008-2017թթ.-ին: Ակներև է նաև, որ ցանկացած երկրում տնտեսական զարգացման հիմնական նպատակը, առաջին հերթին, հասարակության սոցիալական հիմնախնդիրների լուծումն է: Նկատենք, որ 2017թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը նվազել է 8.2%-ով, ըստ որում, աշխատունակ տարիքից ցածր տարիքի բնակչությանը՝ 12%-ով (բացարձակ արտահայտությամբ 264 հազար մարդ), և ընդհակառակը 5.1%-ով ավելացել է աշխատունակ տարիքից բարձր բնակչության ցուցանիշը, ինչը վկայում է ՀՀ բնակչության ծերացման մասին:

2008թ.-ի համեմատությամբ 2017թ.-ին 23.2%-ով նվազել է բնակչության բնական աճի ցուցանիշը (2008թ.-ի 13.8 հազարի համեմատ 2017թ.-ին այն կազմել է 10.6 հազար մարդ): Նկատենք, որ տարիներ առաջ ՀՀ-ում բնակչության բնական աճը 2-3 անգամ ավելի է եղել[1]:

ՀՀ բնակչության թվաքանակի վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի (նախկինում՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության) կողմից հրապարակվող վիճակագրական տարեգրքերում ՀՀ բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա են տարբեր ցուցանիշներ: Այսպես 1926-2017թթ. ժամանակահատվածում ՀՀ ամբողջ բնակչության թվաքանակի ամենամեծ ցուցանիշը նշվում է 2000 թվականին՝ 3803.4 հազար մարդ[2], մինչդեռ մեկ այլ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017-ում

[1] Այսպես, 1997թ.-ին ՀՀ բնակչության բնական աճը կազմել է 19.9 հազ. մարդ, 1998թ.-ին՝ 16.2 հազ. մարդ 1999թ.-ին՝ 12.4 հազ. մարդ, 2000թ.-ին՝ 10.2 հազ. մարդ (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 14), 2001թ.-ին՝ 8.1 հազ. մարդ, 2002թ.-ին՝ 6.7 հազ. մարդ (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 14): Եվ սա այն դեպքում, երբ ՀՀ-ն թևակոխել էր տնտեսական «երկնիշ» աճի ժամանակահատվածը:

[2] Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 25 և Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 25:

(էջ 25[1]) 2000թ.-ի համար ՀՀ բնակչության թվաքանակը նշված է 3226.9 հազար մարդ: Հետաքրքիր է նշել, որ համաձայն ՀՀ ԱՎԾ-ի 2002-2011թթ. ՀՀ բնակչության ցուցանիշները վերահաշվարկված են ՀՀ-ում 2011 թվականին անցկացված մարդահամարի արդյունքների հիման վրա[2], ինչը ամենևին էլ չի վերաբերում 2000թ.-ի տվյալներին: Այդպիսով, «անբացատրելի» է մնում 2000թ.-ի և 2001թ.-ի (3213.0 հազ. մարդ) շուրջ 600 հազար մարդու տարբերության «առեղծվածը»: Այլ կերպ ասած, սկսած 2000թ.-ից ՀՀ բնակչության թվաքանակը նվազեցվել է շուրջ 600 հազար մարդով, որպեսզի հաջորդ տարիներին ցույց տրվի բնակչության թվաքանակի աճ:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ վատթարացել է նաև զբաղվածների միջին տարեկան թվաքանակի ցուցանիշը (նվազումը կազմել է 14.5%):

Շարունակում են բարձր մնալ գործազրկության (2017թ.-ին 219.0 հազար մարդ), ինչպես նաև պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի (2017թ.-ին 70.2 հազար մարդ) ցուցանիշները: Ավելին, *աղյուսակ 3*-ի ցուցանիշներից հետևում է, որ ՀՀ-ում գործազրկության մակարդակը (17.8%) ԱՊՀ և Բալթյան երկրների շարքում ամենաբարձրն է, որը նշված խմբի երկրների 2017թ.-ի միջին մակարդակը (7.3%) գերազանցում է 243.8%-ով և 2008թ.-ի համեմատությամբ այդ ցուցանիշը ՀՀ-ում ավելացել է 1.4 տոկոսային կետով:

Նորից վերադառնալով *աղյուսակ 2*-ի տվյալներին՝ նշենք, որ թեև 2017թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ համախառն ներքին արդյունքի (ընթացիկ գներով) մեծությունը ավելացել է 156.1%-ով, սակայն այդ ցուցանիշը ԱՊՀ և Բալթյան երկրների խմբում 2008-2017թթ. շղթայական ինդեքսների հաշվով 5-րդ ամենացածր ցուցանիշն է, որն այդ խմբի երկրների ՀՆԱ-ի աճի ինդեքսային միջին մեծությանը (138.2%) նկատելիորեն զիջում է *(աղյուսակ 4)*:

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 25:
[2] Նույն տեղում:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները 2008-2017թթ.

Ցուցանիշները	2008	2009	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ.-ը 2008թ.-ի նկատմամբ, %
1. Մշտական բնակչության թվաքանակը (տարեվերջին), 1000 մարդ, այդ թվում՝	3238.0	3249.8	3026.9	3017.1	3010.6	2998.6	2986.1	2972.7	91.8
1.1. Աշխատունակ տարիքից ցածր, ընդամենը	653.9	644.3	609.8	611.8	616.8	623.7	628.8	632.9	96.8
1.2. Աշխատունակ տարիքի, ընդամենը	2198.6	2232.1	2051.5	2034.0	2015.1	1989.2	1962.9	1934.6	88.0
Աշխատունակ տարիքից բարձր, ընդամենը	385.5	373.1	365.6	371.3	378.7	387.7	394.4	405.2	105.1
2. Բնակչության բնական աճը									
2.1. հազ. մարդ	13.8	16.8	14.9	14.6	15.3	13.9	12.4	10.6	76.8
2.2. 1000 բնակչի հաշվով	4.2	5.2	4.9	4.8	5.1	4.6	4.1	3.5	83.3
3. Զբաղվածների միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ	1183.1	1152.8	1172.8	1163.8	1133.5	1072.6	1006.2	1011.7	85.5
4. Գործազուրկների միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ	231.6	265.9	245.5	224.6	242.1	243.7	220.2	219.0	94.6
5, Պաշտոնապես գրանցված գործազուրկ-ների թվաքանակը, հազ. մարդ (տարեվերջին)	74.7	84.5	62.4	56.0	65.9	77.0	80.5	70.2	94.0
6. Ներքին արդյունք (համախառն, ընթացիկ գներով), ընդամենը, մլրդ դրամ	3568.2	3141.7	4266.5	4555.6	4828.6	5043.6	5067.3	5568.9	156.1
7. Վերջնական սպառման ծախսեր, մլրդ դրամ	2918.8	2944.0	4184.3	4514.9	4714.3	4599.4	4598.6	5113.0	175.2
7.1. Վերջնական սպառման ծախսերի բաժինը ՀՆԱ-ում, %	81.8	93.7	98.1	99.1	97.6	91.2	90.8	91.8	10.0*
8. Համախառն կուտակում, մլրդ դրամ	1458.4	1089.2	1080.6	1014.2	1007.8	1045.6	912.9	1059.6	72.7

8.1. Համախառն կուտակման բաժինը ՀՆԱ-ում, %	40.9	34.7	25.3	22.3	20.9	20.7	18.0	19.0	21.9*
9. Հիմնական միջոցների գործարկումը շի-նարարությունում, մլրդ դրամ	666.8	361.8	567.0	300.6	351.6	238.8	222.6	211.4	31.7
10. Բնակելի շենքերի ընդհանուր մակերե-սի գործարկումը, հազ. մ^2	521.1	435.0	425.2	320.2	384.1	279.4	201.5	210.2	40.3
11. Ընդհանուր օգտագործման տրանսպոր-տի բեռնաշրջանառությունը, մլն տոննա-կմ	3015.0	2597.6	4267.9	4247.5	4232.7	3746.0	3881.2	4256.3	141.2
12. Ընդհանուր օգտագործման տրանս-պորտի ուղևորաշրջանա-ռությունը, մլն ուղևոր-կմ	3982.9	3792.2	3471.1	2858.4	3008.5	2525.0	2597.7	2665.5	66.9
13. Համախմբված բյուջեի պակասուրդը (-), հավելուրդը (+)									
13.1. մլրդ դրամ	-26.6	-235.9	-61.98	-68.9	-90.6	-242.3	-279.5	-264.8	995.5
13.2. ՀՆԱ-ի նկատմամբ, %	-0.7	-7.5	-1.4	-1.5	-1.9	-4.8	-5.5	-4.8	4.1*
14. Տնտեսության վարկային ներդրումները, մլրդ դրամ	628.7	724.8	1527.9	1658.7	1994.5	1939.7	2280.7	2545.6	404.9
15. Արտաքին առևտրաշրջանառությունը, մլն ԱՄՆ դոլար, այդ թվում	5483.3	4031.3	5641.4	5864.6	5971.7	4724.6	5065.2	6334.8	115.5
15.1. Արտահանում	1057.2	710.2	1380.2	1478.7	1547.3	1485.3	1791.7	2237.7	211.7
15.2. Ներմուծում	4426.1	3321.1	4261.2	4385.9	4424.4	3239.2	3273.5	4097.1	92.6
15.3. Արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցը	-0.614	-0.648	-0.511	-0.496	-0.482	-0.371	-0.293	-0.294	47.8
16. Սպառողական գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ, %)	109.0	103.4	102.6	105.8	103.0	103.7	98.6	101.0	8.0*

* *Տոկոսային կետ:*

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 15-17, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 14-16, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 15-18 տվյալների հիման վրա:

ՀՀ-ում բարձր է նաև վերջնական սպառման ծախսերի բաժինը, որի մեծությունը 2017թ.-ին 2008թ.-ի նկատմամբ աճել է 175.2%-ով, որը նույն ժամանակահատվածի ՀՆԱ-ի աճին (156.1%) գերազանցել է 19.1 տոկոսային կետով: Դրա հետևանքով վերջնական սպառման բաժինը ՀՆԱ-ում 2017թ.-ին 2008թ.-ի նկատմամբ ավելացել է 100 տոկոսային կետով: Մակրոտնտեսական նշված ցուցանիշների այդպիսի միտումները հանգեցրել են նրան, որ 2017թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ համախառն կուտակման մեծությունը կազմել է 72.7% (կամ բացարձակ արժեքով համախառն կուտակման մեծությունը նվազել է 398.8 մլրդ դրամ): Համախառն կուտակման բաժինը ՀՆԱ-ում 2008թ.-ի 40.9%-ից 2017թ.-ին հասել է 19.0% (նվազումը կազմել է 21.9 տոկոսային կետ): Նկատելիորեն (68.3%) 2017թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ նվազել է հիմնական միջոցների գործարկումը շինարարությունում, 59.7%-ով՝ բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գործարկումը: Ավելացել է (141.2%-ով) ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը, նվազել է (33.1%-ով) ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, ավելացել է (շուրջ 10 անգամ) համախմբված բյուջեի պակասուրդը (բացարձակ արտահայտությամբ այն կազմել է 238.2 մլրդ դրամ) կամ ավելացել է 4.1 տոկոսային կետով: Ավելացել են (404.9%-ով) տնտեսության վարկային ներդրումները, ու թեև նշված ժամանակահատվածում արտաքին առևտրաշրջանառությունն ավելացել է 115.5%-ով այդ թվում՝ արտահանումը՝ 211.7%-ով, իսկ ներմուծումը նվազել է 7.4%-ով, արտաքին առևտրաշրջանառության համեմատական առավելությունների գործակիցը բարելավվել է 49.8%-ով, սպառողական գների ինդեքսը նվազել է 8.0 տոկոսային կետով:

Ամփոփելով *աղյուսակ 2*-ի տվյալների համեմատական վերլուծության արդյունքները, դժվար չէ նկատել, որ դրանց ճնշող մեծամասնությունը վատացել է, ինչն էլ հանգեցրել է ինչպես բնակչության մեծ մասի, այնպես էլ տնտեսության վիճակի վատթարացմանը:

Դժվար չէ նկատել նաև *(աղյուսակ 5)*, որ 2008-2017թթ. աղքատության ցուցանիշները, թեև փոփոխվել են (օրինակ, ընդամենը ծայրահեղ աղքատության մակարդակը 2017թ.-ին 2008թ.-ի նկատմամբ նվազել է 0.2 տոկոսային կետով, աղքատությանը՝ 1.9 տոկոսային կետով), սակայն դրանք շարունակում են մնալ բարձր, իսկ գյուղական բնակավայրերում ծայրահեղ աղքատության մակարդակը նշված ժամանակահատվածում ավելացել է 0.7 տոկոսային կետով, աղքատության խորությունը՝ 0.1 տոկոսային կետով, իսկ աղքատության սրությունը՝ 0.2 տոկոսային կետով:

Բարվոք չէ նաև տնտեսության վիճակը միկրոմակարդակում, ինչի վկայությունն են *աղյուսակ 6*-ում բերված տվյալները: Աղյուսակի տվյալներից

հետևում է, որ խոշոր և միջին ձեռնարկությունների վերարտադրության ռեսուրսների խիստ անբավարարությունը հանգեցրել է նրանց կողմից ստացված արտաքին վարկերի ու փոխառությունների դիմաց պարտքերի կտրուկ աճի:

2008-2017թթ. ժամանակահատվածում ՀՀ բնակչության դրամական եկամուտների անհավասարությունն ավելի է խորացել *(աղյուսակ 7)*: Հատկանշական է, որ 2017թ.-ին 2008թ.-ի նկատմամբ բնակչության առաջինից չորրորդ քվինտիլային խմբերում, ներառյալ բնակչության դրամական եկամուտները, նվազել են համապատասխանաբար 2, 3, 1 և 2 տոկոսային կետերով և ավելացել է հինգերորդ քվինտիլային խմբի բաժինը, այսինքն, «աղքատներն ավելի են աղքատացել, իսկ հարուստներն ավելի են հարստացել»: Կամ, բնակչության չորրորդ և հինգերորդ քվինտիլային խմբերի դրամական եկամուտները 2008թ.-ի 62%-ից 2017թ.-ին ավելացել են՝ կազմելով 68%: Բնակչության դրամական եկամուտների նման բևեռացումը (իսկ եթե հաշվի առնենք նաև ՀՀ-ում ստվերային տնտեսության մակարդակը, ապա այդ պաշտոնական ցուցանիշները կարող են աճել առնվազն 1.5 անգամ) հասարակության ներսում չի կարող ստեղծել նորմալ բարոյա-հոգեբանական և սոցիալական համերաշխության միջավայր, և այն հղի է սոցիալական լուրջ ցնցումներով, ինչին ականատես եղանք 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսների «թավշյա», ոչ բռնի, ժողովրդական հեղափոխության ժամանակ:

Այսպիսով, ՀՀ տնտեսությունում և բաշխման հարաբերությունների համակարգում տեղ գտած թերությունների ու հակասությունների վերացումը պահանջում էր տնտեսական հեղափոխություն, որի սկիզբը դրվեց 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում իրականացված «թավշյա», ոչ բռնի, ժողովրդական հեղափոխության առաջին փուլով՝ քաղաքական վերափոխումներով:

Աղյուսակ 3

Գործազրկության մակարդակը ԱՊՀ և բալթյան երկրներում (միջին տարեկան), տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ 2008-2017թթ., %

Երկրները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ.-ը 2008թ.-ի նկատ-մամբ, %-ային կետ
ԱՊՀ երկրներ											
Հայաստան	16.4	18.7	19.0	18.4	17.3	16.2	17.6	18.5	18.0	17.8	1.4
Ադրբեջան	6.1	6.0	5.6	5.4	5.2	5.0	4.9	5.0	5.0	5.0	-1.1
Բելառուս	0.8	0.9	0.7	0.6	-	-	-	-	-	-	-
Ղազախստան	6.6	6.6	5.8	5.4	5.3	5.2	5.0	5.0	5.0	4.9	-1.7
Ղրղզստան	8.2	8.4	8.6	8.5	8.4	8.3	8.0	7.6	7.2	6.9	-1.3
Մոլդովա	4.0	6.4	7.4	6.7	5.6	5.1	3.9	4.9	4.2	4.1	0.1
Ռուսաստանի Դաշնություն	6.3	8.4	7.5	6.6	5.5	5.5	5.2	5.6	5.5	5.2	-1.1
Ուզբեկստան	4.9	5.0	5.4	5.0	4.9	4.9	5.1	5.2	5.2	5.8	0.9
Ուկրաինա	6.4	8.8	8.1	7.9	7.5	7.2	9.3	9.1	9.3	9.5	3.1
Բալթյան երկրներ											
Էստոնիա	-	-	-	-	10.0	8.6	7.4	6.2	6.8	5.8	-
Լատվիա	-	-	-	-	15.0	11.9	10.8	9.9	9.6	8.7	-
Լիտվա	-	-	-	-	13.4	11.8	10.7	9.1	7.9	7.1	-
Երկրների միջինը	6.6	7.7	7.6	7.2	8.9	8.2	8.0	7.8	7.6	7.3	0.7

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 582, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 572-ի , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 549-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 4

Համախառն ներքին արդյունքի ինդեքսները ԱՊՀ և բալթյան երկրներում 2008-2017թթ., նախորդ տարվա նկատմամբ, %

Երկրները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2008-2017թթ. շղթայական ինդեքսը, %
ԱՊՀ երկրներ											
Հայաստան	106.9	85.9	102.2	104.7	107.2	103.3	103.6	103.2	100.2	107.5	125.3
Ադրբեջան	110.8	109.3	105.0	100.1	102.2	105.8	102.8	101.1	96.9	100.1	138.7
Բելառուս	110.2	100.2	107.7	105.3	101.7	101.0	101.7	96.2	97.4	102.4	125.5
Թուրքմենստան	-	-	-	-	111.1	110.2	110.3	106.5	106.2	106.5	-
Ղազախստան	103.3	105.2	107.3	107.2	104.8	106.0	104.2	101.2	101.0	104.1	154.0
Ղրղզստան	108.4	102.9	98.6	105.7	99.9	110.9	104.0	103.9	103.8	104.6	151.1
Մոլդովա	107.8	94.0	106.9	106.4	99.3	109.4	104.8	99.6	104.3	104.5	142.4
Ռուսաստանի Դաշնություն	105.2	92.2	104.3	104.3	103.5	101.3	100.7	97.2	99.8	101.5	109.7
Տաջիկստան	107.9	103.9	106.5	107.4	107.5	107.4	106.7	106.0	106.9	107.1	191.7
Թուրքմենստան	114.7	106.1	109.2	109.9	-	-	-	-	-	-	-
Ուզբեկստան	109.0	108.1	108.5	108.3	108.2	108.0	108.0	107.9	107.8	105.3	214.0
Ուկրաինա	102.3	85.2	104.2	105.2	100.3	100.0	93.4	90.2	102.3	102.5	84.7
Բալթյան երկրներ											
Էստոնիա	95.8	85.9	103.3	108.3	104.3	101.9	102.9	101.9	103.5	104.9	111.4
Լատվիա	96.7	82.3	99.1	105.5	104.0	102.4	101.9	103.0	102.1	104.6	99.3
Լիտվա	102.9	85.2	101.5	105.9	103.8	103.5	103.5	102.0	102.4	104.1	113.9
Երկրների միջինը	105.9	96.2	104.6	106.0	104.1	105.1	103.5	101.4	102.5	104.3	138.2

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 584-585, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 574-575-ի , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 551-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 5

Աղքատության ցուցանիշները Հայաստանի Հանրապետությունում 2008-2017թթ., %

Ցուցանիշները	2008	2009	2010	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ.-ը 2008թ.-ի նկատմամբ, տոկոսային կետ
Ընդամենը										
Ծայրահեղ աղքատ	1.6	1.6	3.0	2.8	2.7	2.3	2.0	1.8	1.4	-0.2
Աղքատ	27.6	34.1	35.8	32.4	32.0	30.0	29.8	29.4	25.7	-1.9
Աղքատության խորություն	5.1	7.8	8.1	5.6	5.9	4.5	4.7	4.3	4.4	-0.7
Աղքատության սրություն	1.4	2.4	2.5	1.6	1.7	1.3	1.3	1.1	1.2	-0.2
Քաղաքային բնակավայրեր										
Ծայրահեղ աղքատ	1.9	4.6	4.1	3.2	2.9	2.4	2.2	2.0	1.2	-0.7
Աղքատ	27.6	33.7	35.7	32.5	32.2	30.0	29.4	28.8	25.0	-2.6
Աղքատության խորություն	5.3	8.0	8.4	5.9	6.3	4.5	4.7	4.3	4.1	-1.2
Աղքատության սրություն	1.5	2.6	2.7	1.7	1.9	1.3	1.3	1.1	1.1	-0.4
Գյուղական բնակավայրեր										
Ծայրահեղ աղքատ	1.2	1.7	1.1	2.1	2.2	2.0	1.7	1.4	1.9	0.7
Աղքատ	27.5	34.9	36.0	32.1	31.7	29.9	30.4	30.4	26.8	-0.7
Աղքատության խորություն	4.7	7.3	7.6	5.1	5.3	4.5	4.9	4.3	4.8	0.1
Աղքատության սրություն	1.2	2.0	2.1	1.4	1.5	1.2	1.3	1.1	1.4	0.2

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 110, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 106-ի , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 107-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 6

Խոշոր և միջին կազմակերպությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը Հայաստանի Հանրապետությունում 1997-2017 թվականներին, մլն ՀՀ դրամ

	1997	2000	2008	2010	2013	2015	2016	2017
Պարտավորություններ, Ընդամենը, որից՝	307577.5	763667.3	913759.6	1527353.4	2148253.6	2690794.4	3095807.1	3150923.5
ժամկետանց	*28200.7*	-	*404.5*	*536.2*	*862.5*	*22225.7*	*927.6*	*957.5*
Կրեդիտորական պարտ-քեր	228770.9	592952.8	328087.3	503804.4	602481.8	782828.2	801346.5	829175.3
ընդամենի նկատմամբ (%), որից	74.4	77.6	35.9	33.0	28.0	29.1	25.9	26.3
ժամկետանց	*24598.4*	-	*390.8*	*523.7*	*822.5*	*22115.7*	*927.6*	*955.7*
Ստացած վարկերի և փո-խառությունների դիմաց պարտքեր	78806.6	170714.5	585672.3	1023549.0	1545771.8	1907966.3	2294460.5	2321758.2
ընդամենի նկատմամբ (%), որից	25.6	22.4	64.1	67.0	72.0	70.9	74.1	73.7
ժամկետանց	*3603.3*	-	*13.7*	*12.5*	*40.0*	*110.0*	*0.0*	*1.8*

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 393, Հայաստանի վիճա-կագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 414, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 394, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 400, Հայաստանի վիճակագրական տարե-գիրք 2018, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 404-ի տվյալներով:

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետության բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի 2008-2017թթ., %

Ցուցանիշները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ.-ը 2008թ.-ի նկատմամբ, տոկոսային կետ
Դրամական եկամուտները	100	100	100	100	100	100	100	100	100	100	-
այդ թվում՝ ըստ 20% խմբի բնակչության											
առաջին (նվազագույն եկամուտներով)	7	7	5	7	7	7	7	6	5	5	-2
երկրորդ	14	13	11	14	13	14	13	11	10	11	-3
երրորդ	17	18	16	18	17	18	17	15	16	16	-1
չորրորդ	24	25	23	24	23	23	23	21	23	22	-2
հինգերորդ (առավելագույն եկամուտներով)	38	37	45	37	40	38	40	47	46	46	8
Եկամուտների կենտրոնացման գործակիցը (Ջինի ինդեքսը)	0.339	0.355	0.362	0.371	0.372	0.372	0.373	0.374	0.375	0.359	0.02

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, էջ 107, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 103-ի , Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 104-ի տվյալների հիման վրա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ,
տնտեսագիտության և մտի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,
gagik.s.galstyan@gmail.com

Ցանկացած հեղափոխություն, որքան էլ որ մեծ լինի նրանով իրագործվելիք փոփոխության պահանջը, միշտ էլ մնում է որպես մեծագույն դժբախտություն, ժողովրդի համար ծանր և ոչ հազվադեպ էլ մահացու հիվանդություն:
ՎԻԼՀԵՄ ՌՈՇԵՐ

Սովորաբար բնաբանն ընտրվում է նպատակային գաղափարի փիլիսոփայությունն ի սկզբանե ներկայացնելու և որոշ չափով էլ ընթերցողին ուղղորդելու համար: Միաժամանակ, միշտ չէ, որ դա ամբողջովին հաջողվում է, ինչով և մեծ տեղ է հատկացվում ընթերցողի երևակայությանն ու կռահելու ունակությանը: Տվյալ դեպքում հայտնի անկատարությունները առկա չեն: Բնաբանի հեղինակի խոսքը ամբողջապես ներկայացրել է փոխակերպումների հեղափոխական փորձերի ընդհանրական չարաղետ էությունը: Վերջինս դժվար թե գնահատվի որպես հայտնություն[1]: Եվ իսկապես, պատմության մեջ չի արձանագրված որևէ դեպք, երբ հեղափոխությունը երջանկացրած լինի հասարակությանը: Դժվար թե որևէ բանական էակ փորձի ժխտել հեղափոխություններով առաջադրված փոփոխությունների անհրաժեշտությունը, բայց, միաժամանակ, գրեթե անհնարին է հավաստել, որ հեղափոխությունները իրականացրել են այդ խնդիրների լուծումները:

Հեղափոխությունների ձախողման համընդհանուր պատճառը, մեր համոզմամբ, վերջնական նպատակի և դրա ապահովման միջոցների նույնացումն է, ինչը կփորձենք հիմնավորել քիչ հետո, բայց անհրաժեշտ ենք համարում այս պահին բերել մի շատ հայտնի օրինակ: Բոլշևիկյան հեղափոխության հիմնարար նպատակը մասնավոր սեփականության

[1] Տե՛ս Ե. Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, Եր., 1989. էջ՝ 22. «Հայրը տեսնելով իր զավակին այս տարօրինակ ընթացքը, հաճախ ակռաները կճրտելով կը պոռար.- Փորձանք պիտի ըլլաս, փորձանք… Խեղճ մարդը կը սխալեր իր լավատեսությանը մեջ: Փանջունի փորձանք չպիտի ըլլար, այլ հեղափոխական գործիչ:»

վերացումն էր[1] և արտադրության միջոցների համաժողովրդական սեփականության հաստատումը: Այստեղ խնդրո առարկան մասնավոր սեփականության վերացման հնարավոր լինել կամ չլինելու հարցը չէ, այլ այն իրողության ընդունումը, որ մասնավոր սեփականության բռնի վերացումը ավերեց Ռուսաստանի զարգացող տնտեսությունը և հասարակությանը ավելի հեռացրեց հայտարարված և ցանկալի նպատակներից: Իսկ մասնավոր սեփականության իրավունքի աստիճանական բարեփոխումների ճանապարհը բռնած երկրները ստացան և այժմ էլ ունեն բարեկեցության բարձրագույն մակարդակ: Այսպիսով, «հակահեղափոխականները» իրապես ստացան ավելի ծանրակշիռ փաստարկներ աստիճանական զարգացման անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Հասարակությունների կողմից հեղափոխական լուծումների չընկալումը բազմաթիվ փաստերով ապացուցված իրողություն է, որը, սակայն, հազիվ թե կանխի ապագայում նմանօրինակ սոցիալական փորձարարությունները:

Շարունակական բարեփոխումների ենթարկված ու ինքնաենթարկվող մեր հասարակությունը երեսնամյա դեգերումներից հետո դարձյալ կանգնած է համակարգային փոփոխությունների անհրաժեշտության առջև: Վերջինս նրան մատուցվում է նաև «տնտեսական հեղափոխություն» խորագրով, ինչը նույնաբովանդակ չի ընկալվում հասարակության տարբեր խավերի և շերտերի կողմից, և դա ամբողջապես բացատրելի է: Սակայն այս հանգամանքը ավելի է կարևորում առաջադրված խնդրի բովանդակության բացահայտումն ու լուսաբանումը:

Ընդունված է, որ տերմինը կոչված է ներկայացնելու որոշակի գիտական հասկացությամբ սահմանված որևէ առարկա կամ երևույթ: Ուստի, որքան մեծ լինի ընտրված տերմինի բառային իմաստի և գիտական հասկացության բովանդակության համապատասխանության աստիճանը, այնքան արդյունավետ կլինեն աշխարհի ճանաչողությանն ուղղված ջանքերը և մարդկանց արդյունքաբեր գործունեությունը: Այս պարագայում անհրաժեշտություն կա բացահայտելու «տնտեսական հեղափոխություն» և նույն համատեքստում օգտագործվող «ներառական տնտեսություն» հասկացությունները:

Ցակացած համակարգում, այդ թվում նաև տնտեսության մեջ, կատարվող փոխակերպումները, որոնք բնութագրվում են «զարգացում» տերմինով, ներառական կամ չներառական լինել չեն կարող: Այլ բան է դրանք

[1] Տես Մարքս, Կ. Էնգելս, Ֆ. Կոմունիստական կուսակցության մանիֆեստը. Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր երեք հատորով, հատոր առաջին, «Հայաստան», Եր. 1971, էջ 123-179. «կոմունիստները իրենց տեսությունը կարող են արտահայտել մի դրույթով՝ մասնավոր սեփականության ոչնչացում: …մի սեփականություն, որը շահագործում է վարձու աշխատանքը» էջ՝ 155:

բնորոշելու մարդկային փորձերը, որոնք իսկապես կարող են նվազ կամ առավել ընդգրկուն լինել: Ներկայումս կիրառվող ինքլյուզիվ՝ թարգմանաբար «ներառված» և հյուրանոցային սերվիսից փոխառնված բառի, որպես տնտեսագիտական և քաղաքագիտական տերմինի անհարկի կիրառման հետևանքն է դարձել հայերենում նորաստեղծ, բայց անբովանդակ «ներառական տնտեսություն» բառակապակցությունը շրջանառության մեջ դնելը: Որևէ բանական էակ չի փորձի պնդել, որ գունդը գունդ է և բրգաձև լինել չի կարող, քանի որ սա անհեթեթություն է: Բայց նույնքան անհեթեթ չէ՞ արդյոք գնդաձև գունդ արտահայտությունը: Իսկ ներառական տնտեսությունը հենց այս կարգի նույնաբանություն է: Ներառական կարող է լինել սպորտային խմբակը, դպրոցը, նույնիսկ խորհրդարանը, բայց ոչ տնտեսությունը:

Տնտեսական աճի ապահովումը, որը «տնտեսական հեղափոխության» հիմնական նպատակն է, կառավարությունների գործունեության գնահատման գլխավոր չափանիշն է եղել և կա: Սա էլ դրդել է կառավարություններին զանազան հնարքներով՝ սկսած տապանաքարերի ու գերեզմանների ընդգրկումից և վերջացրած հարկային հավաքագրումների ավելացմամբ[1], ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշ, ինչն էլ բազմաթիվ դեպքերում փորձ է արվել ներկայացնել որպես բարեկեցության աճ: Իսկ իրականում բարեկեցության աճի բացակայության, և երբեմն նաև անկման պատճառով այդ հասկացությունը ամբողջությամբ բովանդակազրկվել է: Նման իրավիճակում հայտնվել են ներկայումս հատկապես հետխորհրդային հասարակությունները, որոնց անցյալի անբաժան մասն էր պետական սուտը:

Տնտեսական աճի ցուցանիշի և բարեկեցության բարձրացման ոչ համաժամանակյա ընթացքը տնտեսագիտության առջև այս անհամապատասխանությունը մեկնաբանելու խնդիրն է դրել: Սա այդքան էլ երկրորդային հարց չէ, որքան կարող է թվալ, ծնելով պատճառաբանություն, որ ինչ որ ժամանակ հետո այդ աճը կհանգեցնի բարեկեցության բարձրացման: Շուկայական համակարգի պայմաններում ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու և դրանով իսկ բարեկեցության աճը ապահովելու նորմալ միջոցը փոխանակության նպատակով համարժեք ապրանքներ և ծառայություններ առաջարկելն է: Այսինքն, ոմն մեկի հարստացման պայմանը մյուսի բարեկեցության աճն է, ինչի չգոյությունը համարժեքային փոխանակության խաթարման հետևանքն է: Իսկ համարժեքային փոխանակությունը շուկայական տնտեսության կենսագործունեության հենքն է:

[1] Երկուսն էլ «ստեղծագործաբար» կիրառվել են Հայաստանի Հանրապետության կառավարությունների և վիճակագրական ծառայության կողմից:

Ամբողջապես բացատրելի է նաև, որ որոշ տնտեսագիտական շրջանակներում փորձեր արվեցին կառուցել այդ անհամապատասխանությունը հիմնավորող տեսություններ: Որքան էլ դրանք փաստարկված լինեն զանազան իրողություններով, միևնույն է, ձևակերպված են ի սկզբանե անհիմն մի ենթադրության վրա, որ քննության առարկա տնտեսությունները իրենց հիմքում շուկայական են: Սակայն, հեղափոխական և անցումային վերափոխումների ժամանակահատվածներում այս խնդիրը առկա է և իրատեսական: Այն երկատված է՝ պայմանավորված արտադրության ծավալների անխուսափելի անկմամբ: Անկում և միաժամանակ աճի նախադրյալների ստեղծում, սա խնդիր է, որ դրված է ցանկացած անցումային հասարակության առջև:

«Տնտեսական հեղափոխությունը», մեր համոզմամբ, հնարավոր է և կարող է իրագործվել պետական կառավարման բնագավառում՝ հատկապես տնտեսության կառուցվածքում աստիճանական փոփոխությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով: Իսկ վերջինս ապահովելու է կառավարության կողմից տնտեսական որոշումների ընդունման կլեպտոկրատական և կոռուպցիոն եղանակների փոխարինումը շուկայական մեխանիզմներով: Իսկ բուն տնտեսության մեջ սա կարող է լինել միայն ինքնաբուխ գործընթաց, որի սուբյեկտները տնտեսվարողներն են՝ պաշտպանված վարչական, թեկուզ և ամենաբարի մղումներով, միջամտություններից:

«Մեծ դեպրեսիայով» և առհասարակ տնտեսական տատանումներով չհետաքրքրվող մասնագետներին ևս ինչ-որ չափով հայտնի է Ռուզվելտի «Նոր կուրսի» բովանդակությունը. ԱՄՆ տնտեսությունը խոր ճգնաժամից դուրս բերելու նպատակով նախագահ դառնալուց հետո՝ 1932թ. սկսած, հակառակ ուղղափառ կարծրատիպերի, նա իրականացրեց տնտեսական կյանքին միջամտելու արդյունավետ քաղաքականություն: Ընդ որում, վերջինիս անհրաժեշտությունը, սկզբունքները և եղանակները միայն չորս տարի հետո պետք է տեսականորեն հիմնավորվեին Քեյնսի կողմից: Ուստի, անքննելի է, որ տնտեսությունն աշխուժացնելու քայլերը ամերիկյան կառավարությունը իրականացնում էր տնտեսական իրավիճակի թելադրանքով՝ առաջնորդվելով փորձով և ինտուիտիվ ընկալումներով և ոչ թե տեսական կաղապարների վրա հիմնվելով: Հավանական է, որ ոչ բոլորն են ուշադրություն դարձրել ժամանակային այս խզմանը: Այս անհերքելի իրողությունը հարկադրում է համաձայնվել, որ «քեյնսյան հեղափոխություն» կոչվածը և ցանկացած այլ հեղափոխություն՝ մարժինալիստական և այլն, առավելապես վերաբերում է մարդկանց աշխարհընկալմանը, քան իրական տնտեսական գործընթացներին: Ու, բնական է, որ

տնտեսության հեղափոխական զարգացման անհնարինությունն անհրաժեշտորեն իր արտացոլումն է գտել մեր գիտության հիմնարար սկզբունքներում: «…երբ նոր հետազոտությունները ժամանակի ընթացքում իրենց տեղն են գտնում, իսկ նրանց քննադատական սրությունը վերանում է, պարզ է դառնում, որ իրականում դրանք ամենևին էլ չեն խախտում գիտության զարգացման հաջորդականությունը: Նոր տեսությունները ընդամենը լրացնում են հինը, ընդլայնում ու զարգացնում, երբեմն ճշգրտում են դրանք, հաճախ այլ երանգավորում են տալիս, նորովի են կատարում շեշտադրումները,բայց շատ հազվադեպ են հերքում դրանք»[1]:

Ժամանակակից քաղաքակրթության ամենաարմատական փոխակերպումներից մեկը, անկասկած, քրիստոնեության հաստատումն էր, որը, սակայն, իր առջև ևս «հին աշխարհը մինչև հիմքերը քանդելու» հեղափոխական խնդիր չէր դրել: Այն եկավ մարդկանց իր դարն ապրածից ազատելու, եղած դրականի վրա նորը, ավելի կատարյալն ու առաջադիմականն ավելացնելու համար: Բոլորովին էլ պատահական չէր, որ դիմելով իր աշակերտներին՝ Հիսուսն ասել է. «Մի կարծեք, թե ես եկա օրենքը կամ մարգարեներին ավերելու: Ավերելու չեկա, այլ լրացնելու»[2]: Սա է «օրենքի» ճշմարտությունը, որը նույն չափ բացատրելի պատճառներով միշտ էլ անտեսվել է բոլոր կարգի ու տրամաչափի հեղափոխականների կողմից:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ստվերայնության նվազեցման և հետագա տնտեսական աճի ապահովման խնդրի լուծումները, ուստի և, անհրաժեշտ է գտնել այս բանաձևով: Այլապես, նպատակների և միջոցների մեկտեղումը, ինչին ներկայումս բախվում է հասարակությունը, հերթական ձախողումն անխուսափելի է դարձնում: Մասնավորապես, հարկային ոլորտում բարեփոխումների հայտնի նպատակը հարկերի վճարման համընդհանրությունն է, եթե հասարակությունը բանականորեն ձգտում է ապրել օրինական և բարեկեցիկ կյանքով: Սակայն, երբ նպատակը կիրառվում է որպես հարկային բարեփոխումների ապահովման սկզբնական միջոց, արդյունքում խաթարվում է առավելապես ոչ իրենց կամքով նման գործարար միջավայրում հայտնված ձեռնարկությունների կենսագործունեությունը: Տնտեսության ստվերային հատվածը, խոսքը օրենքով չարգելված գործունեության մասին է, նախ և առաջ արդյունքաբեր գործունեություն է և մասամբ գոյատևում է նաև չհարկված եկամուտների շնորհիվ: Նման իրավիճակում և «արտակարգ» միջոցներով հարկերի գանձումը հնարավոր է, որ հանգեցնի և հանգեցնում է արտադրության ծախսերի աճին և առաջարկի ու զբաղվածության կրճատմանը:

---

1 Маршалл А, Принципы политической экономии, т .1, М., 1983, с. 45.

2 Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մաթևոսի, 17:

Եվ երկրորդ՝ հասարակական մթնոլորտի վատթարացմանը, ինչը պակաս կարևոր չէ: Ուստի, հարկման համընդհանրության ապահովման սկիզբը պետք է դառնա հարկային համակարգի բարեփոխումը՝ համաձայն տնտեսական ակտիվության աճն ապահովող հայտնի միջոցների: Դրանից հետո արդեն կարելի կլինի առաջնորդվել սմիթյան հայտնի սկզբունքով, ըստ որի, մահվանից բացի, աշխարհում գոյություն ունեցող երկրորդ անխուսափելի բանը կդառնա հարկ վճարելը[1]:

Այսպիսով, «տնտեսական հեղափոխությունը», իր աստիճանական ընթացքով, որի անխուսափելիությանն է բախվել մեր հասարակությունը, անհրաժեշտ է: Այն պետք է իրականացվի հաշվի առնելով անցյալի հաջողված փորձը և ձախողումները: Սկսենք Ադամ Սմիթից՝ «Մարդը պետական գործիչների և քաղաքագետների կողմից դիտարկվում է որպես ինչ որ նյութ քաղաքական մեխանիկայի համար: Քաղաքագետները խախտում էին մարդկային գործունեության նորմալ ընթացքը, իսկ անհրաժեշտ է բնությունը թողնել ինքն իրեն, լրիվ ազատություն տալ մարդուն իր նպատակներին հասնելու և սեփական ծրագրերը իրականացնելու գործում... **Պետությունը բարբարոսության ստորին աստիճանից բարեկեցության վերին աստիճանին բարձրացնելու համար անհրաժեշտ են սոսկ խաղաղություն, ցածր հարկեր և հանդուրժողականություն կառավարման գործում, մնացած բոլորը կանի իրերի բնական ընթացքը:** Բոլոր կառավարությունները, որոնք բռնի ձևով դեպքերի զարգացումն ուղղում են այլ ճանապարհով, կամ էլ ձգտում են կանգնեցնել հասարակության առաջընթացը, հակաբնական են: Որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը, նրանք ստիպված են կեղեքելու և դաժանություններ անելու»[2]: Մեր հասարակության անցած ուղին ևս ամբողջապես ապացուցում է բերված մտքի ճշմարտացիությունը:

Մի այլ առիթով Սմիթը զգուշացնում է՝ «Քանի դեռ չկա սեփականությունը, չի կարող լինել և պետությունը, որի նպատակն էլ հենց հարստության պահպանումն է...»[3]: Եվ վերջապես, ավելի քան երկու հազարամյակ առաջ հռոմեացի իմաստասերը գրել է, որ բարձրագույն արդարությունը, որին պետք է հետևի քաղաքացին, սեփականության

---

[1] Նմանատիպ հեղափոխականություն է դրսևորվել նաև հանրակրթական դպրոցի նկատմամբ ավարտական միասնական քննակարգի ներդրման կիսաձախողված փորձով: Իհարկե, կրթական արդյունքը կարող է և կենտրոնացված ստուգվել: Բայց երբ դա ներդրվում է ակնհայտորեն խափանված հանրակրթական համակարգում, դրական արդյունք չի կարող ապահովել և ինքնաբերաբար կավելացնի արտադպրոցական պարապմունքների անցանկալի և հասարակական տեսանկյունից վնասաբեր պրակտիկան: Սրանով բարդացնելով գոյություն ունեցող իրավիճակը, ինչի բարելավմանը իբր նպատակաուղղված էր:

[2] W.R. Scott. Adam Smith as Student and Professor. Glasgow Jackson, Son Company, 1937. էջ 53-54:

[3] Аникин А.В. Юность науки: Жизнь и идеи мыслителей-экономистов до Маркса. М., 1985. էջ 169:

անձեռնմխելիությունն է[1]: Զարգացած բոլոր երկրների տնտեսական և մշակութային առաջընթացն իրագործվել է այս սահմանադրական շրջանակներում, անկախ նրանից, թե դրանք գիտակցաբար են ընտրվել ու պարտադրվել, թե՞ ինքնաբուխ են հաստատվել:

Անհրաժեշտ պայմաններից առաջինը խաղաղությունն է, ինչն արդեն երեսուն տարիների ընթացքում անդադար պատերազմող մեր երկրի համար որքան կենսականորեն անհրաժեշտ է, նույնչափ էլ առայժմ անհասանելի: Պատերազմի փաստը վերածվել է նաև կառավարությունների թերացումների և ձախողումների արդարացման լավագույն և անքննելի միջոցի: Իսկ պատերազմական իրավիճակի շարունակական ձգձգման իրական պատճառների՝ հատկապես ներքին, բարձրաձայնումը և քննարկումը ըստ էության տաբու է, որին մենք ևս կենթարկվենք: Միաժամանակ հիշեցնում ենք Ալբեր Քամյուի հետևյալ ախտորոշումը. « Երբ պատերազմ է պայթում, մարդիկ ասում են՝ «Երկար չի տևի, շատ անխելք բան է»: Եվ անկասկած, պատերազմն անխելք բան է, բայց դա չի խանգարում, որ այն երկար տևի: Հիմարությունը միշտ էլ պարտադրում է իրեն»[2]:

Հարկերի մեծության և առհասարակ հայաստանյան հարկային համակարգի բնութագիրը հնարավոր ենք համարում բացահայտել՝ դարձյալ անդրադառնալով Ադամ Սմիթին: Նրա կողմից ձևակերպված հարկման հիմնական սկզբունքները՝ հավասարաչափություն, որոշակիություն, հարմարություն և վերջապես՝ ցածր մակարդակ, եթե անգամ նշմարվել են Հայաստանի Հանրապետության հարկման ոլորտում, ապա սոսկ որպես հայտարարված վերացական նպատակներ՝ իրականում գործող հարկային մամլիչը քողարկելու համար: Ընդ որում, այդ մամլիչը շարունակվում է գործադրվել, իհարկե, ավելի քաղաքակիրթ եղանակներով:

Եթե վերը ներկայացված երկու ընդհանուր պայմանների հատվածային առկայության դեպքում գործարար ոլորտը՝ դրսևորելով պարտադրված հարմարվողականություն, նաև ինչ որ չափով ինքնապահպանման բնազդից դրդված, իր կենսագործունեությունը իրականացրել է շուկայական սկզբունքների շրջանակներում, ապա երրորդ պայմանի՝ «հանդուրժողականություն կառավարման գործում» չգոյությունը, անկասկած, եղել է ձեռներեցության ծավալումը սահմանափակող ամենամեծ խոչնդոտը: Հայաստանի երրորդ Հանրապետության կայացման հենց առաջին փուլից, կառավարման անհանդուրժողականությունը իշխանությունների կողմից ընդունվեց որպես իրենց տիրապետության ապահովման հիմնական միջոց: Հանդուրժողականությունը քաղաքական

---

1 Տե՛ս Всемирная история экономической мысли, Т. 1, М:, 1987, էջ 150:

2 Քամյու Ա., Ժանտախտը, Երևան, 1991, Ապոլոն, էջ 26:

բնագավառում դեմոկրատիան է իր ազատ և արդար ընտրական մեխանիզմով, որի արմատական ձևախեղման սկիզբը դրվեց դեռևս 1995թ. համապետական ընտրություններով և սահմանադրական հանրաքվեով[1]:

Տնտեսական ոլորտում «հանդուրժողականության» աստիճանի ախտորորոշումն առաջին հայացքից անհամեմատ ավելի բարդ է թվում, քանի որ հանդուրժողականության և դրա դրսևորման՝ մրցակցության կապը ակնառու չէ, և շատերին, հնարավոր է, որ նույնիսկ զարմանալի թվա: Շուկայական ավանդույթներ չունեցող հետսովետական հասարակության, այդ թվում նաև իշխանավորների կողմից մրցակցության դերը ավելի հաճախ ընկալվում է սոսկ մրցակցին հաղթելու տեսանկյունից, ինչը մրցակցության կարգավորիչ դերի անտեսման կամ չգիտակցման հետևանքն է: Հաստատված կացությունը դա է փաստարկում:

Կառավարությունների քաղաքական կազմից ու տարիքային ցենզից անկախ ներդրումները տնտեսական աճի հիմնական աղբյուրն են, իսկ բարենպաստ միջավայրի ապահովումը՝ հիմնական խնդիրներից մեկը: Ներդրումային միջավայրի ստեղծման խնդիրը երկմակարդակ է՝ առաջինը վերաբերում է հասարակության և տնտեսության նորմալ կենսագործունեությունն ապահովող ընդհանուր պայմաններին, ինչի մասին նշվել է վերը, իսկ երկրորդը՝ բուն ներդրումների իրականացմանը՝ կողմնորոշիչներ ունենալով ոչ թե հայրենասիրությունն ու այլասիրությունը, քաղաքական համակրանքները և հակակրանքները, այլ շահույթները:

Հայտնի է, որ ներդրումների և տնտեսական աճի կապը դրսևորվում է նախ ռեսուրսների՝ արտադրական կարողությունների և ապա եկամուտ – ծախսեր հոսքերի հավելաճերն ապահովելու միջոցով: Այս տարանջատումը զուտ տեսական բանավեճային մակարդակի խնդիր չէ, ինչպես կարող է թվալ, այլ անհրաժեշտ հանգամանք է պետական կառավարման արդյունավետության բարձրացման սկզբունքների և գործուն եղանակների ընտրության համար:

Անկասկած է, որ վերափոխման կարիք ունի նաև դրամավարկային քաղաքականությունը, որին բավարար արդյունավետություն տալու համար առաջնային խնդիր է ոչ թե տնտեսական մեքենայի հետ իրականում աննշան կապ ունեցող լծակների «ճիշտ» և անպտուղ տեղաշարժերը, այլ շուկայի մեխանիզմների ձևավորմանը և կենսագործունեությանն ուղղված իրական բարեփոխումների վերսկսումը, ինչը դուրս է ԿԲ իրավասություններից:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի 1995թ. հունիսի հինգին հաջորդող համարներում արձանագրված ընտրությունների քվեարկության արդյունքների պարզ համադրումը ֆիզիկական ճշմարտության աստիճան է երաշխավորում այս պնդման համար:

Սրանք հարցադրումներ են, որոնց իրատեսական պատասխանները կօժանդակեն մեր հասարակության առջև կանգնած հիմնախնդրի լուծմանը:

Վերջաբանի փոխարեն. «Աշխարհում գոյություն ունեցող չարը համարյա միշտ տգիտության ծնունդն է, և **բարի կամեցողությունը կարող է նույնքան գործել, որքան չարությունը, եթե լուսավորված և գիտակցված չէ**»[1]:

[1] Քամյու Ա., էջ 83-84:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ Աժ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ներկայումս մեր հանրապետությունում հանրային կյանքի որակի բարելավման կարևորության գործոնը տնտեսական հեղափոխությունն է՝ դրա իրականացման բովանդակությունը և ձևը, նաև՝ ժամկետները: Մեկ բան ակնհայտ է՝ ինչպես էլ դա ձևակերպվի կամ գնահատվի, միևնույն է, այն իրեն զգացնել կտա, եթե ժողովրդի կենսամակարդակը բարելավվի:

Սակայն, մինչև տնտեսական հեղափոխության գործնական դրվագներին անդրադառնալը, նախ փորձենք արձանագրել, թե, այնուամենայնիվ, «տնտեսական հեղափոխություն» հասկացությունն ինչպես ձևակերպել և մեկնաբանել: Ես կարծում եմ, որ այն կարող է ունենալ տնտեսագիտական, սոցիալական, նաև՝ քաղաքական ուղղվածություն իր ձևակերպումների մեջ, սակայն մեկ բան ակնհայտ պետք է լինի՝ տնտեսական հեղափոխությունն առկա իրավիճակում կտրուկ փոփոխություն է ենթադրում, այնքան կտրուկ, որ իրավիճակ է փոխվում և՛ տնտեսության, և՛ բիզնեսի ոլորտում, և՛ բնակչության սոցիալական իրավիճակում, և՛ մշակութային հարաբերություններում: Պարզ է, որ տնտեսական հեղափոխությանը նախորդել է քաղաքական հեղափոխությունը, և միայն վերջինիս արդյունքում է հնարավոր եղել մտածել տնտեսական հեղափոխության իրականացման հնարավորության մասին: Այսպիսով, իրավիճակի կտրուկ փոփոխություն հարաբերությունների որակի մեջ: Այդ հարաբերությունների որակը կարող էր փոխվել, եթե այլևս չկան այն պայմանները, որոնք ծնում էին անցանկալի և անորակ, հաճախ՝ կիսաքրեական արարքներ և գործողություններ ինչպես պետական կառավարման համակարգում, այնպես էլ հանրային կյանքի տարբեր ոլորտներում: Դրանց հիմքում նախ և առաջ բարձր մակարդակով որոշ առանձնաշնորհ ունեցող անձանց տրվող արտոնություններն էին՝ արհեստական մենաշնորհներ ունենալու, հարկեր ավելի քիչ վճարելու, կամ հարկային արձանագրումների և այլնի մասերով: Մեր հանրապետության տնտեսական տարածքը չափերով այնքան փոքր է, որ այդ ամենը բերում էր խիստ անարդար վիճակների արձանագրման և որը ստանում էր մեծ հրապարակայնություն:

Ուղղակի կարելի էր զարմանալ պետական նախկին քաղաքականության մակարդակի վրա. մի կողմից ժողովրդավարական հիմքեր էին իբր կառուցում, մյուս կողմից՝ փորձում խորամանկ ձևով իրենց համար շահեկան անարդար պայմաններ ստեղծել:

Եվ այդ հակասությունը բերեց քաղաքական հեղափոխության անվերապահ իրականացման պահանջի, այսինքն՝ անհամատեղելի երևույթները չէին կարող համատեղելի լինել:

Բայց դա արդեն հետևում է, և հիմա պետք է մտածել, թե ինչպես իրականացնել տնտեսական հեղափոխություն, որպեսզի նորից այս ոլորտում անհամատեղելի երևույթներ չձևավորվեն:

Արհեստական մենաշնորհների վերացումից հետո ներկրման ապրանքային շուկաների ազատականացման խնդիրը լայն թափով չի շարժվում, այսինքն՝ բենզին, դիզելային վառելիք, սնունդ և այլն ակտիվ չեն ներկրում, որովհետ իրացման ցանցերը մնացել են նույն՝ նախկինում արտոնություններ ունեցող անձանց սեփականության ներքո: Այո, դա հեշտ խնդիր չէ, սակայն պետք է գնալ ոչ թե կոշտ ճանապարհով, այլ ուղղակի արդյունավետ օրենսդրական և վարչարարական լուծումների օգնությամբ: Այն է՝ օրենքով պարտադրել, որպեսզի նույն որակի և գնի ապրանքը ցանցի տերը այլ ներկրողներից նույնպես վերցնի և վաճառի, ասենք՝ իր շրջանառության 40% կամ 50% շրջանակներում:

Կարևորագույն չլուծված խնդիր է մնում մեծածախ ներկրողի և մանրածախ վաճառողի (սեփական առևտրային ցանցում) իրավաբանական և հարկային վարչարարության իմաստով տարանջատման հարցի լուծումը:

Այսպես, մեծածախ ներկրողը չպետք է մեծածախ գնով ապրանք վաճառի իր խանութներում: Այդ կերպ նա դեմպինգ է իրականացնում մյուս առևտրային խաղացողների նկատմամբ, նախ՝ որովհետև պետք է շահույթ ստանա և հարկեր վճարի, որովհետև դա ձեռնարկատիրություն է: Ներկրողը իր մեծածախի գնով պետք է ապրանքները վաճառի այլ մանրածախ վաճառողների՝ գումարած իր մեծածախի շահույթի և հարկերի չափը: Այս խնդրի լուծումը կհանգեցնի ցանցերի տնտեսական ազատականացման:

Կարևորագույն խնդիր է մնում արդյունաբերական քաղաքականության ընկալումը և դրա իրականացման իրական կարգավորումների ձևավորումը: Այսպես, ՀՀ-ում 2015թ. հունվարի 1-ից գործում է «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որի հեղինակը տողերիս հեղինակն է:

Սակայն գործող օրենքի դրույթները, ըստ էության, չեն իրականացվում: Համաձայն այդ օրենքի, ՀՀ-ն պետք է ունենա հնգամյա պետական

արդյունաբերական ծրագիր, և երկրորդ, տարիների ընթացքում յուրաքանչյուր մարզում պետք է գործարկվի առնվազն մեկ արդյունաբերական գոտի: Վերջինում արդյունաբերական արտադրանքը ազատվում է հարկերից, առանց առանձին օրենքի ընդունման: Թե ինչու այս օրենքի դրույթները չեն իրականացվում, անհասկանալի է:

Այս փորձը հաջողությամբ կիրառվում է ինչպես եվրասիական տնտեսական միության երկրներում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում, այնպես էլ այլ երկրներում: Ուստի, չլուծված է մնում այն հարցը, թե ինչ առավելություններ կան ՀՀ-ում ՝ ի տարբերություն այլ հարևան երկրների, որպեսզի ներդրումները հոսեն հենց Հայաստանի Հանրապետություն:

Այսպիսով, օրենսդրական կարգավորումները շատ կարևոր են, սակայն առավել կարևոր է նաև ներդրումների և ներդրողների իրավական պաշտպանությունը և դրա ապահովման վարչարարությունը:

Այսպես, դեռևս ակնհայտ է, որ ՀՀ-ում չի ձևավորվել այն պետական կառույցը, որը շատ կոնկրետ և անմիջականորեն աշխատում է ներկրողների հետ և լուծում ներդրումների իրականացման ապահովման ամբողջ շղթայի, վարչական և այլ խնդիրները:

Սրանք են, կառուցապատումների հետ կապված՝ շինարարության թույլտվությունները, նախագծերի հաստատումը, հողերի նշանակության կարգի փոփոխությունները, լիցենզիաների տրամադրումը, և այլն: Այս հարցերի լուծման համալիրն ապահովող պետական կառույցի հասցեն կամ անհայտ է, և կամ դա չի իրականացվում: Սակայն հայտնի է, որ անկախ ներդրման չափից՝ ցանկացած ներդրողի «փայփայումը» շատ կարևոր է՝ ներդրումային բումի, իսկ որ գրեթե նույնն է՝ տնտեսական հեղափոխության ապահովման համար:

Հաջորդը իրացման շուկաների քաջալերման խնդիրն է: Այսպես, ՀՀ-ից օրեկան կարելի է 2000 տոննա թարմ պտուղ և բանջարեղեն առաքել արաբական հայտնի երկրներ՝ ինքնաթիռներով: Մեկ 100 տոննա տեղափոխող ինքնաթիռի ծախսը կկազմի շուրջ 100 հազար ամերիկյան դոլար: Սակայն դրա համար անհրաժեշտ են համապատասխան սառնարանային և փաթեթավորման-տարայավորման տնտեսություններ: Պետությունը պետք է խթանի այս ենթակառուցվածքի արագ ձևավորումը:

Նմանատիպ գործընթացը այլ տրանսպորտային և լոգիստիկ համակարգով կարելի է իրականացնել Ռուսաստանի Դաշնության ուղղությամբ, իհարկե, այլ, ավելի խոշոր ծավալներով: Ընդ որում, ցանկացած դեպքում մեր գյուղատնտեսական ապրանքների իրացման գներն այնպիսին են, որ միաժամանակ շահութաբեր է հայրենական ձեռնարկատերերի համար:

Բոլորին է հայտնի, որ կան ծախսերի տեսակներ, որ այսօր պետք է իրականացվեն, սակայն դրանք արդյունք կտան ավելի ուշ, նաև՝ տարիներ հետո: Խոսքը գիտության և կրթության վրա կատարվող ծախսերի մասին է: Սակայն, եթե մենք անկեղծորեն ցանկանում ենք տնտեսական հեղափոխություն, ապա դա պետք է այժմ կատարել, և կտրուկ մեծացնել այդ ոլորտի ծախսերը:

Միշտ հարցը հետևյալն է եղել. նախ՝ թող գիտությունը ցույց տա, թե ինչ է տալիս, հետո այս ծախսերը մենք կկատարենք: Պետական համապատասխան կառույցներին պետք է հայտնի լինի, որ գիտության և գիտական փորձարկումների ոլորտում ոչ թե հարյուրի, այլ՝ հարյուրից մեկի դեպքում է, որ ձևավորվում է ամենաարժեքավորը՝ եզակին, մեկը, որը դառնում է շատ արժեքավոր, սակայն, եթե նախորդ հազարները և հարյուրները չլինեին, և դրանց վրա ծախսեր չկատարվեին, չէր ծնվի այդ եզակին և արժեքավորը:

Պետությունը պետք է հաշվարկի, թե ինչքանով է ինքը պատրաստ կատարելու այդ ծախսերը: Այդ առումով պետք է հայտարարվի համաժողովրդական մոբիլիզացիա: Օտար լեզու և համակարգչային հմտություններ ունենալը անհրաժեշտ, սակայն բավարար չէ, որպեսզի հայ ժողովուրդն ավելի լայնորեն, ներառական և նորովի բացահայտի իր գիտական և ստեղծագործական տաղանդը: Ցավոք, և՛ արվեստի, և՛ գիտության ոլորտում մարդիկ հայրենիքից մեկնում են օտար երկրներ, և այնտեղ է բացահայտվում նրանց տաղանդը: Իհարկե, դա ունի նաև օբյեկտիվ պատճառներ, սակայն մենք պետք է ստեղծենք այն միջավայրը, որ հենց հայրենիքում տաղանդները բացահայտվեն: Հայաստանի Հանրապետությունը չափերով այնքան փոքր երկիր է, որ այստեղ գիտական և ստեղծագործական ազատ գոտիներ և անկլավներ պետք չէ ստեղծել, այլ պետք է ընդհանուր բեկում ապահովել: Դրա համար անհրաժեշտ է համարժեք ազգային գաղափարի ձևակերպում և համազգային նախագծի իրականացում:

Այո, յուրաքանչյուր հայի ընտանիքում պետք է տեղյակ լինեն այդ նախագծի մասին և պաշտպանեն ու աջակցեն այդ ծրագրերին:

Ամբողջ հայ ժողովուրդը չի կարող գիտությամբ զբաղվել, կամ բարձր տեխնոլոգիաներով, սակայն պարտավոր է այդ ոլորտներին աջակցել:

Օրինակ, ինչպես է, որ սպորտի բնագավառում հաճախ հայրենիքում ապրում և մարզվում են աշխարհահռչակ մարզիկներ, իսկ արվեստի և գիտության ոլորտում դա այդպես չէ:

Պետք է գտնել հարցի լուծման իրական ճանապարհը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՇՈՒԿԱ՝ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՆՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
տնտեսագետ
khachatryanvahagn@gmail.com

Օպտիմիզմը մեր պարտականությունն է: Ապագան անորոշ է: Այն կանխորոշված չէ: Ոչ ոք ի զորու չէ կանխատեսել այն, եթե միայն պատահական չստացվի: Մենք բոլորս մասնակցում ենք նրա կերտմանը մեր արարքներով: Եվ մենք բոլորս հավասար կերպով պատասխանատու ենք նրա հաջողության համար:
Կարլ Պոպեր

Անկախություն հռչակելուց հետո, երբ Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունը ձեռնամուխ եղավ նոր հասարակարգի կառուցմանը, խնդիրը շատ պարզ էր՝ ապահովել անցում մի համակարգից մյուսին, իրականացելով քաղաքական և տնտեսական հեղափոխություն: Անցել է մոտ երեսուն տարի, սակայն այսօր խնդիրը ոչ թե լուծվել է, այլ ավելի բարդացել է, և ՀՀ այսօրվա իշխանությունը նորից պետք է ձեռնամուխ լինի իսկական ազատ շուկայական տնտեսակարգի կառուցմանը: 90-ականների սկզբին սկսած բարեփոխումները հաջողության մեծ պոտենցիալ ունեին: Սակայն ինչ որ մի պահից սկսած այն դադարեց իր հիմնական նպատակին ծառայել: Ի՞նչն էր պատճառը, ի՞նչ չստացվեց և ինչո՞ւ չստացվեց: Այս հարցերն ակտուալ են նաև այսօր, հետագա ճշգրիտ և անխոցելի քայլեր անելու պահանջն իրականություն դարձնելու համար: Եվ այսպես, ինչո՞ւ չստացվեց, ներկայացնենք ամփոփ մի քանի եզրահանգումներ.

ա/ Քաղաքական և տնտեսական բարեփոխումներն իրենց վերջնական նպատակին չհասան, քանի որ այդ բարեփոխումների ճանապարհին երկրի քաղաքական վերնախավը շեղվեց ճանապարհից, սկսեց այլ գաղափարներ իրականացնել, երկար տարիներ երկիրը հետ գցելով զարգացման ճանապարհից:

բ/ Պարզվեց, որ ժողովրդավարացման ծրագիրն իրականություն դարձնելն ավելի բարդ է, քան շուկայական տնտեսակարգ կառուցելը: Այն, ինչ արվել էր Հայաստանում տարիների ընթացքում բարեփոխումների

անվան տակ, հանուն ինչ որ կամ մի քանի «վեհ» գաղափարների, իրականում կեղծ-պսեվդո ժողովրդավարացման լավագույն նմուշ կարող է լինել:

գ/ Այդ այսպես կոչված բարեփոխումների ընթացքում մոռացության էր մատնվել աքսիոմատիկ հետևյալ ճշմարտությունը. բարեփոխումները, որոնք իրականացվում են քաղաքական դեմոկրատիայի հաշվին, ավարտվում են քաղաքական դեմոկրատիայի վախճանով: Սակայն սա էլ չի կարող փրկել բարեփոխումները, այն քանդում է փոքր ինչ ազատ, անկախ տնտեսակարգը:

դ/ Այն ռեֆորմները, որոնք իրականացվեցին 90-ականների սկզբին, հասկանալի էին, պարզ, սակայն չափազանց ցավոտ հասարակության, ինպես նաև այն մարդկանց համար, ովքեր որոշումներ էին ընդունում: Այդ ժամանակ խորը բարեփոխումներ իրականացնելը պահանջում էր քաջություն և հետևողականություն:

Հասկանալի է, որ անցյալի հետ համեմատություն անելիս հաշվի են առնվել այն ահռելի տարբերությունները, որ կան այն տարիների և այսօրվա միջև:

Այսօր էլ իշխանությունը պետք է անցնի շատ պարզ, բայց միաժամանակ բարդ, ցավոտ միջոցառումների, որպեսզի իրականություն դարձնի տնտեսական հեղափոխության գաղափարները: Ինչպես տարիներ առաջ, հիմա էլ դրա համար պահանջվում է քաջություն և հետևողականություն: Մի կարևոր նախապայման ևս կա. խնդիրները, որոնք կուտակվել և լուծում չեն ստացել ժամանակի ընթացքում, կարող են իրենց լուծումներն ստանալ միայն և միայն հասարակական համաձայնության և տնտեսական հնարավորությունների համակցությամբ: Նախկին համակարգի պայմաններում էլ կար այդպիսի համաձայնագիր, որն ավելի շուտ պարտադրվել էր կողմերից մեկին՝ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիներին: Հենց այդ պատճառով էլ այն չէր կարող արդյունավետ գործել: Նշենք, որ մյուս կողմի համար այդ համակարգը բավական «արդյունավետ» էր, քանի որ լիարժեք ապահովում էր դրված նպատակների իրականացումը: Մինչ մեկ տարի առաջ, այն շատերի համար անփոխարինելի, ամուր, կենսունակ, երկարաժամկետ հեռանկար, գոյություն ունենալու համարում ուներ: Այսօր իրավիճակն ամբողջությամբ այլ է, խնդիրները, որ պետք է լուծվեն, երկու կողմերին՝թե քաղաքական էլիտային, թե հասարակությանը, այլ սկզբունքներ և մոտեցումներ են պարտադրում: Նոր պայմաններում համակարգը պետք է արդյունավետ գործի բոլորի համար, իսկ այն իրականություն դարձնելու համար պակաս կարևոր չի նախկինում գործող տնտեսական հարաբերությունների արմատական վերանայումը, որն, ըստ էության, նշանակում է իրականացնել տնտեսական հեղափոխություն:

Նշենք, որ այս հոդվածում նպատակ չի դրվել կենտրոնանալ տնտեսության առանձին ճյուղերի փոփոխությունների անհրաժեշտությանը կամ տնտեսական աճի վրա դրանց ազդեցության, կամ էլ տնտեսական կայունության հանգամանքին: Դրանք բոլորն էլ կարևոր են նաև տնտեսական հեղափոխության նպատակների առումով: Սակայն տնտեսական հեղափոխությունը նախ և առաջ գաղափարների, մտածողության, տնտեսական կյանքի մասնակիցների վարքագծի հեղափոխություն է, որն էլ, լինելով մի կողմից որպես հասարակական նոր համաձայնագրի արդյունք, մյուս կողմից ինքն է դառնում նոր խաղի կանոններ սահմանող տնտեսավարող-պետություն-սպառող շղթայում: Սա նշանակում է, որ տնտեսական կյանքի վերաբերյալ հարցադրումներ անելիս կարևորը ոչ թե նպատակների պարզապես թվարկումն է՝ տարբեր թվերով հիմնավորված, այլ այդ նպատակներին հասնելու ճանապարհները: Օրինակ, որպես նպատակ կարելի է ձևակերպել հետևյալը՝ ներկայացված թվերը կամայական են. «Տնտեսական առաջընթացի գլխավոր միջոցը հիմնական կապիտալում ներդրումների արագընթաց աճն է: 2020-2030 թվականներին ներդրումների աճը կկազմի տարեկան 9%, հետագայում տարեկան 10%: Ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կհասնի 2030թ.-ին 30-35%-ի, և այլն»: Կարելի է այսպես շարունակել, բայց մինչ այդ պետք է պատասխանել ինչպե՞ս դրանք իրականացնել և ի՞նչ միջոցներով հարցերին:

Մեկ այլ, ոչ պակաս կարևոր խնդիր է տնտեսական կյանքի իրական պատկեր ունենալը: Իրավիճակին ամբողջական և օբյեկտիվ գնահատական տալու բարդությունն այն է, որ, ինչպես հասարակությունը, մարդիկ, այնպես էլ տնտեսությունը, մեր երկրում երկարաժամկետ, համակարգային մանիպուլյացիայի է ենթարկվել: Դրա արդյունքում տնտեսության ընդհանուր պատկերը այնպիսի խեղաթյուրումների է ենթարկվել[1], որ որևէ քայլ՝ ախտորոշում իրականացնելու նպատակով, պազապես անիմաստ է: Որպես սրա հետևանք՝ դեռևս այսօր էլ անհնար է և նույնիսկ անիմաստ որևէ առաջարկություն անել վիճակը բարելավելու կամ այն ամբողջական կառավարելի դարձնելու համար: Դրա համար անհրաժեշտ է նախ ախտորոշում կատարել, տվյալ դեպքում կարիք կա հանրությանը ներկայացնել երկրի տնտեսության իրական վիճակը բոլոր կողմերով: Օրինակ, մինչ օրս վեր չեն վեր հանվել, չեն պարզվել և չեն ներկայացվել բոլոր այն խախտումները, մեղմ ասած անճշտությունները, որոնք տարիներ շարունակ կիրառվել են ՀՀ-ում տնտեսական, սոցիալական վիճակը ներկայացնելիս: Այն պատկերն, ինչ մենք ունենք և որին հղումներ ենք անում մինչ

[1] Տե՛ս Մարկոսյան Աշոտ, Քոչարյանական «աճի» առասպելը,-Եր., «Անտարես» հրատ., 2018թ.- 120 էջ:

օրս տնտեսության մեջ տեղի ունեցող երևույթներին գնահատական տալու համար, որևէ աղերս չունի իրական վիճակի հետ: Այդ պատկերն ունենալուց հետո նոր կարելի է փորձել գտնել տնտեսության հիվանդության բուժման միջոցները, որոնց ընտրությամբ էլ պայմանավորված կլինի բուժման արդյունավետությունը:

Տնտեսական հեղափոխության բարդությունն այն է, որ այն ժամանակ է պահանջում, տնտեսական կյանքի մասնակիցներից նախատեսում է համաձայնեցված կանոնների ընդունում և կիրառում, նախատեսվող փոփոխությունների գործընթացին ակտիվ մասնակցություն, որոնք էլ պատճառ են դառնալու տնտեսական կյանքի մասնակիցների վարքագծի արմատական փոփոխության: Այստեղ է, որ առաջանում է մեկ այլ ոչ պակաս կարևոր հարց, իսկ ինչի՞ մասին է խոսքը, չէ որ անցած տարիների փորձը ոչ միայն ընդհանրապես ընդունելի չէ, այլ բացարձակ կործանարար է, վտանգավոր պետության գոյության համար:

Անդրադառնանք նոր վարքագծի ձևավորման մի քանի նախադրյալների: Նախ, շատ կարևոր է ընդունել և ամրագրել, որ նոր պայմաններում տնտեսական հեղափոխություն հնարավոր է իրականացնել միայն և միայն պետություն-քաղաքացի նոր հարաբերությունների, ազատ մարդու, ազատ ընտրության, ընտրության ազատության պայմաններում: Իսկ ո՞վ է ազատ մարդը: Փիլիսոփայական այս հարցադրումն այսօր էլ արդիական է՝ հայաստանյան իրականության պահանջների, նոր վարքագծի ձևավորման և հաստատման ենթատեքստում: Առանձնացնենք այն բնորոշումները, որոնք, ըստ մեզ, ավելի ամբողջական են և համահունչ մեր երկրի այսօրվա մարտահրավերներին: Նախ և առաջ, ազատ մարդու համար երկիրն այն կազմող անհատների հավաքածու է, և ոչ թե բարձրագույն իշխանություն: Ազատ մարդը հպարտանում է իր ընդհանուր ժառանգությամբ և հավատարիմ է ընդհանուր ավանդույթներին: Սակայն, նա պետությանը ընդունում է որպես միջոց, գործիք և ոչ թե որպես ողորմության և նվերների աղբյուր, և ոչ էլ որպես տեր կամ Աստված, որին պետք է կուրորեն պաշտել և ծառայել: Ազատ մարդը չի հարցնի՝ ի՞նչ կարող է անել իր համար իր երկիրը, ոչ էլ կհարցնի թե ի՞նչ ինքը կարող է անել իր երկրի համար: Դրա փոխարեն նա կհարցնի, ի՞նչ կարող են անել ինքը և իր հայրենակիցները պետության օժանդակությամբ, որպեսզի ավելի հեշտ լինի քաղաքացիների-մարդկանց անհատական պարտականությունների կատարումը, հասնեն քաղաքացիների անձնական նպատակներին և, առաջին հերթին, պաշտպանեն քաղաքացիների ազատությունը:

Մյուս կողմից, չմոռանանք մարդկանց ազատությունը պահպանելու համար պետության անհրաժեշտության մասին, որն իրենից ներկայացնում

է գործիք, որի միջոցով մարդիկ կարող են օգտվել այդ ազատությունից: Սակայն, բոլոր դեպքերում, երբ իշխանությունը կենտրոնանում է քաղաքական գործիչների ձեռքում, նա վերածվում է մեր ազատության սպառնալիքի: Այս հանգամանքը չի կարելի մոռանալ, անկախ նրանից թե տվյալ պահին իշխանությունն ինչպես է իրեն դրսևորում:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որը վերաբերում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և պետք է գործի որպես կարևորագույն սկզբունք և էական ազդեցություն կունենա հասարակական կյանքի վարքագծային դրսևորումների վրա, դա անխտիր բոլոր մարդկանց համար հնարավորությունների ազատության ապահովելն է, հնարավորությունների անհավասարությունը վերացնելը: Իրականում, մեր և նմանատիպ երկրներում անհավասարության մասին խոսելիս կարևոր է ոչ միայն եկամուտների անհավասարության, այլ նաև հնարավորությունների անհավասարության թեման, այդ թվում՝ քաղաքական որոշումների ընդունման մասով: Հիմնականում այս հանգամանքն է նաև հետագայում պատճառ դառնում նյութական անհավասարության: Այս առումով շատ բնորոշիչ է հայտնի ազատական տնտեսագետ, Նոբելյան մրցանակակիր Միլթոն Ֆրիդմանի հետևյալ միտքը. «Կարևորն այն չէ, թե որքան է հասարակության մեջ անհավասարության չափը, այլ այն է, թե «Ներքևների» մարդիկ ինչքան հնարավորություններ ունեն հասնելու սոցիալական բուրգի ամենավերին աստիճանին: Եթե այդպիսի դինամիկան բավականին զարգացած է, ապա մարդիկ ընդունում են շուկայի արդյունավետությունը: Երբ ձեր առջև բացվում են հնարավորությունները, անհավասարության խնդրի նկատմամբ վերաբերմունքը ավելի տանելի է դառնում: Հենց սրա վրա է հիմնված ԱՄՆ-ի սոցիալական համակարգը»[1]: Հեղափոխության հաջողությունը կախված է լինելու նաև նրանից, թե ինչպիսի վերաբերմունք է հեղափոխության արդյունքում ձևավորվելու պետության նկատմամբ, ինչպիսին են լինելու պետություն – շուկա հարաբերությունները: Դրանով է պայմանավորված լինելու պետական գործառույթների ծավալը, բովանդակությունը: Նախկին համակարգի ամենալուրջ և ճակատագրական սխալը նրանում էր, որ ժամանակի ընթացքում խախտվեց շուկայական տնտեսության ամենակարևոր կանխադրույթը՝ բիզնեսի և իշխանության տարանջատման անհրաժեշտությունը: Փոխանակ ապահովեին, որ բիզնեսի և իշխանության տարանջատումը ամրապնդվեր, ինստիտուտավորվեր, որը կնշանակեր հավասար մրցակցային պայմաններ, սեփականության անձեռնմխելիություն, անշահախնդիր և հավասար իրավական

[1] Фридман Милтон, Свободный рынок и “конец истории”, Русский Журнал, National Political Quarterly Free Markets and the End of History Оригинал статьи http://www.digitalnpq.org/archive/2006_winter/friedman.html

համակարգ, աստիճանաբար վերականգնվեց խորհրդային ժամանակներին բնորոշ գաղափարախոսությունը՝ պետությունը, այսինքն իշխող բյուրոկրատիան, նպատակահարմարությունից կամ շահից ելնելով, իրավունք ունի միջամտելու մրցակցային շուկա, իսկ բիզնեսը և քաղաքացիները պետք է նրա ցանկությունը առանց քննարկելու իրականացնեն:

Այս առումով հետաքրքիր է և ուսանելի հայտնի տնտեսագետ Սերգեյ Գուրիևի տեսակետը: Նա իր «Տնտեսության առասպելները»[1] գրքում գրում է՝ «Ինչպես Ադամ Սմիթի ժամանակ, այժմ էլ շուկայի «անտեսանելի ձեռքը» մեծ մասամբ արդյունավետ պաշտպանում է հասարակության շահերը: Սակայն, ինչպես նախկինում, ինքն էլ կարիք ունի պաշտպանության: Պետության և հասարակության դերը հենց այն է, որ աջակցի և պահպանի «անտեսանելի ձեռքը»՝ նրա հնարավորությունները սահմանափակելու անխուսափելի փորձերից»[2]:

Ամփոփելով՝ կարող ենք պնդել, որ տնտեսական հեղափոխությունը և նրա հաջողությունն ամբողջովին պայմանավորված են լինելու վարքագծային վերափոխումներով: Վերջինիս իրականացումը նախատեսում և պահանջում է համապատասխան պայմաններ:

Նախ՝ – օր առաջ պետք է մոռացության մատնվեն անցյալի կառավարման ինստիտուտները՝ բովանդակային առումով,

– երկրորդ, կարիք կա կանոնակարգելու նոր գաղափարախոսության հիմնադրույթները, պահանջները,

– երրորդ, հրատապ անհրաժեշտություն կա, հստակ ձևակերպելուց զատ, տնտեսական կյանքի մասնակիցներին տեղ հասցնել նոր սկզբունքները, կանոնակարգերը,

– չորրորդ, պետք է առանց հապաղելու սկսել նոր ինստիտուտների՝- նոր իրենց էությամբ և բովանդակությամբ, ձևավորման գործընթացները:

Տնտեսական հեղափոխությունն իրականացնելու հաջողության նախապայմաններից շատ կարևոր է, որ այն ընկալվի մարդկանց կողմից: Շատ բարեփոխումներ իրենց նպատակին չեն հասել հենց այն պատճառով, որ մարդկանց չի ներկայացվել իրականացվող քայլերի նշանակությունը, դրանց բովանդակային և կիրառական մանրամասները: Դրա մասին կարող ենք կարդալ Ռուսաստանի բարեփոխիչներ Ա.Կոխի, Պ.Ավենի «Գայդարի Հեղափոխությունը»[3] գրքում, ինչպես նաև հայտնի տնտեսագետ Սերգեյ Գուրիևի հարցազրույցում[4]:

---

1 Сергей Гуриев, Мифы экономики; Москва, 2014, с. 320

2 Տե՛ս Сергей Гуриев, Мифы экономики; Москва, 2014, стр. 104

3 Авен, Кох: “Революция Гайдара: История реформ 90-х из первых рук”, Альпина Паблишер, 2015 г. Стр. 471.

4 Сергей Гуриев: «Все счастливые страны счастливы одинаково», 9 ноября, 2016, slon.ru

Այս առումով բավականին հետաքրքիր ուսումնասիրություն է իրականացրել Համաշխարհային բանկը, որն, ըստ մեզ, շատ համահունչ է այսօրվա Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին և խիստ արդիական է:

Անդրադառնալով ընդհանրապես բարեփոխումներին և դրանց իրականացման հաջողությունների խնդրին՝ Համաշխարհային բանկը նշում է, որ բարեփոխումները պետք չէ գաղտնի իրականացնել, թափանցիկության գործոնը կարևոր դեր է խաղում դրանց իրականացման հաջողվածության մեջ: Այս մասին ասված է «Բարեփոխումների քաղաքատնտեսություն» զեկույցում, որը մշակվել է բանկի զարգացման հետազոտական խմբի ավագ տնտեսագետ Ստուտի Քեմանիի կողմից[1]: Զեկույցում մասնավորապես նշված է, որ ցանկացած հասարակություն կարող է «թաղվել» զարգացման ցածր մակարդակի վրա, չնայած այն բանին, որ մարդիկ ակնհայտորեն տեսնում են փոփոխության հրատապության անհրաժեշտությունը, և այդ հակասության պատճառը քաղաքացիների տարբեր տեսակետներն են առկա խնդիրների առնչությամբ: Որպեսզի այդ հարցը իր լուծումն ստանա, ըստ Համաշխարհային բանկի, կան չորս կարևոր գործոններ, որոնց վրա քաղաքական էլիտաները բարեփոխումներ իրականացնելիս պետք է հենվեն:

Առաջին գործոնը՝ Բարեփոխումները, ամենայն հավանականությամբ, հաջող կլինեն, եթե իրապես բարեփոխում լինեն: Դրանք մեծ առավելություններ կտան թանկարժեք ստատուս-քվոյի պահպանման համեմատ: Քաղաքականության կամ ինստիտուտների ամեն մի փոփոխություն չարժե բարեփոխում անվանել:

Երկրորդ գործոնը, որից կախված է բարեփոխումների հաջողությունը, բարեփոխումների ընդարձակ հիմնավորումն է: Բարեփոխման նախաձեռնողները պետք է տեխնիկական ապացույցներ ունենան, որոնք ապագաղափարականացված և անկողմնակալ կլինեն: Էլիտաները պետք է ցույց տան բնակչությանը, թե որքան անօգուտ է ստատուս-քվոն և ինչ դրական փոփոխություններ կբերեն բարեփոխումները: Այս հարցում կարող են օգնել անկախ վերլուծական ու հետազոտական հեղինակավոր կենտրոնները:

Երրորդ գործոնը, եթե այս երկու կետերը պահպանվում են, բարեփոխումների խոչընդոտ է դառնում վնասը, որը հասցվում է որոշակի խմբերին: Իշխանությունը նրանց պետք է խոստանա կիսվել բարեփոխումների դրական արդյունքներով, որպեսզի նրանք չխանգարեն: Սակայն

[1] Political Economy of Reform, Stuti Khemani, Development Research Group Macroeconomics and Growth Team October 2017, WB

փոխհատուցումը կարող է շատ մեծ լինել և հնարավոր չլինի իրականացնել դա: Այդ դեպքում պարտվող խմբերը կարող են փորձել համոզել քաղաքացիներին, որ փոփոխությունները նրանց շահից էլ չեն բխում կամ էլ գիտակցաբար այնպիսի տնտեսական քաղաքականություն վարեն, որ հասարակությանը վնաս հասցվի: Այդ պատճառով պետությունը պետք է կենտրոնանա նաև երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոփոխությունների վրա, որ թուլացնի դժգոհ լոբբիստների ազդեցությունը:

Ի վերջո, Համաշխարհային բանկի վերջին խորհուրդը վերաբերում է այն իրավիճակին, երբ բարեփոխումներին խանգարում են պոպուլիստական պահանջները կամ էլ պարտվող խմբերի տարածած սխալ տեղեկությունները: Այդ դեպքում քաղաքական գործիչները պետք է փոփոխությունների անհրաժեշտության որակյալ ապացույցներ ներկայացնեն:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԾՈՒՂԱԿՆԵՐ ԿԱՄ՝ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԱՂՔԱՏ ԵՐԿՐՆԵՐԸ ԹՈՂՆԵԼ ԱՂՔԱՏ, ԻՍԿ ՀԱՐՈՒՍՏ ԵՐԿՐՆԵՐԸ՝ ՀԱՐՈՒՍՏ

ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ, FRM
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար, ֆ.մ.գ.թ, տ.գ.դ., պրոֆեսոր
rubengevorgyan@ysu.am

Ինստիտուցիոնալ ծուղակներ ասելով հասկանում ենք այնպիսի իրավիճակներ, երբ համակարգը և այդ համակարգը կազմող մարդկանց վարքագիծը բերում են այնպիսի իրավիճակի, երբ բոլորը իրար հետ կորցնում են և, միևնույն ժամանակ, ամենքը առանձին չեն կարող առաջարկել այնպիսի լուծում, որը բերում է օպտիմալ վիճակի[1]: Օպտիմալ լուծում գտնելու միակ ճանապարհը գործողությունների համակարգումն է կամ այլ վարքագծի պարտադրումը: Ընդ որում, պարտադրում բառը այստեղ կարելի է հասկանալ ինչպես ուղղակի իմաստով, այնպես էլ որպես այնպիսի մի նոր իրավիճակի ստեղծումը, երբ ցանկալի վարքագիծը դառնում է բոլորի կողմից ամենաընդունվածը: Ամեն դեպքում, «ինստիտուցիոնալ ծուղակից» դուրս գալու համար պահանջվում են որոշակի տրանսակցիոն ծախսեր, որոնք հաճախ անընդունելի բարձր են:

Գիտական գրականության մեջ նկարագրված են մի շարք ինստիտուցիոնալ ծուղակների օրինակներ: Այստեղ ներկայացնենք օրինակ հայաստանյան իրականությունից: 90-ականների սկզբին զանգվածային ապօրինի շինությունների կառուցման գործընթաց սկսվեց Հայաստանում, որը մի փոքր ավելի դանդաղ տեմպերով շարունակվում է մինչև այսօր: Ակնհայտ է, որ բոլորը միասին այդ գործընթացից տուժում են, քանի որ բոլորի համար ապրելու պայմանները դառնում են շատ ավելի անհարմարավետ (չկան բակեր, որտեղ երեխաները կարող են խաղալ, փակվում են շենքերի մուտքեր, հնարավոր չէ աղբահանություն կազմակերպել, իրականացնել համայնքային զարգացման արդյունավետ ծրագրեր և այլն), ինչը ուղղակիորեն ազդում է տնտեսական զարգացման և համայնքային ենթակառուցվածքներում ներդրումներ իրականացնելու վրա:

[1] V. M. Polterovich, Institutional Traps: Is There a Way Out? // Social Sciences, 2005, v.36, № 1, p.30–40, http://dlib.eastview.com/browse/doc/7438786

Միաժամանակ, տարածքներ չգրավելու սկզբունքով մեկ այլ քաղաքացու կենսակերպը բերում է նրան, որ, եթե ինքը չի գրավում ապօրինի տարածքներ, ապա այդ տարածքը գրավում է հարևանը: Արդյունքում, այդպիսի սկզբունքով ապրելը բերում է նրան, որ այդ սկզբունքը դավանողները «պարտվում» են: Այս պատճառով տարածքներ գրավելու վարքագիծը շատ արագ դառնում է ընդունելի, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հերոսացվում է: Հենց այսպիսի իրավիճակներն են անվանում «ինստիտուցիոնալ ծուղակներ»: Երբ առանձին սուբյեկտի գործունեությունը չի կարող բերել փոփոխության՝ անհրաժեշտ են ինստիտուցիոնալ փոփոխություններ: Ամենավտանգավորը այս իրավիճակում «ընդունված» դառնալու հանգամանքն է, երբ հասարակությունը կորցնում է վտանգավոր երևույթների նկատմամբ «իմունիտետը»:

Ընդհանուր առմամբ, մարդկանց վարքագծի վրա «ինստիտուցիոնալ ծուղակների» ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև մարդկանց վարքագծի փոփոխության ազդեցությունը ծուղակի խորացման վրա շատ քիչ են ուսումնասիրված: Մինչդեռ ակնհայտ է, որ այս երկու հակադարձ գործընթացները կարևորագույն ազդեցություն ունեն տնտեսական զարգացման վրա: Կարելի է նաև առաջ քաշել հետևյալ վարկածը՝ «ինստիտուցիոնալ ծուղակները» մարդկանց վարքագիծը փոխելով, ձեռք են բերում տարածվելու հատկություն, այդպիսով՝ մարդկանց փոխված վարքագիծը դառնում է նոր ծուղակների ի հայտ գալու պատճառ: Ըստ այդմ, «ինստիտուցիոնալ ծուղակները» կարող են շղթայական բնույթ ունենալ:

Գրականությունում ամենահայտնի ինստիտուցիոնալ ծուղակի օրինակ է այսպես կոչված QUERTY էֆեկտը: Այդպես են անվանում տպիչ մեքենայի ստեղնաշարի անգլերեն լեզվով գոյություն ունեցող դասավորվածությունը: Այն ստեղծվել է 19-րդ դարի կեսերին, դրանից հետո մի քանի փորձ է արվել շուկայում առաջարկել տպիչ սարքեր, որոնք ունեն ստեղնաշարի այլ դասավորվածություն: Ապացուցված է, որ տպելու արագության և արդյունավետության տեսանկյունից՝ գոյություն ունեցող ստեղնաշարերը շատ ավելի անհարմար են, քան շատ այլ տարբերակներ: Սակայն, մինչ օրս օգտագործվող ամենաժամանակակից բոլոր համակարգիչներն օգտագործում են «անարդյունավետ» ստեղնաշարը: Սա «ոչ արդյունավետ» ֆորմալ ինստիտուտների երկար գոյատևելու հնարավորության ամենահայտնի օրինակն է: Ինստիտուցիոնալ հետազոտություններում դա հաճախ անվանում են «QWERTY»՝ էֆեկտ կամ «ուղեծրի» էֆեկտ[1]: Գլխավոր

[1] Аузан А. А., Экономика всего. Как институты определяют нашу жизнь. М., ООО «Манн, Иванов и Фербер», 2014

պատճառը, որ մինչև այսօր օգտագործվում է վերը նշված ստեղնաշարը, վարքագծային է:

Երբ ստեղնաշարի փոփոխության անհրաժեշտությունը ակնհայտ դարձավ, արդեն ձևավորվել էր «ընդունված վարքագիծ»՝ տպելու սովորույթ: «Ընդունված վարքագիծ» գաղափարը չափազանց կարևոր է տնտեսական զարգացման համար[1]: «Ընդունված վարքագիծը» փոխելու համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ՝ տրանսակցիոն ծախսեր: Տպիչ սարքի օրինակում այդ ներդրումները կարող էին անել կամ տպիչ սարք արտադրող ընկերությունները կամ օգտագործողները: Պատմականորեն ստացվեց այնպես, որ երկու կողմն էլ այդ ռեսուրսները և հնարավորությունները չունեցան: Այսպիսի դեպքերում հաճախ ասում են, որ «ընդունված վարքագծի» փոփոխությունը պահանջում է անընդունելի մեծ տրանսակցիոն ծախսեր:

Վերադառնալով հայաստանյան օրինակին՝ տեսնում ենք նույն օրինաչափությունները: Մասնավորապես՝ նկարագրված ինստիտուցիոնալ ծուղակը, ինչպես նաև մի շարք այլ նմանատիպ ծուղակները, իրենց հետ բերել են նոր «ընդունված վարքագիծ», որը մեկ բառով կարելի է բնութագրել որպես «զոռբայություն»: Պետք է նշել, որ վարքագծի այսպիսի դրսևորումների ի հայտ գալուն նպաստել է նաև մի շատ կարևոր երևույթ, որը գիտական գրականությունում կոչվում է «բռնագրավված դեմոկրատիա»[2], որն իր հերթին հիմնված է «բռնագրավված պետություն» գաղափարի վրա[3]: Հայկական իրականության մեջ առկա այս երևույթը և դրա դրսևորումները մեր կողմից քննարկվել են նախորդ գիտաժողովի նյութերում[4]: Այստեղ հարկ է նշել ևս մի հայտնի երևույթ, որը հաճախ դիտարկվում է ինստիտուցիոնալ տնտեսագիտությունում: Այն ունի ուղիղ առնչություն այս հոդվածում քննարկվող հարցերի հետ: Դա, այսպես կոչված, ինստիտուտների դիսֆունկցիան է: Լինում են դեպքեր, երբ ֆորմալ ինստիտուտը ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարում է կատարել իր գործառույթները[5]: Երբեմն դիսֆունկցիան բնորոշում են որպես մի

---

1 Г. Л. Саргсян, Р. А. Геворгян, Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран, Вестник Московского Университета. Серия 6. Экономика, N 1, 2019, ст. 20–50.

2 Robinson, James A, and Daron Acemoglu. 2008. “Persistence of Power, Elites and Institutions.” American Economic Review 98 (1).

3 «Anticorruption in Transition. A Contribution to the Policy Debate» (The World Bank, Washington, D. C., 2000).

4 Ռ. Ա. Գևորգյան, Ինստիտուցիոնալ վերափոխումների արդի առանձնահատկությունները ՀՀ-ում, «Ինչ անել»: Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Գիտագործնական խորհրդաժողով: Էջ 37–42.

5 Silvestrov S. N., Zeldner A., G., Osipov V.,S. Introduction to the Theory of Economic Dysfunction, Mediterranean Journal of Social Sciences, Vol 6 No 3., 2015, Rome.

իրավիճակ, երբ ինստիտուտն սկսում է վնասել հասարակությանը[1]: Հաճախ ինստիտուտների դիսֆունկցիան կապում են հասարակության ներսում տնտեսական և սոցիալական գործընթացների զարգացման հետ, երբ որոշ ինստիտուտներ չեն հասցնում հարմարվել հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացմանը[2]: Ինստիտուցիոնալ ծուղակները կարող են պատճառ լինել ինստիտուտների դիսֆունկցիայի: Սակայն, ավելի հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ինստիտուտների դիսֆունկցիան է հանդիսանում ինստիտուցիոնալ ծուղակների ի հայտ գալու հիմնական պատճառը:

Հաջորդ կարևոր նմանությունը QERTY էֆեկտի և մեր օրինակի միջև այն է, որ տնտեսական զարգացման տեսանկյունից նոր արդյունավետ ուղեծիր դուրս գալու համար անհրաժեշտ են զգալի տրանսակցիոն ծախսեր: Մեր օրինակում տրանսակցիոն ծախսերը անհրաժեշտ են ոչ միայն վարքագիծը փոխելու, այլ նաև քաղաքաշինական նորմերը վերականգնելու համար: Սրանք նույնպես հայտնի իրավիճակներ են, երբ ինստիտուցիոնալ ծախսերը, բացի «ընդունված վարքագծի» փոփոխությունից, պահանջում են նաև հավելյալ ծախսեր: Ամենայն հավանականությամբ, որոշ դեպքերում այսօր այդ նորմերի վերականգնման հնարավորությունները տեխնիկապես անհնարին են դարձել:

Անգուս Մեդիսոնի[3] աշխատանքները տնտեսական զարգացման պատմական տվյալների հիման վրա ցույց են տվել, որ աշխարհի երկրները ըստ տնտեսական աճի կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խումբը ցույց է տալիս տնտեսական զարգացման կայուն ցուցանիշներ, հաճախ ասում են՝ ընթանում է տնտեսական զարգացման բարձր ուղեծրով, երկրորդ խումբը հակառակը՝ կայուն ընթանում է տնտեսական զարգացման ցածր ուղեծրով, և, վերջապես, երկրների փոքր խումբ, որոնք պատմության որոշ փուլերում փորձ են կատարում բարձրանալ վերին ուղեծիր, բայց նորից են վերադառնում ցածր ուղեծիր: Ըստ Մեդիսոնի ուղեծրի՝ փոփոխման հաջող դեպքերը շատ քիչ են եղել: Նա, որպես այդպիսի օրինակ բերում է Ճապոնիայի դեպքը:

Եթե մի փոքր ավելի պարզեցնենք այդ թեզը, ապա կարելի է պնդել հետևյալը՝ աղքատ երկրները մնում են աղքատ, իսկ հարուստ երկրները՝ հարուստ: Այս երևույթի ամենաընդունված բացատրությունն այն է, որ երկրների զարգացման ուղեծիրը պայմանավորված է այսպես կոչված

[1] Zeldner A. G. Destructive Tendencies and Constructive Opportunities to overcome them in the Economic System of Russia., Moscow, Economika.

[2] Krisnawati, A., Yudoko, G., Bangun, Y. R. Development path of corporate social responsibility theories // World Applied Sciences, Journal, 30 (Innovation Challenges in Multidiciplinary Research & Practice): 110-120. DOI: 10.5829/idosi.wasj.2014.30., 2014.

[3] Madison, A. Monitoring the World Economy 1820–1992, OECD Development Centre, Paris, 1995

վերսահմանադրական կանոններով կամ արժեհամակարգով: Դա նույնն է, ինչը մենք անվանում ենք «ընդունված վարքագիծ»: Այսինքն, նոր ուղեծիր դուրս գալու համար անհրաժեշտ է հենց այդ վարքագծի փոփոխությունը: Ինչպես քիչ առաջ նշեցինք, այդպիսի փոփոխություններ իրականացնել պատմականորեն հաջողվել է շատ քիչ երկրների: Սակայն կա մի կարևոր հանգամանք՝ որքան երկար գոյություն ունեն «ընդունված վարքագծի» տարրերը, այդքան ավելի դժվար է դրանք վերափոխել կամ այնքան ավելի մեծ ներդրումներ են դրա համար պահանջվում: Քանի որ Հայաստանում օպորտունիստիկ վարքագծի տարրերը ի հայտ են եկել վերջին մի քանի տասնամյակում, այն էլ հիմնականում այս աշխատանքում նկարագրված «ինստիտուցիոնալ ծուղակների» գոյության պատճառով, ապա հույս կա, որ դրանք կարող են համեմատաբար արագ և «էժան» վերացվել:

Վստահաբար կարելի է պնդել, որ այն անցումային երկրները, որոնք կկարողանան վերացնել գոյություն ունեցող «ինստիտուցիոնալ ծուղակները» և փոխել հասարակության մեջ ընդունված վարքագիծը, հնարավորություն կունենան փոխել տնտեսական զարգացման ուղեծիրը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է նպատակաուղղված ծրագիր՝ երկարաժամկետ պլանավորման հորիզոնով:

Նոր ուղեծիր դուրս գալու իրական հնարավորությունը ենթադրում է արդյունավետ ինստիտուտների ձևափոխումներ՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և գոյություն ունեցող արժեհամակարգը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԿԱՌԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ
տ.գ.թ., դոցենտ

Պետության գործառույթներին և դերին առնչվող հարցադրումներն առավել քան արդիական են մեր օրերում, երբ աշխարհն արագ փոփոխվում է: Թերևս դա է պատճառը, որ վերջին տասնամյակներում առավել հաճախադեպ են դարձել պետության կայացածության, վերջինիս արժևորման ու դրան փոխկապակցված տարաբնույթ խնդիրների լուծման մասին քննարկումները: Պատահական չէ, որ ամերիկացի փիլիսոփա, քաղաքագետ Ֆ. Ֆուկույաման խոսում է պետական ապարատի թուլության բնութագրիչների և ուժեղ պետություն ձևավորելու անհրաժեշտության մասին, որոնք արդեն երկար տարիներ խիստ արդիական են[1]: Հասարակական կյանքում պետության դերակատարման և իրականացրած գործառույթների մասին հարցադրումները համակողմանի են, եթե հաշվի են առնված ու համադրված են խնդրի թե՛ իրավական, թե՛ քաղաքագիտական, թե՛ տնտեսագիտական հատույթները:

Պետության հիմնական խնդիրը երկրի բնակիչների բարեկեցության ապահովումն է: Այն պարագայում, երբ աշխարհի բազմաթիվ երկրներում առկա են աղքատություն, գործազրկություն, սով, բարձր գնաճ, ոչ ցանկալի միգրացիա, բռնություն և բացասական այլ երևույթներ, պետությունների կայացածության վերաբերյալ հարցադրումներն առավել պահանջված են: Եվ այս առումով հարց է առաջանում, թե պետական ինստիտուտները որքանո՞վ են արդյունավետ գործում, կարողանո՞ւմ են արդյոք իրականացնել իրենց վրա դրված գործառույթներն ու լուծում տալ այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են հասարակության բարեկեցության բարձրացմանը: Ընդ որում, այս հարցը հավասարապես հնչում է թե զարգացած, թե զարգացող երկրների համար: Ուստի՝ պետությունները պարբերաբար իրականացնում են քաղաքական, տնտեսական վերափոխումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել պետական ինստիտուտների արդյունավետությունը: Թերևս հենց այս

[1] Տե՛ս Фукуяма Ф. Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке, М., 2006, էջ 13:

համատեքստում է պետք դիտարկել ՀՀ Կառավարության կառուցվածքի, տարբեր պետական հիմնարկների, ՊՈԱԿ-ների, ԾԻԳ-երի իրականացրած օպտիմալացման քայլերը:

Պետական ինստիտուտների արդյունավետության բարձրացումը շարունակական գործընթաց է, ինչը ենթադրում է իրավական կարգավորումների կատարելագործում, առկա օրենսդրական նորմերի կիրարկման խթանում, հասարակության կարիքներին համահունչ քաղաքականության մշակում ու իրականացում և այլն: Բնական է, որ այդ գործընթացում հնարավոր են նոր, այդ թվում՝ ներկառուցված ինստիտուտների ձևավորում ու որոշ ինստիտուտների լուծարում:

Պետության կայացածությունը կարելի է գնահատել այն չափով, թե որքանով է դրված նպատակներին հասնելու համար մշակվել և իրականացվել արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն երկրի պառլամենտի, կառավարության, դատական համակարգի կողմից: Առաջին հայացքից պարզ թվացող այս բանաձևը բավականին խութեր է պարունակում. անհրաժեշտ է բացահայտել հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են պետության կայացածությունը սոցիալ-տնտեսական, ներքաղաքական, արտաքին քաղաքականության ոլորտներում: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ փորձում ենք անդրադառնալ նաև այդ գործոնների ներքին կապերին: Ընդ որում, տվյալ գործոններն ու դրանց միջև առկա կապերը պետք է դիտարկել ոչ միայն ժամանակի որոշակի պահի դրությամբ, այլև հաշվի առնել դրանց զարգացման դինամիկան ժամանակի ընթացքում:

Ընդհանուր գծերով ներկայացնելով պետության կայացածությունը բնորոշող գործոնների առանձնացման մոտեցումները՝ պետք է փաստենք, որ դրանք առավելապես պայմանավորված են պետության գործառույթների վերաբերյալ պատկերացումներով: Օրինակ՝ Կ. Մարքսի տեսության հետևորդները պետության գործառույթներից առաջնային են համարում հարկահավաքումը, հետևապես, պետության կայացածության որոշման հիմքում դնում են հարկերը հարկադրանքի միջոցով հավաքելու կարողությունը: Մ. Վեբերի տեսության հետևորդները պետությունը համարում են քաղաքական համակարգի միակ խաղացող, որն ունի օրինական հարկադրանքի իրավունք, ուստի, որպես գլխավոր գործառույթ՝ ամրագրում են հարկադրանքի գործառույթը: Ինստիտուցիոնալիզմի արդի հետևորդները հիմնական են համարում պետության վարչարարական-ինստիտուցիոնալ գործառույթը, հետևաբար, պետության կայացածությունը որոշում են խաղի կանոնների հստակ սահմանմամբ և պետական կառավարման արդյունավետության բարձրացմամբ:

Պետության կայացվածության վերաբերյալ որոշ գիտնականներ առանձնացնում են այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են պաշտպանությունը, օրինականությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, առողջապահությունը, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը, մակրոտնտեսական կարգավորումը, շուկաների բնականոն աշխատանքին աջակցությունը և այլն[1]: Մեկ այլ դեպքում պետության կայացածությունը համադրվում է ռազմական ուժի, քաղաքական ինստիտուտների որակի և վարչարարական կարողությունների հետ[2]: Մոտեցում կա նաև պետության կայացածությունը կապել հարկահավաքման կարողության, հարկադրման և բյուրոկրատական ինստիտուտների արդյունավետության հետ[3]:

Ակներև է սերտ կապը պետության կայացածության և պետական կառավարման արդյունավետության միջև: Ու, թեև կառավարման արդյունավետության գնահատման միջազգայնորեն ընդունված չափանիշները դեռևս ձևավորման փուլում են, Համաշխարհային բանկի կողմից սահմանված մեթոդաբանությամբ՝ պետական կառավարման արդյունավետության գնահատման հարցերը ներառում են կառավարության ընտրության և փոփոխության ընթացակարգերի, նրանց գործունեության նկատմամբ հսկողության, ռացիոնալ քաղաքականություն մշակելու և արդյունավետ իրագործելու կառավարության կարողունակության, ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ պետության և քաղաքացիների հարգանքի աստիճանը: Ավելին՝ կոնկրետ ոլորտներում և համակարգերում կառավարման մասնակի արդյունավետության գնահատումը նախապայման է պետական կառավարման ամբողջական արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրեր մշակելու, իրականացնելու, վերահսկելու և ազդեցությունը գնահատելու համար: Այդուհանդերձ, այս մոտեցումը կիրառելի է ընդհանրական արդյունավետությունը գնահատելիս, որի համար Համաշխարհային բանկի կողմից մշակվել են ագրեգացված (խմբավորված) ինդեքսներ:

Այսպիսով՝ պետական կառավարման որակի գնահատումն իրագործվում է վեց խումբ պարամետրերով, որոնք են՝

1. Պետական մարմինների հաշվետվողականությունը և բնակչության կարծիքի ընդունումը (**Voice and Accountability)**՝ իշխանության ընտրություններին քաղաքացիների մասնակցության հնարավոր աստիճանը,

---

[1] Տես Fukuyama F., The imperative of state-building. //Journal of Democracy, Baltimore, The Johns Hopkins university press, 2004, b vol 15 N 2, page 17-31.

[2] Տես Hendrix C., Measuring state capacity: theoretical and empirical implications for the study of civil conflict, //Journal of peace research, Thousand Oaks, 2010, vol. 47, N 3, page 273-285.

[3] Տես Hanson J., Democracy and state capacity: complements or substitutes?, Studies in comparative political research, APSA 2013 annual meeting paper, 2013.

ինչպես նաև խոսքի ազատության առկայությունը, միավորումների և ԶԼՄ ազատությունը:

2. Քաղաքական կայունությունը և բռնության բացակայությունը (**Political Stability and Absence of Violence/Terrorism)**՝ ոչ սահմանադրական եղանակով կամ բռնության, այդ թվում՝ տեռորիզմի կիրառմամբ իշխանության ապակայունացման հավանականության աստիճանը:

3. Կառավարման արդյունավետությունը (**Government Effectiveness)**՝ պետական ծառայությունների մատուցման որակի գնահատումը, պետական ծառայողների աշխատանքի որակը, վերջիններիս անկախության աստիճանը քաղաքական ճնշումներից, քաղաքականության մշակման որակի գնահատականը:

4. Կարգավորման որակը (**Regulatory Quality)**՝ մասնավոր հատվածի զարգացմանն օժանդակող և աջակցող նորմատիվ իրավական ակտերի և հիմնավոր քաղաքականության մշակման՝ կառավարության գնահատականը:

5. Օրենքի գերակայությունը (**Rule of Law)**՝ հասարակությունում գործող նորմերի նկատմամբ տարաբնույթ սուբյեկտների վստահության և վերջիններիս կողմից այդ նորմերի պահպանման պատրաստակամության աստիճանի գնահատականը, այդ թվում՝ պայմանագրերի պարտադիր կատարման արդյունավետության գնահատականը, սեփականության պաշտպանության իրավունքը դատական մարմինների կողմից և ոստիկանության աշխատանքը, բռնության տարածվածության և հանցավորության մակարդակը:

6. Կոռուպցիայի դեմ պայքարը (**Control of Corruption)**՝ շահախնդիր նպատակներով պետական իշխանության օգտագործման պրակտիկայի տարածվածության գնահատականը, ներառյալ փոքր և մեծ չափերի կոռուպցիան, ինչպես նաև մասնավոր սեկտորի և շերտերի ներկայացուցիչների՝ իշխանության մեջ ներգրավվածության ծավալները:

Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման որակի աստիճանի մասին պատկերացում կազմելու համար փորձենք նախ ներկայացնել վերը նկարագրված ցուցանիշները, որոնք դիտարկվել են 2002-2017թթ.-ի համար տարեկան կտրվածքով[1]: Ինդեքսները տատանվում են -2.5-ից 2.5 միջակայքում:

Նկատելի է, որ «Պետական մարմինների հաշվետվողականությունը և բնակչության կարծիքի ընդունումը» ցուցանիշի գնահատականը 2002թ.-ին եղել է -0.44 միավոր, ու, թեև սա դիտարկված ժամանակահատվածի լավագույն ցուցանիշն է, այդուհանդերձ, պետք է նշել, որ այն բավականին

[1] Տես http://info.worldbank.org/governance/wgi/#home

ցածր է: Այս ցուցանիշը ՀՀ-ում սկսել է վատանալ մինչև 2009թ., որից հետո աստիճանաբար վիճակը բարելավվում է, սակայն 2017թ.-ին մենք դեռևս չենք հասել 2002-ի ցուցանիշին: Սա նշանակում է, որ դիտարկվող տարիների ընթացքում ՀՀ-ում իշխանության ընտրություններին քաղաքացիների մասնակցության, ինչպես նաև խոսքի ազատության առկայության, միավորումների և ԶԼՄ ազատության աստիճանի բարձրացման համար գրեթե քայլեր չեն իրականացվել:

Աղյուսակ 1

Պետական կառավարման որակի ցուցանիշները ՀՀ-ի համար՝ 2002-2017թթ.

Տարի	Պետական մարմինների հաշվետվողականություն և բնակչության կարծիքի ընդունում	Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	Կառավարության արդյունավետություն	Կարգավորման որակ	Օրենքի գերակայություն	Կոռուպցիայի վերահսկողություն
2002	-0.44	-0.26	-0.09	0.04	-0.42	-0.75
2003	-0.47	0.24	-0.16	0.21	-0.30	-0.57
2004	-0.57	-0.12	-0.09	0.13	-0.42	-0.61
2005	-0.59	-0.07	-0.14	0.08	-0.40	-0.67
2006	-0.74	-0.26	-0.25	0.28	-0.55	-0.67
2007	-0.76	0.15	-0.38	0.27	-0.50	-0.74
2008	-0.86	-0.01	-0.17	0.34	-0.34	-0.71
2009	-0.88	0.23	-0.03	0.30	-0.48	-0.62
2010	-0.85	0.07	-0.18	0.31	-0.49	-0.70
2011	-0.69	-0.06	-0.13	0.27	-0.44	-0.66
2012	-0.57	0.15	-0.04	0.35	-0.42	-0.59
2013	-0.59	0.11	0.07	0.25	-0.34	-0.53
2014	-0.56	-0.30	-0.20	0.21	-0.37	-0.52
2015	-0.54	-0.25	-0.16	0.24	-0.39	-0.53
2016	-0.58	-0.66	-0.15	0.25	-0.12	-0.57
2017	-0.56	-0.71	-0.10	0.28	-0.16	-0.56

Քաղաքական կայունության և բռնության բացակայության առումով վիճակը մի փոքր ավելի լավ է, սակայն, ընդհանուր գնահատականի տեսանկյունից՝ ցածր է: Այստեղ ունենք դրական գնահատականներ, մասնավորապես 2003թ.-ին՝ 0.24, 2007թ.-ին՝ 0.15 և այլն, բայց և այնպես, ցուցանիշի կտրվածքով առկա է վիճակի վատթարացում:

Կառավարման արդյունավետության աստիճանը դիտարկված ժամանակահատվածում շատ քիչ է փոփոխության ենթարկվել: Ստացվում է, որ ՀՀ-ում կառավարման համակարգում անհրաժեշտ է իրականացնել տարբեր օղակների գործունեության բարելավմանն ուղղված որոշակի բարեփոխումներ:

Կարգավորման որակի առումով 2002-2017թթ. ընթացքում որոշակի առաջընթաց կա. ցուցանիշը 0,04-ից դարձել է 0,28: Կառավարման որակի 6 ցուցանիշներից ամենից բարձր ցուցանիշը բոլոր տարիներին արձանագրել է «Կարգավորման որակ» ցուցանիշը: Մասնավոր հատվածի զարգացմանն օժանդակող և աջակցող նորմատիվ իրավական ակտերի ու հիմնավոր քաղաքականության մշակման տեսանկյունից ՀՀ կառավարության իրականացրած գործողություններն ունեցել են համեմատաբար դրական արդյունքներ:

Օրենքի գերակայության աստիճանը կայուն կերպով սկսել է բարձրանալ, չնայած որ այնքան էլ խոստումնալից արդյունքներ չենք նկատում: Այն ընդամենը -0.42-ից դարձել է -0.16: Այսինքն, հասարակությունում գործող նորմերի նկատմամբ տարբեր սուբյեկտների վստահության և վերջիններիս կողմից այդ նորմերի պահպանման պատրաստակամության աստիճանը նույնիսկ դրական արժեքի չի հասել: Այս դեպքում ցածր մակարդակում է գտնվում նաև պայմանագրերի պարտադիր կատարման արդյունավետությունը, սեփականության պաշտպանության իրավունքը դատական մարմինների կողմից և ոստիկանության աշխատանքը, բռնության տարածվածության և հանցավորության մակարդակը:

Իրավիճակն ամենավատն է կոռուպցիայի վերահսկողության առումով: Այս ցուցանիշը 2002թ.-ից շատ փոքր տարբերություններով սկսել է բարելավվել ու 2017թ.-ին կազմել է ընդամենը -0.56, ինչը բավականին ցածր մակարդակի մասին է վկայում: Շահախնդիր նպատակներով պետական իշխանության օգտագործման պրակտիկայի տարածվածության գնահատականը այնքան էլ խոստումնալից չէ, մյուս կողմից էլ փոքր և մեծ չափերի կոռուպցիայի առկայությունը, ինչպես նաև մասնավոր հատվածի և շերտերի ներկայացուցիչների՝ իշխանության մեջ ներգրավվածության ծավալները շոշափելիորեն ընդգրկուն են: Սա խոսում է այն մասին, որ

նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է խորը վերլուծությունների և համապատասխան միջոցառումների իրականացում:

Ամփոփելով, նշենք, որ կառավարման արդյունավետության տեսանկյունից ՀՀ-ում պետության կայացվածության աստիճանը բավականին ցածր է, չնայած որոշ դեպքերում առկա են նաև դրական գնահատականներ: Այս առումով ՀՀ-ում էական է դառնում շարունակական քաղաքական վերափոխումների իրականացումը՝ իրավական կարգավորումների կատարելագործման, օրենսդրական նորմերի կիրառման, և մի շարք այլ քայլերի միջոցով, ինչը կարող է մեծապես նպաստել պետական ինստիտուտների արդյունավետության բարձրացմանը:

Այժմ փորձենք կառավարման արդյունավետության աստիճանի տեսանկյունից ՀՀ-ն համեմատել այլ երկրների հետ՝ կրկին հիմնվելով Համաշխարհային Բանկի ագրեգացված ցուցանիշների գնահատականների վրա: Համեմատության համար ընտրվել են անցումային տնտեսությամբ այն երկրները, որոնք բավականին մոտ են մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի մակարդակով[1] և սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշով[2]: Նման խմբավորման համար հաշվի ենք առել այն հանգամանքը, որ պետության կայացվածությունը կարելի է համարել իր առջև դրված խնդիրները լուծելու կարողություն: Այսինքն, առավել կայացած պետությունը ավելի արդյունավետ է գործում: Կարևորվում է նաև այն հարցը, թե արդյոք պետությունը կարողանում է խնդիրներին տալ իրավական ձևակերպում, և իրավական նորմերի միջոցով ապահովել դրանց իրականացման մեխանիզմները: Հետևաբար, կարելի է ասել, որ սահմանադրականության բարձր մակարդակը պետության կայացվածության կարևորագույն երաշխիքներից է[3]: Կառավարման արդյունավետության Համաշխարհային Բանկի 6 ցուցանիշների առումով այս երկրների վարկանիշները ներկայացված են *աղյուսակ 2*-ում:

Ինչպես երևում է *աղյուսակ 2*-ից, պետական մարմինների հաշվետվողականություն և բնակչության կարծիքի ընդունում ցուցանիշի առումով Հայաստանը դիտարկված երկրների խմբի միջինից ցածր գնահատական ունի: Խմբում լավագույն ցուցանիշը արձանագրել է Վրաստանը, իսկ վատագույնը՝ Բելառուսը:

---

1 Տես https://data.worldbank.org/indicator/NY.ADJ.NNTY.PC.CD?end=2016&locations=XT-AM-AZ-BY-AL-DZ-BA&start=2016&view=bar

2 Տես Հ. Սարգսյան, Գ. Տոնոյան, Ն. Քոչինյան,Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում, Երևան 2015թ., էջ 38:

3 Տես Կ. Խաչատրյան, Սահմանադրականության մակարդակը որպես պետության կայացածության գրավական, Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2017 № 3 (24), էջ 19-28:

Աղյուսակ 2

Պետական կառավարման որակի ցուցանիշները որոշ երկրների համար 2017թ.

Երկրներ	Պետական մարմինների հաշվետվողականություն և բնակչության կարծիքի ընդունում	Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	Կառավարության արդյունավետություն	Կարգավորման որակ	Օրենքի գերակայություն	Կոռուպցիայի վերահսկողություն
Մոնտենեգրո	0.12	0.01	0.15	0.3	0.01	-0.09
Մակեդոնիա	-0.14	-0.25	0.14	0.5	-0.24	-0.31
Ալբանիա	0.2	0.4	0.08	0.22	-0.4	-0.42
Բոսնիա և Հերցեգովինա	-0.21	-0.38	-0.48	-0.15	-0.21	-0.52
Ուկրաինա	0.01	-1.89	-0.46	-0.32	-0.71	-0.78
Վրաստան	0.26	-0.37	0.57	1.05	0.33	0.74
Մոլդովիա	-0.03	-0.24	-0.51	-0.04	-0.41	-0.8
Հայաստան	**-0.56**	**-0.71**	**-0.1**	**0.28**	**-0.16**	**-0.56**
Բելառուս	-1.36	0.03	-0.35	-0.74	-0.82	-0.26
Ռուսաստան	-1.09	-0.67	-0.08	-0.48	-0.79	-0.89
Միջին	-0.28	-0.407	-0.104	0.062	-0.34	-0.389
Առավելագույն արժեք	0.26	0.4	0.57	1.05	0.33	0.74
Նվազագույն արժեք	-1.36	-1.89	-0.51	-0.74	-0.82	-0.89

Քաղաքական կայունության և բռնության բացակայության ցուցանիշի համար պատկերը գրեթե նույնն է Հայաստանի համար. մեր ցուցանիշը խմբի միջինից ցածր է, խմբում հետնապահը Ուկրաինան է, իսկ առաջատարը՝ Ալբանիան:

Մյուս ցուցանիշով Հայաստանը խմբում միջին դիրք է զբաղեցնում: Մեր երկրի գնահատականը համընկնում է խմբի միջինի հետ, իսկ խմբում առաջին տեղում Վրաստանն է, իսկ վերջինը՝ Մոլդովան:

Կարգավորման որակի և օրենքի գերակայության ցուցանիշների վարկանիշային գնահատականները Հայաստանի համար միջինից բավականին բարձր են, համապատասխանաբար հավասար են՝ 0,28 և -0,16: Այս ցուցանիշներով նույնպես առաջատար է Վրաստանը բավականին բարձր վարկանիշով՝ համապատասխանաբար 1,05 և 0,33, մինչդեռ Բելառուսն աչքի է ընկնում շատ ցածր միավորներով՝ -0,74 և -0,82:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի վերահսկողությանը, ապա Հայաստանի գնահատականը -0,56 է, ինչը ցածր է, քան խմբի միջին գնահատականը և վկայում է կոռուպցիայի բավական բարձր մակարդակի մասին: Վրաստանի ցուցանիշը լավագույնն է՝ 0,74, իսկ Ռուսաստանինը վատագույնը՝ -0,89:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ եթե պետության կայացվածությունը դիտում ենք որպես իր առջև դրված խնդիրները լուծելու կարողություն, ապա անհրաժեշտություն է առաջանում գնահատելու պետական կառավարման որակը: Այս իմաստով Հայաստանի Հանրապետությունը 2002-2017թթ. ընթացքում առանձնակի փոփոխություններ չի արձանագրել: Որոշակի դրական միտում կա կարգավորման որակ և օրենքի գերակայություն ցուցանիշների կտրվածքով: Հետևաբար, պետական կառավարման համակարգի վերափոխումների գործընթացում առաջնային ուշադրության պետք է արժանանան այնպիսի փոփոխությունները, որոնք էապես կբարելավեն մեր դիրքերը Համաշխարհային բանկի վարկանիշային սանդղակներում և կվկայեն արդյունավետ պետական կառավարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՄՍՈՆ ԴԱՎՈՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրոսական ծրագրի ղեկավար, տնտ. դոկտոր, պրոֆեսոր
samsondavoyan2014@gmail.com

ԼՈՒՍՅԱ ԳԱԼՈՅԱՆ
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտ. թեկ., դոցենտ
lusya.galoyan@gmail.com

ՌՈԶԱ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս
rozakurghinyan@yahoo.com

Մարդկային և հասարակական գործընթացների գլոբալացման բազմավեկտոր ուղղություններով աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցող բազմաբնույթ փոփոխությունները տարաբնույթ մարտահրավերներ են ուղղում այդ երկրների իշխանություններին: Վերջիններիս դիմակայելու համար մշակվում և իրականացվում են հայեցակարգային, ռազմավարական, հեռանկարային, միջնաժամկետային, ընթացիկ և այլ բնույթի ծրագրեր, որոնց իրականացումն ուղղորդվում է բազմաբնույթ վերափոխումների մշակմամբ և գործնական կիրառմամբ: Յուրաքանչյուր երկրի համար քաղաքական, տնտեսական և սոցիալական բնույթի կարևոր հիմնախնդիրներ են, թե ինչ համեմատական արդյունավետությամբ են մշակվում և կիրառվում վերոնշյալ ծրագրերը:

Մասնագիտական գրականության մեջ աշխարհի մեծ թվով երկրներում իրականացված բազմաբնույթ ծրագրերի իրականացման քանակական գնահատումների էկոնոմետրիկ տարբեր մեթոդների շարքում ներկայացված են նաև բազմաթիվ մասնակի համաթվեր, որոնք երկրներում իրականացված վերափոխումների առանձին ուղղությունների

գնահատումներ են: Տեսական հիմնավորվածության և գործնական նշանակության տեսանկյունից սոցիալ-տնտեսական բնույթի յուրաքանչյուր հետազոտություն անհրաժեշտաբար պետք է իրականացվի որակական և քանակական համակարգված վերլուծությունների միջոցով: Ինչպես նշում էր Կ.Մարքսը. «Գիտությունը չի կարող հասնել կատարելագործման, եթե այնտեղ չկիրառվի մաթեմատիկան»:

Մեր կողմից ներկայացվող հետազոտական աշխատանքի մասնագիտական գաղափարախոսության հիմքը հետևյալն է. քանի որ միջազգային կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվող առանձին համաթվերը ներկայացնում են բազմաբնույթ վերափոխումների առանձին ուղղությունները, ապա հնարավո՞ր է արդյոք դրանք միավորել մեկ ընդհանրական համաթվում, որը կարտահայտի այդ մասնակի համաթվերի մեջ ներառած վերափոխումները՝ ամբողջական տեսքով, իսկ այդ մասնակի համաթվերը՝ որպես վերափոխումների ընդհանրական համաթվի առանձին բաղադրիչներ, կունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանրական համաթվի ձևավորման մեջ: Վերոնշյալ հետազոտական հիմնախնդիրը իր լուծումն է ստացել տարբեր էկոնոմետրիկ մեթոդների կիրառման արդյունքում (Eviews ծրագրային փաթեթի միջոցով):

Այս խնդրի լուծման համար մեր կողմից առաջարկվել է վերափոխումների ընդհանրական համաթիվը, որի միջոցով հետազոտության շրջանակներում փորձ է արվել ըստ տարածության և ժամանակի գնահատել Հայաստանի և նրա հարևան երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերում 2014-2018թթ. իրականացրած բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետությունը: Դիտարկվող երկրներում իրականացված սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բնույթի վերափոխումները գնահատելու համար օգտագործել ենք միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվող և հրապարակվող բազմաթիվ համաթվերից քսանհինգը, որոնք որոշակի ճշգրտությամբ գնահատում են իրականացված բազմաբնույթ վերափոխումները: Այս տեսանկյունից վերափոխումների ընդհանրական համաթվի ձևավորման առանցքային դրույթ է հանդիսանում այն քանակական գնահատման մեթոդների ընտրությունը, որի միջոցով հնարավորություն է ընձեռվում որոշելու վերոնշյալ ընդհանրական համաթիվը ձևավորող մասնակի համաթվերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը: Այս հիմնախնդիրը լուծելու նպատակով կիրառվել է ցուցանիշային վերլուծության գործիքակազմը, որի արդյունքում ստացվել է յուրաքանչյուր համաթվի մասնակցության չափը վերափոխումների ընդհանրական համաթվի կազմում: Ըստ այդմ՝ մեր կողմից դիտարկված 25 համաթվերի ցուցանիշները մեկ

ընդհանրական համաթվում միավորելու համար յուրաքանչյուր ցուցանիշի արժեքային գնահատականի վրա տարածվել է համապատասխան մասնակի համաթվի տեսակարար կշիռը: Այնուհետև, ձևափոխված ցուցանիշները հանրագումարի բերելով, ստացել ենք երկրների վարկանիշային միավորները՝ ըստ հենասյուների, որից հետո դրանք նորմավորել ենք ըստ առանձին հենասյուների՝ առավելագույն արդյունք արձանագրած երկրին տալով մեկ արժեքը:

Հաշվարկների վերջին փուլում հենասյուների վարկանիշային միավորների միջինացման արդյունքում ստացել ենք վերափոխումների ընդհանրական համաթիվը Հայաստանի և նրա հարևան երկրների համար:

Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ մեթոդաբանությամբ 2014–2018թթ. համար վերափոխումների ընդհանրական համաթվի հաշվարկի արդյունքները: Նշենք, որ վարկանիշային միավորը որքան մոտ է մեկին, այնքան վերափոխումներն առավել բարձր արդյունավետությամբ են իրականացվել:



Գծանկար 1. ՀՀ և հարևան երկրների վերափոխումների ընդհանրական համաթվի վարկանիշային միավորները

* հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից

Նշենք, որ հետազոտության շրջանակներում Հայաստանում և հարևան երկրներում իրականացված բազմաբնույթ վերափոխումների համեմատական վերլուծությունը կատարվել է վերափոխումների ընդհանրական համաթվի երեք մակարդակներում՝ համաթվերի, հենասյուների և ցուցանիշների: Այդ վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ըստ ինչ համաթվերի, ինչ հենասյուների և ինչ ցուցանիշների հաշվին է ձեռք բերվել զգալի առաջընթաց, և որոնց հաշվին՝ համեմատական հետընթաց:

Ստորև ներկայացնենք նշված ժամանակահատվածում Հայաստանի տնտեսության զարգացմանը առավել նպաստող և զարգացումը խոչընդոտող (ըստ կարևորության) առաջին երեք ցուցանիշները: Այսպես՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դիտարկված ժամանակահատվածում Հայաստանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող առաջատար քսան ցուցանիշների շարքի առաջին եռյակում են ***Ներքին շուկայում մրցակցությունը, Աշխատավարձը և արտադրողականությունը, Կառավարության արդյունավետությունը***: *Գծանկար 2*-ում ներկայացված են ***Ներքին շուկայում մրցակցություն*** ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը 2018թ.-ին:



Գծանկար 2. Ներքին շուկայում մրցակցություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.globalinnovationindex.org/Home

Ինչպես երևում է *գծանկար 2*-ից, Հայաստանը այս ցուցանիշով շարունակում է մնալ վարկանիշային աղյուսակի շարքի երկրորդ կեսում: Իհարկե, 2014թ.-ի համեմատ 2018թ.-ին 34 տեղով բարելավվել են Հայաստանի դիրքերը՝ ապահովելով վարկանիշային միավորի շուրջ 16 տոկոսով աճ, սակայն, այնուամենայնիվ, այս ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան, և այն դեռևս ՀՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող ուղղություն է:

Հայաստանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող հաջորդ ցուցանիշը ***Աշխատավարձը և արտադրողականությունն*** է, որով դիտարկված ժամանակահատվածում ՀՀ-ն 14 տեղով վատացրել է դիրքերը՝ արձանագրելով վարկանիշային միավորի շուրջ 2,3 տոկոսով անկում:



Գծանկար 3. Աշխատավարձ և արտադրողականություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* http://reports.weforum.org/global-competitiveness-report/

Կառավարման արդյունավետություն ցուցանիշը շարունակում է խոչընդոտել Հայաստանի տնտեսության զարգացմանը և վերջինիս փոփոխությունները ևս հուսադրող չեն, մասնավորապես 2014թ.-ին ունեցած 70-րդ տեղի փոխարեն 2018թ.-ին հայտնվել ենք 77-րդ տեղում՝ շուրջ 4 տոկոսով արձանագրելով վարկանիշային միավորի անկում:



Գծանկար 4. Կառավարման արդյունավետություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.globalinnovationindex.org/Home

Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշներին, ապա առաջին եռյակում ***Բիզնես սկսելու դյուրինությունն է,*** ապա՝ ***Առևտրի ազատությունը*** և ***Գիտական հմտությունները***:

Բիզնես սկսելու դյուրինություն ցուցանիշով Հայաստանը թեև վերջին տարիներին 7 տեղով հետընթաց է արձանագրել, սակայն շարունակում է մնալ առաջատար դիրքերում:



Գծանկար 5. Բիզնես սկսելու դյուրինություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014–2018թթ.

* https://www.globalinnovationindex.org/Home

Առևտրի ազատություն ցուցանիշով Հայաստանը 2018թ.-ին հայտնվել է 44-րդ տեղում, իսկ հարևան երկրներից 28 տեղով զիջում է միայն Վրաստանին: Իհարկե, բնավ էլ զարմանալի չէ, որ այս ցուցանիշով վարկանիշային աղյուսակի հետնամասում է գտնվում Իրանը՝ 156 տեղ: Հանուն արդարության նշենք, որ 2014թ.-ի համեմատ նույնիսկ Իրանը բարելավել է իր դիրքերը 22 տեղով:



Գծանկար 6. Առևտրի ազատություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014–2018թթ.

* https://www.heritage.org/index/

Գիտական հմտություններ ցուցանիշով հարևան երկրներից լավագույն դիրքում Հայաստանն է. 2018թ.-ին՝ 41-րդ տեղ, թեև 2014թ.-ի նկատմամբ ունեցել ենք 7 տեղով հետընթաց և վարկանիշային միավորի շուրջ 1.3 տոկոսով անկում:



Գծանկար 7. Գիտական հմտություններ ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://gtcistudy.com/

Վրաստանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող ցուցանիշնե-րից առաջին եռյակում են ***Գնաճի տարեկան փոփոխությունը, Վարկերի հասանելիությունը*** և ***Սոցիալական կապիտալը***:



Գծանկար 8. Գնաճ, տարեկան փոփոխությունը (տոկոսներով) ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* http://reports.weforum.org/global-competitiveness-report/

Առավել հետաքրքրական է ***Վարկերի հասանելիություն*** ցուցանիշը, որով Վրաստանը 64 տեղով բարելավել է իր դիրքերը՝ 2018թ.-ին հայտն-վելով վարկանիշային աղյուսակի 46-րդ հորիզոնականում՝ գրանցելով վարկանիշային միավորի 75 տոկոսով աճ:



Գծանկար 9. Վարկերի հասանելիություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* http://reports.weforum.org/global-competitiveness-report/

Սոցիալական կապիտալ ցուցանիշով թեև Վրաստանը բարելավել է իր դիրքերը 15 տեղով՝ հայտնվելով վարկանիշային աղյուսակի 124-րդ տեղում, սակայն, այնուամենայնիվ, այս ուղղությունը շարունակում է մնալ Վրաստանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող ուղղություն:



Գծանկար 10. Սոցիալական կապիտալ ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը, 2014-2018թթ.

* https://www.prosperity.com/

Վրաստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշներից առաջին եռյակում են ***Բիզնես սկսելու դյուրինությունը***, ***Հարկաբյուջետային քաղաքականությունը*** և ***Կոռուպցիայի ընկալման մակարդակը***:

Բիզնես սկսելու դյուրինություն ցուցանիշով *(գծանկար 5)* Վրաստանը դիտարկված ամբողջ ժամանակահատվածում կայուն պահել է իր դիրքը՝ գտնվելով վարկանիշային աղյուսակի 4-րդ հորիզոնականում: Հետաքրքրության համար նշենք, որ այս ուղղությամբ Իրանը և Թուրքիան բավականին զիջում են և դեռ բարեփոխումների կարիք ունեն:

Հարկաբյուջետային քաղաքականություն ցուցանիշը Վրաստանի տնտեսության զարգացմանը առավելապես նպաստող ուղղություններից է: Այս ուղղությամբ Վրաստանը 2014թ.-ի համեմատ 2018թ.-ին բարելավել է իր դիրքերը 23 տեղով և հայտնվել է վարկանիշային աղյուսակի 16-րդ հորիզոնականում:



Գծանկար 11. Հարկաբյուջեային քաղաքականություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.heritage.org/index/

Հակակոռուպցիոն քաղաքականության ուղղությամբ իրականացված բարեփոխումները ևս Վրաստանում հաջողությամբ են պսակվել, ինչի արդյունքում 2018թ.-ին հայտնվել է դիտարկված երկրների շարքում լավագույն դիրքում՝ 41-րդ տեղ՝ 2014թ.-ի համեմատ 10 տեղով և վարկանիշային միավորի 7,4 տոկոսով բարելավելով դիրքերը:



Կոռուպցիայի ընկալման մակարդակի ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.transparency.org/research/cpi/overview

Ադրբեջանը, ինչպես մեր հետազոտությունները ցույց տվեցին, տնտեսական, սոցիալական և քաղաքական բարեփոխումների համեմատական արդյունավետության առումով լուրջ փոփոխությունների կարիք ունի: Մասնավորապես, մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ Ադրբեջանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող ցուցանիշների առաջին եռյակում են ***Կոռուպցիայի ընկալման մակարդակը, Գնաճի տարեկան փոփոխությունը*** և ***Դատական համակարգի անկախությունը***:

Ճիշտ է, դեռևս 2014թ.-ին Ադրբեջանը ***Կոռուպցիայի ընկալման մակարդակով*** եղել է 126-րդ տեղում *(գծանկար 12)*, ի լրումն սրա՝ 2018թ.-ին ևս 26 տեղով հետընթաց է գրանցել՝ հայտնվելով վարկանիշային աղյուսակի 152-րդ հորիզոնականում, ինչը լուրջ սպառնալիք է տնտեսության զարգացման համար:

Դատական համակարգի անկախություն ցուցանիշով ևս Ադրբեջանը լուրջ հետընթաց է ունեցել 2014-2018թթ.-ին՝ 22 տեղով և շուրջ 5 տոկոս վարկանիշային միավորով: Համեմատության համար նշենք, որ դիտարկված մյուս երկրները այս ցուցանիշով բարելավել են իրենց դիրքերը, բացառությամբ Իրանի՝ 2 տեղով հետընթաց:



Գծանկար 13. Դատական համակարգի անկախություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* http://reports.weforum.org/global-competitiveness-report/

Չնայած այս ամենին՝ Ադրբեջանը ունեցել է նաև որոշակի ձեռքբերումներ: Այսպես՝ Ադրբեջանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշներից են ***Վարկերի հասանելիությունը, Հարկաբյուջետային քաղաքականությունը*** և ***Ներքին շուկայում մրցակցությունը***: ***Վարկերի հասանելիություն*** ցուցանիշով Ադրբեջանը շուրջ 22 տեղով բարելավել է դիրքերը *(գծանկար 9)*՝ 2018թ.-ին հայտնվելով վարկանիշային աղյուսակի 57-րդ հորիզոնականում: Ի դեպ, նշենք, որ այս ցուցանիշով Ադրբեջանը զիջում է միայն Վրաստանին ու Թուրքիային: Իսկ ինչ վերաբերում է ***Հարկաբյուջետային քաղաքականությանը,*** ապա այս ուղղությամբ թեև դիտարկված ժամանակահատվածում 30 տեղով վատացրել է դիրքերը, սակայն այն դեռևս շարունակում է մնալ Ադրբեջանի տնտեսության զարգացմանը խթանող ուղղություն:

Իրանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշներից կարելի է առանձնացնել ***Գիտական հմտությունները, Սոցիալական կապիտալը*** և ***Գնաճի տարեկան փոփոխությունը***: Մասնավորապես ***Գիտական հմտություններ*** ցուցանիշով Իրանը, 2014թ.-ի նկատմամբ 2 տեղով բարելավելով իր դիրքերը, գտնվում է 55-րդ հորիզոնականում՝ զիջելով միայն Հայաստանին և Թուրքիային *(գծանկար 7)*:

Սոցիալական կապիտալ ցուցանիշով Իրանը թռիչքային աճ է ունեցել. 56 տեղով բարելավել է դիրքերը՝ հայտնվելով վարկանիշային աղյուսակի 55-րդ հորիզոնականում *(գծանկար 10)*: Համեմատության համար նշենք, որ այս ցուցանիշով Հայաստանը և Ադրբեջանը վատացրել են իրենց դիրքերը՝ համապատասխանաբար 9 և 60 տեղերով, իսկ Վրաստանը և Թուրքիան բարելավել են դիրքերը՝ համապատասանաբար 15 և 14 տեղերով:

Իրանի տնտեսության զարգացմանը խոչընդոտող ցուցանիշներից են ***Քաղաքական կայունությունը և անվտանգությունը, Կոռուպցիայի***

ընկալման մակարդակը և ***Ֆինանսական ազատությունը***: Չնայած Իրանը դիտարկված ժամանակահատվածում ***Քաղաքական կայունություն և անվտանգություն*** ցուցանիշով ունեցել է դրական փոփոխություն, սակայն այս ուղղությունը, այնուամենայնիվ, շարունակում է խոչընդոտել Իրանի տնտեսության զարգացմանը: Հանուն արդարության նշենք, որ դիտարկված բոլոր երկրները այս ցուցանիշով գտնվում են վարկանիշային աղյուսակի վերջին հատվածում:



Գծանկար 14. Քաղաքական կայունություն և անվտանգություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.globalinnovationindex.org/Home

Կոռուպցիայի ընկալման մակարդակով ևս Իրանը վատագույն դիրքերում է. 2018թ.-ին՝ 138 տեղ, ևս 2 տեղով հետընթաց 2014թ.-ի նկատմամբ *(գծանկար 12)*: ***Ֆինանսական ազատություն*** ցուցանիշով Իրանը դիտարկված երկրների շարքում անհամեմատելի վատ դիրքերում է, չնայած պետք է նշել, որ 2014-2018թթ.-ի ընթացքում շուրջ 18 տեղով բարելավել է դիրքերը՝ հայտնվելով վարկանիշային աղյուսակի 156-րդ տեղում:



Գծանկար 15. Ֆինանսական ազատություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.heritage.org/index/

Թուրքիայում տնտեսության զարգացմանը խոչընդոտող ցուցանիշներից են ***Իրավունքի գերակայությունը, Քաղաքական կայունությունը և անվտանգությունը*** և ***Վարկերի հասանելիությունը***: Վերջին տարիներին ***Իրավունքի գերակայության*** ցուցանիշով Թուրքիան 13 տեղով հետընթաց է արձանագրել՝ հայտնվելով 71-րդ տեղում, և այն դարձել է նրա տնտեսության զարգացմանը խոչընդոտող ուղղություն:



Գծանկար 16. Իրավունքի գերակայություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014-2018թթ.

* https://www.globalinnovationindex.org/Home

Քաղաքական կայունություն և անվտանգություն ցուցանիշով Թուրքիան զիջում է դիտարկված բոլոր երկրներին և շարունակում կայուն վատ պահել դիրքերը՝ գրավելով վարկանիշային աղյուսակի 124-րդ տեղը *(գծանկար 14)*:

Թուրքիան, թեև դիտարկված ժամանակաշրջանում ***Վարկերի հասանելիություն*** ցուցանիշով շուրջ 13 կետով բարելավել է դիրքերը, սակայն այն դեռևս շարունակում է խոչընդոտել տնտեսության զարգացմանը:

Թուրքիայի տնտեսության զարգացմանը նպաստող ուղղություններից են ***Ներքին շուկայում մրցակցությունը, Ներդրումների ազատությունը և Բիզնես սկսելու դյուրինությունը***:

Ներքին շուկայում մրցակցություն ցուցանիշով Թուրքիան բացարձակ առաջատար է. 2018թ.-ին զբաղեցրել է 8-րդ տեղը՝ 2014թ.-ի նկատմամբ բարելավելով դիրքերը 5 տեղով *(գծանկար 2)*: Անհերքելի է այս ուղղության՝ Թուրքիայի տնտեսության զարգացմանը նպաստելու փաստը:

Ներդրումների ազատություն ցուցանիշով ևս դիտարկված ժամանակահատվածում Թուրքիայում արձանագրվել է որոշակի հետընթաց (12 տեղով), բայց այս ուղղությունը դեռևս շարունակում է նպաստել տնտեսության զարգացմանը:



Գծանկար 17. Ներդրումների ազատություն ցուցանիշով վարկանիշային աղյուսակում Հայաստանի և հարևան երկրների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները, 2014–2018թթ.

* https://www.heritage.org/index/

Բիզնես սկսելու դյուրինություն ցուցանիշով Թուրքիան 2018թ.-ին զբաղեցրել է 66-րդ տեղը, թեև 2014թ-ի նկատմամբ 9 տեղով հետընթաց է արձանագրել *(գծանկար 5)*, սակայն այս ուղղությունը ևս դեռևս շարունակում է նպաստել տնտեսության զարգացմանը:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունները վկայում են, որ Հայաստանի և հարևան երկրների իշխանությունները և հանրությունը իրենց երկրի վերափոխումների բազմաբնույթ ծրագրերը մշակելու և իրականացնելու ընթացքում գիտական հիմնավորվածության և գործնական նշանակության տեսանկյունից պետք է առավել հետևողական լինեն և կարողանան բարձրացնել վերոնշյալ վերափոխումների (որոնք սահմանափակում են երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումը) համեմատական արդյունավետությունը: Իսկ զարգացմանը նպաստող վերափոխումները առնվազն պետք է իրականացվեն ոչ պակաս աճի տեմպերով, քան իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում: Երկրները պետք է կարողանան տարաբնույթ արդյունավետ վերափոխումներ իրականացնեն ինչպես համապատասխան ինստիտուտների ձևավորման և զարգացման, այնպես էլ սիներգիկ վերափոխումների արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ
ԵՊՀ ՏԿՖ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Երբեմնի հզոր պետություն (Տիգրան Մեծ) ու զարգացած մշակույթ (Մաշտոց, Նարեկացի, Կոմիտաս, Այվազովսկի) ունեցող ժողովուրդը XX դարի առաջին կեսին ապրեց աշխարհում առաջին մեծ ցեղասպանությունը և հայտնվեց ոչնչացման եզրին: 1920թ. Հայաստանի բնակչության թիվը ընդամենը 720 հազար էր, որից 200 հազար փախստական, 50 հազար անապաստան ու ծնողազուրկ երեխաներ: Բնակչության 89%-ը կազմում էր գյուղական բնակչությունը (45%-ը չքավորներ):

Խորհրդային Հայաստանի տարիներին, 1991թ. բնակչության թվաքանակը հասավ 3574,5 հազարի (70%-ը քաղաքային. 30%-ը գյուղական), կրթությունը (մանկապարտեզից ասպիրանտուրա) և առողջապահությունը դարձան անվճար: Բնակչության կենսամակարդակը կանոնավոր բարձրացավ, 1991թ. բնակչության ավանդների ընդհանուր գումարը կազմեց 10մլրդ ռուբլի (10մլրդ ԱՄՆ դոլարից ավելի):

Սոցիալական այդ դրական փոփոխությունները օգնեցին նաև մարդկային կապիտալի նպաստավոր վերարտադրության զարգացումներին: Երկիրը ծածկվեց մսուր-մանկապարտեզների և դպրոցների լայն ցանցով: 1919թ. կայացավ Երևանի պետական համալսարանը, և հետագա տարիներին նրա տարբեր ֆակուլտետների հիմքի վրա բացվեցին տասնյակ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ: Հիմք ընդունելով Հայաստանում գիտական մեծ պոտենցիալի առկայությունը՝ հայրենական մեծ պատերազմի տարիներին (1943թ) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Հայաստանում հիմնադրվեց Գիտությունների Ազգային Ակադեմիան: Ստեղծվեցին գիտությունների ժամանակակից ուղղությունների համաշխարհային մակարդակի հզոր կենտրոններ. աստղագիտություն (ակադեմիկոս Վ. Համբարձումյան), մաթեմատիկա (ակադեմիկոս Ս. Մերգելյան), մեխանիկա (ակադեմիկոս Ս. Համբարձումյան), ռադիոֆիզիկա (ակադեմիկոս Ռ. Մարտրիոսյան), հայագիտություն (ակադեմիկոսներ Հ. Օրբելի, Հ. Մանանդյան, Գ. Ջահուկյան) և այլն: Հայաստանի Հանրապետությունում

գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափերով նպաստեց Սովետական Միության պաշտպանական հզորությունների ստեղծմանը և զարգացմանը:

Ինչ զարգացումներ ունեցավ մարդկային կապիտալը Հայաստանի անկախացումից հետո:

Նախ, մինչև Հայաստանի անկախացումը տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Հայաստանի մոտ 40%-ը ընդգրկող տարածքում զոհվեց 25.000-ից ավելի մարդ: 19.000-ը դարձան հաշմանդամ, անօթևան մնաց 530.000 բնակիչ, ոչնչացվեց երկրի արտադրական կարողությունների ավելի քան մեկ երրորդը: Այդ ամենի արդյունքում Հայաստանում ձևավորվեց բնական աղետի աղքատությունը:

Երկրորդը, արդեն զարգացում ստացած Ղարաբաղյան հակամարտությունն էր: 1992թ. սկսվեց Արցախի ազատագրական պատերազմը, որը մեծ զոհաբերություններով ավարտվեց հաղթանակով, և 1994թ. մայիսին կնքվեց անժամկետ զինադադարի համաձայնագիր: Այդ համապատկերում են նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի տնտեսական շրջափակումը, Ադրբեջանից շուրջ 360 հազար հայ փախստականների Հայաստանում հայտնվելը: Այդ բոլորի արդյունքում ձևավորվեց այսպես կոչված հակամարտության աղքատությունը:

Հայաստանի բնակչության աղքատության պատճառ դարձավ նաև ԽՍՀՄ փլուզումը: Հայաստանը զրկվեց Ռուսաստանի և այլ երկրների հետ շահավետ տնտեսական համագործակցությունից: 1990-1993թթ. Հայաստանի ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան 2 անգամ՝ 1993թ. կազմելով 1990թ.-ի մակարդակի 45,9%-ը, որն ամենաբարձր տնտեսական անկման ցուցանիշն էր ԱՊՀ երկրներում:

Դրանց գումարվեց Հայաստանի նոր անկախ իշխանությունների որոշմամբ ԱԵԿ-ի և «Նաիրիտ» հզոր գիտաարտադրական միավորման գործունեության սառեցումը: Հարյուրավոր ձեռնարկություններ դադարեցին աշխատելուց, իսկ բնակչությունը զրկվեց հազարավոր աշխատատեղերից, ապրուստի միջոցներից, լույսից և ջերմությունից: Այդ բոլորի արդյունքում, 645 հազար աշխատող դարձան գործազուրկ՝ համալրելով աղքատ բնակչության շարքերը:

Երկրի սոցիալ-տնտեսական ճգնաժամային վիճակների կայացման և խստացման գործում ոչ պակաս դեր խաղացին նոմենկլատուրային կոռումպացված բնույթի սեփականաշնորհումը և բնակչության 10մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ավանդների սառեցումը: Մասնավորեցումն ընթացավ արագացված քայլերով: Դրա վառ օրինակը հողի սեփականաշնորհումն ու մասնավորեցումն էր, որը հետխորհրդային պետությունների

շարքում Հայաստանն իրականացրեց առաջինը: Խորհրդային տարիներին գործում էին 860 գյուղացիական խոշոր՝ կոլեկտիվ տնտեսություններ՝ իրենց մեքենատրակտորային հավաքակայանով: Դրանք խոշոր ապրանքարտադրողներ էին: Հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորվեցին մասնատված հողակտորներով շուրջ 320 հազար գյուղացիական մասնավոր տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին էր ընկնում 1,3 հեկտար հողատարածք, այն էլ 3-4 տարբեր տեղերում: Հենց դա էլ բացառեց անկախ Հայաստանում ինդուստրացված ապրանքային գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության մեջ բնակչությունը որպես սեփականատեր մեկ շնչի հաշվով ստացավ ընդամենը 20.000 դրամի չափով սերտիֆիկատ, որը բնակչության ավելի քան 10մլրդ դոլարին համարժեք ավանդների սառեցման հետևանքով չվերածվեց ներդրումների, և Հայաստանում այդպես էլ չձևավորվեց փոքր և միջին ձեռնարկատիրություն կամ միջին դաս: Փոխարենը ձևավորվեց խիստ բևեռացված հասարակություն՝ զուգորդված զանգվածային աղքատությամբ: Դա կառավարության կողմից, Հայաստանի ողջ բնակչության տարիների կուտակած սեփական խնայողությունների բացահայտ անպատիժ սեփականազրկում էր, որն այդպես էլ ոչ մի գնահատականի և պատժի չարժանացավ, ինչը դարձավ Հայաստանի բնակչության զանգվածային աղքատության պատճառներից մեկը:

Աղքատությունը պայմանավորված է ոչ միայն տնտեսական զարգացման ցածր մակարդակով, այլև արտադրված համախառն ներքին արդյունքի խիստ բևեռացված բաշխումով: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում 1998-1999թթ. 20% ամենաշատ և 20% ամենաքիչ եկամուտներ ունեցողների եկամուտների տարբերությունը 32,2 անգամ էր (ՌԴ-ում ընդամենը 16 անգամ, իսկ եվրոպական երկրներում 6-7 անգամ): Դա համատարած կոռումպացված երկրի պատկեր էր, մի կողմում՝ խոշոր մեծահարուստներ, մյուս կողմում՝ զանգվածային աղքատություն: Բնակչությունը աղքատացավ նաև բանկային բարձր՝ 20-35%-անոց վարկերի պատճառով: Վերջին 10-15 տարիներին կոռուպցիոն թալանի աղբյուր դարձավ պետական բյուջեն, իսկ դեֆիցիտը փակվում էր արտաքին պարտքով, որն այսօր հասել է շուրջ 7մլրդ դոլարի:

Հայաստանում բնակչությունը այդ չափով չէր աղքատանա, եթե թալանված հարստությունը սեփականատերերը արտադրողաբար՝ որպես ներդրումներ օգտագործեին, աշխատատեղեր ստեղծեին, ոչ թե դղյակներ, բնակելի տներ կառուցեին կամ շռայլ կյանք վարեին: Անգամ չավարտվեց խորհրդային տարիներին Աջափնյակ տանող մետրոյի շինարարությունը: Մի՞թե դա հնարավոր է ներել:

Ծնելիության և մահացության ցուցանիշները ՀՀ-ում 1990-2015 թվականներին[1]

Տարիներ	Ծնունդ						Մահ					
	1000 մարդ			1000 բնակչի հաշվով			1000 մարդ			1000 բնակչի հաշվով		
	ընդա-մենը	քա-ղաք	գյուղ	ընդա-մենը	քա-ղաք	գյուղ	ըն-դա-մենը	քա-ղաք	գյուղ	ըն-դա-մենը	քա-ղաք	գյուղ
1990	79,9	50,2	29,7	22,5	20,5	27,0	22	14,7	7,3	6,2	6,0	6,7
2000	34,3	21,4	12,9	10,6	10,3	24,6	24	15,7	8,3	7,5	7,5	7,6
2005	37,5	23,8	13,7	11,7	11,5	26,4	26,4	17,1	9,8	8,2	8,3	8,0
2010	44,8	28,3	16,5	13,8	13,6	27,9	27,9	17,8	10,1	8,6	8,6	8,6
2015	41,7	27,1	14,6	13,9	14,2	13,4	27,9	17,7	10,1	9,3	9,3	9,3

[1] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2016, էջ 22:

Ահա վերը շարադրված սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, 55-35% աղքատ բնակչության այդ դժգույն մթնոլորտում տեղի ունեցան Հայաստանի Հանարպետության միակ արդյունավետ ու հուսալի ռեսուրսի՝ մարդկային ռեսուրսների, քանակական և որակական կորուստները:

Բնակչության թվաքանակը աճում կամ պակասում է երկու ճանապարհով՝ բնական աճով (կամ կորուստներով) և մեխանիկական աճով՝ ներգաղթով կամ արտագաղթով:

Անդրադառնանք նախ ՀՀ բնակչության բնական աճի և կորուստների պատկերին, որն արտացոլվել է ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1990-2015թթ. Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել ժողովրդագրական բացասական զարգացումներ: Ծնունդը ցուցաբերել է նվազման միտում: Այն 1990 թվականի 80.000-ից 2015թ.նվազել և կազմել է ընդամենը 41,7 հազար մարդ, այսինքն, կրճատվել է շուրջ 2 անգամ: Դրան զուգահեռ՝ դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է մահացության ցուցանիշը: 1990թ. 22 հազար մահացածի դիմաց 2015թ. այն կազմեց շուրջ 28 հազար:

Այսպիսով, անկախության տարիներին 1990-2015թթ. բնակչության բնական աճի բացասական միտումների, զարգացումների հետևանքով Հայաստանի Հանրապետության մարդկային կապիտալն ունեցել է զգալի քանակական կորուստներ: Դա բնակչության զանգվածային աղքատության սոցիալական մեծ անարդարության և բարոյահոգեբանական անկման հետևանք էր:

Սակայն բնակչության թվաքանակի փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն բնակչության բնական աճով կամ նվազմամբ, այլ նրա մեխանիկական փոփոխություններով, միգրացիայով: Ընդ որում, եթե խորհրդային տարիներին բնութագրական է եղել բնակչության զգալի աճը ներգաղթի միջոցով, ապա անկախության տարիներին, սկսած 1988թ. Սպիտակի կործանիչ երկրաշարժից, տիրապետող դարձավ մշտական արտագաղթը՝ բացասական միգրացիան:

Հետագա ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում բնակչության 50-60% աղքատության, նրա սոցիալական ահավոր բևեռացման ու ընդգծված անարդարության արդյունքներում 800 հազարից մինչև 1 մլն մարդ արտագաղթեց, որը բնակչության աշխատանքային միգրացիայի ձևով մինչև այսօր էլ շարունակվում է: Դա արդեն մարդկային կապիտալի զանգվածային քանակական կորուստ է իր բոլոր վտանգավոր՝ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և ազգային անվտանգությունը խաթարող հետևանքներով:

Միգրացիայի ձևով Հայաստանի Հանրապետությունից մարդկային կապիտալի քանակական կորուստների պատճառները շատ են ու բազմաբնույթ: Դրանով են բացատրվում Հայաստանի Հանարպետությունում բնակչության միգրացիոն հոսքերի բազմաթիվ հետազոտությունները: Այսպես, 2010թ.ին ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ամբիոնների ուժերով 2007-2008թթ. 6129 տնային տնտեսությունների հետազոտությամբ հրատարակվեց «ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը» գիտահետազոտական աշխատանքը: Բացահայտվեց, որ արտերկիր մեկնելու պատճառները ոչ միայն սոցիալական, տնտեսական են, այլ նաև քաղաքական և անվտանգության:

Հայաստանի Հանրապետությունից միգրացիոն հոսքերի միտումներին է նվիրված «Միգրացիան և հմտությունները» Հայաստանի ազգային զեկույցի Ցյուրիխ 2012 հետազոտությունը: Ըստ այդ հարցումների Հայաստանի 18-50 տարեկան քաղաքացիների 36%-ը մտածում է Հայաստանից հեռանալու մասին: Միգրացիայի ամենամեծ հավանականությունը բարձրագույն կրթությամբ խմբի մոտ է, որը և պայմանավորում է ուղեղների աճող արտահոսքի միտումը: Ինչ վերաբերում է վերադարձած միգրանտներին, նրանց միայն 42%-ն է Հայաստանում գտել աշխատանք, իսկ 50%-ը մտածում է նորից արտագաղթելու մասին: Դա վտանգավոր միտումներից է, որը հղի է ժամանակավոր, ոչ ընտանեկան միգրացիան երկարաժամկետ, անվերադարձ, ընտանեկան միգրացիայի վերաճելուն:

Միգրացիոն միտումների և հետևանքների մասին ուշագրավ է Հ. Սարգսյանի, Ք. Անտոնյանի, Կ. Խաչատրյանի «Միգրացիա, միտումներ և հետևանքներ» հետազոտությունը[1]: Այստեղ ուշադրության է արժանացել Հայաստանի Հանրապետությունից մեկնածների և ժամանածների հարաբերակցությունը: Վերադարձածների խմբում միայն 33,2%-ն է հայրենիքում աշխատում, իսկ 42,8%-ը աշխատանք չի գտնում: Գերակշռող մասը 65-67%-ը նախընտրում է կրկին մեկնել: Ընդ որում, վերադարձած էմիգրանտ կանայք ավելի են հակված նորից գնալուն, քան տղամարդիկ:

2013թ.-ին Հայ-ռուսական սլավոնական համալսարանը պետպատվերով իրականացրեց ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում և 2015թ.-ին «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017թթ.) մշտադիտակում. ընտրանքային հետազոտության միջոցով ուսումնասիրությունները» ուշագրավ հետազոտությունները[2]:

---

[1] Հ. Սարգսյան, Ք. Անտոնյան, Կ. Խաչատրյան, «Միգրացիա, միտումներ և հետևանքներ», Երևան, 2013:

[2] ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար՝ Ա. Վարդանյան, թեմայի գիտական ղեկավար Ռ. Եգանյան, Երևան 2013: «Գերմանիայի միջազգային համագործակցություն» ընկերության ֆինանսավորմամբ

Արձանագրվել է, որ արտերկրում գտնվող միգրանտների (ԱԳՄ) ամսական վաստակի միջին մեծությունը 261,7 հազար ՀՀ դրամ է, որը 3,1 անգամ գերազանցում է հայաստանյան ցուցանիշին: Երկրորդ, հայերի միգրացիան տեղի է ունենում սփյուռքի հովանավորության ներքո, որը նույնպես խթանում է Հայաստանից աշխատուժի միգրացիան:

Պետք է նաև արձանագրել, որ արտերկրից ստացվող բավականին մեծ տրանսֆերտները մեղմացնում են Հայաստանի բնակչության աղքատության մակարդակը: Միգրացիան, մի կողմից նպաստում է ընտանիքների աղքատության կրճատմանը և բարեկեցության բարձրացմանը, մյուս կողմից՝ նաև աշխատուժի որակավորման և հմտությունների աճին:

Սույն հետազոտությունների մեջ բացահայտվում են նաև արտագաղթի բացասական հետևանքները: Առաջին, 1988թ.-ից Հայաստանից արտագաղթել են 1-1,5 մլն մարդ, որը մարդկային կապիտալի մեծ կորուստ է և հանգեցնում է բնակչության ծերացմանը:

Միգրացիայի այդ չափերը բացասական հետևանքներ ունեն ազգային անվտանգության վրա:

Արտագաղթի վերջին զարգացումները միտում ունեն կարճաժամկետ միգրացիան վերածելու երկարաժամկետ և, ինչու չէ, նաև անվերադարձ միգրացիայի:

Եվ, վերջապես, այն սկսել է նպաստել նաև բարձր որակավորմամբ աշխատուժի՝ ուղեղների արտահոսքին:

Ուստի տնտեսական հեղափոխությունը հնարավոր է արդյունավետ իրականացնել միայն ու միայն Հայաստանի Հանրապետությունից արտագաղթը կանխելու, նվազագույնի հասցնելու պայմաններում:

Տնտեսական հեղափոխության արդյունավետ իրականացման համար կարևոր է նաև մարդկային կապիտալի որակական կորուստների հաղթահարումը:

Մարդկային կաիտալի որակական հիմնական բաղադրիչը կրթությունն է: Այդ պատճառով մարդկային կապիտալի որակական կորուստները նախ և առաջ դրսևորվում են կրթության կորուստների մեջ: Ժամանակակից զարգացող գիտելիքահենք տնտեսությունը տրամաբանորեն պահանջում է գիտելիքահենք մարդկային կապիտալ: 1948թ.-ին դեկտեմբերի 10-ին Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր ասամբլեան «Մարդու իրավունքների համընդհանուր համակարգում» վճռող տեղ է տվել կրթության իրավունքին:

«ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017թթ.) մշտադիտարկում» ընտրանքային հետազոտության միջոցով, Երևան 2015:

1990թ.-ին Թաիլանդում կայացած «Կրթություն բոլորի համար» միջազգային գիտաժողովում կրթությունը արժևորվեց ոչ միայն որպես մարդկային զարգացման կարևորագույն գործոն, այլ որպես աղքատության հաղթահարման հիմնական ուղի: Կրթությունը շատ արժևորող ճապոնական փիլիսոփայությունը գտնում է, որ կրթությունն սկսվում է մարդու ծննդյան պահից և շարունակվում է մինչև նրա մահը: Ընդ որում, առանձնահատուկ մեծ ուշադրություն է նվիրվում նախադպրոցական տարիքի երեխաների կրթությանը: Ճապոնիայում նախադպրոցական տարիքի երեխաների շուրջ 63%-ը գնում է մսուր, իսկ չորս տարեկան երեխաների 80%-ը և հինգ տարեկան երեխաների 90%-ը հաճախում են մանկապարտեզ:

Խորհրդային տարիներին կրթությունը նախադպրոցականից մինչև ներառյալ ասպիրանտուրան անվճար էր և բարձր մակարդակի հասավ: Սակայն անկախության տարիներին կրթության ոլորտում տեղ գտան լուրջ բացթողումներ, սրանք էլ հանգեցրին մարդկային կապիտալի որակական կորուստներին: Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի նախագծում նշվում է «մատչելիության առումով ամենախոցելին նախադպրոցական կրթությունն է»: Ներկայիս հանրապետության 400 և ավելի համայնքներում չկան նախադպրոցական հաստատություններ, իսկ ընդգրկվածությունը 2008թ.-ին կազմել է ընդամենը 29.8% (քաղաքային համայնքներում՝ 39.3%, գյուղական համայնքներում՝ 13.6%): Ընդ որում, չնայած ծրագրով նախատեսված էր 2015թ. նախադպրոցական կրթական համակարգում երեխաների ընդգրկվածությունը հասցնել 90%-ի, 2008 մինչև 2011թթ. այդ աճը եղել է 1.7%, իսկ 2015թ. նախադպրոցական կրթական համակարգում երեխաների ընդգրկվածությունը հասավ ընդամենը 28.6%-ի, քաղաքներում՝ 35.7%, իսկ գյուղերում՝ 16.6%[1]:

Հայաստանի Հանրապետությունում մտահոգող է նաև հանրակրթական համակարգում երեխաների ընդգրկվածությունը և կրթական մակարդակը: Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում դպրոցից դուրս մնալու դեպքեր ոչ միայն կան, այլև 2002-2004թթ. աճել են: Դպրոց չհաճախելու դեպքերը իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ 2001-2011թթ. մարդահամարի արդյունքներում: 2001թ. մարդահամարում արձանագրվել է, որ 2001թ. 108.169 տղամարդ չունեն տարրական կրթություն, նրանցից ոչ տառաճանաչ են եղել 4581-ը: 2011թ. մարդահամարը հաստատեց, որ ՀՀ-ում, հատկապես գյուղական համայնքներում, առկա են անգրագետ կամ

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016թ. Երևան, էջ 118:

տարրական կրթություն չունեցող հազարավոր մարդիկ. մի իրողություն, որը հարիր չէ 21-րդ դարի մարտահրավերներին:

2011թ. մարդահամարի արդյունքներով, 15 և բարձր տարիքի Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 21.7% ունեցել է բարձրագույն և ավելի բարձր, իսկ 20.4%-ը նախնական միջին մասնագիտական կրթություն: Հատկապես սակավ են բարձրագույն կրթություն ստանալու գյուղական բնակչության հնարավորությունները: Դա մասնավորապես վերաբերում է բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերին, որտեղ մեծ է աղքատությունը և արտագաղթի մակարդակը:

Մարդկային կապիտալի որակական կորուստ է նաև գործազրկությունը: Պաշտոնական տվյալներով 2015թ. այն կազմում 18.5% էր, իսկ ընտրանքային մի շարք հետազոտությունների արդյունքներով՝ շուրջ 25%: Նույնիսկ պաշտոնական տվյալներով արձանագրված այս ցուցանիշը, որը, հնարավոր է, ամբողջական չլինի, գործազրկության 18.5%-ը երեք անգամ գերազանցում է գործազրկության բնական մակարդակը: Գործազրկությունը ոչ միայն բնակչության աղքատացմամբ է դառնում մարդկային կապիտալի կորուստ, այլև անգործ վիճակում, որովհետև գործազուրկ դարձած բնակչությունն ապաորակավորվում է:

Մարդկային կապիտալի որակական կորուստները, այդ թվում և գործազրկությունը, կոռումպացված երկրում շատ դժվար են հաղթահարվում: Միայն Թավշյա հեղափոխությամբ ձևավորված կառավարությունը կարող է սոցիալական ճգնաժամը հաղթահարել և լուծել Հայաստանի Հանրապետության մարդկային կապիտալի քանակական և որակական կորուստների և գործազրկության հաղթահարման շատ կարևոր պրոբլեմները: Ընդ որում, մեր երկրում կոռուպցիայի հաղթահարումը շատ դժվար է, քանի որ տասնամյակներով նա ընդգրկել է պետական ողջ համակարգը, օրգանիզմը և տարածվել է նրա ստորինից վերև՝ բարձր օղակներում: Թավշյա հեղափոխությունից հետո անցած շուրջ մեկ տարվա կոռուպցիոն բացահայտումները նշվածի հաստատումն են: Հայ մեծերը տարբեր առիթներով նշել են կոռուպցիան հաղթահարելու ուղիները: Առաջինը՝ **անպատժելիության հաղթահարումն ու վերացումն է**: Մեծն Հովհաննես Թումանյանը 1921թ. Իտալիայում գտնվող Ավետիք Իսահակյանին ցավով գրել է. «...Մենք թե՛ դրսից, թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք:

Մենք ենք ասում և սրա մեջ է ճշմարտությունը... Էսքան աղետների մեջ ոչ մի մեղավոր չերևաց, ոչ ոք պատասխանի չկանչվեց»[1]:

[1] Լ. Հախվերդյան.Թումանյանը և հայոց պատմության ճակատագիրը, Երևան 2000, էջ 27-285:

Անկախ Հայաստանի տարիներին այդ երևույթը նույնությամբ կրկնվեց: Երկիրը գյուղապետից մինչև նախագահ համատարած թաթախվեց կոռուպցիայի մեջ, թալանվեց, կողոպտվեց երկիրը և ոչ մի մեղավոր, ոչ ոք պատասխանի չկանչվեց: Անպատժելիությունը դարձավ բացահայտ իրավական և բարոյահոգեբանական վարք: Այստեղից էլ՝ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի հիմնական երաշխիքը անպատժելիության հաղթահարումն է, որին կոչ էր անում հայ իմաստուն բանաստեղծը: Խնդիրը շատ դժվար է, բայց փրկվելու այլընտրանք երկիրը չունի:

Համատարած կոռուպցիան հաղթահարելու ոչ պակաս կարևոր և նույնքան դժվար ուղին **բնակչության ընչաքաղցության հաղթահարումն է**: Դա իրավական դաշտից դուրս է, բայց կոռուպցիայի սրտում է: Ընչաքաղցությունն է մարդու հոգին մղում բոլոր միջոցներով, այդ թվում և ամենահանցավոր ճանապարհով, անվերջ հարստանալու տենչին՝ իր ճանապարհին փշրելով Աստծու կողմից սահմանված բոլոր մարդկային բարոյական նորմերը:

Ժամանակին մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը հասարակությանը զգուշացրել էր այդ վտանգի մասին.

Ես ձեզ ասում եմ կրգա Ոգու սով,
Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ
Կընկնեք մուրալու հափրած որկորով
Հըրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:

Եվ մուրացքի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի կանցնեք ծովե ծով...[1]

Կյանքը ցույց տվեց, որ իրոք ամենաթողությունը, անպատժելիությունը, ողջ երկիրը վերից վար թալանի, կոռուպցիայի մեջ թաղվելը, մարդուն դարձնում են ընչաքաղց:

Ընչաքաղցությունը, Ոգու սովը հաղթահարելը միայն անպատժելիության վերացմամբ չի լուծվի: Անհրաժեշտ է մարդու դաստիարակությունը, մարդու հոգին Ոգու սովից ազատելը:

Այսօր մարդկային կապիտալը նաև հայ անձնազոհ զինվորն է՝ երկրի ազգային անվտանգության հիմնական երաշխավորը: Հենց նա 1990-ական թվականներին ազատագրեց Արցախը, հաղթեց 2016թ.-ի ապրիլյան պատերազմում:

Պատահական չէ, որ մեծ բանաստեղծ Համո Սահյանը կոչ էր անում հզոր պահել թշնամիներով շրջապատված հայ զինվորի անկոտրում սիրտը, հաղթանակի նկատմամբ նրա մեծ հավատը:

---

[1] Ավետիք Իսահակյան, երկեր, Երևան 1987, էջ 89:

Առաքելու է, ինչ էլ որ լինի,
Իր ծուխն առ երկինք երթը նաիրյան
Եվ ոչ մի օրով աշխարհի երթից,
հետ չի մնալու երթը նաիրյան:

Ինչ հողմ ու հրդեհ, հրթիռ ու հյուլե,
Ամուր է հոգու բերդը նաիրյան[1]:

[1] Հ.Սահյան, Ինձ բացակա չդնեք, Երևան 2004, էջ 109:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԱՌԱՆՑ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎԱՀԱՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
տեխնիկական գիտությունների թեկնածու,
UNIDO-ի միջազգային փորձագետ

Տնտեսական հեղափոխությունը նախ և առաջ պետք է հիմնված լինի **գիտատեխնիկական հեղափոխության** հիմքի վրա: Գիտատեխնիկական հեղափոխության արդյունքները կախված են **առաջնորդներից**՝ բարձրագույն որակավորում ունեցող կառավարման անձնակազմից՝ կառավարման բնագավառի **գիտության դոկտորներից**:

Կառավարման գիտությունը բաղկացած է երեք հիմնական հատվածներից՝ ընդհանուր կառավարում, ֆունկցիոնալ կառավարում և կիրառական կառավարում:

Բարձրագույն որակավորում ունեցող կառավարման անձնակազմը, ըստ վերոնշյալ հատվածների, պատրաստվում է տնտեսական գիտությունների բնագավառում, մասնավորապես՝ «Ը.00.02» շիֆրով (համապատասխանում է Ռուսաստանի «08.00.05») «**Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»:** Այն ներառում է այնպիսի ենթաոլորտներ, ինչպիսիք են՝ տնտեսության և ձեռնարկությունների կազմակերպում, արտադրության կազմակերպում և կառավարում, նորարարության կառավարում, տարածաշրջանային տնտեսություն, լոգիստիկա, աշխատանքային տնտեսագիտություն և ժողովրդագրություն, բնապահպանական տնտեսագիտություն, բիզնես տնտեսագիտություն, մարքեթինգի կառավարման, գնագոյացման, տնտեսական անվտանգության, ապրանքների ստանդարտացման և որակի կառավարման, հողի, ընդերքի, կրթության և գիտության, մարդկային և ինտելեկտուալ կապիտալի կառավարման, հանգստի և զբոսաշրջության կառավարում:

Այս ենթաոլորտներն արտացոլում են **ֆունկցիոնալ և կիրառական կառավարման գիտության** հիմնական բովանդակությունը: Բարձր որակավորում ունեցող նման կադրերի պատրաստման և վերապատրաստման որակը կախված է կրթության և գիտության որակից, հավասարակշռված վերարտադրության և բաշխվածության ռազմավարությունից:

Կառավարման օբյեկտներն են՝ տարբեր չափերի, մակարդակների, գործողության ոլորտների, սեփականության ձևերի, տեսական և

մեթոդաբանական սկզբունքների, տարբեր մեթոդներով և մոդելներով կառավարվող տնտեսական համակարգերը, ինչպես նաև տնտեսական համակարգերի զարգացման ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային ասպեկտները: Տնտեսության ոլորտների կառավարման ուսումնասիրման թեմաներն են. տնտեսական համակարգերի ձևավորման, զարգացման (կայունացման) և ոչնչացման գործընթացում առաջացող կառավարման հարաբերությունները:

Կառավարության արդյունավետության և որակի բարձրացման խնդիրների առաջադրման համար առավել մրցունակ է համարվում **կիրառական կառավարման ոլորտում** որակյալ անձնակազմի առկայությունը: Նման անձնակազմի բացակայությունը արտացոլվում է տնտեսության բոլոր ոլորտներում պետական կառավարման արդյունավետության անկման բովանդակության մեջ: **1994–2018** թվականներին Հայաստանում տնտեսության բոլոր ճյուղերում պաշտպանվել է «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» գիտության բնագավառում **10 դոկտորական ատենախոսություն**, տնտեսագիտության այլ ոլորտներում՝ **ընդհանուր 55 ատենախոսություն**: Արդյունքները ցույց են տալիս հետևյալ **հակասությունները.**

1. Հայաստանում, միջին հաշվով, եթե դոկտորի և ուսանողների հարաբերակցությունը հասնում է **1/187,** ապա տնտեսագիտության բնագավառում **1/220** ուսանող:

2. Լավագույն ռուսական բուհերից մեկում, ԲՏԴ-ում **1 դոկտորին** հասնում է **56** ուսանող:

3. Եվրոպական երկրներում բուհերում հարաբերակցությունը **դասախոս/ուսանող** կազմում է **1/14**, Հյուսիսային Ամերիկայում՝ **1/17,** համեմատության համար՝ 1992թ. ԽՍՀՄ-ում եղել է **1/8:**

Որքան բարձր է գիտության դոկտոր/ուսանողի հարաբերակցությունը, այնքան բարձր է կրթության որակը և ապագա կառավարչի գործունեության արդյունավետությունը՝ պետական կառավարման որակը: Ուսուցման որակի չափման և գնահատման ամենաարդյունավետ ցուցանիշը դոկտոր/ուսանողի հարաբերակցությունն է: Հայաստանում այդ հարաբերակցությունը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Գործնականում սխալ կարծիք կա, որ եթե կառավարիչը կամ պետական ծառայողը ունենա տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, ապա դա բավարար է, որպեսզի կառավարման որոշումները կարողանան ճանաչվել որակյալ, իսկ կառավարումը՝ արդյունավետ:

Այսպիսով, տեսական տնտեսագիտության բնագավառի տնտեսագետների, գործարարների, ֆինանսիստների, բանկիրների, հաշվապահների,

պատմաբանների, արևելագետների, իրավաբանների, ֆիզիկոսների, բանասերների կամ մաթեմատիկոսների, որպես խորհրդականների, վարչապետների, նախագահի օգնականների կամ խորհրդականների առկայությունը չի կարող երաշխավորել անհրաժեշտ և բավարար պայմաններ կառավարման որակյալ որոշումների կայացման համար, մասնավորապես՝ գիտատեխնիկական և տնտեսական հեղափոխություններն ավարտին հասցնելու համար:

Ինչպիսի օրինաչափություններ ենք արձանագրում ՀՀ-ում կառավարման բնագավառում.

1. տնտեսագիտության դոկտորների թվի նվազեցման միտում ինչպես պետական կառավարման ոլորտում, այնպես էլ կրթական ոլորտում,

2. տնտեսագիտության դոկտորների թվաքանակի կրճատման միտում, մասնավորապես՝ «տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության և կառավարման» բնագավառում,

3. տնտեսագիտության թեկնածուների թվաքանակի կրճատման միտում արդյունաբերության ոլորտների կառավարման տարբեր սեգմենտներում.

4. կառավարման և տնտեսության տարբեր ոլորտներում մասնագետների կրթության որակի նվազեցում,

8. տնտեսության, տնտեսագիտության և կառավարման ոլորտներում հետազոտությունների որակի նվազեցման միտում,

9. գիտելիքների առևտրայնացման և տեխնոլոգիաների տրանսֆերի ոլորտում մասնագետների բացակայություն,

10. արտերկրում գրանցված արտոնագրերի և գյուտերի քանակի կրճատման միտում.

12. համաշխարհային վարկանիշների ցուցանիշների անկման միտում՝ կառավարության կառավարման որակի մակարդակի նվազում, հարուստների և աղքատների եկամուտների անհավասարության մակարդակի կայուն աճ: Օրինակ՝ Գլոբալ ինովացիոն ինդեքսի (GII) 141 երկրներում գնահատման արդյունքում՝ 79 ցուցանիշների հիման վրա 2018թ. վարկանիշում Հայաստանը 68-րդ տեղում է, Ռուսաստանը՝ 46-րդ (https://www.globalinnovationindex.org/analysis-indicator): Թուրքիան, Վրաստանը և Իրանը առաջ են անցել ՀՀ-ից, այն դեպքում, երբ մի քանի տարի առաջ զիջում էին ՀՀ-ին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դոկտորական թեզերի արդյունքներն առևտրայնացված չեն, դրանք չեն հաղորդվում գյուտերի, արտոնագրերի կամ հայտնագործությունների հայտերին: Հայաստանում պաշտպանած գիտության թեկնածուների և դոկտորների թվի դինամիկան 1994-2017թթ. հետևյալն է.

1994 թվականից մինչև 2017 թվականը պաշտպանած դոկտորների միջին թիվը գրեթե չի աճել (**21 → 23**): Նույն ժամանակահատվածում պաշտպանել են ֆիզմաթ. **158** և տեխնիկական գիտությունների **156** դոկտոր, բժիշկության՝ **168** դոկտոր, իսկ տնտեսագիտության՝ **55 դոկտոր**:

Գիտությունների թեկնածուների թիվը գրեթե 4 անգամ ավելացել է (**55 → 230**), սակայն այդ աճը, փաստորեն, չի ազդել Հայաստանի տնտեսական զարգացման ցուցանիշների վրա: Ավելին, Հայաստանում **ինովացիոն ինդեքսի աճի տեմպերը կայունորեն նվազում են**: Հետևաբար, մենք արձանագրում ենք գիտական աշխատողների թվաքանակի աճի և նորարարության ինդեքսի ցուցանիշների անկման միջև **հակասություն:** Լուրջ խնդիրներ կան բարձր որակավորում ունեցող անձնակազմի պատրաստման, պլանավորման ու բաշխման ոլորտներում:

Հայաստանի վիճակագրական տարեգրքի համաձայն, գիտության դոկտորների թիվը եղել է **1997թ.**-ին՝ **412, 2016թ.**-ին՝ **436.** չնչին աճ ենք գրանցում: Սակայն գիտությունների թեկնածուների ընդհանուր թիվը նվազել է՝ **1997թ.**-ին՝ **1776, 2016թ.**-ին՝ **1578:** Այս պատկերը արտացոլվել է ոչ միայն արտոնագրերի և գյուտերի հայտերի քանակի աճի նվազեցման դինամիկայի վրա, այլև հետազոտությունների, կրթության և այլ ծրագրերի իրականացման համար ծախսերի կրճատման ցուցանիշների մեջ:

Այսպիսով, Հայաստանը **վատնում է իր ինտելեկտուալ կապիտալը, հեղափոխական տեմպերով չի նախատեսում աճեցնել այս ոչ նյութական ակտիվը**: **2016թ.-ին 1997թ**.-ի համեմատ գիտական հետազոտություններ և զարգացում իրականացնող աշխատողների թիվը **նվազել է 2,143 մարդով:**

Այնուամենայնիվ, ավելի կարևոր է խոսել ատենախոսությունների որակի, քան դրանց թվաքանակի մասին, ինչպես նաև գիտական հետազոտությունների արդիականության, տնտեսության առաջատար ոլորտների ատենախոսությունների արդյունքների պահանջարկի: Գիտական նորույթը, համապատասխանությունն ու գործնական նշանակությունը որակյալ գիտական աշխատանքների հիմնական հատկանիշներն են: Հայաստանում գիտության ճյուղերի կողմից ակադեմիական աստիճանների բաշխման վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մասնաճյուղ ունի մոտավոր հավասար քանակությամբ պաշտպանություն, բացառությամբ տնտեսականի՝ կառավարման ոլորտում: **Տնտեսագիտական դոկտորական ատենախոսությունների թիվը մոտ երեք անգամ ավելի ցածր է ֆիզմաթ, բժշկական և տեխնիկական գիտությունների համեմատ, ինչն անթույլատրելի է:** Սա հստակ սպառնալիք է, որը հղի է տնտեսության ոլորտում ինքնիշխանության կորստով:

Այսինքն, **տնտեսական հեղափոխությունն անհնարին է, եթե չունենանք, չապահովենք երկրում կառավարման բնագավառում որակյալ անձնակազմ՝ անհրաժեշտ քանակի և որակի աշխատող մասնագետներ իշխանության բոլոր թևերում:**

Անհրաժեշտ է բոլոր համալսարանների տնտեսագետների և կառավարման մասնագետների հաշվառում, դասակարգում, ռեյտինգավորում ու կոնցենտրացում մի հաստատության ներքո՝ տնտեսական հեղափոխության իրականացման համար բարձր որակի մասնագետներ պատրաստելու նպատակով: Անհրաժեշտ է ստեղծել միջբուհական բարձրագույն կառավարման դպրոց:

Համեմատության համար նշենք, **30 տարվա** ընթացքում բարձր որակավորում ունեցող անձնակազմի ավելի քան 30% կորուստ ենք ունեցել: Հասկանալու համար, **400** կամ **500 գիտության դոկտոր շատ է, թե քիչ,** դիտարկենք հետևյալ տվյալները՝ «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոցում» (ՌԴ) ընդհանուր առմամբ կա **31,1** հազ. ուսանող, **554** գիտությունների դոկտոր և **1011** թեկնածու: Այս համալսարանում կուտակվել է ինտելեկտուալ կապիտալ, որը համադրելի է Հայաստանի համալսարանների համար՝ **81.648** ուսանող, **436** դոկտոր և **1579** թեկնածու:

Չենք հասկանում՝ կրթության ոլորտում փոքր և միջին բիզնեսն ենք զարգացնում քաղաքացիների հաշվին, այն էլ չապահովելով մրցունակ որակ: **2016/2017թթ.** ուսումնական տարում, ըստ պաշտոնական վիճակագրության, ՀՀ **81648** ուսանողներից «**տնտեսագիտություն, բիզնես և կառավարում» մասնագիտություններո**վ սովորել է **12140** ուսանող: Ինչպես նշվեց, Ռուսաստանի մեկ տնտեսագիտական բուհում կրթվում է **31,1** հազ. ուսանող: Անհրաժեշտ է հեղափոխական մոտեցում՝ կտրուկ միջոցառումներ. ինչքան կարելի է պատրաստել ու շուկա հանել **անորակ «արտադրանք»**:

2018թ. «QS Emerging Europe and Central Asia University Rankings» - ում Երևանի պետական համալսարանը և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը, համապատասխանաբար զբաղեցրել են 181-190 տեղերը 201-250 տեղերից (http://ysu.am/news/ru/YSU- միջանկյալ վարկանիշ):

Երկրի նոր գիտական, ինովացիոն կառավարման դպրոցների զարգացումը վտանգված է հեղափոխության համար: 2001-2019թթ. բուհերում աշխատող դոկտորների թիվը նվազել է **57-ով**, գիտության թեկնածուների թիվը՝ **198-ով**, պրոֆեսորների թիվը **941-ից** նվազել է մինչև **713** (**228-ով**) (www.armstat.am): Հայաստանը վերածվում է այլ երկրների համար տաղանդների և մրցունակ կադրերի դոնոր երկրի:

Եթե Ռուսաստանում աճում է պաշտպանածների թիվը, ապա Հայաստանում հակառակը (2006թ.-ին՝ **164,** 2016թ.-ին՝ **137):** Հետդիպլոմային և

դոկտորական կրթության ոլորտում մասնագիտությունների կառուցվածքը չի փոխվում և չի արտացոլում տնտեսական զարգացման կառուցվածքի փոփոխությունը: Ցուցանիշների նման անհավասարակշռությունը ցույց է տալիս կադրային քաղաքականության պետական ռազմավարության բացակայություն, մասնավորապես՝ տնտեսության, գիտության և կրթության բնագավառներում: Մարդկային ներուժի բարձր մակարդակ ունեցող (մարդկային զարգացման ինդեքսի առումով Հայաստանը **83-րդ տեղում է աշխարհում)** երկիրը զբաղեցնում է **97-րդ տեղը կառավարման ցուցանիշով**:

ԱՄՆ-ի փորձը

Մրցակցային միջավայրում տնտեսական աճ ապահովելու համար ԱՄՆ-ում կառավարությունն օգտագործում է մի շարք գործիքներ, որոնք հիմնված են գիտական և տեխնիկական հատկապես բարձր որակավորում ունեցող մասնագետների աճի պլանավորման և ապահովման վրա: ԱՄՆ-ում գիտությանն ուղղված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ մոտ **2,6%** են**,** Անգլիայում՝ **2,1%,** մեկ հետազոտողի միջին արժեքը տարեկան հասնում է մոտ **$30,000-ի:** Բոլոր հետազոտական և գիտահետազոտական ծախսերի մոտ **23%-ը** կիրառական հետազոտությունների համար են նախատեսված, իսկ **65%-ը՝** փորձարարական նախագծման և տեխնոլոգիական զարգացման համար: Բարձր որակավորում ունեցող գիտնականների վերապատրաստումը լուրջ ուշադրության է արժանանում երկրի ղեկավարության մակարդակով: Օրինակ, 1970թ.-ից Միացյալ Նահանգների նախագահին առընթեր գործում է **գիտության խորհրդատվական կոմիտեն**: Նա առաջարկել է մինչև տարեվերջ պատրաստել մոտ **7,500 դոկտոր**: Գիտության մեկ դոկտորի պատրաստումը պահանջում է մոտ $50,000: Իսկ առկա ասպիրանտի կրթաթոշակը ՀՀ-ում ամսեկան հիսուն դոլարին էլ չի հասնում:

Առաջարկություններ

- Անհրաժեշտ է ապահովել ասպիրանտների ու դոկտորանտների հետազոտությունների թեմաների արդիականացումը, համապատասխանեցումը երկրի հեղափոխական գործընթացներին:
- Բուհերի գործունեությունը գնահատելիս՝ հաշվի առնել նրանց ներդրումը տնտեսագիտության բնագավառում գիտությունների դոկտորների պատրաստման գործում:
- Հրաժարվել գիտության ճյուղերի դասակարգման և հետազոտական թեմաների հնացած անձնագրերի և դասակարգիչների անարդյունավետ

համակարգից, բարձրացնել տնտեսության կառավարման գիտություններ-ի մեջ կիրառական հետազոտությունների մասնաբաժինը:

- Գիտությունների ազգային ակադեմիան համապատասխանեցնել տնտեսագիտության և կառավարման նոր մասնագիտություններին և բնագավառներին:

- Օտարերկրյա պետություններում դոկտորական կրթության համար ավելացնել հատկացվող նպատակային տեղեր, մասնավորապես՝ կառա-վարման բնագավառում;

- Դոկտորական և ասպիրանտական կրթաթոշակները կտրուկ բարձ-րացնել:

- Ներդնել քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բարձ-րացում՝ գիտական աստիճանների հիման վրա, ինչպես նաև ներդնել գիտական կենսաթոշակների ինստիտուտ, ինչպես արվել է, օրինակ, Ուկրաինայում:

ԲԱԺԻՆ 2.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
տնտեսագետ
Արցախի Հանրապետության նախկին վարչապետ

Հայաստանի Հանրապետության ընդհանուր պետական պարտքի, հատկապես, արտաքին պարտքի կրճատման վերաբերյալ ու, մասնավորապես, ապագա սերունդների հաշվին պարտքի կուտակման հարցի շուրջ մամուլում և փորձագիտական շրջանակներում վերջերս տեղի ունեցող քննարկումները համարում եմ անընդունելի: Կարծում եմ՝ այդ մոտեցումները հոռետեսական են և հաշվի չեն առնում տնտեսության զարգացման հնարավորություններն ու փորձված մեթոդները, ինչի հետևանքով կարող ենք հետ մնալ համաշխարհային տնտեսական զարգացման տեմպից:

Մեր գլխավոր մարտահրավերը այս ճակատագրական ժամանակահատվածում տնտեսական աճի անհրաժեշտ մակարդակի շարունակական ապահովումն է, որով և պայմանավորված է մեր ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև անվտանգային և ժողովրդագրական խնդիրների լուծումը:

Ինչ տնտեսական պատկեր ունենք ներկայումս ՀՀ-ում, և ո՞րն է տնտեսական աճի այն նվազագույն նշաձողը, որը կապահովի առաջանցիկ զարգացման մակարդակ:

Մեկ շնչի հաշվով համաշխարհային անվանական (նոմինալ) ՀՆԱ-ն, ըստ միջազգային մասնագիտական աղբյուրների, ներկայումս մոտ 10.000 ԱՄՆ դոլար է, իսկ ՀՀ-ում՝ մոտ 4000 ԱՄՆ դոլար: Եվ այս ցուցանիշով ՀՀ-ն աշխարհի առաջին 100 երկրների շարքում ընդգրկված չէ: Տարբեր մասնագիտական գնահատումներով՝ առաջիկա տարիներին համաշխարհային տնտեսության համար կանխատեսվում է տարեկան միջինը 3% աճ: Այսինքն՝ աշխարհի մեկ բնակչի հաշվով ՀՆԱ-ն կավելանա տարեկան մոտ 300 ԱՄՆ դոլարով: Համաշխարհային միջինից էլ ավելի հետ չընկնելու նպատակով ՀՀ-ն ևս պետք է ձգտի ապահովել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ՝ տարեկան առնվազն 300 ԱՄՆ դոլարի չափով, ինչը նշանակում է ապահովել առնվազն 7,5% տնտեսական աճ: Փաստացի, սա այն նվազագույն աճի շեմն է, որը պետք է ամեն գնով ապահովենք, եթե չենք ուզում էլ ավելի հետ մնալ համաշխարհային զարգացման միտումներից:

Իսկ ինչպե՞ս հասնել աճի այդպիսի տեմպերի: Ճանապարհը մեկն է՝ ներդրումներ: Մեր հաշվարկներով՝ եթե ներկայիս ՀՆԱ-ի պարագայում այսօր ՀՀ-ին անհրաժեշտ է տարեկան մոտ 4 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում, ապա 5-7 տարի հետո ներդրումային պահանջարկը կկազմի տարեկան 7-8 մլրդ ԱՄՆ դոլար:

Մեր համոզմամբ՝ ուղղակի ներդրումներով հնարավոր չէ ապահովել այդ ծավալները: Ուստի, անհրաժեշտ է ներգրավել ֆինանսական ռեսուրսներ պետական և այլ խողովակներով: Այստեղ խոսքն առավելապես փոխառու միջոցների ներգրավման մասին է:

Պարտք վերցնելու առաջարկն առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, բայց ոլորտի համաշխարհային միտումների վերլուծությունը թույլ է տալիս համոզվել այս մոտեցման ճշմարտացիության մեջ: Ներկայումս ընդհանուր համաշխարհային պարտքը մոտ 250 տրիլիոն ԱՄՆ դոլար է, ինչը կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 318 %-ը կամ մեկ շնչի հաշվով՝ 33.3 հազար ԱՄՆ դոլար: Ընդ որում, 2007 թվականին այն կազմել է 142 տրիլիոն դոլար՝ 269 % ՀՆԱ-ի դեպքում, 2015 թվականին՝ 199 տրիլիոն կամ 286 %: Վերջին 10-11 տարում այն ավելացել է 108 տրիլիոնով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ՝ մոտ 50 %-ով: Մինչդեռ, երբ համաշխարհային այս ցուցանիշների հետ համադրում ենք ՀՀ ցուցանիշները, պատկերն զգալիորեն տարբերվում է: Հայաստանի ընդհանուր պարտքը (պետության, տնային տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների մասով) կազմում է շուրջ 12-13 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ մեկ բնակչի հաշվով ներկայումս այն հավասար է մոտ 4,000 ԱՄՆ դոլարի, ինչը շուրջ 29,000 ԱՄՆ դոլարով պակաս է համաշխարհային միջինից: Եվ եթե համաշխարհային ընդհանուր՝ 250 տրիլիոն դոլար պարտքից մոտ 79 տրիլիոն դոլարը կազմում են երկրների պետական պարտքերը կամ 1 բնակչի հաշվով 10,000 դոլար՝ կամ համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 100%-ը, ապա ՀՀ պետական պարտքը կազմում է մոտ 7 միլիարդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի մոտ 50 %-ը:

Եթե համաշխարհային պետական պարտքը կազմում է ընդհանուր պարտքի մոտ 32 % -ը, ապա ՀՀ-ում այն համարյա կեսն է: Այսինքն, այլ հատվածներում ունենք համեմատաբար ցածր պարտքային բեռ:

Հետագա վերլուծությունների և եզրակացությունների համար կազմենք հետևյալ գծանկարը, որտեղ մեջբերված թվերը ընդունելի սահմանագծում կարող են շեղումներ ունենալ.



	Համախառն արտաքին պարտք ($)	Պետական պարտք ($)	Արտաքին պահուստներ ($)	Պետ.պարտք - արտաքին պահուստներ (հանած)	ՀՆԱ ($)
Գերմանիա	5,000.2 ՄԼՐԴ	2,491.0 ՄԼՐԴ	197.9 ՄԼՐԴ	2293.5 ՄԼՆ	3,685.0 ՄԼՐԴ
82.8 ՄԼՆ	60.0 ՀԶՐ	30.0 ՀԶՐ		28.0 ՀԶՐ	44.5 ՀԶՐ
Սինգապուր	1,174.0 ՄԼՐԴ	332.0 ՄԼՐԴ	269.0 ՄԼՐԴ	67.0 ՄԼՆ	297.0 ՄԼՐԴ
5.5 ՄԼՆ	213.0 ՀԶՐ	60.0 ՀԶՐ		12.0 ՀԶՐ	54.0 ՀԶՐ
Դանիա	586.0 ՄԼՐԴ	123.0 ՄԼՐԴ	69.7 ՄԼՐԴ	53.3 ՄԼՆ	307 ՄԼՐԴ
9.8 ՄԼՆ	101.0 ՀԶՐ	21.0 ՀԶՐ		9.1 ՀԶՐ	53.0 ՀԶՐ
Բելգիա	1,424.0 ՄԼՐԴ	490.0 ՄԼՐԴ	23.4 ՄԼՐԴ	466.6 ՄԼՆ	467.0 ՄԼՐԴ
11.4 ՄԼՆ	125.0 ՀԶՐ	43.0 ՀԶՐ		41.0 ՀԶՐ	41.5 ՀԶՐ
Բելառուս	37.5 ՄԼՐԴ	25.5 ՄԼՐԴ	5.9 ՄԼՐԴ	19.6 ՄԼՆ	48.8 ՄԼՐԴ
9.5 ՄԼՆ	4.0 ՀԶՐ	2.7 ՀԶՐ		2.0 ՀԶՐ	5.1 ՀԶՐ
Հայաստան	8.6 ՄԼՐԴ	7.0 ՄԼՐԴ	≈2.0 ՄԼՐԴ	5.0 ՄԼՆ	≈13 ՄԼՐԴ
3.0 ՄԼՆ	3.0 ՀԶՐ	2.3 ՀԶՐ		1.7 ՀԶՐ	4.2 ՀԶՐ

Գծանկարից երևում է, որ ՀՀ-ն ցածր արտաքին և պետական պարտք ունի՝ թե՛ ընդհանուր առմամբ, թե՛ բնակչության մեկ շնչի հաշվով, թե՛ ՀՆԱ-ի համեմատ: Հատկանշական է, որ ՀՀ ընդհանուր պարտքը գրեթե հավասարազոր է ՀՀ համախառն ներքին արդյունքին: Այսինքն՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ/ընդհանուր պարտքը հավասար է 1/1: Համեմատության համար նշենք, որ միջին համաշխարհային համանուն ցուցանիշի հարաբերակցությունը 1/3 է:

Օրինակ՝ Մերձբալթյան երկրներից Լատվիայի ՀՆԱ–ն 30.2 մլրդ ԱՄՆ դոլար է կամ մեկ շնչի հաշվով 18.5 հազ. ԱՄՆ դոլար, իսկ արտաքին պարտքը՝ 39.7 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ երկրի բնակչությունը 2 մլն է:

Լիտվայի ՀՆԱ-ն 35 մլրդ ԱՄՆ դոլար է կամ մեկ շնչի հաշվով 18.9 հազ. ԱՄՆ դոլար: Երեք միլիոն բնակչություն ունեցող երկրի արտաքին պարտքը 52 մլրդ ԱՄՆ դոլար է: Իսկ Էստոնիայի ՀՆԱ-ն կազմում է 30.9 մլրդ ԱՄՆ դոլար կամ մեկ շնչի հաշվով 23.6 հազ ԱՄՆ դոլար: Ընդամենը 1.3 մլն բնակչություն ունեցող երկրի արտաքին պարտքը 27 մլրդ ԱՄՆ դոլար է (չնայած պետական պարտքի ցածր լինելուն):

Այսինքն, կարող ենք համոզված պնդել, որ զարգացած ու հարուստ են հիմնականում այն երկրները, որոնք ունեն արտաքին և պետական մեծ ֆինանսական պարտավորություններ (պատկերը համարյա նույնն է

մնացած երկրների մասով ևս): Այդ երկրների հետ համեմատելիս ՀՀ-ն ունի շատ ցածր պարտքային բեռ, ինչպես մեկ շնչի հաշվով, այնպես էլ ՀՆԱ-ի համեմատ:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը դեռևս նախընտրական փուլում հայտարարել էր ԱՄՆ-ի պարտքի իջեցման (ընդհուպ զրոյացման) մտադրության մասին, սակայն 2 տարվա ընթացքում 2 տրիլիոն ԱՄՆ դոլարով ավելացրել է ԱՄՆ պետական պարտքը: Իսկ Չինաստանի վերջին տարիների ընդհանուր պարտավորությունների (պետական պարտքի, պետական և մասնավոր ընկերությունների և տնային տնտեսությունների պարտքի) աճի տեմպերը տնտեսագիտական ոչ մի ընդունված օրինաչափության և հիմնավորման չեն ենթարկվում:

Եթե համեմատենք մեկ շնչի հաշվով ՀՀ պետական պարտքը համաշխարհային միջինի հետ (10000 ԱՄՆ դոլար - 2300$=7700 ԱՄՆ դոլար) և այն բազմապատկենք բնակչության թվաքանակով, ապա կստանանք մոտ 22 մլրդ դոլար: Այսինքն, այս պահին ունենք այդքան լրացուցիչ պետական պարտքի հնարավորություն համաշխարհային միջինին հասնելու համար:

Պետական պարտքից բացի, ընդհանուր վարկային բեռի ավելացման հնարավորությունը մոտ 60 մլրդ ԱՄՆ դոլար է (3 մլն բնակչություն x 20.000 ԱՄՆ դոլար): Համաշխարհային պարտքի միջին ցուցանիշի և ՀՀ ընդհանուր պարտքի տարբերությունը մոտ 90 մլրդ ԱՄՆ դոլար է: Ստացվում է, որ, եթե հաշվի առնենք նաև համաշխարհային պարտքի միջին չափի աճի միտումը, ապա 10-15 տարում ավելի քան 100 մլրդ ԱՄՆ դոլար լրացուցիչ գումար կարելի է ներդնել ՀՀ տնտեսության մեջ՝ հասնելու համար համաշխարհային միջինին:

Ընդամենը 10-12 տարում 22 մլրդ ԱՄՆ դոլար պետական պարտքի ավելացման արդյունքում ՀՀ ՀՆԱ-ն կկազմի ավելի քան 45 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 15,000 ԱՄՆ դոլար:

Բնականաբար, հարց է առաջանում պարտքի սպասարկման առնչությամբ: Եթե նկատի առնենք, որ 1 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ն տալիս է լրացուցիչ ավելի քան 0.2 դոլար հարկի տեսքով պետական եկամուտ, և այն, որ 1 ԱՄՆ դոլար պարտքի տարեկան սպասարկման չափը առավելագույնը 0.07 ԱՄՆ դոլար է, իսկ հետագայում, համոզված եմ, ավելի ցածր, ապա պետական պարտքի սպասարկումն այդքան էլ խնդրահարույց չի դառնում (այսինքն՝ վճարել 7 ցենտ, ստանալ 20 ցենտ): Ավելին, այս հաշվարկի մեջ ներառված չէ պարտքով վերցրած գումարի ներդրման մուլտիպլիկատիվ ազդեցությունը տնտեսության վրա, ինչը հետագայում ապահովելու է լրացուցիչ հարկային մուտքեր պետական բյուջե:

Հաջորդ հարցը ծրագրի հիմնավորումն է, որպեսզի ներդրումների ազդեցությունը լինի երկարատև և դինամիկ:

Կա մի հստակ կանոն՝ պետության կողմից ներգրավված միջոցները պետք է ուղղել միայն ներդրումների՝ հիմնական կապիտալի տարրերի ավելացմանը, դրա հետ մեկտեղ մասնավոր հատվածի կողմից վարկերի ծավալների ավելացումը դարձնել կառավարելի և վերահսկվող:

Այստեղ անհրաժեշտ է խորը և համակողմանի ուսումնասիրություն կատարել, բայց այն, որ գյուղատնտեսությունում, ենթակառուցվածքներում, շինարարությունում, վերամշակող արդյունաբերությունում և այլ ճյուղերում մեծ ներդրումային ներուժ կա, միանշանակ է: Պետք է հաշվի առնել նաև, որ բացի պետական պարտքի ավելացումից, ընդհանուր պարտքի մասով ևս զուգահեռաբար տեղի է ունենալու աճ, որի հիմնական մասը նույնպես դառնալու է ներդրում: Հատկապես, եթե պետական պարտքը օգտագործվի նախևառաջ արտադրական ենթակառուցվածքների զարգացման նպատակով, ապա կառաջանան ներդրումների ներգրավման լրացուցիչ խթաններ:

Սույն վերլուծությամբ փորձ ենք անում կոտրել այն կարծրատիպը, որը ձևավորվել է պետական պարտքի և, ընդհանուր առմամբ, վարկային պարտավորությունների առնչությամբ: Պետք է հասկանալ, որ առանց լրացուցիչ խոշոր գումարների ներգրավման ու մեծ ներդրումային ծրագրերի անհնարին է լինելու դիմակայել այսօրվա մարտահրավերներին: Բանակի մարտունակության և ժողովրդագրական աճի հիմքում ընկած են տնտեսական աճի բարձր տեմպերը: Իսկ դրանց ապահովումը հնարավոր չէ առանց հավակնոտ և մեծածավալ ներդրումների: Արդյո՞ք այդ խնդիրների լուծման համար պարտք վերցնելուն այլընտրանք չկա…

Ներքին խնայողությունների տարեկան աճի տեմպերը բավարար չեն: Ռուսաստանի վերջին տարիների տնտեսական աճի ցածր տեմպերի պատճառով նվազել է մեր ներքին կապիտալի արտահոսքը, բայց դա չի նշանակում, որ այդ վիճակը կարող է երկար տևել: Ինչ վերաբերում է օտարերկրյա ներդրումներին, ապա ՀՀ տնտեսության այսօրվա վիճակը և հնարավոր ուղղակի ներդրումների չափը չեն կարող ապահովել տնտեսական աճի ցանկալի տեմպեր:

Պարտքի ավելացման տարբերակին պահպանողական (վախկոտ) ֆինանսիստները միշտ երկու հակափաստարկ են ներկայացնում՝ «փող տվող չկա» և «հիմնավոր ծրագրեր չկան»: Երկու հակափաստարկի պատասխաններն էլ միշտ կան՝ աշխարհում փողի ներգրավման հնարավորությունները զգալիորեն մեծացել են, պարզապես պետք է ճիշտ աղբյուրներ գտնել և արդյունավետ բանակցություններ վարել, իսկ թե որտեղ

արդյունավետ ներդնել ներգրավված միջոցները, այդ խնդիրը կարելի է հեշտորեն լուծել արհեստավարժ աշխատանքի և համապատասխան վերլուծությունների միջոցով:

Հ.Գ. Համոզված լինելով, որ ոչ բոլորն են միանշանակ ընդունելու այս տեսակետը, կարծում եմ, որ թեման պետք է տնտեսագետների կողմից լայն քննարկման արժանանա և հնարավորություն տա ՀՀ նոր կառավարությանը համարձակ գնալու այս ճանապարհով: Ի դեպ, Ռուսաստանի Դաշնության գործող կառավարությանը նմանօրինակ առաջարկ է ներկայացրել նաև ակադեմիկոս Աբել Աղանբեկյանը: Շատ երկար ժամանակ բազմաթիվ աղբյուրներից ուսումնասիրելով համաշխարհային փորձը, օգտվելով մեծ թվով առաջատար մասնագիտական գրականությունից (օրինակ՝ Դժո Ստադվելլի «Ասիական կառավարման մոդելը», Ջեֆերի Սակսի «Աղքատության վերջը», Տարոն Աճեմօղլուի «Ինչու են ձախողվում պետությունները», Գրիգորի Կլարկի «Ցտեսություն չքավորություն», Պոլ Կրուգմանի «Ճգնաժամից դուրս գալ հնարավոր է», Ռուչիր Շարմայի «Պետությունների թռիչքը և անկումը» և այլն)՝ վստահ եմ, որ Մայր Հայաստանի թռիչքային զարգացումը հնարավոր է միայն ֆինանսական լուրջ ռեսուրսների համարձակորեն ներգրավման դեպքում, այլապես դատապարտված ենք…

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԱ ՔԱՌՅԱՆ
«Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն ՀԿ-ի նախագահ
տ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Հարկային եկամուտների հավաքագրումների և պետական բյուջեի կանոնակարգումների և, հատկապես, դրա չարաշահումների նկատմամբ մեծ հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ ամուր պետական ֆինանսական համակարգը օբյեկտիվորեն սերտ կապված է ժամանակակից ազգային պետության կայացման մակարդակի հետ: Այդ առումով անդրադառնանք հարկային քաղաքականության բազմագործոն և փոխկապված խնդիրների՝ պետական բյուջեի ֆիսկալ մատրիցին և դրա արդյունավետությանը: Միևնույն ժամանակ, փաստենք, որ անկախ ՀՀ վարչապետի կողմից «տնտեսական հեղափոխության» թեզի հռչակումից, Հայաստանը «դատապարտված է» ապահովել թռիչքաձև զարգացում, քանի որ միայն ինքնիշխան կայուն և ամուր տնտեսությունը կլինի նախապայման՝ տարածաշրջանային փխրուն ռազմաքաղաքական ու նաև գլոբալ աշխարհաքաղաքական իրավիճակում մեր հարևան երկրի ռազմական նկրտումները զսպելու, Հայաստանի և Արցախի հուսալի անվտանգությունն ու ժողովրդագրական դրական միտումները ապահովելու համար (փորձաքար հանդիսացավ 2016թ. ապրիլյան քառօրյան):

Հարկ է նշել, որ երկրի պետական բյուջեի, ինչպես նաև եռամյա պետական միջնաժամկետ ծրագրի ֆորմատը բավարար հիմնավորմամբ անդրադարձ չի կատարում բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումներին: Նման խնդրահարույց կանխատեսումներից է «հարկային ծախսերի» գնահատումը: Այն ենթադրում է տնտեսվարողներին՝ անցած տարիներին և առաջիկա բյուջետային տարում տրամադրված և տրամադրվող բազմաթիվ և տարաբնույթ հարկային նպաստավոր ռեժիմների, հարկային արտոնությունների և հարկերից ազատումների (այսուհետև հարկային ՆՌ և ԱԱ) հետևանքով առաջացած «հարկային ծախսերի» գնահատումը: ՀՀ-ում դրանց մեծության գնահատումը առաջին անգամ կատարվել է 2015թ. համար՝ ներառվելով «2015թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բացատրագրում (առանձին հավելվածի

ձևով): Այն ներկայացված է նաև 2019թ. պետական բյուջեի մասին օրենքի բացատրագրում *(հավելված 14)*[1]: «Հարկային ծախսերի» գնահատումը իրականացվել է տնտեսության մակրո մակարդակով և ըստ ոլորտների, հիմնականում ըստ երեք հարկատեսակների (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ), մինչդեռ «հարկային ծախսերը» չեն գնահատվում առանձին կազմակերպությունների մակարդակով: Այս պարագայում դժվար է գնահատական տալ դրանց հիմնավորվածությանն ու արդյունավետությանը:

Գիտական գրականության մեջ տարբեր հարկային ՆՌ և ԱԱ-ների օգտագործման ազդեցությունը հավասարեցվում է բյուջետային ուղղակի ծախսերին և ընդունված է անվանել «հարկային ծախսեր»: Այս տեսանկյունից կարևոր է բացահայտել ուղղակի բյուջետային ծախսերը «հարկային ծախսերով» փոխարինելու արդյունավետությունը:

Հարկային ծախսեր կատեգորիան իրենից ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված հարկային ՆՌ և ԱԱ-ների արդյունքով պետական բյուջե պակաս գանձված հարկային եկամուտները, որոնք այդ նույն չափով, դիտարկվում են որպես պետության կողմից կատարված այլընտրանքային ծախսեր, ելնելով նրանից, որ դրանք հանգեցնում են (նույն գումարի չափով) բյուջետային ծախսերի կրճատմանը: Մինչդեռ, եթե պետական բյուջեի ուղղակի ծախսերը ենթակա են բյուջետային օրենսդրությամբ հատուկ ընթացակարգերով դրանց հիմնավորման, հատկացման, մոնիթորինգի, վերահսկողության և վերլուծության, ապա հարկային ծախսերը, որպես կանոն, հաճախ բավարար չափով չեն հիմնավորվում ու նաև պատշաճ կարգով չեն վերահսկվում: Դրա արդյունքում խաթարվում է պետության վերաբաշխիչ գործառույթը, ըստ այդմ՝ նվազում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը: Այսպիսով, սոցիալ-տնտեսական քաղաքականության համար հարկային ՆՌ և ԱԱ-ների տրամադրման այլընտրանքը բյուջետային ծրագրային ուղղակի ծախսերն են՝ սուբսիդիաները, սուբվենցիաները, դոտացիաները, դրամաշնորհները և կամ ուղիղ տրանսֆերների այլ ձևերը:

«Հարկային ծախսեր» տերմինը 1967թ. շրջանառության մեջ դրել է ԱՄՆ գանձապետարանի հարկային քաղաքականության գծով օգնական քարտուղար Սթենլի Սյուրեյը (Stanley S. Surrey): Նրա կողմից այն ժամանակ կազմվեց ծրագրային ծախսերի բնույթ ունեցող շահութահարկի արտոնությունների ցանկը: Նպատակն էր՝ ուշադրություն հրավիրել խնդրի

[1] Պետական բյուջե 2019, Հաշվետվություն 2019թ. հարկային ծախսերի գնահատականի վերաբերյալ, Հավելված N 14, http://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2019_t

վրա, հարկային համակարգի բարեփոխումների իրականացման հույսով, նպատակադրելով դրանք հարկային համակարգի հիմնական գործառույթի՝ հարկային եկամուտների բարձրացմանը[1]:

Հարկային ՆՌ և ԱԱ-ները ուղղակիորեն կրճատում են բյուջեի հարկային եկամուտները: Դրանց ազդեցությունը արտահայտվում է նաև անուղղակի կերպով, և, ընդ որում, անուղղակի ազդեցության գնահատումը շատ ավելի բարդ է, քանի որ այդ ազդեցությունը շատ հաճախ անդրադարձ է ունենում հարկային քաղաքականության գործիքակազմի ու միջոցների և այլ ոլորտների վրա: Հարկային ՆՌ և ԱԱ-ները նպատակաուղղված լինելով որոշակի սոցիալ-տնտեսական խնդիրների իրականացմանը՝ հաճախ միջնորդված են ազդում դրանց վրա, և, բացի դրանից, կարող են առաջացնել այլ ազդեցություններ, որոնք նախապես նախատեսված և գնահատված չէին:

Պետք է հատուկ ընդգծել, որ հարկային ՆՌ և ԱԱ-ների օգտագործումը ուղղակիորեն ռիսկի է ենթարկում հարկային համակարգի հիմնական սկզբունքներն ու գաղափարական ատրիբուտները՝ չեզոքությունը, արդարությունը, հավասարությունը, խտրականության բացառումը և արդյունավետությունը, ինչպես նաև՝ հարկային վարչարարության հավասարակշռվածությունը, պարզությունը և օրենսդրության կատարման ապահովումը:

Հարկ է նշել, որ բազմաթիվ դեպքերում, հարկային ՆՌ և ԱԱ-ների կիրառման օգուտները չեն բավարարում և չեն փոխհատուցում բյուջեի եկամուտների կորուստները[2]: Դրա հիմնական պատճառը ոչ նպատակային և ոչ հասցեական հարկային ՆՌ և ԱԱ-ների կիրառումն է:

Հարկային ՆՌ և ԱԱ-ները հանգեցնում են նաև հարկային վարչարարության բարդեցմանը, քանի որ հարկատուները պարտավոր են փաստաթղթավորել դրանց կիրառումը: Հարկային ՆՌ և ԱԱ-ները պարարտ հող են ստեղծում չարաշահումները խթանելու համար: Հարկային ՆՌ և ԱԱ-ները ներքո հարկային ծախսերը հաճախ իրականացվում են հատուկ ծրագրերի շրջանակում, օրինակ՝ առողջապահության, բնապահպանական և այլ ոլորտների համար, որոնց վերահսկման համար հարկային մարմինների միջոցներն ու ուժերը, որպես կանոն, չեն բավարարում: Հարկային համակարգի միջոցով տրամադրվող սուբսիդիաները և տրանսֆերները լրացուցիչ բեռ են հարկային վարչարարության համար,

[1] Leonard E. Burman, Marvin Phaup, “Tax Expenditures, the Size and Efficiency of Government, and Implications for Budget Reform”, p. 96, http://www.nber.org/chapters/c12563.pdf

[2] Т. А. Малинина, Оценка налоговых льгот и освобождений: зарубежный опыт и российская практика М.: Ин-т Гайдара, 2010. – 212 с.: ил. – (Научные труды / Ин-т экономической политики им. Е.Т. Гайдара; № 146Р), стр. 8; http://www.cfin.ru/taxes/tax_expenditures_analysis.shtml#p1

ինչը ազդում է հարկերի հավաքագրման գործառույթի արդյունավետության վրա[1]: Վերոհիշյալ բոլոր գործոնները հանգեցնում են հարկային վարչարարության ծախսերի զգալի աճին:

Հաճախ հարկային արտոնությունները, որոնք ուղղված են խթանելու ներդրումները, հատկապես ՕՈՒՆ, սակայն դրանց բարդ վարչարարության արդյունքում, այդ միջոցները միանշանակ չեն նպաստում ներդրումների աճին: Հարկային ՆՌ և ԱԱ-ների բարդ և դժվար կիրառելի ձևաչափերը բարձրացնում են անհավասարության մակարդակը, քանի որ դրանք ավելի հեշտ են իրացնում խոշոր հարկ վճարողները: Ի վերջո, իրացնելու տեսանկյունից բարդ հարկային ՆՌ և ԱԱ-ները կարող են չարդարացնել հարկային եկամուտների բարձրացման երկարաժամկետ պրոգրեսիվ աճի սպասումները[2]: Տնտեսական, սոցիալական և քաղաքական բնույթի բազմաթիվ փաստարկները համոզիչ վկայում են այն մասին, որ հարկային ՆՌ և ԱԱ-ների օգտագործման մոտեցումը համակարգը հեռացնում է հարկային չեզոքության սկզբունքից, քանի որ դրանց արդյունավետության հաշվարկները միշտ չէ, որ համոզիչ և միանշանակ են: Պարադոքսալ է, սակայն հարկային չեզոքության սկզբունքի շեղման առաջին փաստարկը հարկային վարչարարության պարզեցումն ու հարկային օրենսդրության պահանջների կատարման ապահովումն է, ինչը, բնականաբար, առարկություններ չպետք է առաջացնի:

Հարկային ՆՌ և ԱԱ-ների տրամադրման մեկ այլ հանգամանք էլ կարող են դառնալ արտաքին գործոնները[3]: Հարկային ՆՌ և ԱԱ-ների համար հիմք է համարվում այն գործունեության խթանումը, որը արտաքին դրական ազդեցություն է առաջացնում, օրինակ՝ արդյունաբերական նորարարական ձեռնարկությունների համար շահութահարկի արտոնությունները: Այնուամենայնիվ, հարկային ՆՌ և ԱԱ-ների նման ձևերը կարող են հասարակության համար առաջացնել զուտ կորուստներ:

Հարկային ՆՌ և ԱԱ-ները հանգեցնում են նաև մրցակցության խեղաթյուրմանը, առաջանում են ֆինանսական խնդիրներ, որոնք վատթարացնում են ներդրումային միջավայրը: Ներդրումների ծավալների տեսանկյունից խթանների զուտ ազդեցությունը կարող է լինել բացասական, քան թե դրական[4]: Հարկային ՆՌ և ԱԱ-ներից շահեկան վիճակում

---

1 Dirk-Jan Kraan, Off-budget and Tax Expenditures // OECD Journal on Budgeting. 2004. Vol. 4. No. 1. P. 134., http://www.oecd.org/gov/budgeting/39515114.pdf

2 Tax Expenditures in OECD Countries. OECD, 2010. P. 26., http://www.planejamento.gov.br/secretarias/upload/Arquivos/seges/arquivos/OCDE2011/OECD_Tax.pdf

3 Toder E., Wasow B., Ettlinger M., "Bad Breaks All Around: The Report of the Century Foundation Working Group on Tax Expenditures", The Century Foundation Press, 2002, http://tcf.org/assets/downloads/20020901-bad-breaks-all-around.pdf

4 Bolnick B. Effectiveness and Economic Impact of Tax Incentives in the SADC Region. Technical

են, առաջին հերթին, խոշոր ձեռնարկությունները, քանի որ նրանց համար ավելի հեշտ է վարել հարկային պլանավորում, իրականացնել արտոնությունների ազդեցության և հիմնավորման համար առաջնային հաշվառում:

Հարկային ՆՌ և ԱԱ-ների միջոցով տարբեր արտադրությունների խթանումը հանգեցնում է հարկի արդյունավետ դրույքաչափի տարբերության և տարբեր ոլորտներում շահույթի նորմայի տարբերակմանը: Արդյունքում, այլ հավասար պայմաններում, դա հանգեցնում է միջճյուղային վերաբաշխմանը և ընդհանուր տնտեսության մեջ կապիտալի բաշխման անհավասարակշռությունների[1]: Որոշ ոլորտներում հարկային արտոնություններով եկամուտները աճում են, այդուհանդերձ, դա կարող է ուղեկցվել տնտեսության ընդհանուր եկամուտների կրճատմամբ: ՏՀԶԿ-ի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ ՕՈՒՆ ներգրավվման վրա ազդում են հարկման թափանցիկության, պարզության և կայունության գործոնները, և, միևնույն ժամանակ, հարկային վարչարարությունն ավելի բարձր արժեք ունի ներդրողների համար, քան հարկային հատուկ արտոնությունները[2]: Ներդրողների համար ցածր հարկային դրույքաչափերը առավել նախընտրելի են, քան հարկային ՆՌ և ԱԱ-ները, քանի որ այս դեպքում բիզնեսի զարգացման հեռանկարները ավելի ակնհայտ և հստակ են: Հետազոտության արդյունքներով նշվում է, որ որոշ եվրոպական երկրներ նվազեցնում են կորպորատիվ հարկի դրույքաչափը և ավելացնում են նույն կորպորատիվ հարկի բազան: Այդ մոտեցումը կարող է օգտակար լինել նաև զարգացող երկրների համար[3]: Միևնույն ժամանակ, հարկերի ցածր տոկոսադրույքը կարող է հիմնավորված լինել լայն հարկային բազայի դեպքում, որպեսզի ապահովվի բյուջեի եկամուտների անհրաժեշտ մակարդակը: Ոչ արդյունավետ հարկային վարչարարության և եկամուտների անկման պայմաններում, հարկերի դրույքաչափերի կրճատումը չի կարող արդարացվել նույնիսկ երկարաժամկետ հեռանկարում:

Report to USAID/RCSA SADC Tax Subcommittee. SADC Trade, Industry, Finance and Investment Directorate. February 2004, http://pdf.usaid.gov/pdf_docs/PNACY929.pdf

1 Eric J. Toder, Tax Expenditures and Tax Reform: Issues and Analysis. National Tax Association. November 2005. P. 10., http://www.urban.org/UploadedPDF/411371_tax_expenditures.pdf

2 A Review of the OECD Report on Corporate Tax Incentives for Foreign Direct Investment: Lessons for Developing Countries?, p. 42, http://www.dfdl.com/images/stories/OECD_Report_on_Corporate_Tax_Incentives_for_FDI_Lessons_for_Developing_Countries_APJT_2002.pdf, также Edwin Vanderbruggen, Do Tax Incentives Really Attract Foreign Investment? http://www.vdb-loi.com/vdb/wp-content/uploads/2012/11/Do-Tax-Incentives-Really-Attract-Foreign-Investment-by-Edwin-Vanderbruggen.pdf

3 A Review of the OECD Report on Corporate Tax Incentives for Foreign Direct Investment: Lessons for Developing Countries?, p. 50, http://www.dfdl.com/images/stories/OECD_Report_on_Corporate_Tax_Incentives_for_FDI_Lessons_for_Developing_Countries_APJT_2002.pdf

Հարկային քաղաքականության հիմնարար սկզբունքների տեսանկյունից՝ չեզոքություն, արդարություն, արդյունավետություն և պարզություն, հարկային ՆՌ և ԱԱ-ների կիրառումը հաճախ քննադատության չի դիմանում, քանի որ վերջիններս աղավաղվում են հարկային համակարգը: Այն կորցնում է արդարությունը, բարձրանում են հարկային վարչարարության ծախսերը և նվազում է դրա գործողության արդյունավետությունը: «Հարկային ծախսերի» ինստիտուտը ունի նպատակայնություն և, միևնույն ժամանակ, չի ենթարկվում չեզոքության սկզբունքին և ռեսուրսների հավասարապես բաշխմանը բոլոր հարկ վճարողների համար: Եվ ստացվում է հակառակը, «հարկային ծախսերի» ծրագրերով պետությունը «ճշգրտում է» ռեսուրսների՝ կապիտալի և եկամուտների բաշխումը, որոնք ստեղծվել են արդար շուկայական մրցակցության պայմաններում:

Այսպիսով, հարկային ՆՌ և ԱԱ-ների միջոցով հարկային քաղաքականությունը տրամագծորեն հակադիր նպատակներ ունի ուղղակի բյուջետային ծախսերի հետ, քանի որ այդ երկու մոտեցումները չունեն միասնական սկզբունքներ: Սակայն այս դեպքում պետք է համեմատել հարկային ՆՌ և ԱԱ-ների արդյունքը, այսինքն «հարկային ծախսերի» ծրագրերը՝ ուղղակի բյուջետային ծախսերի (սուբսիդիաների, սուբվենցիաների, դոտացիաների և այլ ձևերի տեսքով) հետ՝ ըստ դրանց արդյունավետության: Հարկային ՆՌ և ԱԱ-ները, որպես կանոն, չունեն անհատական բնույթ, իսկ ուղղակի բյուջետային ծախսերը ունեն հասցեական անհատական բնույթ և այդ առումով ավելի նպատակային են: Հարկային ՆՌ և ԱԱ-ները ազդում են բազմաթիվ սուբյեկտների և անհատների վրա, որոնց համար նախատեսված են այդ միջոցները, իսկ ուղղակի սուբսիդիաները ավելի ընտրովի են: Սակայն, գրեթե միշտ հարց է առաջանում, արդյոք միջոցները անհրաժեշտ չափով բավարարում են: Հետևապես, այս գործոնները պետք է հատկապես հաշվի առնել հարկային ռազմավարությունը նախագծելիս:

Գործընթացային առումով ուղղակի բյուջետային ծախսերը կատարվում են համաձայն բյուջետային օրենսդրության կառավարման սկզբունքների (սկսած դրանց ընդունումից, կատարումից և վերահսկողությունից), հիմնվելով հաշվապահական հաշվառման հատուկ ստանդարտների վրա: Հարկային ՆՌ և ԱԱ-ների գծով հարկային ծախսերի վերաբերյալ հատուկ կանոնակարգում գոյություն չունի և ստանդարտացված հաշվետվություն չի կատարվում: Դրանով պայմանավորված՝ առկա է երկու գործիքների թափանցիկության տարբեր աստիճանի դրսևորումը:

Բյուջետային գործընթացի շրջանակներում հարկային ՆՌ և ԱԱ-ների տրամադրումը, որպես կանոն, չի ենթարկվում մանրակրկիտ կանոնակարգման, և դրանց ընդունումը սովորաբար ուղեկցվում է կառավարության կողմից հիմնավորվածության տարբեր չափորոշիչներով և խայտաբղետ ցուցանիշներով: Նման պատկեր է նաև ՀՀ-ում տրամադրվող հարկային ՆՌ և ԱԱ-ների դեպքում: Բացի այդ, միշտ չէ քննարկվում բյուջետային ուղղակի ծախսերի և հարկային ծախսային ծրագրերի նպատակների միջև հնարավոր կոնֆլիկտների հարցը: Հարկային ծախսերը, որոնք իրականացվում են հարկային ՆՌ և ԱԱ-ների միջոցով և, մյուս կողմից, ուղղակի բյուջետային ծախսերը, որոշակի հանգամանքներում կարող են ունենալ նմանատիպ նպատակներ և արդյունքներ, և միևնույն ժամանակ ունենան էական տարբերություններ: Հարկային տրանսֆերների վարչարարության առանձնահատկությունն այն է, որ դրանք իրականացվում են հարկային մարմինների կողմից (օրինակ՝ հարկային վարկերի տեսքով) և դրանք, որպես կանոն, իրականացվում են որոշակի հաշվետու ժամանակահատվածում (տարի), և ի տարբերություն բյուջետային ուղղակի ծախսերի, չեն փոխանցվում ապագա ժամանակաշրջաններին:

Ուղղակի բյուջետային ծախսերի և հարկային ՆՌ և ԱԱ-ների հետ մեկտեղ պետությունն իրականացնում է նաև պետական կարգավորումներ՝ առանձին ոլոտներում՝ արդյունաբերական, սպասարկման, էներգետիկ և բնապահպանական և այլ, որոնց համար սահմանվում են որոշակի ստանդարտներ: Նշված կարգավորող միջոցների ազդեցությունը երբեմն կարող է ունենալ ավելի արագ արդյունք կամ ընդհանրապես չունենալ, և դրանք բյուջեի եկամուտների կամ ծախսերի վրա ազդում են անուղղակի ձևով: Կարգավորող միջոցները կարող են իրականացվել համեմատաբար արագ և արդյունավետ, եթե դրանց համար պրոցեսուալ առումով չի պահանջվում օրենսդիր իշխանության հավանությունը:

Համեմատելով տնտեսության վրա ազդեցության երկու մոտեցումների՝ առաջինը, հարկային ՆՌ և ԱԱ-ների քանակի կրճատումը ու համապատասխան հարկային բազայի ընդլայնումը և հարկի ընդհանուր դրույքաչափերի իջեցումը, երկրորդի՝ հարկային ՆՌ և ԱԱ-ների լայն կիրառման հետ, կարող ենք նշել, որ տնտեսական աճի խթանման համար առաջին մոտեցումը համարվում է ավելի արդյունավետ:

Պայմանավորված նրանով, որ հարկային ՆՌ և ԱԱ-ները հանգեցնում են հարկային եկամուտների նվազմանը, կառավարությունները չհավաքագրված հարկերի փոխհատուցման համար հաճախ բարձրացնում են հիմնական հարկերի դրույքաչափերը: Արդյունքում, արդյունավետ

դրույքաչափերն ավելանում են այն հարկ վճարողների համար, ովքեր չեն օգտվում հարկային արտոնություններից: Հարկային համակարգը մտնում է արդյունավետության առումով բացասական տիրույթ՝ հարկային խթանումը հանգեցնում է ավելի բարձր հարկային դրույքաչափերի սահմանման, որն իր հերթին պահանջում է հարկային նոր ՆՌ և ԱԱ-ների տրամադրում: Արդյունքում, հարկային համակարգը կանգնում է նոր բարեփոխումների պահանջի առջև, խնդիր է դրվում հարկային ՆՌ և ԱԱ-ների վերացման և հարկային դրույքաչափերի նվազեցման: Դրա տիպիկ օրինակ է ԱՄՆ-ում նախագահ Ռ. Ռեյգանի ժամանակաշրջանի տնտեսական ու հարկային բարեփոխները[1] (որը տնտեսագիտության մեջ մտել է «ռեյգանոմիկա» անվանումով): Ռեյգանի բարեփոխումների ամբողջական համալիրը ներառում էր եկամտահարկի և կորպորատիվ հարկային բեռի նվազեցումները և, միաժամանակ, հարկային արտոնությունների կտրուկ սահմանափակումը:

Չնայած այն բոլոր գործոններին, որոնք մարտահրավեր են և կասկածի տակ են դնում հարկային ՆՌ և ԱԱ-ները, դրանք տարբեր երկրների հարկային քաղաքականության անբաժանելի մասն են կազմում: Այդ առումով հարկ է նշել դրանց կիրառման հնարավորության ու նպատակահարմարության մասին: Ելնելով այդ իրողությունից՝ հարկային ՆՌ և ԱԱ-ների ներդրումը պահանջում է հետևյալ դրույթների հիմնավորում՝ ներդրման անհրաժեշտությունը, ողջամիտ ընդունելի ծախսերով նախանշված նպատակների ձեռքբերումը, առաջարկվող միջոցառումների չափման հնարավորությունը, ուղղակի ծախսերի հետ համեմատ հարկային ՆՌ և ԱԱ-ների ներդրման առավելությունները[2]:

Հարկային ՆՌ և ԱԱ-ների օգտին որոշման կայացման չափորոշիչներն են՝ ա) հարկային ՆՌ և ԱԱ-ների արդյունավետության արձանագրումը ծախսերի և համեմատական օգուտների գնահատման դեպքում՝ ուղղակի բյուջետային ծրագրային ծախսերի նկատմամբ պետական եկամուտների ուղղակի կորուստների համեմատական արդյունավետության արձանագրումը, բ) եկամտահարկի (եկամտային հարկի) պրոգրեսիվության պահպանումը, գ) հարկային վարչարարության պարզեցումը և առանց օրենսդրության բարդությունների հարկային օրենսդրության կիրառման հնարավորությունը, դ) շուկայական ձախողումները «շտկելու» կամ ճշգրտելու հնարավորությունը, ե) տնտեսական գործակալների

[1] General Explanation of the Tax Equity and Fiscal Responsibility Act of 1982. US: Congress, 1982, http://www.jct.gov/jcs-38-82.pdf

[2] Toder E., Wasow B., Ettlinger M., “Bad Breaks All Around: The Report of the Century Foundation Working Group on Tax Expenditures”, The Century Foundation Press, 2002, P. 28–29., http://tcf.org/assets/downloads/20020901-bad-breaks-all-around.pdf

վարքագծի խեղաթյուրման սոցիալական և բաշխման ազդեցությունների արդյունքի ապահովումը, զ) արտաքին ազդեցությունների (էֆեկտների) դրսևորումները՝ արդիական խնդիրների լուծմամբ[1]:

Վերադառնալով Հայաստանի իրավիճակին՝ հարկ է նշել, որ ՀՀ-ում հարկային համակարգի զարգացման տարբեր փուլերում հարկային օրենսդրությամբ սահմանվել են բազմաթիվ և տարաբնույթ հարկային ՆՌ և ԱԱ-ներ: Դրանց համար հիմք են հանդիսացել տնտեսության զարգացման գերակայություններն, առաջնահերթությունները և մարտահրավերները, և այդ առումով ՆՌ և ԱԱ-ները պարբերաբար վերանայվել են: Դրանց տրամադրումը իրականացվել է դեռևս հարկային համակարգի ձևավորման սկզբնական փուլում, դրանցից ոմանք պահպանվում են մինչ այժմ: Դա, մասնավորապես, վերաբերվում է գյուղատնտեսության ոլորտին, որի հետ խնդիրներ առաջացան նաև Հայաստանի ԱՀԿ–ին անդամակցելու պահին, մասնավորապես՝ ԱԱՀ-ի հետ կապված: ՀՀ-ում հարկային ՆՌ և ԱԱ-ները, որպես կանոն, տրվել են նաև որոշակի սահմանափակ տևողությամբ, մասնավորապես՝ օտարերկրյա ներդրումներ ունեցող ռեզիդենտ կազմակերպությունների՝ շահութահարկի նվազեցման արտոնությունը (միտված ՕՈՒՆ-ի խթանմանը):

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային ՆՌ և ԱԱ-ները անցյալում և ներկայումս տրամադրվում են՝ ելակետ ընդունելով և նպատակ ունենալով. ա) հարկման օբյեկտի և բազայի ճշգրիտ հաշվառման անհնարինության և կամ դրա հարկերից խուսափումների և չվճարումների չեզոքացնելու անհնարինության պատճառով (գյուղատնտեսություն, SS ոլորտ), բ) գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու տնտեսական ակտիվությունը բարձրացնելու մոտիվացիայով, նպատակ ունենալով տնտեսվարողների համար առավել նպաստավոր հարկային միջավայրի ձևավորումը և ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը, գ) սոցիալական որոշակի խնդիրների՝ աղքատության հաղթահարման, սոցիալապես անապահով խավերի աջակցման, առողջապահական, կրթական, գիտական և այլ ոլորտների աջակցության նպատակով, դ) ոլորտային առաջնահերթությունները՝ համակարգաստեղծ ձեռնարկություններ և ոլորտների խթանում, ավանդական ոլորտներից մինչև բարձր տեխնոլոգիաների և SS ոլորտ, որոնք ունեն համարժեք ներուժ ազգային տնտեսության նկարագիրը ձևավորելու համար:

[1] Hungerford T. Tax Expenditures: Trends and Critiques. CRS Report for Congress. September 13, 2006. P. 11-12., http://assets.opencrs.com/rpts/RL33641_20060913.pdf

ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանվում են հարկային արտոնությունների յոթ տեսակներ. ա) հարկից ազատում, բ) հարկման օբյեկտի նվազեցում, գ) հարկման բազայի նվազեցում, դ) հարկի դրույքաչափի նվազեցում, ե) հարկի նվազեցում, զ) հարկի վճարման ժամկետի հետաձգում, է) հարկային օրենսգրքի դրույթները խախտելու համար հաշվարկված՝ օրենսգրքով սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում: ՀՀ կառավարության կողմից (սկսած նախորդ մի քանի կառավարություններից մինչ օրս) հաճախակի քննարկվող և որոշումների կայացման հարցերի շրջանակում են. 1) գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից կոնկրետ ընկերությանը ազատելու արտոնությունից օգտվելու, 2) ներդրումային ծրագրի շրջանակներում կոնկրետ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը որոշակի ժամկետով հետաձգելու հարցերը:

Արդեն նշվեց, որ ՀՀ-ում ֆինանսների նախարարությունը ընդամենը չորս տարի է (սկսած 2015թ.) գնահատում է հարկային ՆՌ և ԱԱ-ների արդյունքում բյուջետային ծախսերի մեծությունը՝ մարկրո մասշտաբով և ըստ ոլորտների, դրանում ներառելով միայն երեք հարկատեսակներ՝ ԱԱՀ, եկամտային հարկը և շահութահարկը: Մինչդեռ հարկային ծախսերը չեն գնահատվում դրանք ստացած կազմակերպությունների մակարդակով, մասնավորապես՝ չի գնահատվում դրանց ֆիսկալ, տնտեսական և սոցիալական ազդեցությունը կամ էֆեկտը, չեն համադրվում նույն նպատակի համար բյուջետային ուղղակի ծախսերի և «հարկային ծախսերի» կատարման հետևանքները, չի գնահատվում հարկային ծախսերի անուղղակի ազդեցությունը: ՀՀ-ում «հարկային ծախսերի» գնահատման օրենսդրական հիմքերն ընդունված չեն: Նման իրավիճակը բնութագրական է նաև շատ անցումային և զարգացող երկրներին, սակայն դա չի կարող արդարացում հանդիսանալ համարժեք քայլեր չձեռնարկելու համար:

2019թ. բյուջեի բացատրագրում նշված է, որ «հարկային ծախսերի» գնահատման համար հաշվի է առնվել «հենանիշային հարկ» կատեգորիան, որն, ըստ բացատրագրի, ներկայացնում է հարկերի այն հանրագումարը, որը կվճարվեր պետական բյուջե տնտեսության մեջ ձևավորվող ողջ հարկման բազան հարկելու պարագայում: Այս առումով հարկային

ծախսերը որոշվել են որպես «հենանիշային հարկերի» և փաստացի պետական բյուջե վճարվող հարկերի տարբերություն (նման մոտեցումը կիրառվում է միջազգային պրակտիկայում): Նշվում է, որ հաշվետվության մեջ գնահատվել են ԱԱՀ-ին, շահութահարկին և եկամտային հարկին վերաբերող հիմնական հարկային արտոնությունների ու ավելացված արժեքի հարկի չհարկվող շեմի կիրառության հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները:

Բյուջեի բացատրագրի հավելվածում գնահատման արդյունքների համաձայն, հարկային ծախսերի տարեկան մեծությունը կազմել է 442,262 մլն դրամ (ընդ որում, 2018թ. կազմել է 395,490 մլն դրամ), որից ավելացված արժեքի հարկի գծով՝ 348,473 մլն դրամ, շահութահարկի գծով՝ 19,928 մլն դրամ, եկամտային հարկի գծով՝ 73,860 մլն դրամ[1]: Վերը նշվեց, որ համաձայն ներկայացված մեթոդաբանության 2019թ. համար ստացված արդյունքները հիմնված են 2017 թ բազայի վրա: 2019թ. ընդհանուր «հարկային ծախսերը» (442,262 մլն. դրամ) նույն տարում կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են համապատասխանաբար՝ 31.5 և 6.5 տոկոս: 2019թ. «հարկային ծախսերի» տարեկան գնահատվող մեծությունը 2018թ. նկատմամբ ավելացել է 11 տոկոսով, իսկ 2015թ. նկատմամբ՝ 30 տոկոսով, նման տեմպերով աղավաղվում է հարկային դաշտը, որին չի տրվում համարժեք որակական գնահատական: Առավել խոսուն է այն, որ 2018թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 20.6 տոկոս, իսկ նույն 2018թ. «հարկային ծախսեր»/ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ 6.5 տոկոս (գնահատվող «հարկային ծախսերը»):

Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերի մեծությունը ներկայացված է նաև ըստ տնտեսության տարբեր ոլորտների: ԱԱՀ-ի գնահատականում ներառված է նաև ԱԱՀ-ի շեմի կիրառության հետևանքով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը 21,329 մլն դրամ է: 2019թ. ԱԱՀ-ի գծով գնահատված հարկային ծախսերը կազմել են 348,473 մլն դրամ կամ դրանց ընդհանուր գնահատված գումարի շուրջ 78,5 տոկոսը, իսկ 17,0 տոկոսը բաժին է ընկել եկամտային հարկին և 4,5 տոկոսը շահութահարկին:

Նկատենք, որ նշված հաշվետվությունը ներկայացված ցուցանիշների վերաբերյալ որակական գնահատական չի տալիս, մասնավորապես, պարզ չէ՝ ինչքանով են հիմնավորված 2019թ. համար հարկային եկամուտների նկատմամբ 31.5 տոկոս «հարկային ծախսերի» և ԱԱՀ-ի գծով գնահատված հարկային ծախսերի (ամենամեծ տեսակակար կշռի)

[1] Պետական բյուջե 2019, Հաշվետվություն 2019թ. հարկային ծախսերի գնահատականի վերաբերյալ, Հավելված N 14, http://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2019_t

մեծությունները: Խնդիրն այն է, որ «հարկային ծախսերի» հաշվարկի կիրառվող մեթոդաբանությամբ օբյեկտիվորեն չի կարող որակական գնահատական տրվել դրանց հիմնավորվածությանը: Նման գնահատման համար հարկ կլինի, գոյություն ունեցող ալգորիթմներով, ձեռնարկությունների մակարդակով հաշվարկել «հարկային ծախսերի» ֆիսկալ, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև էկոլոգիական արդյունքները և դրանց ինտեգրալ արդյունքը՝ բացարձակ և հարաբերական մեծություններով: Նման որակական գնահատման արդյունքում, ինչպես վերը նշվեց, չհիմնավորված հարկային ՆՌ և ԱԱ-ների չեղարկումով պետական բյուջեն առավել համեստ և պահպանողական գնահատումներով կարող է լրացուցիչ տարեկան ստանալ շուրջ 125-210 մլրդ դրամ հավելյալ հարկային եկամուտներ, որը համադրելի է 2019թ. պետական բյուջեի հարկային եկամուտների 9–15 տոկոսին: Եվ միայն այդ գործոնի, այն է՝ չհիմնավորված ՆՌ և ԱԱ-ների չեղարկումով հնարավոր կլինի հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը 20,6 տոկոսից (2018թ.) բարձրացնել մինչև 23,5 մակարդակի և ավելի:

Առավել կարևորն այն է, որ դա կբերի ներդրումների ավելացմանը՝ ներքին և ՕՈՒՆ, ելնելով նրանից, որ կոնկրետ հաշվարկներով չհիմնավորված տարաբնույթ հարկային ՆՌ և ԱԱ-ների՝ խեղաթյուրում են հարկման սկզբունքները՝ չեզոքությունը, արդարությունը, հավասարությունը, խտրականության բացառումը և արդյունավետությունը (ներկայացված է վերը): Մեծ հաշվով, դրանք վատթարացնում են տնտեսական միջավայրի բնութագրիչները, տնտեսության մրցունակությունը և տնտեսվարողների մոտ առաջացնում են պետությունից հարկային արտոնություններ (ինչ գնով էլ լինի) և այլ տարաբնույթ սուբսիդավորումներ ձեռքբերելու մղումը: Ի դեպ, համաձայն ԱՀԿ-ի «Սուբսիդավորման և փոխհատուցման միջոցառումների մասին համաձայնագրի»[1] հարկային արտոնությունները ևս դիտվում են սուբսիդավորում և անհարկի պրոոտեկցիոնիզմ: Իսկ առանց այդ հարկային ՆՌ և ԱԱ-ների և այլ սուբսիդավորումների գործող և սկսնակ տնտեսվարողները ՀՀ-ում շատ դժվար են ակտիվություն ցուցաբերում: Նման իրավիճակը կարելի է համեմատել դոպինգին (արհեստական խթանիչներին) վարժեցված սպորտսմենների վարքագծի հետ: Այս դեպքում կարող ենք փորձել փորձագիտական գնահատական տալ տնտեսական ակտիվությունից զերծ մնացող և ներդրումներ մոտիվացիա չունեցող ՀՀ-ում պոտենցիալ հնարավոր ներդրողների գումարային ներդրումների մեծությանը (փորձագիտական գնահատմամբ այն

[1] WTO, Agreement on subsidies and countervailing measures, https://www.wto.org/english/docs_e/legal_e/24-scm.pdf

զգալի կլինի): Նման գնահատումը պահանջում է որոշակի մեթոդաբանության ու գործիքակազմի կիրառում, ուստի դա առանձին հետազոտության խնդիր է:

Շեշտում ենք, վերը նշված հավելյալ զգալի հարկային մուտքերը կստացվեն հարկաբյուջետային բարեփոխումների միայն մեկ բաղադրիչից՝ անհիմն տրված ՆՌ և ԱԱ-ներից և «հարկային ծախսերի» չեղարկումից: Դրանից բացի, հավելյալ զգալի միջոցներ կստացվեն հարկային խուսափումների և չվաճարումների դեմ պայքարի գործուն մեխանիզմների կիրառմամբ: Մինչդեռ հարկային համակարգի առավել շոշափելի հավելյալ մուտքերի ապահովումը պայմանավորված է իր ռեսուրսը սպառած հարկային համակարգի հայեցակարգի փոփոխությամբ: Ըստ այդմ, դրա ուղենիշը պետք է հանդիսանա հարկային համակարգի էկոլոգիզացումը (որն առանձին ներկայացման խնդիր է): Հարկային համակարգի բարեփոխումները ոչ միայն պետք է ավելացնեն հարկային մուտքերը, այլ որ ավելի կարևոր է՝ փոխեն տնտեսական ագենտների ակտիվության մոտիվացիան և բարձրացնեն տնտեսության մրցունակությունը:

2019թ. բյուջեի բացատրագրի նշված հաշվետվության մեթոդաբանությունը և հաշվարկները վկայում են, որ հարկային ծախսերը չեն հաշվարկվել առանձին կազմակերպությունների կտրվածքով: Այդ պարագայում հաշվետվությունում ներկայացված ցուցանիշները, բնականաբար, որակվում են որպես ընդհանուր գնահատում՝ տնտեսության, ոլորտների կամ ճյուղերի մասշտաբով, և, բացի այդ, դրանք քանակապես չեն կարող գնահատվել որպես դրական, բացասական կամ չեզոք, հիմքում չունենալով ֆիսկալ, տնտեսական և սոցիալական ազդեցությունների գնահատումը:

Ֆինանսների նախարարության կողմից իրականացվող «հարկային ծախսերի» գնահատումը չի կատարվում օրենսդրական հիմքով և չունի հաստատված կանոնակարգեր ու աշխատանքային ընթացակարգեր:

Ելնելով վերը նշվածից՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել պահանջ բոլոր գործող ՆՌ և ԱԱ-ները մակրո մակարդակում՝ տնտեսություն, ճյուղ կամ ոլորտ գնահատել ըստ վերը նշված չորս խմբերի՝ 1) հաշվառման անհնարինության կամ հարկային պարտավորությունների ճշտության ապահովման անհնարինության, 2) գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, տնտեսական ակտիվության բարձրացման, 3) ոլորտային առաջնահերթությունների, 4) սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

Տնտեսության մակրո մակարդակով գնահատումը պետք է զուգորդվի դրա ածանցվող ազդեցության գնահատմամբ՝ տնտեսական

ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, տնտեսվարողների մրցունակության, տնտեսական մրցակցության, գնաճային ճնշումների, ընդհանոր սոցիալ-տնտեսական վիճակի և այլ ցուցիչների առումով:

Կոնկրետ ձեռնարկությունների կամ միկրո մակարդակում հարկային ՆՌ և ԱԱ-ների տրամադրմանը պետք է նախորդի դրա արդյունքում բոլոր դրական ու բացասական ազդեցությունները, այն է՝ ֆիսկալ, տնտեսական, սոցիալական ու նաև էկոլոգիական էֆեկտների գնահատումը: Գնահատումը պետք է կատարվի ինչպես պետության, այնպես էլ այդ արտոնություններից օգտվողների համար՝ դուրս բերելով նշված չորս բաղադրիչների ինտեգրալ ցուցանիշը:

Ելնելով վերոհիշյալից՝ առաջարկվում է ՀՀ 2020թ. և հետագա տարիների համար պետական բյուջեի կազմման ընթացքում հաշվարկել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել բյուջեի եկամտային մասում նախկինում կիրառված և նոր առաջարկվող հարկային ՆՌ և ԱԱ-ների գնահատումը, այն իրականացնելով. 1) տնտեսության մակրո և ոլորտների կամ ճյուղերի մակարդակով, 2) ըստ խոշոր առանձին կազմակերպությունների, հարկային ՆՌ և ԱԱ-ների՝ ֆիսկալ, տնտեսական, սոցիալական և անհրաժեշտության դեպքում նաև էկոլոգիական ազդեցությունների, ինչպես նաև դրանց ինտեգրալ ցուցանիշով: Հարկային արտոնություններ ստացած կազմակերպությունների շրջանակը հնարավոր է ընդլայնել աստիճանաբար, սկսելով խոշոր հարկատուների առաջին մի քանի տասնյակից:

Խնդիրը պահանջում է հրատապ օրենսդրական և գործնական կիրառական լուծումների ապահովում: Վերը նշվածի իրագործումը պահանջում է, որպեսզի «հարկային ծախսեր» կատեգորիան ամրագրվի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում և «հարկային ծախսերի» գնահատման պահանջը ըստ դրանց ստացած կազմակերպությունների ու ոլորտների՝ սահմանվի օրենսդրությամբ՝ դրա համապատասխան գործիքակազմով, մեթոդաբանությամբ և հաշվետվությունների ձևաչափով: Այն գործադիր ու օրենսդիր իշխանության համար հիմք կհանդիսանա արդյունավետ հարկային քաղաքականության վարման, բյուջեի ֆիսկալ եկամուտների համախմբման, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման, հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդման, հարկման խտրականությունների սահմանափակման և պետական բյուջեի հարկային եկամուտների արդարացի վերաբաշխումն ապահովելու համար:

Օրենսդրական առաջարկվող լուծումները նոր լծակներ կհանդիսանան Ազգային ժողովի, մասնավորապես, Ֆինանսավարկային և

բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի, նրա Բյուջետային գրասենյակի, ինչպես նաև ՀՀ Հաշվեքննիչ պալատի համար իրենց գործառույթների՝ հանրային ֆինանսների, պետական բյուջեի միջոցների օրինականության և արդյունավետության գնահատման, մոնիթորինգի և վերահսկողության գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Հարկային ՆՌ և ԱԱ-ների նախագծման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև մի շարք այլ գործոններ: Մասնավորապես, զարգացող երկրներում ներդրումների վրա հաճախ բացասական ազդեցություն է ունենում բարձր գնաճը (առանձին դեպքերում կարող է քննարկվել բիզնեսի օժանդակության համակարգերով գնաճի ազդեցության փոխհատուցման կիրառումը): Մեկ այլ լուրջ խնդիր է հարկերի չվճարումներն ու խուսափումները: Օտարերկրյա ուղղակի ներդրումների առումով արդի կարևոր խնդիրներից է տեխնոլոգիաների փոխանցման նպաստումն ու խթանումը: Ներդրումային խթանները մշակելիս հարկ է հաշվի առնել վերը նշված գործոնները և, ամենակարևորը, դրանց միջոցով ոչ տնտեսական նպատակների իրագործումը, այն է՝ սոցիալական, բնապահպանական և տարածաշրջանային բնույթի խնդիրները: Հարկային ՆՌ և ԱԱ-ները կարող են ազդեցություն ունենալ կազմակերպությունների կազմակերպա-իրավական ձևերի վրա, խթանել տնտեսվարողների մասնատումը, վերագրանցումները, միաձուլումները, միավորումները և սնանկացումները: Ըստ այդմ, դրանք ևս պետք է հաշվի առնել հարկային ՆՌ և ԱԱ-ների նախագծման ընթացքում:

Հարկային ՆՌ և ԱԱ-ները պարարտ հող են ստեղծում կոռուպցիայի համար, ազդեցիկ բիզնեսի խմբերը ունենալով որոշակի մղումներ, ուժերն ու ռեսուրսները կենտրոնացնելով՝ լոբբինգ են իրականացնում որոշակի հարկային ՆՌ և ԱԱ-ներ ստանալու համար՝ հետագա տնտեսական օգուտների ակնկալիքով: Բիզնեսի ղեկավարների կամ պետական մարմինների կամայական որոշումների դերի նվազեցնող հիմնական բանալին շուկայական կարգապահությունն է[1]:

Հարկային ՆՌ և ԱԱ-ների առաջարկվող մոտեցումներով համարժեք գնահատումը հնարավորություն կտա բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման աստիճանը և պետության սահմանափակ ֆինանսական միջոցները առավել նպատակային, հասցեական և արդյունավետ օգտագործել պետության գերակա ծրագրերի և խնդիրների իրականացնման համար, և, ի վերջո, բարձրացնել պետության կարևոր

[1] Бродман Г., Риканатини Ф., Корни коррупции. Важны ли рыночные институты?, Всемирный банк, стр. 8, http://web.worldbank.org/archive/website00818/WEB/PDF/WPS2368_.PDF

գործառույթի, այն է՝ եկամուտների վերաբաշխման արդյունավետությունը: Ամենակարևորը, որ չհիմնավորված հարկային ՆՌ և ԱԱ-ների վերացումը հնարավորություն կտա վերականգնել հարկման արդարությունը, տնտեսության առկա խեղաթյուրումները և մրցունակությունը:

«ԾՈՒՌ ՀԱՅԵԼԻՆԵՐԻ» ԱԼԳՈՐԻԹՄԸ

ՍԵՎԱԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
տ.գ.թ. /ИМЭМО РАН /

Վերջին ժամանակներս ակտիվ շրջանառվող «տնտեսական հեղափոխություն» հասկացության տակ, հավանաբար, պետք է հասկանալ «տնտեսական հրաշքի» գաղափարը, ինչը նշանակում է երկրի տնտեսության ցատկանման և արագացված որակական ու ծավալային աճը, որը նրան, համեմատաբար կարճ ժամկետներում, հնարավորություն կտար մեկ շնչին ընկնող հիմնական տնտեսական չափորոշիչներով մոտենալ աշխարհի առավել զարգացած երկրներին, կամ դասվել նրանց շարքը:

Հնարավո՞ր է արդյոք կառուցել «հայկական տնտեսական հրաշքը» (տնտեսական հեղափոխությունը) ներկա լոկալ և գլոբալ իրողություններում: Առկա (ավանդական) մոտեցումներով՝ ոչ, այլ մոտեցումներով՝ այո:

Գլոբալ մի իրողության մասին

Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ արմատավորվեց համաշխարհային արժութային նոր համակարգը, որը որոշակի և ոչ էական փոփոխություններով գործում է նաև ներկայումս և, որի մեջ է գտնվում նաև մեր երկիրը՝ պարադոքսալ կերպով փոխվեցին տնտեսագիտական շատ օրենքներ: Ավելին, այդ օրենքներից շատերը դադարել են գործել հենց զարգացող երկրների տնտեսությունների կառավարման ոլորտում: Նոր արժութային աշխարհակարգի հետևանքով տեղի ունեցած ամենակարևոր և ամենացայտուն շեղումը փողի քանակի և դրա համար անհրաժեշտ ծածկույթի հարաբերակցությունների վերանայումն էր՝ հօգուտ զարգացած երկրների, և, որպես հետևանք, զարգացող երկրների ներքին ավելցուկային և կապիտալ ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսների քանակի, ինչպես նաև լրացուցիչ էմիսիայի հնարավորությունների արմատական կրճատումը:

Քանի դեռ կար խորհրդային տնտեսական մրցակից համակարգը, և աշխարհն ուներ երկբևեռ ֆինանսական համակարգ՝ զարգացող երկրները դեռ ունեին մանևրելու հնարավորություն ու որակապես այլ մասշտաբի ռեսուրսներ ընդգրկելու քաղաքական հիմք: Սակայն դա տևեց միայն մոտ քառասուն տարի, և այդ ընթացքում մենք ականատես եղանք շուրջ մեկ տասնյակ «տնտեսական հրաշքների»:

«Գլոբալ շեղումն» ավելի կոշտ որակներ ձեռք բերեց և իր ներկայիս ձևն ստացավ նախորդ դարի 90–ական թվականներին՝ միաբևեռ աշխարհակարգի ստեղծումից և, զարգացող երկրների համար, այսպես կոչված, «լիբերալ» տիպի տնտեսական մոդելների տիրաժավորումից հետո (իրականում, լիբերալիզմի հետ այն քիչ աղերս ունի): Այդ մոդելի առկայությունը զարգացող երկրում, տվյալ դեպքում՝ Հայաստանում, հանդիսացավ նաև նախապայման՝ միջազգային տնտեսական կառույցների կողմից վարկային միջոցների տրամադրման համար:

«Լիբերալ» այդ մոդելին բնորոշ հիմնական տարրերն էին և են.

- Պետական սեփականության առավելագույնս մասնավորեցում, պետական սեփականության հնարավորիս կրճատում (պետական բյուջեի կազմավորում՝մասնավոր հատվածից ստացվող հարկային և մաքսային եկամուտների, տուրքերի, ինչպես նաև՝ պետական սեփականության մասնավորեցման և փոխառությունների հաշվին);
- Տնտեսության ուղղակի կարգավորումից՝ պետության առավելագույնս հեռացում, կարգավորման անուղղակի մեթոդների կիրառում: Շուկայի ինքնակարգավորման և ինքնազարգացման գաղափարի արմատավորում ու պետական տնտեսական քաղաքականության մեջ այս հիմնարար մոտեցման կիրառում:
- Արտասահմանյան արժույթների ազատ շրջանառություն երկրի ներսում, դրանց ազատ և անսահմանափակ փոխարկելիություն, տեղաշարժ և հնարավորինս ազատական վալյուտային ռեժիմի կիրառում;
- Ազգային արժույթի դրամական մասսայի սահմանափակ քանակության սկզբունքի արմատավորում, որը, ըստ մոդելի ջատագովների տրամաբանության, պետք է ծառայի արժեզրկման գործընթացների կանխարգելմանը և գների կայունությանը՝ զարգացող երկրում:

Սրանք, ինչպես նշվեց, այն հիմնական դրույթներն են, որոնց վրա հիմնվում էր այդ նոր և միջազգային տնտեսական կառույցների կողմից խրախուսվող մոդելը: Այս «լիբերալ» մոդելը, չնայած արտաքնապես գայթակղիչ առանձին տարրերի, իր ամբողջականության մեջ բերում էր նրան, որ պետության գումարները հերիքում էին միայն նվազագույն առաջնային ծախսերի համար (և դա էլ մեծ վերապահումով), իսկ կապիտալ ներդրումների և հիմնարար բնույթի միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսերի համար գումար չէր մնում: Ավելին, ֆինանսների քրոնիկ անբավարարությունը, որը պայմանավորված էր, առաջին հերթին, մոդելի կառուցվածքային փակուղով, ստիպում էր պետություններին անընդհատ վարկեր վերցնել, որոնց նպատակային օգտագործման նեղ նախապայմանները նույնպես չէին լուծում բազիսային ուղղությունների երկարաժամկետ

թերֆինանսավորվածության հիմնահարցը և, առանց էական և իրական աճի նախապայմաններ ստեղծելու՝ բերում էին և բերում են լոկ արտաքին ու ներքին պարտքի անընդհատ ու անհարկի ավելացմանը:

Անհրաժեշտ ենք համարում նաև հատուկ ընդգծել, որ անցած դարի 90–ական թվականներից, երբ աշխարհում սկսվեց ներդրվել և խրախուսվել «լիբերալ» տնտեսական մոդելը, մենք այլևս ականատես չենք եղել և ոչ մի «տնտեսական հրաշքի»: Ավելին, «լիբերալ» մոդելի գլոբալ կիրառման այդ երեք տասնամյակում մենք ականատես ենք լինում հարստությունների բևեռացման, աղքատության ավելացման և, որն ամենաանհանգստացնողն է՝ այդ մոդելը կիրառող երկրների պետական պարտքերի շեշտակի և անկառավարելի աճին՝ առանց դրանց մարման իրատեսական հեռանկարի:

Հայաստանն, արդեն շուրջ երեսուն տարի է, գտնվում է նշված մոտեցում – իրողությունների հորձանուտում: Մենք արդեն սովոր ենք մեր տնտեսության վատ վիճակը պայմանավորել հիմնականում միայն ներքին գործոններով՝ կոռուպցիա, վատ կառավարում, մրցակցային դաշտի խաթարում և այլն: Դա, անկասկած ճիշտ է և ունի մեծ, բայց ոչ վճռորոշ ազդեցություն: Այսինքն, այս երևույթների իրական և խորքային կարգավորումն՝ անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է: Կա նաև մեդալի «երկրորդ երեսը». Դա մեր սահմանափակիչ կաղապարն է՝ տնտեսական աճի ոչ ճիշտ և խնդրահարույց մոդելը: Այն շարունակաբար ետ է տարել և ետ է տանում երկիրը՝ մեզնից ավելի ու ավելի հեռացնելով «վերադարձի կետը»:

Հիմա դիտարկենք այն, թե որքանո՞վ են արդարացված այդ արտաքնապես գայթակղիչ գաղափարները, որոնց վրա հիմնված է մեր տնտեսական մոդելը և նաև այն, թե ինչպես են դրանք «քաղցր թույնի» նման սպանում մեր երկրի առանց այն էլ խիստ կրճատված հնարավորությունները՝ արմատական աճի կազմակերպման գործում: Իհարկե, այս հոդվածի ծավալային սահմանափակումների շրջանակներում:

Եվ այսպես.

ԴՐՈՒՅԹ ԱՌԱՋԻՆ. **Պետական սեփականության առավելագույնս մասնավորեցում, պետական սեփականության հնարավորիս կրճատում.**

Մակրոտնտեսական լուծումներ և քայլեր մշակելիս անհրաժեշտ է պատասխանել հարցերի հարցին, թե՝ «Ո՞վ է տվյալ քայլի կամ լուծման՝ առաջնային շահառուն»:

Բանն այն է, որ քանի որ պետությունն է հանդիսանում իր քաղաքացիների շահերի առաջնային պաշտպանն ու պատասխանատուն, ըստ էության, պետությունն էլ հանդիսանում է այն բազիսային կառույցը, որի շահերը, ցանկացած իրավիճակում, համընկնում են իր քաղաքացիների բացարձակ մեծամասնության շահերին: Սա աքսիոմա է:

Սահմանափակելով պետության՝ սեփականություն ունենալու, ուղղակի շահույթներ ստանալու, ներդրումներ իրականացնելու և դրանց արդյունքները տնօրինելու, տնտեսական անհրաժեշտ լուծումները և արագացումները սեփական օրինակով իրականացնելու իրավունքը և այդ ամենը դնելով քաղաքացիների վրա, մենք այդ նույն քաղաքացիներից խլում ենք նրանց հնարավորությունների և հարստության մի մասը, որը պետք է գործեր պետության՝ բաշխիչ ֆունկցիայի իրականացման շնորհիվ: Ստեղծվում է միակողմանի երթևեկության փողոց:

Պետական արդյունավետ սեփականության մեծ հատվածի առկայությունը, կառուցվածքային առումով, պետությանը թույլ է տալիս լուծել հետևյալ կարևորագույն հարցերը՝ գործնականում, առանց նոր վարկերի ներկրման.

ա/ Բյուջեն եկամուտներ է ստանում ոչ միայն հարկերի տեսքով, այլ նաև՝ ստացված շահույթի, ինչն ավելացնում է բյուջեի հոսքերը;

բ/ Բյուջեի եկամուտների մի զգալի մասը դառնում է կանխատեսելի;

գ/ Ակտիվները (ներդրումների տեսքով՝ պետական միջոցները) ավելի լավ են պաշտպանված լինում արժեզրկման գործընթացներից;

դ/ Պետությունը, հանձինս ֆինանսական հոսքերի մի զգալի մասի նկատմամբ վերահսկողության, ավելի լավ է կարողանում պաշտպանել ազգային արժույթի կայունությունը՝ մեղմելով դրա վրա եղած ցիկլային ճնշումը: Այս երևույթն ավելի հրատապ է դառնում հատկապես ճգնաժամային իրավիճակների ժամանակ, երբ մասնավոր հատվածը, վախենալով դեվալվացիոն հեռանկարներից, սկսում է ակտիվորեն ազատվել ազգային արժույթից և մասսայականորեն գնել համաշխարհային ռեզերվային արժույթներ՝ ճնշում գործադրելով երկրի կենտրոնական բանկի պահուստների վրա: Մինչդեռ, նմանատիպ իրավիճակում, պետական սեփականության հատվածում գտնվող ռեսուրսներն, իհարկե, չեն դրսևորում նման վարքագիծ, չեն նպաստում անկայունության աճին ու չեն ավելացնում նշված տիպի ճնշումը;

ե/ Պետական աճող եկամուտները լավ հիմք են ստեղծում պետական նոր ներդրումների համար՝ ժամանակի ընթացքում պետության (քաղաքացիների) համար ստեղծելով անընդհատ աճող ռեսուրս:

Պետական սեփականության առավելագույնս նվազեցման կողմնակիցները բերում են «ծեծված» և քննադատության չդիմացող մի փաստարկ, որ՝ «պետությունը ոչ արդյունավետ սեփականատեր և կառավարիչ է, և որ մասնավորն այդ ամենն ավելի լավ կիրականացնի»: Այդպես է այդ արդյո՞ք.

Ֆրանսիայի և Իտալիայի ՀԱԱ-ի ավելի քան 40%-ը ստեղծում են պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները, Չինաստանի

և Գերմանիայի պարագայում այդ թիվը 55 տոկոս է, իսկ մեր երկրում շատ ցիտվող Սինգապուրի դեպքում՝ պետական մասնակցության հատվածը տալիս է երկրի ՀԱԱ-ի 60%-ը (և սա դեռ պետական սեփականության մեծ բաժին ունեցող երկրների սպառիչ ցանկը չէ)։ Աշխարհի նավթի պաշարների 3/4–ն այսօր պատկանում է 13 ընկերությունների, որոնք ամբողջապես պետական են։ Եթե 2005թ. «Forbes» ամսագրի՝ աշխարհի 500 խոշորագույն ընկերություններից միայն 67-ն էր պետական կամ պետական մասնակցությամբ, ապա 2017 թվականին՝ արդեն 172 –ը։

Նորվեգական տնտեսության հենասյուն հանդիսացող «Statoil – Norsk Hydro» միացյալ ընկերության մեջ, որի ակտիվները գնահատվում են մոտ 180 մլրդ դոլար, տարեկան շրջանառությունը կազմում է ավելի քան 200 մլրդ դոլար, իսկ գործառնական շահույթը տարեկան գերազանցում է 40 մլրդ դոլարը, պետությանն են պատկանում բաժնետոմսերի ավելի քան 70%-ը։ Նորվեգիայի ազգային սուվերեն (պետական անկախ և կոնսերվատիվ կերպով կառավարվող) ֆոնդի ակտիվներն այսօր արդեն գերազանցում են 1 տրլն դոլարը։

Պետական սեփականություն հանդիսացող հատվածը վերը նշված և մի շարք այլ երկրներում հաջողությամբ զարգանում և իր արդյունավետությամբ նույնիսկ գերազանցում է մասնավոր հատվածին։

Անհրաժեշտ է նաև ընդգծել ևս մի կարևոր հանգամանք. պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները, վերը նշված և ազատական շուկա ունեցող մյուս այլ երկրներում, չունեն հովանավորչական աջակցություն, չեն ստանում արհեստական մրցակցային առավելություններ, գործում են նույն պայմանների մեջ, ինչ որ մասնավոր ընկերությունները։ Սա է պատճառը, որ մենք երբևիցե չենք լսել անհավասար մրցակցային պայմանների մասին որևէ մի կայացած կամ՝ հաջողությամբ աճող երկրի հետ կապված, և որտեղ որ առկա է պետական սեփականության մեծ հատված։

Հակառակ և բացասական օրինակ կարող է հանդիսանալ Ռուսաստանը, երբ պետական ընկերությունները, որոնք գործում են ազատ մրցակցություն ենթադրող շուկայում՝ ստացան և ստանում են պետական արտոնություններ և կողմնակալ աջակցություն։ Սրա արդյունքում տուժեց մասնավոր հատվածը, որի մի մասը՝ կարող և ստեղծարար մարդիկ, դուրս մղվեցին շուկայից, ըստ էության, զուտ արհեստածին պայմանների պատճառով։ Փոխարենը, մենք այսօր ականատես ենք լինում այն իրողությանը, որ այդ պետական հովանավորչությունը վայելող շատ ընկերություններ այսօր մրցունակ չեն և, նույնիսկ, վնասաբեր են՝ ոչ պրոֆեսիոնալ կառավարման և անձնավորված շահերի պատճառով։

Սակայն, նույնիսկ նմանատիպ մոտեցմամբ՝ ՌԴ պետբյուջեի եկամուտների կեսն ստացվում է պետական կամ մասնակի պետական ընկերություններից:

Մինչդեռ, Ֆրանսիայի, Չինաստանի, Նորվեգիայի, Իտալիայի, Սինգապուրի և ազատ մրցակցային ու արտոնություններով ոչ աղճատված ներքին շուկա ունեցող այլ երկրների պետական ընկերությունները կառավարվում են լավագույն պրոֆեսիոնալ կառավարիչների կողմից, շուկայական և մրցունակ վարձատրման ու պարգևատրման սկզբունքով՝ մեծ, մշտական և կայուն եկամուտներ ապահովելով պետական բյուջե:

Այսպիսով, ակնհայտ է, որ խնդիրը ոչ թե սեփականության ձևի, այլ կառավարման որակի մեջ է՝ ներառյալ հավասար մրցակցային պայմանները: Հակառակ դեպքում՝ մասնավոր հատվածի ոչ մի ընկերություն, հավասար մրցակցության դաշտում, չէր սնանկանա, այլ միայն կսնանկանային պետական սեփականությամբ ընկերությունները:

Պատասխանելով նաև ուղղակի շահառուներին վերաբերվող հարցին, նույնպես ստանում ենք ակնհայտ պատասխան. ճիշտ կառավարվող պետական սեփականության և դրա օգնությամբ ստացված շահույթների առաջնային և անմիջական շահառուն՝ երկրի բոլոր քաղաքացիներն են: Մինչդեռ, մասնավոր ձեռնարկության (երկկողմանի երթևեկության մյուս կողմի) առաջնային շահառուն հանդիսանում է դրա սեփականատերը, որն, արդարացիորեն, ստանում է հիմնական եկամուտը, ապա նոր միայն գալիս է երկրի քաղաքացիների հերթը՝ մասնավորի կողմից վճարված հարկերի և աշխատատեղերի տեսքով:

Այս երկու հատվածը, ինչպես մենք տեսնում ենք, հաջողությամբ գոյատևում են օբյեկտիվ մրցակցային շուկայում և իրենց չափով օգուտ են բերում սեփական պետությանն ու դրա առաջնային շահառուներին: Պետական սեփականությունից ստացվող եկամուտներն ավելի կանխատեսելի և կայուն կարող են լինել պետական բյուջեի համար, ինչը չի կարելի ասել մասնավոր հատվածից սպասվող եկամուտների վերաբերյալ:

Պետական սեփականության մեծ և արդյունավետ հատված ունեցող երկրների սեփականության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական սեփականություն հանդիսացող բազիսային ակտիվներից (անտառներ, ճանապարհներ, կառուցվածքակազմ ենթակառուցվածքներ, պետական անվտանգության և պետության կենսագործունեության հետ կապված օբյեկտներ) բացի, պետական սեփականությունն առկա է նաև տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, սակայն, իհարկե, առաջնային են առավել եկամտաբեր ճյուղերն ու առավել մեծ լիկվիդայնություն ունեցող օբյեկտները:

Առաջին խումբը, հիմնականում, ծախսարար է, սակայն ցանկացած պետություն, այդ թվում նաև Հայաստանը, պարտավոր է դրանք պահել իր հաշվեկշռում և պահպանել դրանք, ինչն այսօր տեղի է ունենում ողջ աշխարհում: Սա անխուսափելի է, իսկ նշված ծախսերը՝ օբյեկտիվ և պարտադիր իրականություն:

Առավել հետաքրքիր է պետական սեփականության երկրորդ հատվածը, որը կայուն և մեծ շահույթներ է ապահովում և, այդ թվում, օգնելով ֆինանսավորելու առաջին ու պարտադիր հատվածի ծախսերը: Սրանք, սովորաբար, առավել շահութաբեր և կարևոր ուղղություններն են տնտեսության մեջ:

Օրինակ, ենթադրենք, որ Հայաստանն, իր երկրի ներսում և առավել ապահով արտասահմանյան երկրներում, որպես պետական սեփականություն, ունի 1 մլն քմ առաջին կարգի առևտրային տարածքներ, որոնց նկատմամբ պահանջարկը, նույնիսկ ճգնաժամերի ժամանակ, չի նվազում: Նույնիսկ եթե հանենք լավ կառավարման համար վճարված ծախսերը, ինչպես նաև՝ արտերկրում վճարված հարկերը, սա տարեկան՝ մի քանի միլիարդ դոլարի մշտական և երաշխավորված եկամուտ է պետական բյուջե, ինչպես նաև՝ ներդրված գումարների լավ պաշտպանություն՝ գլոբալ արժեզրկումից:

Այսպիսով, պետական սեփականությունից ստացվող ուղղակի եկամուտները հսկայական նշանակություն ունեն հաջողակ տնտեսական քաղաքականություն ունեցող բազմաթիվ երկրներում: Եվ, ակնհայտ է, որ պետությունն ինքը պետք է ուղղակիորեն զբաղվի իր եկամուտների գեներացմամբ:

Դրույթ երկրորդ. **Տնտեսության ուղղակի կարգավորումից՝ պետության առավելագույնս հեռացում, կարգավորման անուղղակի կարգավորման մեթոդների կիրառում: Շուկայի ինքնակարգավորման և ինքնազարգացման գաղափարի արմատավորում, պետական տնտեսական քաղաքականության մեջ այս հիմնարար մոտեցման կիրառում.**

Աշխարհում հայտնի «տնտեսական հրաշքների» ընդհանուր հատկանիշներից մեկը՝ պետության ակտիվ և լոկոմոտիվային դերն էր: Ճապոնիան, Հարավային Կորեան, Չինաստանը, Սինգապուրը, Իսրայելը, Թայվանը, Թուրքիան և, նույնիսկ, Արևմտյան Եվրոպայի երկրները, երկրորդ աշխարհամարտից հետո, հատկապես իրենց տնտեսական զարգացման առաջին փուլերում, ընդհանրապես չեն ապավինել շուկայի ինքնակարգավորման և ինքնազարգացման, մեղմ ասած, «տարօրինակ» սկզբունքին և, առավել ևս, դա համարելով առաջնային: Ավելի ճիշտ, այդ ամենը,

որպես լրացուցիչ ֆոն, եղել է, բայց առաջնայինը եղել է պետական ակտիվ տնտեսական «ճարտարապետությունը»:

Աշխարհի նորագույն տնտեսական պատմության մեջ չկա մի դեպք, որ երկիրն ունենա տնտեսական որակյալ և մնայուն աճ՝ միայն շուկայի ինքնակարգավորման և ինքնազարգացման շնորհիվ (այն էլ փոքր ներքին շուկայի), առանց պետական ակտիվ ու շարունակական բնույթի ուղղակի կարգավորման ու զարգացման:

Պետության իրական «ինքնաբացարկի» և միայն «բարենպաստ միջավայրի ստեղծման» անուղղակի դերի մասին ռոմանտիկ ու զուտ գրքային մոտեցումները հղի են մեծ վտանգով մեր պետության տնտեսական անվտանգության և հետագա զարգացման համար: Նույնիսկ զարգացած համարվող այն պետությունները, որոնք առերես հայտարարում են այդօրինակ «լիբերալ» տնտեսական քաղաքականության և նմանատիպ սկզբունքների խրախուսման մասին՝ իրենց տնտեսական հզորության հենքն ստեղծել են պետության ակտիվ միջամտության և կոշտ կարգավորման արդյունքում: Դեռևս զարգացող և տնտեսական զարգացման համար կուռ, մրցունակ և անշրջելի կապիտալ հենք և զարգացման կուռ, մրցունակ և ինքնասնող աճի համակարգ դեռևս չստեղծած պետության համար՝ նման «լիբերալ» մոտեցումը կարող է կործանարար լինել:

Ինչպես նշվեց, «տնտեսական հրաշքի» բոլոր երկրները զարգացել են՝ պետության կողմից մշակված և ակտիվորեն իրականացվող, որպես կանոն, ինգամյա մանրակրկիտ ու իրենցից՝ քայլային, ժամկետային ու արդյունքների ֆիքսման «ճանապարհային քարտեզ» ներկայացնող պլանների օգնությամբ, պետական ուղղակի «տնտեսական ճարտարապետությամբ», պետական ակտիվ և ուղղակի միջամտությամբ ու կարգավորմամբ այն ոլորտներում և սուբյեկտներում, որոնք այդ երկրի աճի «ֆլագմանները» պետք է հադիսանային, գնացել են պետական ակտիվ և ուղղակի ներդրումների և պետական միջոցների շարունակական կենտրոնացման ճանապարհով:

Նույնիսկ ոչ տնտեսագետի համար պարզ է, որ տնտեսության մեջ կան բազմաթիվ շերտեր և բաղադրիչներ, որոնք անչափ կևևոր են երկրի զարգացման համար, սակայն հետաքրքիր, հասկանալի ու տեսանելի չեն մասնավորին՝ իրենց մասշտաբների և/կամ, թեկուզ, ցածր եկամտաբերության պատճառով:

Բացի այդ, պետությունն ունի մեծ սոցիալ-քաղաքական պատասխանատվություն, որի արտահայտություններից են՝ մարդկային կապիտալի որակական աճի մասսայական համակարգի կազմակերպումը, պետության շահերից ելնելով՝ տնտեսական զարգացման տեմպերի վարչարարական

արագացումը, ներդրումային միջոցների և եկամուտների վերաբաշխումը, պետական սեփականության ստեղծումը: Մասնավորն, օբյեկտիվորեն, ունակ չէ իրականացնելու այս գործառույթները՝ անհրաժեշտ որակով, մասշտաբով, խորությամբ, զոհողություններով և անհրաժեշտ ժամկետներում: Սակայն, վերջին հաշվով, այդ մոտեցումների հաջողությունից շահում է նաև մասնավոր հատվածը:

Չպետք է նաև մոռանալ, որ պետության ձեռքում են կենտրոնացած երկրի հիմնական ռեսուրսներն ու դրանց հայթայթման ու կենտրոնացման հիմնական մեթոդները, պետության ձեռքում է հիմնական վարչարարական գործիքակազմը, այստեղ են կենտրոնացած հիմնական գիտելիքներն ու ցանկալի և ամբողջական ստանդարտները: Եվ, վերջապես, պետությունը չեզոք է շահերի տեսանկյունից, նրա գործողություններն ուղղված են իր հիմնական շահառուների օգտին և շահերի հավասարակշռմանը (վերաբաշխմանը): Պետությունը միակ և եզակի կառույցն է, որն անվերապահորեն կարող է մոնետիզացնել իր հզոր գործիքակազմը՝ հօգուտ իր բոլոր քաղաքացիների և նրանց սերունդների շահերի:

Մինչդեռ, «լիբերալ» մոդելի ջատագովներն առաջարկել և առաջարկում են հրաժարվել վերը նշված հզոր հնարավորություններից, դրա փոխարեն միայն ընդունել «բարենպաստ օրենքներ» և համոզել տեղի և օտարերկրյա մասնավորին, որ նրանք իրականացնեն տնտեսական արագացված, հավասարակշռված և առողջ զարգացում: Այդպես չի լինում, չկա նախադեպ ու չի էլ կարող լինել, եթե դու գնում ես ինքնաթուլացման և երրորդ կողմի վրա հույսդ դնելու և ինքնասահմանափակման ճանապարհով: Սա հազարապատիկ ավելի մեծ սպառնալիք է այն աշխարհաքաղաքական և տարածաշրջանային իրողությունների պայմաններում, որոնց մեջ գտնվում է մեր երկիրը:

Պետական ակտիվ տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նաև աճի առաջնային կետերի ակտիվացմանն ու ստացված դրական արդյունքի հաշվին՝ ներդրումային նոր ռեսուրսի ստեղծմանը: Ասվածն ավելի արդիական է դառնում՝ ռեսուրսների սղության պայմաններում: Աճի առաջնային կետերը նրանք են, որոնց ակտիվացումը և զարգացումը՝ համեմատաբար քիչ ռեսուրսների օգտագործմամբ, կարող է ծնել համակարգային մեծ էֆեկտ և աճի նոր կետեր: Ըստ էության, դա բազմահարկ և որակյալ աճի «ճանապարհային քարտեզի» կազմումն է, որն, առաջին հերթին, պետական ակտիվ գործունեության և ներդրումային քաղաքականության արդյունք կարող է լինել:

Երկրի տնտեսության մասշտաբով նման կետերը բազմաթիվ են, և դրանց թեկուզ մի մասի առաջնահերթ ակտիվացումը պետության կողմից,

արդեն իսկ, կարճ ժամկետներում կարող է ապահովել շեշտակի աճ, որը կունենա նաև «ճնագնդու» կուտակային և փոխսնող էֆեկտ՝ հիմք ու ռեսուրս ստեղծելով, պետության կողմից նորանոր և ավելի մասշտաբային կետերի ակտիվացման համար: Այս մոտեցումը, հանձինս պետության ակտիվ և ուղղակի տնտեսական և ներդրումային քաղաքականության, ինչպես նաև որոշ այլ գործոնների միաժամանակյա ապահովման, կարող է սկիզբ դնել «հայկական տնտեսական հրաշքին» և, այլ կարգավորիչ մեթոդների շարունակական համակցությամբ՝ որակական նորանոր երանգներ հաղորդել դրան:

Իսկ ինչ վերաբերվում է «բարենպաստ տնտեսական և օրենսդրական միջավայրի» տարրին, ապա, անշուշտ, այն պետք է զուգահեռաբար ստեղծվի՝ որպես աճը խթանող կարևոր գործոն, իսկ մասնավորի հնարավորությունները պետք է առավելագույնս օգտագործվեն պետական «տնտեսական ճարտարապետության» շրջանակներում՝ ինքնակարգավորման և ՊՄԳ մոդելների լայն օգտագործմամբ, առողջ և հավասար մրցակցային դաշտի պահպանմամբ, պետության կողմից նպատակային աջակցմամբ:

Կարևորագույն պետական գործառույթ է հանդիսանում նաև գիտելիքների նպատակային տարածման համակարգերի ստեղծումը՝ հանձինս մրցունակ և տիպային բիզնես – մոդելների մշակման, պետական՝ ճյուղային լոկոմոտիվային – կարկասային ձեռնարկությունների (կորպորացիաների) ստեղծման, հատկապես գյուղատնտեսության մեջ՝ տիպային տնտեսությունների ստեղծման, նորագույն տեխնոլոգիաների ձեռքբերման և տարածման, ինֆորմացիոն - խորհրդատվական կենտրոնների գործունեության: Դրանք ևս կարող են լինել այն հենքը, որը հզոր լիցք կհաղորդի արագացված զարգացման գործընթացին:

Բացի պետությունից, որը պետք է ոչ միայն կառուցի այս համակարգը, այլ նաև հասնի ակնկալվող արդյունքներին և աճի համակարգի ամբողջականությանը, իսկ հետագայում՝ անընդհատ զարգացնի դրանք՝ ոչ ոք չի կարող սա իրականացնել:

ԴՐՈՒՅԹ ԵՐՐՈՐԴ և ԴՐՈՒՅԹ ՉՈՐՐՈՐԴ. **Արտասահմանյան արժույթների ազատ շրջանառություն երկրի ներսում, դրանց ազատ և անսահմանափակ փոխարկելիություն, տեղաշարժ և հնարավորիս ազատական վալյուտային ռեժիմի կիրառում.**

Ազգային արժույթի դրամական մասսայի սահմանափակ քանակության սկզբունքի արմատավորում, որը, ըստ մոդելի ջատագովների տրամաբանության, պետք է ծառայի արժեզրկման գործընթացներ կանխարգելմանը՝ զարգացող երկրում:

Այս երկու դրույթները խիստ փոխկապակցված են, ուստի դրանց մասին կխոսենք մեկ միասնական տրամաբանությամբ:

Տարբեր հաշվարկներով, մեր երկրի տնտեսության դոլարիզացման մակարդակը 50–65 տոկոս է: Սա նշանակում է, որ առնվազն այդքան տոկոսով, մեր ազգային արժույթի տեղն են զբաղեցնում արժույթներ, որոնց էմիտենտը և վերջնական պատասխանատուն մենք չենք:

Ավելին, նույնիսկ այնտեղ, որտեղ դրանց կիրառումը պարտադիր չէ և այն երկարաժամկետ «ռումբ» է դնում մեր ֆինանսական համակարգի տակ՝ մենք գնում ենք դրան: Բերեմ ընդամենը մեկ օրինակ (չնայած որ այդպիսի օրինակների «ներկապնակն» այսօր շատ լայն է մեր երկրում):

Հիպոթեքային վարկերի, մեղմ ասած, կեսից ավելին, մեր երկրում, այսօր տրամադրված է արտարժույթով: Դրանք երկարաժամկետ վարկեր են, իսկ դրանց ընդհանուր ֆիզիկական ծավալն անընդհատ աճում է: Եթե մենք, ներքին և արտաքին գործոնների ճնշման տակ, ինչը որոշակի հանգամանքներում, պարզապես կարող է անխուսափելի լինել՝ դեվալվացնենք մեր ազգային արժույթը, ապա այդ մարդկանց համար, որոնք իրենց եկամուտները ստանում են ՀՀ դրամով, տեղի կունենա վարկերի սպասարկման էական, իսկ շատ դեպքերում էլ՝ փակուղային թանկացում: Եվ այդ մարդիկ, անխուսափելիորեն, դիմելու են պետությանը՝ ուղղակի կամ անուղղակի փոխհատուցման պահանջով: Եվ սա կարող է պետության համար կամ ահռելի ծախսերի նոր աղբյուր դառնալ, կամ՝ բերել հասարակության մեջ մեծ հուզումների:

Մենք այսօր սահմանափակում ենք ազգային արժույթի էմիսիան և դրամական մասսան մեր տնտեսության մեջ: Դրա նպատակը, ինչպես նշվեց, մեր ազգային արժույթի փոխարժեքի և գների երկարաժամկետ կայունության ապահովումն է: Սա, արտաքնապես գայթակղիչ գաղափար է, և ես ինքս էլ, երկու ձեռքով, կողմ եմ, որ մեր երկրում և՛ գները, և՛ ազգային արժույթի փոխարժեքը միջազգային ռեզերվային փոխարժեքների նկատմամբ՝ կայուն և կանխատեսելի լինեն միշտ:

Բայց ա՛յ կառուցվածքային քաղաքականության և վերը նշված նպատակների համար վճարված գնի առումով՝ մենք, անցած տասնամյակների ընթացքում, լիովին ձախողել ենք նույնիսկ այս ոլորտը:

Քիչ փողի (ազգային քիչ փողի) քաղաքականությունը, որը պարտադրված էր անպատասխանատվության աստիճանի հասնող բաց տիպի «լիբերալ» մոդելով, ոչ միայն մեր պետությանը զրկեց սեփական ռեսուրսների հաշվին կապիտալ մեծ ներդրումներ անելու լուրջ հնարավորությունից՝ թերֆինանսավորված թողնելով շատ հիմնարար ճյուղեր և գործընթացներ (և նույնիսկ ընթացիկ բնույթի ծախսերը), այլ նաև, ըստ էության,

իրականում, չլուծեց այդ կայունության խնդիրը, ինչը մենք միայն առերևույթ տեսանք, բայց չհասկացանք դրա որակն ու մեր վճարած գինը: Այդ մոտեցումը մեզ արժեցավ 7 մլրդ միայն արտաքին պարտք…

Այլ խոսքերով ասած, գործող մոդելի շրջանակներում, երբ անհրաժեշտ էր լցնել բյուջեի դեֆիցիտը, պահել փոխարժեքի և գների կայունությունը՝ սա ուղեկցելով նոր փող չտպելու սկզբունքով, ինչ, այդ ամբողջականության մեջ, իսկապես կարժեզրկեր դրամը և/կամ կառաջացներ արտարժույթի դեֆիցիտ երկրում՝ մենք այդ պոտենցիալ արժեզրկումը «հանգցրեցինք» արտաքին վալյուտային պարտքերով: Գործընթացը հիմա հասել է կրիտիկական կետին, քանզի եզրագծին ենք, և սպառվել են լիմինտները՝ չտալով հիմնարար լուրջ արդյունք: Ըստ էության, սա ինքնախաբեություն էր, քանի որ մեր 7 մլրդ դոլար կազմող արտաքին պարտքը ոչ այլ ինչ է, եթե ոչ թաքցրած, «մի կողմ տարված» և սառեցված ինֆլյացիա և չկայացած դեվալվացիա: …Առայժմ չկայացած դեվալվացիա… քանի որ այս «լիբերալ մոդելը», նույնիսկ ոչ երկար կիրառող երկրները, վաղ թե ուշ ունեցել են անկառավարելի դեվալվացիոն պայթյուն: Ինչ արժեր միայն «կորցված տասնամյակը» Լատինական Ամերիկայի երկրների համար…

Կարելի է նաև փաստել, որ եթե չլինեին մեր բնակչության կողմից դրսից ստացված և արտարժութային տրանսֆերտները, ապա այդ եզրագծին մենք շատ ավելի վաղ հասած կլինեինք: Չնայած որ՝ տրանսֆերտների ռեսուրսն այժմ նունպես սպառվում է այդ «կայունության» ապահովման համար:

Եվ, եթե արդեն այսօր մենք չսկսենք խնամքով վնասազերծել առկա բազում ականները, ապա՝ ցավոք սրտի, արմատական իրավիճակային միջոցառումների համակարգի իրականացումը, ապագայում, կարող է դառնալ ստիպված և, ծանր իրողություններով պարտադրված քայլ: Ի տարբերություն ներկա իրավիճակի, այդ ստիպված քայլերը կարող են միայն փաստել ծանր իրողությունները, ֆիքսել դրանք, բերել ստիպված արմատական որոշումների ու ցավոտ սահմանափակումների, սակայն՝ արդեն չտալ տնտեսական դրական էֆեկտ:

Բանն այսօր հասել է նրան, որ մենք այսօր մեր ազգային արժույթի ցանկացած էմիսիան, մեր առկա բաց և, կառուցվածքային առումով՝ պրիմիտիվ մոդելի պայմաններում, ստիպված ենք համադրել ոչ թե մեր ՀՆԱ-ի աճի հետ (ինչը ենթադրում է դասական և տրամաբանական տնտեսագիտական մոտեցումը), երբ առաջացել է նոր ծածկույթ նոր դրամական մասսայի համար, այլ դրա էմիսիայի հնարավորությունը չափել առկա արտարժութային ծածկույթի հետ: Պարադոքս է նաև այն, որ

նույնիսկ արտահանման խթանումը, որի մասին մենք այդքան սիրում ենք խոսել՝ ներկա արժութային քաղաքականության պայմաններում, ունակ չէ դեպի պետության պահանջմունքներն ուղղել անհրաժեշտ արտարժութային միջոցներ՝ ներկա անտրամաբանական կարգավորումների պայմաններում: Եվ այդ իրավիճակում մնում են արտարժութային արտաքին վարկերը, ինչը մենք «հաջողությամբ» արդեն կուտակել ենք՝ մոտենալով եզրագծին:

Ի դեպ, նշենք նաև, որ մեր դրամական մասսան, որի «քչության» սկզբունքը մենք դրել էինք և դրել ենք մեր տնտեսական քաղաքականության հիմքում, այսօր աշխարհում ամենաքչերից մեկն է՝ սեփական ՀՆԱ-ի նկատմամբ: Մեր պարագայում այն կազմում է մեր ՀՆԱ-ի ընդամենը 20 տոկոսը, մինչդեռ, Չինաստանում, օրինակ, շրջանառու դրամական մասսան կազմում է այդ երկրի ՀՆԱ-ի ավելի քան 200 տոկոսը (այսինքն՝ մոտ տասն անգամ մեզնից ավելի և կարելի է պատկերացնել, թե մեր ինչ ահռելի և գոնե սկզբնական բնույթի ռեսուրսի կորստի մասին է խոսք գնում): Ու մենք նաև տեսնում ենք, որ նույնիսկ մեր այս աննշան դրամական մասսայի պայմաններում՝ ուղեկցված սխալ կառուցվածքային քաղաքականությամբ, մենք կարողացել ենք մեզ համար ստեղծել վերը նշված լուրջ և թաքցված ու կուտակված (սառեցված և մի կողմ տարված) ինֆլյացիոն հիմնախնդիրները և պայթունավտանգ իրավիճակը, որի պայթուցիչը կարող է դառնալ, թեկուզ, քիչ թե շատ խորն ու երկարատև միջազգային որևէ հերթական ֆինանսատնտեսական ճգնաժամ, որը լինում է պարբերաբար՝ անկախ մեր ցանկություններից: Սա նշանակում է նաև, որ մեր երկրի արդեն իսկ նոր և ճիշտ մոդելը, որի կառուցումը պետք է սկսել անհապաղ, իհարկե, իր հիմքում պետք է ունենա «ի սկզբանե հակաճգնաժամային» հիմնարար բաղադրիչը: Այսինքն, մեր նոր տնտեսական մոդելն, ի սկզբանե, պետք է լինի հակաճգնաժամային:

Այսպիսով, նախորդիվ նշված սկզբունքներին կուրորեն հետևելը և պետական ռեսուրսների ու դրա մեծ հնարավորությունների արհեստական ինքնասահմանափակումը, արժութային քաղաքականության ծայրահեղ լիբերալ մոդելը, սեփական դրամական մասսային երկրորդական դեր հատկացնելը, ինչպես նաև մի շարք այլ առկա բացասական մոտեցումներ՝ մեղմ ասած, ոչ միայն շատ հեռու են պահում մեզ «հայկական տնտեսական հրաշքից», այլ մշտապես ստեղծում են խրոնիկական բյուջետային դեֆիցիտներ, տնտեսության հիմնարար ուղղությունների երկարաժամկետ թերֆինանսավորում և տնտեսության որակի շարունակական իջեցում, ավելացնում են պետական արտաքին պարտքը, իսկ տեսանելի ապագայում արդեն՝ սպառնում են մեր երկիրը մտցնել արդեն վերջնական

փակուղի: Սա արդեն պետական անվտանգության հարց է: Առկա անհե-թեթ և անտրամաբանական մոդելով, մենք, վախենամ, երբեք չենք հաղ-թահարի աղքատությունը և երբեք չենք հասցնի մեր պաշտպանունակու-թյունը մեզ համար ընդունելի մշտական մակարդակի՝ առանց երրորդ ուժին ապավինելու տարրի: Շատ-շատ կուզենայի սխալվել…

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

ԷԴՎԱՐԴ ՍԱՆԴՈՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն
տ.գ.դ., պրոֆեսոր
edwardsandoyan@gmail.com

ՀԵՂԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ
heghineh18@gmail.com

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բավականաչափ զարգացած և համապատասխանեցված է շուկայական հարաբերություններին, սակայն առկա են մի շարք խնդիրներ հարկային վարչարարությունում, հատկապես՝ ուղղակի հարկերի մասով, իսկ մեծ ոչ ֆորմալ հատվածի առկայությունն էլ ավելի է ազդում հարկային քաղաքականության արդյունավետության վրա և, որպես արդյունք՝ բյուջեի համալրման վրա: Ուղղակի հարկերի վարչարարության լավագույն գործիքներից է ֆիզիկական անձանց եկամուտների ու գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգը: Այս համակարգը ներդրված է բազմաթիվ զարգացած երկրներում: Այն գործնականում ապացուցել է իր արդյունավետությունը թե՛ որպես հարկերի հավաքագրման, թե՛ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք: Սակայն միայն եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ հնարավոր չէ լուծել հիմնախնդիրը, ուստի, առաջարկում ենք նաև փոփոխություններ իրականացնել ՀՀ շահութահարկի գործող համակարգում: Մասնավորապես, առաջարկում ենք վերացնել շահութահարկը՝ չբաշխված շահույթը հարկել զրո տոկոսադրույքով, իսկ բաշխված շահույթը դարձնել եկամտային հարկի հարկման օբյեկտ: Առաջարկվող համակարգը նման է Էստոնիայում կամ Վրաստանում շահույթի հարկման համակարգին՝ մի առանձնահատկությամբ. բաշխված շահաբաժինները ենթակա են հարկման եկամտային հարկի միասնական դրույքաչափերով և սկզբունքներով: Ներկայացնենք տվյալ բարեփոխումների հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա: Նշված ազդեցությունները գնահատելու համար առաջարկում

ենք կիրառել նեոդասական ընդհանուր հավասարակշռության դինամիկ մոդելը՝ բացված տեսքով: Այն նման է Funke M. և Strulik H. կողմից մշակված մոդելին[1], սակայն ներկայացված է դիսկրետ ժամանակով՝ Masso J. և Meriküll J. աշխատության մեջ[2]:

Հիմնական մոդել

Տվյալ մոդելը հաշվի է առնում տնտեսության բոլոր սուբյեկտներին. տնային տնտեսությունները, որոնք մաքսիմիլացնում են իրենց օգտակարության ֆունկցիան; կազմակերպությունները, որոնք մաքսիմիլացնում են շահույթը; և պետությունը, որի եկամուտները հիմնականում ձևավորվում են հարկերից: Մոդելով ենթադրվում է, որ պետական բյուջեն հավասարակշռված է, և դրա եկամտային մասը ձևավորվում է հարկային մուտքերի հաշվին, իսկ պետական ծախսերը իրականացվում են երկու ուղղությամբ՝ միջոցների մի մասը ուղղվում է սեփական կարիքներին, իսկ մյուսն ամբողջությամբ ծախսվում է բնակչության կարիքների համար: Առանձնացնում են մոդելի երկու տեսակ՝ փակ և բաց տնտեսությունների համար:

Փակ տնտեսության մոդել.

Փակ մոդելում ենթադրվում է, որ ներդրումներն ու սպառումը իրականացվում են միայն պետության սեփական դրամական միջոցների հաշվին: Փակ տնտեսությունում մեկ շնչին ընկնող սպառման և մեկ աշխատուժին ընկնող կապիտալի արժեքները գտնելու համար կիրառվում են Masso J., Meriküll J. (2011) (19)-րդ և (20)-րդ բանաձևերը.

$$c^* = (1 - g)k^{*\alpha-1} - \delta - \gamma \text{ և} \qquad (1).$$

$$k^* = (\phi\alpha/((1+\gamma)^\sigma(1+\rho) - 1 + \phi\delta))^{1/1-\alpha} \qquad (2).$$

Հաշվի առնելով, որ մոդելը կիրառվում է կայուն տնտեսության համար, ուստի A=1, իսկ $k*$=K/A (3), որից էլ բխում է, որ մեկ աշխատուժին ընկնող կապիտալի արժեքները համարժեք է կապիտալի արժեքին: Սպառման արժեքը՝ C, գտնելու համար անհրաժեշտ է կիրառել c*=Ct/Kt (4) բանաձևը, իսկ թողարկման ծավալի՝ Yt համար՝ $Y_t = K_t{}^\alpha A_t{}^{1-\alpha}$ (5): Նշենք, որ թե՛ փակ, թե՛ բաց տնտեսությունների համար հարկի դրույքաչափի

[1] Funke M. and Strulik H., "Taxation, growth and welfare: Dynamic effects of Estonia's 2000 income tax act". Bank of Finland. Institute for Economies in Transition, BOFIT. Discussion Papers No. 10. 2003: P. 24: Էջեր 11-21:

[2] Masso J. and Meriküll J., "Macroeconomics effects of zero corporate income tax on retained earnings". Baltic Journal of Economics No. 11 (2). 2011: P. 81-99: Այսուհետ՝ Masso J., Meriküll J. (2011):

փոփոխությունն արտահայտող ցուցանիշն է φ, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\phi = \frac{(1-\tau)}{(1-\tau z)} \quad (6):$$

Հարկային համակարգում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն հանգեցնում է նաև պետական բյուջեի եկամուտների փոփոխությանը: Պետական բյուջեի եկամուտների փոփոխության տոկոսային հարաբերակցությունը որոշելու համար տվյալ մոդելում կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$G_t = m\left(w_t + rB_t + \frac{D_t}{1-\tau}\right) + \tau_c C_t + \tau(\pi_t - zI_t - D_t) \qquad (7),$$

որտեղ Gt՝ պետության եկամուտներն են, ընդ որում, հաշվի առնելով, որ պետական բյուջեն հավասարակշռված է, այս արժեքը համընկնում է պետական ծախսերի ցուցանիշի հետ, m՝ եկամտային հարկի տոկոսադրույքն է, w_t՝ միջին ամսական անվանական աշխատավարձն է, B_t՝ կազմակերպությունների թողարկած պարտատոմսերն են, D_t՝ ընդհանուր շահաբաժինները, τ_c՝ ավելացված արժեքի հարկի տոկոսադրույքն է, π_t՝ կազմակերպությունների շահույթն է, I_t՝ զուտ ներդրումները[1]: Տվյալ ցուցանիշների հաշվարկների բանաձևերը ունեն այլ տեսք բաց տնտեսության մոդելում և ներկայացված են ստորև:

Բաց տնտեսության մոդել.

Հիմնվելով Էյլորի և $(1-m)r^f = (1+\gamma)^\sigma(1+\rho) - 1$ (8) բանաձևի վրա, որտեղ r^f՝ անփոփոխ արտասահմանյան տոկոսադրույքն է, մեկ աշխատուժին ընկնող կապիտալի բանաձևը կայուն տնտեսության դեպքում ձևափոխվում է.

$$k^* = (\phi\alpha/((1-m)r^f + \phi\delta))^{1/1-\alpha} \qquad (2').$$

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բաց տնտեսությունում կազմակերպությունների կապիտալի որևէ մասը կարող է պատկանել նաև արտասահմանյան կազմակերպություններին կամ ոչ ռեզիդենտներին, ապա մեկ շնչին ընկնող սպառումը կունենա հետևյալ տեսքը.

$$c^* = (1 - g - \alpha\beta)k^{*\alpha-1} - \delta(1-\beta) - \gamma\left(\frac{\phi-\beta}{\phi}\right) \qquad (1').$$

Բաց տնտեսությունում հաշվի է առնվում նաև ընթացիկ հաշիվը: Մոդելի շրջանակներում ընթացիկ հաշիվը հաշվարկվում է ՀՆԱ-ի (GDP) և ՀԱԱ-ի (GNP) տարբերությամբ, ընդ որում $GNP = Y_t - \beta D_t$ (9): Հաշվի

[1] Տվյալ ցուցանիշների հաշվարկները իրականացված են Masso J., Meriküll J. (2011) կողմից ներկայացված բանաձևերի հիման վրա, էջեր 84–88:

առնելով նաև այն, որ մոդելում ՀՆԱ-ն նշանակվում է Yt-ով, կայուն տնտեսության պայմաններն ու A=1, ընթացիկ հաշվի բանաձևը արտահայտվում է.

$$CA^* = -\beta(\alpha k^{*\alpha} - (\delta + \frac{\gamma}{\phi})k^*) \qquad (10).$$

Ներկայացված բանաձևերի կիրառմամբ հնարավոր է գնահատել սպառման մակարդակի, մեկ աշխատուժին ընկնող կապիտալի, թողարկման, պետական բյուջեի եկամուտների և ընթացիկ հաշվի ցուցանիշների արժեքներն ու հարկային համակարգի փոփոխության դեպքում այս ցուցանիշների տոկոսային փոփոխությունները: Հաշվարկների արդյունքները ներկայացված են *աղյուսակ 1*-ում:

Հարկային համակարգի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա

Մոդելի պարամետրացումից և հաշվարկներն իրականացնելուց հետո ստացել ենք աղյուսակ 1-ում ներկայացված արդյունքները[1].

Աղյուսակ 1.

Շահութահարկի վերացման ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա

Ցուցանիշ	Մեկ աշխատուժին ընկնող կապիտալ	Մեկ շնչին ընկնող սպառում	Սպառում	Թողարկում	Կապիտալի հարաբերակցությունը թողարկմանը	Սպառման հարաբերակցությունը թողարկմանը	Ընթացիկ հաշվի հարաբերակցությունը թողարկմանը	Պետական ծախսեր (հարկային եկամուտներ)
	k*, K*	c*	C*	y*, Y*	K*/Y*	C*/Y*	CA*/Y*	G*
	Փակ տնտեսության մոդել							
Արժեքը մինչև բարեփոխումները	2.665	0.365	0.972	1.554	1.715	0.625	-	0.474
Արժեքը բարեփոխումներից հետո	2.746	0.356	0.978	1.576	1.743	0.621	-	0.454
Տարբերությունը	3.04%	-2.35%	0.62%	1.36%	0.0285	-0.0046	-	-4.09%

[1] Բացված տեսքով հաշվարկները ներկայացված են հետևյալ աշխատությունում՝ Sandoyan E. M., Petrosyan H. G. “Abolishment of Profit Tax Effects in the Republic of Armenia”. Финансы: теория и практика. 23(1). 2019, էջեր 96-105:

	Բաց տնտեսության մոդել							
Արժեքը մինչև բարեփոխումները	2.665	0.355	0.945	1.554	1.715	0.608	-0.0174	0.459
Արժեքը բարեփոխումներից հետո	2.746	0.346	0.951	1.576	1.743	0.604	-0.0171	0.442
Տարբերությունը	3.04%	-2.33%	0.64%	1.36%	0.0285	-0.0043	0.0003	-3.92%

Աղբյուրը՝ կազմված է հեղինակների կողմից հաշվարկների արդյունքներում:

Ստացված արդյունքներն արտացոլում են ՀՀ տնտեսության վիճակը, այսպես՝ սպառման հարաբերակցությունը թողարկմանը ՀՀ-ում 2013-2017 թվականներին տատանվել է 54.1% մինչև 64.0, ինչը համապատասխանում է մոդելի կիրառմամբ մեր կողմից կատարված հաշվարկներին՝ 60.8%: Ներդրումների աճն ըստ կանխատեսումների կազմում է 2.3%: Այսպիսով, չբաշխված շահույթի զրոյական տոկոսով հարկելը նվազեցնում է սպառման մակարդակը՝ ավելացնելով ներդրումների ծավալը: Չնայած թողարկումում սպառման կշռի նվազմանը՝ տնային տնտեսությունների սպառման մակարդակը փակ տնտեսությունում աճում է՝ 0.62%-ով, իսկ բաց տնտեսությունում՝ 0.64%-ով: Տվյալ ցուցանիշով որոշվում է բնակչության ընդհանուր բարեկեցությունը, որը, համաձայն մոդելի հաշվարկների, ՀՀ-ում բարեփոխումներից հետո աճելու է: Ըստ կանխատեսումների արդյունքների՝ կայուն տնտեսական վիճակում կապիտալը աճելու է 3.04%-ով, իսկ թողարկումը՝ 1.36%-ով: Այս ցուցանիշների աճը նախ և առաջ կապված է հոգուտ ներդրումների ռեսուրսների վերաբաշխման հետ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է թողարկման սպառման կշռի նվազմանը:

Մոդելի շրջանակներում իրականացված ընթացիկ հաշվի արժեքները հնարավոր չէ համեմատել գործող ցուցանիշի հետ, քանի որ դիտարկվող մոդելում արտաքին առևտրի ցուցանիշները հաշվի չեն առնվում, իսկ ընթացիկ հաշիվը մոդելում ներառում է միայն տնտեսությունում առկա ոչ ռեզիդենտների կապիտալով և արտասահմանյան կազմակերպությունների շահաբաժինների բաշխումով: Հաշվի առնելով նաև այն, որ արտասահմանյան կապիտալի կշիռը մոդելում ներմուծվել է էկզոգեն կերպով, ապա հնարավոր չէ նաև հստակ կանխատեսել օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը, որպես հարկային բարեփոխումների արդյունք: Միաժամանակ, ըստ մոդելի հաշվարկների՝ ընթացիկ հաշվի

դեֆիցիտը մի փոքր կնվազի, ինչը պայմանավորված է շահաբաժինների ծավալների նվազմամբ ի օգուտ շահույթի պահմանը կազմակերպությունում:

Չբաշխված շահույթի զրո տոկոս տոկոսադրույքով հարկումը կբերի պետության հարկային եկամուտների փոփոխության: Հաշվարկներից կարելի է եզրակացնել, որ պետության հարկային եկամուտները թե՛ փակ, թե՛ բաց տնտեսություններում կնվազեն 4.09% և 3.92% համապատասխանաբար: 2017 թվականի դրությամբ ՀՀ հարկային եկամուտները կազմել են 1276784.0 միլիոն ՀՀ դրամ: Եթե դիտարկվող փոփոխությունները տարածենք 2017 թվականի համար, ապա տեսականորեն Հայաստանի հարկային եկամուտները կնվազեին և կկազմեին 1226672.1 միլիոն ՀՀ դրամ, ինչը շուրջ 50111.9 միլիոն ՀՀ դրամով քիչ է, քան փաստացի մուտքերը:

Այսպիսով, համաձայն ներկայացված մոդելով իրականացված հաշվարկների, շահութահարկի վերացումը, իսկ բաշխված շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելը ՀՀ-ում կհանգեցնի հետևյալ փոփոխությունների.

- թողարկման աճ 1.36%-ով,
- մասնավոր հատվածի սպառման մակարդակի աճ 0.64%-ով,
- կապիտալի աճ 3.04%-ով,
- զուտ ներդրումների աճ 2.3%-ով,
- պետության հարկային եկամուտների նվազում 3.92%-ով:

Պետության հարկային եկամուտների նվազումն առաջին տարիների ընթացքում հնարավոր կլինի թեթևացնել եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ, որն իր հերթին կնպաստի հարկային եկամուտների ավելացմանը եկամտային հարկի մասով:

Եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ կկրճատվի ստվերային դաշտը, որի արդյունքում եկամտային հարկի մասով մուտքեր ՀՀ պետական բյուջե կավելանան: Ուստի, անհրաժեշտ է հաշվարկել ՀՀ-ում ոչ ֆորմալ ոլորտի առկայության հետևանքով պետական բյուջե չվճարվող հարկերի և վճարների գումարը: Հաշվարկների տեղեկատվական աղբյուրն է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշները ՀՀ-ում, ինչպես նաև միջին ամսական անվանական աշխատավարձի չափը, ընդ որում՝ բաժանումն իրականացվելու է ըստ գյուղատնտեսության և այլ ոլորտների: Հաշվարկների հիմքում ընկած է եկամտային հարկի հաշվարկման հիմնական մեթոդը՝ ամսական

անվանական աշխատավարձը բազմապատկվելու է ոլորտում առկա ոչ ֆորմալ վարձու աշխատողների և եկամտային հարկի դրույքաչափի վրա, այնուհետև բազմապատկվելու է 12-ով՝ տարեկան չվճարված եկամտային հարկի գումարը պարզելու նպատակով:

2017 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում կազմել է շուրջ 121475 ՀՀ դրամ, իսկ այլ ոլորտներում՝ 185737 ՀՀ դրամ[1]: Հիմք ընդունելով եկամտային հարկի պրոգրեսիվ սանդղակը՝ ակնհայտ է, որ գյուղատնտեսության ոլորտում չվճարված եկամտային հարկի գումարների հաշվարկների իրականացման համար կկիրառենք 23%, մինչդեռ այլ ոլորտների համար՝ 28%: 2017 թվականին ոչ ֆորմալ զբաղվածների թվաքանակը կազմել է 465900, որոնցից վարձու աշխատողներն են՝ 80200, այդ թվում՝ գյուղատնտեսությունում՝ 6600 աշխատող, իսկ այլ ոլորտներում՝ 73600 աշխատող[2]:

Բազմապատկելով ամսական անվանական աշխատավարձի գումարը եկամտային հարկի տոկոսադրույքի չափով ըստ տնտեսության հատվածների (գյուղատնտեսությունում՝ 121475*23%, իսկ այլ հատվածներում՝ 34500+(185737-150000)*28%) կստանանք մեկ աշխատողի կողմից ամսական վճարման ենթակա եկամտային հարկի գումարի չափը՝ ըստ տնտեսության հատվածների (տես՝ աղյուսակ 2.4): Ստացված արժեքը բազմապատկենք ոլորտում ոչ ֆորմալ վարձու աշխատողների թվաքանակի վրա և 12-ով (գյուղատնտեսության հատվածում՝ 27939*6600*12, իսկ այլ ոլորտներում՝ 44506*73600*12), որպեսզի որոշենք տարեկան եկամտային հարկի գումարի չափը, որը կվճարվեր պետական բյուջե, եթե բացակայեր տվյալ ոչ ֆորմալ հատվածը: Հաշվարկները ցույց են տալիս, որ 2017 թվականին ոչ ֆորմալ հատվածի առկայության հետևանքով պետական բյուջե չվճարված եկամտային հարկի գումարը կազմել է 41520.8 միլիոն ՀՀ դրամ: Տվյալ հաշվարկները իրականացվել են նաև 2014, 2015 և 2016 թվականների համար. ոչ ֆորմալ հատվածի առկայության հետևանքով չվճարված եկամտային հարկի գումարի չափերը 2014 թվականին կազմել են 47.5 միլիարդ ՀՀ դրամ, 2015 թվականին՝ 40.7 միլիարդ ՀՀ դրամ, 2016 թվականին՝ 45.2 միլիարդ ՀՀ դրամ:

---

[1] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում», 2017թ. https://www.armstat.am/am/?nid=81&id=2106

[2] ՀՀ վիճակագրական կոմիտե. «Տարեգիրք, 2018թ., «Զբաղվածություն»», էջ 73:

Աղյուսակ 2.

Ոչ ֆորմալ հատվածի կողմից չվճարված եկամտային հարկի գումարի հաշվարկ, 2017թ.

Ցուցանիշ	Գյուղատնտեսության հատված	Բոլոր այլ հատվածներ, բացառությամբ գյուղատնտեսության	Ընդամենը
Եկամտային հարկի ամսական գումարի չափը մեկ աշխատողի համար (ըստ հատվածների)	27 939	44 506	72 445
Եկամտային հարկի ամսական գումարի չափը (ըստ հատվածների)	184 399 050	3 275 668 096	3 460 067 146
Եկամտային հարկի տարեկան գումարի չափը (ըստ հատվածների)	2 212 788 600	39 308 017 152	41 520 805 752

Աղբյուրը՝ հաշվարկներն իրականացվել են հեղինակների կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների հիման վրա:

Ըստ իրականացված հաշվարկների՝ եկամտային հարկով մուտքերը եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրման շնորհիվ կավելանան շուրջ 41520.8 միլիոն ՀՀ դրամով, որը մեծամասամբ կծածկի շահութահարկի մասով չստացված հարկային եկամուտները:

Այսպիսով, սպասվում է, որ շահութահարկի վերացումը կբերի երկրում կոռուպցիայի մակարդակի զգալի կրճատմանը, իսկ եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգը կապահովի հարկային մուտքերի ամբողջականությունը: Բացի այդ, կազմակերպությունների շահույթի հարկման համակարգի վերացմամբ հնարավոր կլինի խուսափել կազմակերպությունների շահույթի հարկման ավանդական համակարգի թերություններից՝ կազմակերպությունների համար կնվազեն օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջներ, մասնավորապես, ավանսային վճարների իրականացմանը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը, մաշվածքի նորմայի հաշվարկմանը ներկայացվող և այլ պահանջներ: Շահութահարկի վերացումն ու բաշխված շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելու հարկային համակարգը հեշտ է և թափանցիկ, նպաստում է ներդրումների ավելացման ու նվազեցնում է կազմակերպությունների շահագրգռվածությունը թաքցնելու իրենց շահույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑԱԾ ԱՐԺԵՔԻ ՇՂԹԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ,
տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման
ամբիոնի վարիչ,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
aram.arakelyan@ysu.am

Գյուղատնտեսության ոլորտում հարկավոր է արտահանման վրա հենվել:

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյան

Ներածություն: Ներկայացվող աշխատանքը[1] նվիրված է ավելացած արժեքի շղթաների ուսումնասիրությանը և նպատակ ունի առաջարկել ՀՀ ագրոբիզնեսի և գյուղատնտեսության ոլորտներում գյուղատնտեսության արտադրողականության և արդյունավետության բարձրացման գործնական մեխանիզմներ՝ հիմնված ավելացած արժեքի շղթաների տեսամեթոդական սկզբունքի վրա: Աշխատանքը հասցեագրված է գյուղատնտեսության ոլորտում աշխատող այն մասնագետներին, որոնք զբաղվում են կազմակերպությունների պլանավորման գործընթացի կազմակերպմամբ, կարգավորմամբ և որոշումների կայացմամբ՝ մրցակցային շուկայի պայմաններում: Առաջարկվում են գործնական քայլեր, գյուղատնտեսական ավելացած արժեքի արդյունավետ շղթաների մշակման մոտեցումներ: Գյուղատնտեսական քաղաքականությամբ զբաղվող մասնագետները և վարչական ոլորտի աշխատողները կարող են օգտագործել տրված մեթոդները և մոտեցումները և իրականացնել ՀՀ-ի ընդգրկումը միջազգային գյուղատնտեսական ավելացած արժեքի շղթաների մեջ:

ՕՈՒՆ-ների դերը ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար

Երկրի և, մասնավորապես, ՀՀ-ի տնտեսական աճի խթանման համար ՕՈՒՆ-ների դերը կարևորվում է այն առումով, որ, շնորհիվ ներդրումային հոսքերի, բարձրանում է երկրի տեխնոլոգիական մակարդակը,

[1] Աշխատանքը կատարվել է Agreement number – 2017 – 3299 / 001 – 001 TOPAS – From Theoretical-Oriented to Practical education in Agrarian Studies ծրագրի շրջանակում

ստեղծվում են աշխատանքային տեղեր և զարգացած երկրի արտաքին կապիտալի ներհոսքի հնարավորություն է ստեղծվում դեպի զարգացող երկիր[1]: ՕՈՒՆ-ները խթանում են զարգացող երկրների ինտեգրումը՝ նպաստելով զարգացող երկրների բիզնեսների առաջընթացին[2]:

ՕՈՒՆ-ների հոսքերը դեպի ՀՀ գյուղատնտեսական ոլորտ խթանում են գյուղատնտեսության և արտադրողականության աճը, ինչպես նաև նպաստում են աղքատության նվազեցմանը:

ՀՀ տնտեսությանը վերաբերվող քանակական գնահատականները, որոնք հիմնականում առնչվում են գյուղատնտեսության ոլորտի հետ, հաշվի առնելով այդ ոլորտի կարևորագույն նշանակությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, վերցված են Համաշխարհային ներդրումային զեկույցից[3]: ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության ինդեքսը 2013-2017թթ. ընթացքում տատանվել է և, նվազելով, միջինում կազմել է 0.54, այն դեպքում, երբ արդյունաբերությունում նույն ցուցանիշը հավասար է 1.59: Այսպիսով, գյուղատնտեսության արտադրողականության ինդեքսը կազմում է արդյունաբերության արտադրողականության ինդեքսի 34%-ը: Նշենք, որ ՀՀ գյուղատնտեսության համախառն միջին ատադրանքը 2013-2017թ. կազմել է 926.82 մլրդ դրամ, իսկ 2017թ. նվազել է և կազմել է 2014թ. 92%-ը: Այդ թվում, տնային տնտեսությունների 2013-2017թթ. համախառն միջին արտադրանքը կազմել է 898.3 մլրդ դրամ, իսկ գյուղատնտեսության առևտրային կազմակերպություններինը՝ 28.52 մլրդ դրամ: ՀՀ 2013-2017թթ. գյուղատնտեսության համախառն միջին արտադրանքն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ տնային տնտեսությունները՝ 96.92%, իսկ գյուղատնտեսության առևտրային կազմակերպություններինը՝ 3.38%: Գյուղատնտեսության սեկտորի 2013-2017թթ. միջին աճը կազմել է 102.62%, իսկ ամբողջ տնտեսությանը՝ 101.5%: ՀՀ 2012-2017թթ. ամբողջ բնակչության միջին քանակը եղել է 2826 հազար մարդ, գյուղատնտեսության բնակչությունը՝ 1069 հազար մարդ, կամ ամբողջ բնակչության 38%: 2012-2017թթ. ՀՀ գյուղի աղքատության ճեղքը աղքատության ազգային առանձնահատկությունների առումով օրական եկամտի 3.2 ԱՄՆ դոլարից ոչ ավել մեծությամբ՝ միջինում կազմում է 4.97%: Այսպիսով, գյուղատնտեսության ոլորտի կենսամակարդակի բարձրացման նպատակով առաջարկվող ռազմավարությունները պետք է ընդգրկեն այնպիսի գործողություններ, որոնք բարձրացնում են արտադրողականությունը և տնային տնտեսությունների եկամուտը[4]: Գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը

---

1 Loungani & Razin
2 Kumar
3 The World Investment Report, 2018
4 Msuya

ենթադրում է գյուղատնտեսական արտադրության աճը այնպիսի արագությամբ, որ հնարավոր լինի պայքարել աղքատության հետ[1]: Բացի արտադրողականության բարձրացումից, գյուղատնտեսության ներդրումները հնարավորություն են տալիս բարձրացնել սննդամթերքի հասանելիությունը շուկայում և պահպանել սպառողական ցածր գներ: Շնորհիվ այս ամենի՝ սննդամթերքը դառնում է հասանելի քաղաքի և գյուղի բնակչության համար[2]: Քանի որ ՀՀ բնակչության 38% բնակվում է գյուղում և գյուղատնտեսության տնային տնտեսությունների համախառն արտադրանքը կազմում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 96.92%, հետևում է, որ գյուղի բնակչության ապրուստի միջոցները կախված են գյուղատնտեսական գործունեությունից և այդ ոլորտում հաջողությունների արդյունավետությունը էական կլինի և ընդհանուր ցուցանիշների բարելավման, և բնակչության մի ստվար հատվածի բարեկեցության բարձրացման առումով:

Համաշխարհային ներդրումային զեկույցը (The World Investment Report [16]) նշում է, որ 2017թ. ԱՊՀ ՕՈՒՆ-ների հոսքը համեմատած 2005թ. հետ նվազել է 27% և կազմել է 47 մլրդ ԱՄՆ դոլար: ՀՀ տնտեսության ՕՈՒՆ-ների հոսքերը ՀՆԱ-ի նկատմամբ միջինում 2012-2017թթ. կազմել են 3.1%, իսկ 2017թ. 2012թ. նկատմամբ կազմել է 46%: Այս իրավիճակը վկայում է այն մասին, որ ՕՈՒՆ-ների հոսքը դեպի ՀՀ տնտեսություն ունի նվազման միտում: ՕՈՒՆ-ների հոսքերի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում ներդրումները հիմնականում ուղղվել են ՀՀ տրանսպորտի, ջրային տնտեսության և էներգետիկայի ոլորտներ, իսկ գյուղատնտեսական ոլորտ դրանց ծավալները չեն գերազանցել ամբողջ ՕՈՒՆ-ների 2%: Ընդհանուր առմամբ ՕՈՒՆ-ների և ՀՆԱ-ի հարաբերության գործակիցը միջինում 2012-2017թթ. կազմել է 3.1%: Գյուղատնտեսության ոլորտի նույն ժամանակահատվածի ներդրումները միջինում չեն գերազանցել տարեկան 28584 հազար ԱՄՆ դոլարը:

Գյուղատնտեսական ավելացած արժեքի մատակարարման շղթաները և տնտեսական զարգացումը

Հայտնի է, որ բիզնես համայնքի մասնակցությունը գյուղատնտեսական ավելացած արժեքի շղթաներում /ԳԱԱՇ/ պայմանավորում է տնտեսական զարգացում, գյուղատնտեսական արտադրանքի ծավալի ավելացում, բարձրացնում է գյուղատնտեսական տնային տնտեսությունների

[1] Rao et all
[2] Alston et all

եկամուտները: Այժմ գործող գյուղատնտեսական բիզնեսի ընդգրկումը ԳԱԱՇ հնարավորություն է տվել նվազեցնել գյուղի աղքատության մակարդակը[1]: ԳԱԱՇ-ները ոչ թե սոսկ գյուղատնեսության ոլորտի գոյատևման ապահովման մեխանիզմներն են եղել, այլ գյուղատնտեսական բիզնես կազակերպություններին հնարավորություն են տվել ընդգրկվել և մասնակցություն ունենալ գլոբալ միջազգային շուկաներում և, արդյունքում, ստեղծել ավելացած արժեք՝ երկրի տնտեսական աճի պոտենցիալ աղբյուր: ԳԱԱՇ-ները, հանդիսանալով տնտեսական աճի նորարարական մեխանիզմ, էականորեն բարձրացրել են ֆինանսական ռեսուրսների հոսքերի ծավալները և պայմանավորել են ագրոբիզնեսի կայունությունը շուկայի նկատմամբ: Սակայն ԳԱԱՇ-երի կիրառությունների արդյունքում կուտակած փորձը[2] վկայում է այն մասին, որ իրականացված հետազոտությունները, գիտական հրատարակությունները և գիտափորձնական ձեռնարկները սակավաթիվ են: Հետևաբար, գյուղատնտեսական ավելացած արժեքի մատակարարման շղթաներին վերաբերվող գրականության, դրանց կիրառմանը նվիրված ուղեցույցների և ներդրման գործնական քայլերի մասին աշխատանքների սակավությունը կարող է անորոշության պատճառ և ներդրման ռիսկի առաջացման գործոն դառնալ: Արդյունքում, ԳԱԱՇ-եր կիրառողները, չունենալով գործնական կիրառությանը վերաբերվող լիարժեք տեղեկատվություն, կարող են թույլ տալ որոշակի սխալներ և հիասթափվել, քանի որ ԳԱԱՇ կիրառության ընթացքում կիրառողների սխալի պատճառով ստացված արդյունքները չեն բավարարի սպասվող արդյունքների որակին ու, հետևաբար, ԳԱԱՇ սկզբունքը կարող է մերժվել կիրառողների կողմից:

Ուսումնասիրելով կատարված հետազոտությունները՝ ՀՀ-ի օրինակով ներկայացնում ենք այն քայլերը, որոնք հնարավորություն կտան մշակել գործնական ուղղվածություն ունեցող ուղեցույց այն մասնագետների համար, որոնք կցանկանան ընդլայնել իրենց գիտելիքները գյուղատնտեսական ավելացած արժեքի մատակարարման շղթաների ստեղծման համար: Ստորև առաջարկվում են գյուղատնտեսական ավելացած արժեքի շղթաների գործիքները, որոնք ներկայացված են 6 թեմաներով[3]:

---

1 Kaplinsky, Raphael and Michael Morris. “A Handbook for Value Chain Research,” September 2000

2 Kaplinsky, Raphael and Michael Morris. “A Handbook for Value Chain Research,” September 2000. From Feller, Andrew et al., “Value Chains versus Supply Chains”, BPTrends, March 2006.

3 Kaplinsky, Raphael and Michael Morris. “A Handbook for Value Chain Research,” September 2000. Տես Feller, Andrew et al., “Value Chains versus Supply Chains”, BPTrends, March 2006.

Առաջին թեմա. Ռազմավարությունների և բիզնես պլանների նախագծում, տեղեկատվության ձեռքբերում և օգտագործում

1-ին գործիքը. Ավելացած արժեքի շղթաներում ընդգրկվելու համար առաջնահերթ ոլորտների ընտրություն:

Այս գործիքի համաձայն ագրոբիզնեսի ոլորտի մասնագետները հնարավորություն են ստանում

ա/ որոշել ավելացած արժեքի մատակարարման շղթաները,

բ/ գնահատել ավելացած արժեքի ընտրվող շղթան և ընտրել այն,

գ/ որոշել, թե ինչու է ապրանքների /ապրանքային խմբերի/ համեմատական առավելությունը կարևոր, և ինչպես կարելի է այն գնահատել:

դ/ որոշել, թե ինչպես պետք է իրականացվեն պետական, մասնավոր և կոլեկտիվ հեռանկարները և շահերը:

2-րդ գործիք: Ավելացած արժեքի շղթայի ռազմավարության նախագծումը՝ հիմնված տեղեկատվության վրա

Առաջարկվում են վերլուծական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալ ավելացած արժեքի մատակարարման շղթան և ստացված տեղեկատվությունը ինտեգրել շղթայի տարբեր հանգույցներում:

3-րդ գործիք: Ավելացած արժեքի շղթաների համեմատական վերլուծության և բացթողումների գնահատում

Այս գործիքը հնարավորություն է տալիս գնահատել և համեմատել մատակարարման շղթայի արժեքի ստեղծման արդյունավետությունը (ինքնուրույն, կամ այլ ավելացած արժեքի շղթաների կամ արդի փորձի և մեթոդների հիման վրա)՝ որպես համապատասխան ռազմավարական որոշումների ընկալման միջոց:

Երկրորդ թեմա. Նոր կայուն բիզնեսների մշակում:

4-րդ գործիք: Ավելացած արժեքի մատակարարման շղթայի արդիականացում: Բացատրվում է, թե ինչպես զարգացնել ավելացած արժեքի շղթան նոր այնպիսի ուղղություններով, որոնք կարող են բարձրացնել արդյունավետությունը, բարելավել արտադրանքի որակը, իրականացնել նոր գործողություններ, և ավելին:

5-րդ գործիք: Բացահայտել վերարտադրության բիզնես մոդելները

Այս գործիքը հնարավորություն է տալիս արժեքային շղթայի մեջ ընդգրկել տարբեր բիզնես մոդելներ: Նման վերարտադրությունը պայմանավորում է ավելացված արժեքի աճ, շղթայի ինտեգրում և ծառայության ու մուտքերի հասանելիության ապահովում:

Երրորդ թեմա. Շուկայի մատակարարում՝ շուկայի հնարավորությունների հետ համաձայնեցված առաջարկի համադրում:

6-րդ գործիք: Արժեքի ձեռք բերումը, հիմնված առաջընթացի և հետադարձ ինտեգրման վրա:

Այս գործիքը բացատրում է, թե ինչպես է ուղղահայաց ինտեգրումը գյուղատնտեսական կազմակերպություններին օգնում ավելացած արժեքի շղթայի շրջանակում իրականացնել մատակարարումը, վերահսկել ներդրվող ռեսուրսները, ավելացնել արժեքը, սանդղակի միջոցով ապահովել տնտեսումը և/կամ ապահովել տեղեկատվության հասանելիությունը:

7-րդ գործիք: Հորիզոնական համագործակցություն - Սանդղակի տնտեսության առավելությունների օգտագործումը:

Այս գործիքը նախատեսում է սանդղակի տնտեսության մշակման այնպիսի մոտեցումներ, որոնք նպաստում են արտադրության ծավալների բարձրացմանը, որակի ապահովմանը, մուտքի միջոցների բարելավմանը և շուկայում հզորության բարձրացմանը:

Չորրորդ թեման. Ինտեգրումը շուկայում՝ շուկայի հնարավորությունները

8-գործիքը: Ապրանքային խմբերի և ավելացած արժեքի շղթաների բացահայտումը՝ հիմնված ավելացած արժեքի և մրցունակության աստիճանի գնահատման վրա:

Այս գործիքը հնարավորություն է տալիս գնահատել մրցունակության աստիճանը, իսկ բիզնեսին՝ ընտրել և բարելավել ավելացած արժեքի շուկայի բիզնես մոդելները:

9-րդ գործիքը: Որակի բարձրացման համար կիրառել ստանդարտները և արտոնագրերը:

Ինչպես է ապրանքային խմբի որակը բավարարում ստանդարտների պահանջներին, որպեսզի ընտրվի համապատասխան ավելացած արժեքի մատակարարման շղթան և շուկայում ընդգրկվելու բիզնես մոդելը:

Հինգերորդ թեման. Բիզնեսի և գյուղատնտեսության քաղաքականության միջավայրի բարելավումը:

10-րդ գործիքը: Ավելացած արժեքի շղթայի բարելավմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները

Այս գործիքը հնարավորություն է տալիս ուսումնասիրել ավելացած արժեքի շղթայի արդյունավետությունը, իսկ շղթայում մասնակցող ֆիրմաներին՝ բարելավել իրականացվող գործողությունները:

Վեցերորդ թեման. Ավելացած արժեքի շղթայի մշակման գործընթացի մոնիտորինգը:

11-րդ գործիք: Ավելացած արժեքի շղթայի արդյունավետության մոնիտորինգը:

Այս գործիքը ավելացած արժեքի շղթայի մասնակիցներին հնարավորություն է տալիս գնահատել իրականացվող գործողությունների արդյունավետությունը և բացահայտել դրանց կարևորությունը ավելացած արժեքի շղթայի արդյունավետության բարձրացման համար:

Ընտրված յուրաքանչյուր գործիքը ներկայացնում է ավելացած արժեքի շղթայի վրա հիմնված այն գործողությունները, որոնք կարող են մրցունակություն ապահովող գյուղատնտեսական արտադրության ապրանքային խումբ հանդիսանալ :

Առաջին թեմայի ուսումնասիրությունը ՀՀ արտահանման համեմատական առավելության օրինակով:

Առաջին թեման. Ռազմավարությունների և բիզնես պլանների նախագծում, տեղեկատվության ձեռքբերում և օգտագործում

1-ին գործիքը: Ավելացած արժեքի շղթաներում ընդգրկվելու համար առաջնահերթ ոլորտների ընտրություն:

Ղեկավարվելով Առաջին թեմայի առաջին գործիքի դրույթներով՝ ուսումնասիրել ենք ՀՀ-ի արտահանման ապրանքային խմբերը և բացահայտել ենք այն ապրանքային խմբերը, որոնք ունեն համեմատական առավելություններ ԱՊՀ շուկաներում: Այդ նպատակով կիրառել ենք համեմատական առավելության գնահատման տարբեր մեթոդներ և դրանց միջև ընտրել ենք Բալլասայի գնահատման ինդեքսը: Համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերը հնարավորություն են տալիս բացահայտել ավելացած արժեքի շղթաների ներդրմանն ուղղված ներդրումային հոսքերը, ներդրող կազմակերպությունները և նրանց կողմից ավելացած արժեքի նախընտրելի շղթաների բացահայտումը: Ուսումնասիրության այս փուլի արդյունքների հիման վրա բիզնեսները և ներքին ու օտարերկրյա ուղղակի ներդրողները հնարավորություն են ստանում որոշել ավելացած արժեքի այն շղթաները, որոնք նախընտրելի են և արդյունավետ են ներդրումների իրականացման առումով: Այսպիսով, ՀՀ-ում ներդրումներ կատարող կազմակերպությունները ներդրումներ կատարելու արդյունքում գնահատում են ներդրման շահութաբերությունը, հիմնավորում են իրենց մասնակցությունը միջազգային ավելացած արժեքի շղթաներում ինտեգրվելու գործընթացը և ընտրում են ՀՀ-ի

գյուղատնտեսության այն ոլորտները, որոնց արտադրած ապրանքային խմբերը ունեն համեմատական առավելություն:

Այս գործիքին վերաբերվող գործընթացը մեկնարկում է, բացահայտելով հնարավոր արժեք/ապրանքային խումբ հանդիսացող այն շղթաները, որոնք հանդիսանում են շուկայի վերլուծության արդյունք, գործառնական և ռազմավարական հնարավորությունների զարգացում: Դրանց ազդեցությունը գնահատվում է ինչպես գյուղատնտեսության համապատասխան ոլորտի վրա և, հետևաբար, ՀՀ-ի տնտեսության վրա, այնպես էլ համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբեր արտադրող գյուղատնտեսության ոլորտի մրցակցային հնարավորությունների բարձրացման վրա:

Այս գործիքի իրականացման արդյունքում բացահայտած համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերը սպառիչ ցանկով չեն ներկայացվում: Առաջին հերթին այս գործիքը հնարավորություն է տալիս բիզնեսներին իրականացնել համեմատական առավելություններ ունեցող և դրանցով պայմանավորված ավելացած արժեքի մատակարարման շղթաների ընտրության և ինտեգրման գործընթացի մեկնարկը, ինչպես նաև աջակցել բիզնեսներին ընդլայնել համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերի ապրանքների տեսականին:

Համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերի նախնական ցուցակ

Այս գործիքի իրագործման մեկնարկային փուլում կարևոր է բացահայտել այն ապրանքներ/շղթաները, որոնք մրցունակ են և հետևաբար եկամտի բարձրացման հիմք են ծառայում: Համեմատական առավելություններ ունեցող գյուղատնտեսական ապրանքային խմբերի բացահայտման համար այժմ հայտնի են տարբեր մոտեցումներ և աղբյուրներ: Դրանց թվին են պատկանում խորհրդատվությունները փորձագետների հետ և նախնական գնահատման գործընթացները: Ի լրումն գոյություն ունեցող գնահատման մեթոդներին, առանձնացնենք այն մեթոդները, որոնք հիմնված են քանակական գնահատականների վրա: Այժմ օգտագործվող մեթոդների թվին են պատկանում այն մեթոդները, որոնք հիմնված են համեմատական առավելության RCA_p ինդեքսի վրա[1]: ՀՀ-ի համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտել հետևյալ ապրանքային խմբերը:

[1] Այդ բանաձևը ունի հետևյալ տեսքը՝ (p) ապրանքային խմբի համար $RCA_p = (x_p/X_p)/(xt/X_t)$, որտեղ X_p ամբողջ արտահանումն է (p)-րդ ապրանքային խմբի, x_t երկրի ամբողջ արտահանումն է և X_t բոլոր ապրանքային խմբերի աշխարհի լրիվ արտահանումն է:

Աղյուսակ 1-ում տրված են այն ապրանքային խմբերը, որոնց վերաբերյալ 1996-2017թթ.միջև ընկած տարբեր տարիներին ՀՀ-ն ունեցել է համեմատական առավելություն

ՀՀ արտահանման համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտահանման գնահատում

Աղյուսակ 1-ում նշված է տվյալ սյունակի ամենամեծ ցուցանիշը և, հետևաբար, այս աղյուսակից երևում է, թե որ ապրանքային խմբերն են ունեցել համեմատական առավելություն:

Պետությունը նպատակ է հետապնդում ընդլայնել ներքին արտադրողների կողմից արտադրված ապրանքների արտահանման ծավալները՝ որոնելով նոր շուկաներ: Ուստի, արտահանվող ապրանքներ արտադրող կազմակերպությունների նկատմամբ կարելի է կիրառել տարբեր հարկման մեխանիզմներ՝ կամ վերահսկել արտահանումը:

Հնարավոր արդյունավետ եղանակներից մեկը ՕՈՒՆ-ների հոսքերի աճի ապահովումը և դրանց շնորհիվ վերամշակող արտադրությունների ստեղծումն է: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում ավելացած արժեքի մատակարարման շղթայի մեջ ընդգրկել ՀՀ-ի գյուղատնտեսական ապրանքային խմբեր արտադրող գյուղատնտեսական կազմակերպությունները և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արտադրությունները: Արդյունքում ստացվում է ավելացած արժեք գյուղատնտեսական ապրանքի արտահանումից և վերամշակված արտահանված ապրանքից:

Աղյուսակ 1

ՀՀ ապրանքային խմբերի համեմատական առավելության արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի (1) բանաձևի

Ապրանքային խումբ	Երկիր	1996-2017թթ.
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ երկրներ	2,237211314
Ձուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ երկրներ	2,400829867
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	2,156553213
Բանջարեղենի,պտուղների, ընկույզների և բույսեր հմասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	3,872694976
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	ԱՊՀ երկրներ	4,419840125

Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	2,156553213
Բանջարեղենի,պտուղների, ընկույզների և բույսեր իմասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	4,872694976
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	ԱՊՀ երկրներ	5,419840125

2-րդ գործիքը. Ավելացած արժեքի շղթայի ռազմավարության նախագծումը՝ հիմնված տեղեկատվության վրա: Գյուղատնտեսական ֆերման՝ ընտրված ռազմավարությամբ.

ա/ ընդգրկվում է ավելացած արժեքի մատակարարման շղթայի շուկայի մեջ:

բ/ բացահայտում է շուկայում մրցակցության վարքը;

դ/գնահատում և այնպես է տեղաբաշխում ռեսուրսները, որպեսզի իրականացնի արտադրողականության աճը, ապահովի մրցունակությունը շուկայում:

Ուղղահայաց ինտեգրված գյուղատնտեսական ֆերմաներում ռազմավարությունը և ավելացած արժեքի ռազմավարությունը նույնն են: Ինչ վերաբերվում է հորիզոնական կառուցվածք ունեցող ավելացած արժեքի շղթաներին, ապա այս դեպքում վաճառողները, գնորդները, մատակարարները և միջնորդները պետք է աշխատեն միասին, որպեսզի ավելացնեն իրենց արտադրողականությունը և մեծացնեն արտադրանքի արժեքը:

Ավելացած արժեքի մատակարարման շղթայի կարգավիճակի գնահատումը

Ավելացած արժեքի մատակարարման շղթայում շահույթների բաշխման և հոսքերի ուսումնասիրությունը կարևորվում, է քանի որ հնարավորություն է ստեղծվում հասկանալ առանձին սեգմենտների միջև կապերը, ինչպես նաև ավելացած արժեքի մատակարարման շղթայի /ԱԱՄՇ/ արտադրաղականության բարձրացման հնարավորությունները:

Աղյուսակ 2

ՀՀ համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտահանման և ներմուծման ծավալները

Ապրանքային խումբ	Արտահանում ԱՄՆ 1000 դոլար	Ներմուծում ԱՄՆ 1000 դոլար
	ԱՊՀ Այլ երկրներ	ԱՊՀ Այլ երկրներ
Կենդանի կենդանիներ	0.2 6485.4	1786.1 4880.4
Ձուկ և խեցգետնավորներ	18906.8 335.7	546.. 3782.9
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	26315.3 1955.9	1996.8 37391.0
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսեր իմասերի վերամշակումից մթերք	18073.3 1472.2	2682.5 6153.4
Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու,բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	15165.3 594.9	27916.6 19414
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	213926.6 27945.9	29675.3 36456.7
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	18173.8 6010.2	5148.4 11787.9
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	7930.3 229852.1	37709.1 41455.2

Ստրատեգիայի արդյունավետության գնահատում

Ավելացած արժեքի մատակարարման շղթայի արտադրողականության բարձրացումը կախված է շուկայի և արտադրվող ապրանքի ընտրությունից, արտադրվող ապրանքների տեսականու ընդլայնումից, արտադրանքի ծավալների աճից ու, հետևաբար, վաճառքի գների մակարդակից:

Գործառնական արտադրողականության գնահատում

Ավելացած արժեքի մատակարարման շղթայի արտադրողականության բարձրացման հաջորդ քայլը գործառնական արդյունավետության կարգավորումն է, կիրառելով ավելացած արժեքի մատակարարման շղթայի առանձին սեգմենտներում ծառայությունների արդի մեթոդներ: Այսպիսով, ավելացած արժեքի մատակարարման շղթայի արտադրողականության բարձրացման հաջորդ քայլերը հիմնված են հետևյալ գործընթացների վրա.

Մատակարարման շղթայի մենեջմենթի որակի գնահատում
Բիզնես միջավայրի գնահատում
Եզրակացություն

Ավելացած արժեքի գյուղատնտեսական ապրանքների մատակարարման շղթայի առաջարկված մշակման մոտեցումները համահունչ են ՀՀ և Համաշխարհային բանկի հետ իրականացվող համագործակցության ծրագրի դրույթների հետ[1], ինչպես նաև ՀՀ Գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը վերաբերվող ՀՀ Կառավարության ծրագրի դրույթների հետ[2]

Հետազոտությունում առաջարկվող մոտեցումները հնարավորություն են տալիս գործնականում ընտրել այն քայլերը, որոնց հիման վրա հնարավոր է ՀՀ-ում գործող գյուղատնտեսական կազմակերպությունների մասնակցությամբ մատակարարման շղթաներ ստեղծել: Առաջարկվող մոտեցումների ձևակերպման համար օգտագործել ենք գոյություն ունեցող մեթոդները, նվիրված միջազգային ավելացած արժեքի մատակարարման շղթաների մշակմանը: Բացահայտել ենք, որ ՀՀ–ի ՕՈՒՆ-ների հոսքերի արդյունավետության բարձրացումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ՝ հոսքերի մի մասը ուղղել անմիջապես դեպի գյուղատնտեսական ապրանքներ արտադրող ֆերմաներ, իսկ մյուս մասը օգտագործել վերամշակող արտադրություններ ստեղծելու համար: Այս դեպքում ավելացած արժեքը ձևավորվում է երկու մասերից. առաջինը ի հաշիվ գյուղատնտեսական ապրանքների, իսկ մյուսը՝ վերամշակող արտադրությունների հաշվին:

[1] Armenia and World Bank Group Renew Country Partnership Framework Focusing on Competitive, Export-led Economy, http://www.worldbank.org/en/news/press-release/2019/03/28/armenia-and-world-bank-group-renew-country-partnership-framework-focusing-on-competitive-export-led-economy

[2] ՀՀ Կառավարության ծրագիր https://168.am/2018/06/01/960676.html

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)[1]

ԷԴՎԱՐԴ ՍԱՆԴՈՅԱՆ
ՀՌՀ տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
edward.sandoyan@rau.am

ՄԱՐԻԱՄ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՌՀ էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
mariam.voskanyan@rau.am

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՌՀ էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,
ani.galstyan@rau.am

Մակրոտնտեսական կարգավորման ամենակարևոր ձեռքբերումը երկարաժամկետ կայուն տնտեսական աճն է: Սակայն հաճախ զարգացող երկրները նախապատվություն են տալիս կարճաժամկետ խնդիրներին՝ ի վնաս երկարաժամկետ արդյունքի, ինչն էլ, որպես կանոն, բացասաբար է անդրադառնում երկրում կենսամակարդակի և կյանքի որակի վրա: Ընդ որում, մակրոտնտեսական կարգավորման մեխանիզմները ենթադրում են տնտեսության զարգացման հենց երկարաժամկետ ռազմավարություն, այդ թվում նաև դրամավարկային քաղաքականության ոլորտում: Այս տեսանկյունից արժութային քաղաքականությունը կարևոր դեր է խաղում տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման հարցում: Տնտեսական աճի տեմպերի վրա արժութային քաղաքականության ազդեցության տեսանկյունից Հայաստանի օրինակը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Սույն հետազոտության հիմնական վարկածն այն է, որ Հայաստանում իրականացվող արժութային քաղաքականությունը բերել է տնտեսական աճի ներուժի զգալի բացասական հետևանքների:

Նպատակ ունենալով տնտեսությունում ֆինանսական կայունության ապահովումը և գնաճի նպատակադրումը ՀՀ Կենտրոնական բանկը տարիներ շարունակ կիրառել է և շարունակում է կիրառել բավականին խիստ գործիքներ ազգային արժույթի (դրամի) փոխարժեքի կայուն մակարդակի

[1] Исследование выполнено в Российско-Армянском университете за счет средств, выделенных в рамках субсидии МОН РФ на финансирование научно-исследовательской деятельности РАУ.

պահպանման համար: Սակայն նման քաղաքականության հետևանքը դարձավ առաջին հերթին Հայաստանի արտահանման ներուժի կրճատումը, այդ թվում նաև դեպի ԵԱՏՄ երկրներ, որտեղ, հաշվի առնելով տնտեսական ինտեգրման խորացումը, ի հայտ են եկել նոր զգալի հնարավորություններ, որոնք մինչ օրս չի հաջողվում օգտագործել: Մեր կարծիքով դեպի ԵԱՏՄ անդամ երկրների, հատկապես Ռուսաստանի շուկաներ հայկական ապրանքների արտահանման ընդլայնման հնարավորությունների սահմանափակման հիմնական պատճառն է Հայաստանի և Ռուսաստանի կենտրոնական բանկերի կողմից կիրառվող արժութային կարգավորման մոտեցումների ներդաշնակեցման բացակայությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սույն հետազոտության շրջանակներում դրվել է հետևյալ խնդիրը. բացահայտել տնտեսական աճի տեմպերի վրա արժութային քաղաքականության ազդեցության հիմնական ուղիները Հայաստանում՝ արժութային կարգավորման այն հիմնական գործոնների բացահայտման նպատակով, որոնք բացասական բնույթ են կրում երկրի տնտեսական զարգացման համար:

Արժութային քաղաքականության ազդեցության հիմնական ուղիները տնտեսական աճի վրա Հայաստանում

Դիտարկելով Հայաստանում տնտեսական աճի տեմպերը՝ կարելի է առանձնացնել երեք հիմնական փուլ, որոնցից երկուսը բնութագրվում են անկմամբ և միայն 2001-2008թթ.-ն են տարբերվում տնտեսական աճի բավականին բարձր տեմպերով (նկ.1): Սակայն 2008-2009թթ. ճգնաժամը զգալիորեն դանդաղեցրեց տնտեսական աճը Հայաստանում՝ առաջին հերթին երկրի համախառն արդյունքում արտաքին գործոնների գերիշխանության պատճառով: Ինչպես երևում է *նկ.1*-ից, 2017թ.-ի դրությամբ համախառն ներքին արդյունքի ծավալները դեռ չէին հասել 2008թ.-ի մակարդակին: Այսպիսով, պարզ է դառնում, որ նախորդ ժամանակահատվածում գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը չեն ուղեկցվել տնտեսությունում ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխություններով և, այդպիսով, չեն կրել որակական բնույթ, ինչն էլ իր հերթին չի ստեղծել պահուստային բազա տնտեսական աճի տեմպերի հետագա ապահովման համար:

Մյուս կողմից, այդ շրջանի տնտեսական աճը կարելի է համարել վերականգնողական, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում, ինչպես նաև Խորհրդային Միության մնացած բոլոր երկրներում, տեղի ունեցավ տնտեսության անկում և տնտեսական աճի տեմպերի զգալի կորուստ: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 1992թ.-ին տնտեսական անկումը կազմել է -41,8%.



Նկ. 1. Տնտեսական աճը Հայաստանում

Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բանկ *http://www.cba.am/*
***Նշում:** ՀՆԱ, մլրդ ԱՄՆ դոլարով ըստ հեղինակների հաշվարկների

Սակայն մեր հաշվարկները այլ թվեր են ցույց տալիս *(աղ.1)*

Նախևառաջ, տվյալ պարագայում աճը վերաբերում է ՀՆԱ-ին՝ դրամական արտահայտմամբ: Նկարի վրա ներկայացված է նաև ՀՆԱ-ի աճի տեմպերը դոլարային արտահայտմամբ: Ինչպես կարող ենք տեսնել, փոխարժեքի տատանողականության, ինչպես նաև դրամի փոխարժեքի նպատակադրման քաղաքականության հետևանքով տնտեսական աճը դրամային և դոլարային արտահայտմամբ ՀՆԱ-ների դեպքում չի համընկնում: Ավելին, օրինակ 2009թ.-ին տնտեսական անկումը դոլարային արտահայտությամբ կազմել է -25,4%, մինչդեռ դրամային արտահայտությամբ՝ -14,1%:

Մյուս կողմից, հենց ՀՆԱ-ի հաշվարկները կասկածի տեղիք են տալիս: Այսպես, ԽՍՀՄ վիճակագրությունը հաշվում էր ՀԱԵ-ը որպես տնտեսության ծավալների ցուցանիշ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ երկրի տնտեսությունն այն ժամանակ փակ էր, մենք կարող են 1991թ.-ի ՀԱԵ-ը հավասարեցնենք ներկայիս ՀՆԱ-ի հետ: Քանի որ 1991թ.-ին ռուբլու փոխարժեքը 58 կոպեկ էր մեկ դոլարի դիմաց, ապա հասարակ թվաբանությունը թույլ է տալիս հաշվել Հայաստանի և Ռուսաստանի ՀՆԱ-ն (ՀԱԵ) դոլարային արտահայտմամբ: Այսպիսով, 1991թ.-ին Հայաստանի ՀՆԱ-ն 9,31 մլրդ ԱՄՆ դոլար էր, իսկ Ռուսաստանինը՝ 915,02 մլրդ ԱՄՆ դոլար: Ստացված արդյունքները համեմատելով Համաշխարհային Բանկի վիճակագրության հետ՝ կարող ենք բացահայտել զգալի տարբերություններ:

Ընդ որում, հաշվի առնելով, որ 1991թ.-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կազմում էր Ռուսաստանի

տնտեսության ծավալների 1,14%-ը, կարելի է հաշվել ՀՆԱ-ի ծավալները այդ ժամանակահատվածի համար: Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանի ՀՆԱ-ն 1991թ.-ին գրեթե երեք անգամ ավելի մեծ է եղել, քան նշված է Համաշխարհային բանկի վիճակագրական բազայում:

Հարկավոր է նշել, որ վերջին տարիների ընթացքում ՀԲ-ը բազմիցս վերանայել է ցուցանիշները՝ ազգային վիճակագրական ծառայություն-ների կողմից իրականացվող ճշգրտումների հիման վրա: Սակայն, մեր կարծիքով, իրական տվյալները բոլորովին այլ պատկեր են ցույց տա-լիս: Հաշվի առնելով մեր հաշվարկները՝ կարելի է ասել, որ ՀՆԱ անկու-մը նշված ժամանակահատվածում կազմել է -78,5%, գրեթե երկու անգամ ավել, քան ներկայացված է ներկայիս վիճակագրական տվյալներում: Այսպիսով, մինչև 2006թ.-ը Հայաստանի տնտեսական աճը կարելի է համարել վերականգնողական:

Աղյուսակ 1

ՀՆԱ հաշվարկի մեթոդաբանություն Հայաստանի համար 1991թ.-ին

1991	ՀԱԵ* (մլրդ ռուբ)	RUB/ USD****	ՀԱԵ (ՀՆԱ) (մլրդ $)	ՀՆԱ** (մլրդ $)	ՀԱԵ (ՀՀ) /ՀԱԵ (ՌԴ)	ՀՆԱ*** (մլրդ $)
Հայաստան	16	0.58	9.31	2.07	1.14%	5.92
Ռուսաստան	1400	0.58	815.02	517.96	100%	517.96

Նշումներ՝

* ԽՍՀՄ պետական վիճակագրական կոմիտե, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ *http://armstat.am/file/article/national_accounts_1997.pdf*

** Համաշխարհային բանկի տվյալների բազա՝ *http://databank.worldbank.org,* ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ *www.armstat.am*

*** ՀՀ ՀՆԱ – ՌԴ ՀՆԱ-ի 1.14%

**** Ռուսաստանի Բանկի տվյալների բազա՝ *http://www.cbr.ru/currency_base/OldVal/*

Ձևավորված իրավիճակը չէր կարող իր արտացոլումը չգտնել երկրի կենսամակարդակի վրա: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակով Հայաստանը ներկայումս հետ է մնում միջին բարձր եկամտով երկրների խմբից *(նկ. 2)*: Ընդ որում, վերջին երեք տարիների ընթացքում երկրում չի դիտարկվում զգալի դրական փոփոխություն այդ ցուցանիշի տես-անկյունից:



Նկ 2. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ԱՄՆ դոլարով, Հայաստանում և աշխարհում
Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա՝ *http://databank.worldbank.org*

Այսպիսով, վերջին տասնամյակի ընթացքում մակրոտնտեսական կարգավորումը չի բերել զգալի դրական արդյունքներ՝ երկրում կենսամակարդակի, ինչպես նաև կյանքի որակի տեսանկյունից:

Հաշվի առնելով հենց արժութային կարգավորման կարևորությունը անցումային տնտեսություններում՝ սույն հետազոտության շրջանակներում շեշտը դրվել է տնտեսական աճի վրա արժութային քաղաքականության ազդեցության աստիճանի և ուղիների վրա:

Հայաստանի արժութային քաղաքականության հիմնական արդյունքները կարելի է տեսնել *նկ. 3*-ում: Գրեթե ամբողջ դիտարկված ժամանակահատվածը բնութագրվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի կայունությամբ, բացառությամբ 2003-2008թթ.-ի ընթացքում դրամի զգալիորեն արժևորման ժամանակահատվածի: Արժևորման ժամանակահատվածն առավել հետաքրքիր է, քանի որ այն պետք է ուղեկցվեր, իսկ

Նկ. 3. USD/AMD փոխարժեքի դինամիկան Հայաստանում, 1999-2017թթ., ամսական
Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական Բանկի տվյալների բանկ՝ *http://www.cba.am/*

ավելի ճիշտ՝ պայմանավորված լիներ տնտեսությունում և տնտեսական աճի ձևավորման մեջ զգալի կառուցվածքային և որակական փոփոխություններով, որոնք, ինչպես արդեն ասացինք, Հայաստանի տնտեսությունում նշված ժամանակահատվածում չեն դիտարկվել:

Դիտարկելով Հայաստանում տնտեսական աճի տեմպերը ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի արժևորման կամ արժեզրկման տեսանկյունից՝ կարելի է գալ բավականին ոչ միանշանակ եզրահանգումների *(նկ.4)*: Եթե դրամի արժեզրկման ժամանակահատվածում 2000-2003թթ. դիտարկվում է տնտեսական աճի բավականին կայուն տեմպեր, ապա հաջորդող հինգ տարիներին դրամի արժևորումը նույնպես ուղեկցվում էր երկնիշ տնտեսական աճով: Այնուհետև կարելի է նկատել, որ ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածը՝ 2009-2017թթ., երբ դրամի արժեզրկմանը հետևեց դրամի կայուն փոխարժեքը, բնութագրվում է տնտեսական աճի բավականին ցածր տեմպերով: Ընդհանուր առմամբ այս ամենը հաստատում է հայկական դրամի փոխարժեքի ձևավորման արհեստական բնույթի մասին վարկածը, ինչն ապացուցվել է մեր նախորդ հետազոտություններում[1]:



Նկ. 4. Հայաստանում տնտեսական աճի տեմպերը և AMD/USD փոխարժեքը, 1993-2017թթ.

Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա՝ *http://databank.worldbank.org*

[1] Տես մանրամասն. Սանդոյան Է. Մ., Ոսկանյան Մ. Հ., Գալստյան Ա. Հ. «Արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնների գնահատումը Հայաստանում»: «Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» գիտագործնական խորհրդաժողով / Եր.: Անտարես, 2018. 148 էջ, և Сандояна Э. М., Восканян М. А. «Валютное регулирование в Республике Армения: проблемы и перспективы развития». По материалам семинара на тему «Политика валютного регулирования в РА: проблемы и перспективы развития»: Российско-Армянский университет (19 октября 2016г.)/ Под редакцией Э. М. Сандояна, М. А. Восканян. – Ер.: Изд-во РАУ, 2017. – 44с.

Այս կապակցությամբ, Հայաստանում տնտեսական աճի վրա արժութային կարգավորման ազդեցության հիմնական գործոնների գնահատման նպատակով մեր կողմից դիտարկվել է ՀՆԱ կառուցվածքը՝ հաշվարկված օգտագործման եղանակով՝ դրա յուրաքանչյուր բաղադրիչի վրա հայկական դրամի փոխարժեքի տատանողականության ազդեցության տեսանկյունից:



Նկար 5. Հայաստանի ՀՆԱ դինամիկան (օգտագործման եղանակով), մլրդ USD, և AMD/USD փոխարժեքը

Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա՝ *http://databank.worldbank.org*

Օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի հիմքում առաջին հերթին ընկած են սպառողական ծախսերը: Վերջին տաս տարիների ընթացքում զգալիորեն ավելացել են պետական ծախսերը, որոնք այժմ ՀՆԱ կառուցվածքում զբաղեցնում են երկրորդ տեղը: Ընդ որում, զուտ արտահանում բնութագրվում է անընդհատ բացասական նշանով, իսկ կապիտալի համախառն կուտակումը կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի աննշան մասը:

Հաշվի առնելով վերը ներկայացված վերլուծությունը՝ հեղինակների կողմից կառուցվել է սիմուլյացիոն էկոնոմետրիկ մոդել: Նմուշային ժամանակահատվածն ընդգրկում է 2001-2017թթ. եռամսյակային տվյալները: Բոլոր փոփոխականները ստուգվել և մաքրվել են սեզոնայնությունից: Փոփոխականների ստացիոնարության մասին վարկածի ստուգման նպատակով հեղինակները կիրառել են Դիկի-Ֆուլերի ընդլայնված թեստը[1], որն ստուգում է փոփոխականներում միավոր արմատի առկայությունը: Միավոր արմատի թեստի օժանդակ ռեգրեսիան ունի հետևյալ տեսքը.

[1] Distribution of the Estimators for Autoregressive Time Series with a Unit Root Author(s): David A. Dickey and Wayne A. Fuller Աղբյուրը՝ Journal of the American Statistical Association, Vol. 74, No. 366 (Jun. 1979), pp. 427–431.

$$\Delta y_t = z_t{}'\delta + \rho y_{t-1} + \sum_{i=1}^{p} \beta_i \Delta y_{t-i} + v_t$$

որտեղ՝

z_t – ընտրովի էկզոգեն փոփոխականներ, որոնք կարող են բաղկացած լինել մշտական կամ մշտական և ժամանակային միտումներից;

$\delta, \rho, \beta_i (i = 1,2, \dots, p)$ – գնահատման ենթակա անհայտ պարամետրեր

v_t – սպիտակ աղմուկ

Զրոյական և այլընտրանքային վարկածները հետևյալն են՝ $H_0: \rho = 0, H_1: \rho < 0$.

Վերոնշյալ թեստի անցկացումից հետո պարզ դարձավ, որ փոփոխականները ստացիոնար չեն: Ժամանակային շարքերը ստացիոնար դարձնելու նպատակով հեղինակները կիրառել են առաջին տարբերությունների մեթոդը: Մոդելում ներառված բոլոր փոփոխականները և դրանց առաջին վիճակագրական մշակումը ներկայացված է *աղ. 2*-ում:

Աղյուսակ 2

Մոդելում ներառված փոփոխականների ցուցակ

	Տրանսֆորմացիա	**Սեզոնային ճշգրտում**
AMD/USD փոխարժեք	Δln	Այո
Արտահանում	Δln	Այո
Ներմուծում	Δln	Այո
Տրանսֆերտների ներհոսք	Δln	Այո
Մասնավոր սպառում	Δln	Այո

Տրանսֆորմացիայից հետո բոլոր փոփոխականները ենթարկվել են միավոր արմատի առկայության կրկնակի ստուգման՝ համոզվելու համար, որ շարքերը ստացիոնար են:

Մեր կողմից դիտարկվել է հայկական դրամի փոխարժեքի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա մասնավոր սպառման (C), արտահանման (Ex) և ներմուծման (Im) միջոցով: *Աղ. 3*-ը ցույց է տալիս մշակված մոդելի հավասարումները: Սույն հավասարումները կազմվել են՝ կիրառելով *աղ. 1*-ում ներկայացված փոփոխականները, իսկ պարամետրերը գնահատվել են փոքրագույն քառակուսիների մեթոդով կառուցված ARMA մոդելում: Հաշվարկներն իրականացվել են EViews 10 էկոնոմետրիկ ծրագրային փաթեթի միջոցով:

Աղյուսակ 3

Գնահատված ռեգրեսիաներն ու կիրառված հավասարումները

Գործոն	Ռեգրեսիա/հավասարում
Մասնավոր սպառում	C = 0.075T + 0.15Im + 0.015
Ներմուծում	Im (USD) = – 0.91NER + 0.03 Im (AMD) = Im (USD) * NER
Արտահանում	Ex (AMD) = EX (USD) * NER

Մեր կողմից մշակվել է երկու սցենար՝ հիմնվելով հայկական դրամի դինամիկայի երկու սցենարների վրա: Առաջին սցենարը կառուցվել է, ենթադրելով, որ հայկական դրամի փոխարժեքը շարժվում է ռուսական ռուբլու փոխարժեքի հետ ներդաշնակ: Երկրորդ սցենարի համար օգտագործվել են հեղինակների կողմից հրապարակված հոդվածում մշակված մոդելի արդյունքները, որտեղ մեր կողմից գնահատվել էին հայկական դրամի ձևավորման գործոնները VAR մոդելի միջոցով[1]: Գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ լողացող փոխարժեքն ավելի լավ է կլանում արտաքին ցնցումները Հայաստանում և կարող է կանխարգելել փոխարժեքի կտրուկ թռիչքները, և, հետևաբար, արժութային ճգնաժամերը: *Նկ. 6*-ը ցույց է տալիս հայկական դրամի փաստացի փոխարժեքը (NER), ինչպես նաև նկարագրված երկու սցենարների համար կիրառված փոխարժեքները՝ համապատասխանաբար NER_S1 և NER_S2:



Նկ. 6. Հայկական դրամի անվանական փոխարժեքի փաստացի և գնահատված արժեքները

Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բանկ՝ *http://www.cba.am/*, հեղինակների կողմից իրականացված հաշվարկներ

[1] Սանդոյան Է.Մ., Ոսկանյան Մ.Հ., Գալստյան Ա.Հ. «Արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնների գնահատումը Հայաստանում»: «Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» գիտագործնական խորհրդաժողով / Եր.: Անտարես, 20180 -148 էջ: Էջեր 146-147:

ՀՆԱ-ն երկու սցենարների դեպքում էլ հաշվարկվել է կիրառելով մակրոտնտեսագիտության մեջ հայտնի հավասարումը՝ GDP=C+I+G+Xn, որտեղ համախառն կուտակումը (I) և պետական ծախսերը (G) ընդունվել են որպես անփոփոխ պարամետրեր: *Նկ. 7*-ը ցույց է տալիս գնահատված ՀՆԱ-ն առաջին (GDP_S1) և երկրորդ (GDP_S2) սցենարների դեպքում:



Նկ 7. Հայաստանի ՀՆԱ-ի փաստացի և գնահատված արժեքները (մլն AMD)

Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բանկ՝ *http://www.cba.am/*, հեղինակների կողմից իրականացված հաշվարկներ

Ինչպես ակնհայտ է *նկ. 7*-ից, լողացող փոխարժեքի և Կենտրոնական Բանկի կողմից չմիջամտության քաղաքականությունը, ավելին, Ռուսաստանի Բանկի արժութային քաղաքականության հետ ներդաշնակեցված քաղաքականությունը կարող էին զգալիորեն խթանել տնտեսական աճը Հայաստանում:

Եզրահանգումներ

Էկոնոմետրիկ վերլուծության հիմնական արդյունքներն են.

1. Հայկական դրամի փոխարժեքի ուղղակի ազդեցություն Հայաստանի տնտեսական աճի վրա՝ իրականացված հետազոտությունը չի բացահայտել: Սակայն նման ազդեցություն դիտարկվում է ՀՆԱ կառուցվածքի հիմնական բաղադրիչների վրա:
2. Դիտարկելով օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի կառուցվածքը՝ կարելի է ասել, որ տնտեսական աճի վրա ամենամեծ ազդեցությունն ունեն մասնավոր սպառումը և զուտ արտահանումը: Ընդ որում, արժութային կարգավորումն ազդում է մասնավոր սպառման վրա օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների միջոցով: Պետական ծախսերը և համախառն կուտակումը չեն

ենթարկվում արժութային փոխարժեքի տատանողականության ազդեցությանը:

3. Արժութային փոխարժեքի ազդեցությունն արտահանման վրա կրում է ոչ միանշանակ բնույթ: Հակասական արդյունքներն առաջին հերթին պայմանավորված են արտահանման կառուցվածքով, որը տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել է փոփոխությունների, որոնք կապված չէին շուկայական գործոնների հետ:
4. Հայաստանի արժութային քաղաքականության ներդաշնակեցումը Ռուսաստանի Բանկի կողմից իրականացվող քաղաքականության հետ կբերի զգալի դրական արդյունքների՝ տնտեսական աճի տեսանկյունից:
5. Եվ, վերջապես, ցանկանում ենք նշել, որ ինչպես բազմիցս ապացուցվել է մեր հետազոտություններում[1], վերջին տաս տարիների ընթացքում իրականացվող արժութային կարգավորումը հանգեցրել է արտահանման ներուժի զգալի կրճատման, և, հետևաբար, տնտեսական աճի տեմպերի դանդաղման: Հայաստանի արժութային քաղաքականության ժամանակին ներդաշնակեցումը Ռուսաստանի քաղաքականության հետ կարող էր ուժեղացնել Հայաստանի օգուտները ԵԱՏՄ-ին անդամակցումից և կավելացներ Հայաստանի արտահանման ծավալները դեպի մաքսային միության ներքին շուկաներ:

Այսպիսով, ներկայումս անհրաժեշտ է իրականացնել արժութային կարգավորման մոտեցումների զգալի վերանայում Հայաստանում՝ առաջին հերթին երկարաժամկետում տնտեսական աճի կայուն տեմպերի խթանման նպատակով:

[1] Տե՛ս Сандоян Э.М. «Перспективы выбора альтернативных подходов к политике валютного регулирования в Армении» Международный научно-практический журнал “Вестник финансового университета”- Москва, Том 21, N 1, 2017

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀԱՍՄԻԿ ՄԻՍԱԿՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետի
մագիստրոս, վարկավորման մասնագետ

Այսօր աշխարհում ստվերային տնտեսության ծավալման նորանոր հնարավորություններ և մարտահրավերներ են ներկայացնում գլոբալիզացիան, միջազգային համագործակցության ակտիվացումը, տեխնոլոգիաների զարգացումը, որոնք արմատապես փոխում են թե՛ ստվերային տնտեսության բնույթը, թե՛ նրա մասշտաբները: Ստվերային տնտեսության վիճակն անմիջականորեն պայմանավորված է երկրում տիրող սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական իրավիճակից:

Այս համատեքստում կարևոր է «ստվերի» գործոնային ազդեցությունների, և նրա ծավալման պատճառահետևանքային դրսևորումների դիտարկումը:

Ստվերային տնտեսության պատճառային գործոնները

Ստվերային տնտեսությունը պայմանավորող գործոնները կարող են լինել համակարգային /օբյեկտիվ/ և սուբյեկտիվ: Համակարգային են համարվում այն գործոնները, որոնք ստեղծում են օբյեկտիվորեն նպաստավոր միջավայր՝ ստվերային տնտեսություն ծավալելու համար: Սուբյեկտիվ են համարվում այն գործոնները, որոնք կախված լինելով մեկ կամ սահմանափակ թվով անձանց կամքից՝ ուղղակիորեն շահադրդում են զբաղվելու ստվերային գործունեությամբ: Ստվերային տնտեսության օբյեկտիվ գործոնները հիմնականում ձևավորվում են տնտեսական, սոցիալական և իրավական հարթություններում */տե՛ս աղյուսակը/*:

Աղյուսակ 1

Ստվերային տնտեսության օբյեկտիվ գործոնները

Նախա-դրյալները	**Բնութագրիչները**
1.Իրավական գործոններ	-պետական կարգավորման անարդյունավետությունը և անկատար օրենսդրությունը -իրավապահ մարմինների ոչ լիակատար գործունեությունը, -ապօրինի և քրեական տնտեսական գործունեության ոլորտում տնտեսական հանցագործության դեմ պայքարելու մեխանիզմի անկատարությունը:
2.*Տնտեսական գործոններ*	-բարձր հարկերը -մասնավորեցման գործընթացի թերությունները -ֆինանսական ճգնաժամը և դրա բացասական ազդեցությունը ամբողջ տնտեսության վրա -չգրանցված տնտեսական կառույցների գործունեությունը և այլն:
3.*Սոցիալական գործոններ*	-բնակչության ցածր կենսամակարդակը, որը նպաստում է տարբեր տեսակի թաքնված տնտեսական գործունեությունների առաջացմանը, -գործազրկության բարձր մակարդակը և ցանկացած միջոցով եկամուտ ստանալու ցանկությունը, -համախառն ներքին արդյունքի անհավասարաչափ բաշխումը:

Աղբյուրը՝ Ա. Ս. Սարիբեկյան «Ստվերային տնտեսության տեսա-պրակտիկ դրսևորումները և խնդիրները. Հայաստանն այդ համատեքստում», Երևան, 2018

Նյութը չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ ուսումնասիրությունն ավելի շատ կենտրոնացվել է ստվերային տնտեսության ժամանակակից զարգացումներում առանցքային դեր ու նշանակություն ունեցող որոշ գործոնների դիտարկմանը՝ իրենց պատճառա-հետևանքային բավական հետաքրքիր դրսևորումներով:

Ակտիվ և պասիվ ստվերային տնտեսություն

Էլեկտրոնային եղանակով կատարվող գործարքները սահմանափակում են հաշվառվող մարմիններից դրամական հոսքերը թաքցնելու և հարկ վճարելուց խուսափելու հնարավորությունը՝ նպաստելով «ստվերի»

կրճատմանը: Մինչդեռ, կանխիկ դրամով գործարքները ստեղծում են ստվերային տնտեսության ծավալման անսպառ հնարավորություն: Դիտարկված երկու դեպքերում դրամական վճարումների և ստվերային տնտեսության միջև պատճառական կապերը տարբեր են: Մասնավորապես, մի դեպքում կանխիկ վճարումները նպաստում են ստվերային տնտեսության ընդլայնմանը՝ դառնալով ստվերային տնտեսության պատճառ (կամ պատճառներից մեկը), իսկ մյուս դեպքում՝ կանխիկ վճարումներն ընդամենը ստվերային տնտեսության գործունեության հետևանք են: Ըստ այդմ, ստվերային տնտեսությունը, որտեղ կանխիկ փողի շրջանառությունը դառնում է «ստվերի» պատճառ, դիտարկվում է որպես «պասիվ ստվերային տնտեսություն», քանի որ գործարքի մեկ կողմը՝ սպառողը, «պասիվ» է այն իմաստով, որ նա գործարքի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացնում և կարող է նույնիսկ չգիտակցել, որ նպաստում է կանխիկ վճարումների միջոցով ստվերային տնտեսության ընդլայնմանը: Ստվերային տնտեսությունը, որտեղ կանխիկ փողը հանդիսանում է հետևանք, սահմանվում է որպես «ակտիվ ստվերային տնտեսություն» *(տե՛ս գծապատկերը):*



Գծապատկեր 1. Ստվերային տնտեսության պատճառահետևանքային կապը ըստ կանխիկ փողի շրջանառության

Աղբյուրը՝ Reducing the Shadow Economy through Electronic Payments, 2016, pg 15

Ակտիվ և պասիվ ստվերային տնտեսության տարբերակիչ առաձնահատկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

Ակտիվ և պասիվ ստվերային տնտեսության բովանդակային առանձնահատկությունները

	Ակտիվ ստվերային տնտեսություն	Պասիվ ստվերային տնտեսություն
Բովանդակային բնութագրիչները	• Գործարքի երկու կողմերի միջև առկա է փոխհամաձայնություն • Կողմերից յուրաքանչյուրն ունի իր շահը՝ գործարքի վերաբերյալ տեղեկություն չհրապարակելուց	• Գործարքի միայն մեկ կողմն է շահագրգռված եկամուտը թաքցնելու մեջ, իսկ մյուս կողմը դրանից չունենալով շահ՝ ուղղակիորեն հետաքրքրված չէ լինել «ստվերում» • Սպառողական մանրածախ գործարքներից ստացված եկամուտների չվճարումը ձեռնարկվում է օրինական գործող կազմակերպությունների կողմից
«Ստվերի» պատճառը	• Գործարքի երկու կողմերի միջև առկա է համաձայնություն՝ օգտվելու հարկերի խուսափումից կամ ապօրինի արտադրանքի /ծառայությունների վաճառքից/մատուցումից:	• Գործարքի երկու կողմերի միջև առկա է կանխիկ վճարման համաձայնություն, հասկանալով, որ էլեկտրոնային վճարման դեպքում գործարքը չգրանցելու հնարավորությունը զգալիորեն կրճատվելու է:
«Ստվերը» վերահսկելու ձևերը	• Աշխատանքային ստուգումներ • Կանոնակարգի պահպանման հետ կապված վարչական բեռի կրճատում	• Էլեկտրոնային վճարումների խթանում
Հիմնական շահառուներ	• Գործարքի երկու կողմերը	• Գործարքի մի կողմը

Աղբյուրը՝ Reducing the Shadow Economy through Electronic Payments, 2016

Այս համատեքստում, կարելի է ասել, որ ստվերային տնտեսությունը ոչ օրինական տնտեսության այն հատվածն է, որտեղ կատարվող ցանկացած գործողությամբ կամ տնտեսական գործունեությամբ ստեղծված եկամուտ դուրս է մնում պաշտոնական մարմինների վերահսկողությունից և չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ: Այստեղ շատ

կարևոր է, թե ինչ մասնաբաժիններով է հանդես գալիս ստվերը ըստ ակտիվ և պասիվ բաղադրիչների: Այս առումով ուշագրավ են որոշ երկրներում ակտիվ և պասիվ «ստվերների» ծայրահեղ դրսևորումները */տե՛ս գծապատկերը/:*



Գծապատկեր 2. Ստվերային տնտեսության կառուցվածքը, 2014թ.
Աղբյուրը՝ Reducing the Shadow Economy through Electronic Payments, 2016, pg 28

Ինչպես երևում է բերված գծապատկերից, ընդհանուր ստվերային տնտեսության մեջ մեծ մասնաբաժին ունի պասիվ ստվերային տնտեսությունը, որտեղ կանխիկ փողն է ստվերի պատճառ: Ստացվում է, որ «կանխիկը» դեռ գերիշխում է աշխարհի շատ երկրներում: Այնուամենայնիվ, ժամանակակից տեխնոլոգիաների, մասնավորապես, ինտերնետի և հեռախոսային բանկային համակարգի, շփվող քարտերի և բջջային ծրագրերի օգտագործումը, ինչպես նաև առցանց գնումների զգալի աճը, արդեն իսկ հանգեցրել են «կանխիկ» գործարքների նվազեցմանը և «ստվերի» կրճատմանը: Շվեդիայում կանխիկ գործարքներն այսօր կազմում են բոլոր վճարումների մոտ 2%-ը: Մեծ Բրիտանիայում 2015-2016 թվականներին կանխիկ դրամով կատարված վճարումները նվազել են 15%-ով, իսկ Գերմանիայում և Ավստրիայում այդ փոփոխության տեմպը բավական դանդաղ է: «World cash 2018» զեկույցի[1] հաշվարկներով, դիտարկվող 24 երկրներից 75%-ում կատարված ընդհանուր գործարքների մեջ կանխիկով գործարքների մասնաբաժինը 50% է: Այսինքն, կանխիկ դրամը դեռևս առանցքային դեր է խաղում բոլոր երկրների տնտեսություններում: Եվ,

[1] G4S Cash Solutions, Payments Advisory Group, «World Cash Report 2018», pg 14/15

բնականաբար, որպես այդպիսին, կանխիկ դրամը շարունակում է օգտագործվել ստվերային տնտեսության և ապօրինի գործունեություն ծավալելու համար: Ստացվում է, որ շրջանառության մեջ եղած կանխիկ փողի առկայությունը պատճառ է հանդիսանում ստվերային տնտեսության նման չափերի հասնելու համար:

Որպես *ստվերային տնտեսության դեմ պայքարի ժամանակակից մոտեցում առանձնացվում է էլեկտրոնային վճարումների խթանման քաղաքականությունը:* Այս տեսանկյունից կարևոր է ստվերային տնտեսության որոշիչների ազդեցությունը, որը ներկայացված է ստորև աղյուսակով.

Աղյուսակ 3

Էլեկտրոնային վճարումների որոշիչների ազդեցությունը ստվերային տնտեսության վրա

Որոշիչ	**Որոշիչի ազդեցությունը ստվերային տնտեսության վրա**
Քարտային վճարումների ընդհանուր արժեքի հարաբերակցությունը ՀՆԱ-ին	Ֆիզիկական տերմինալներով քարտային վճարումների ընդհանուր արժեքի աճը ՀՆԱ-ի նկատմամբ 1%-ով, բերում է ստվերային տնտեսության նվազման, 0,037%-ով:
Հարկերի ու սոց. ապահովության վճարների հարաբերակցությունը ՀՆԱ-ին	Հարկերի ու սոց. ապահովության վճարների ընդհանուր արժեքի 1%-ով աճը ՀՆԱ-ի նկատմամբ, հանգեցրել է ստվերային տնտեսության աճի ՀՆԱ-ի 0.272%-ային կետով
Համաշխարհային բանկի օրենքի գերակայության ցուցանիշ (տատանվում է իրավունքի թույլ գերակայությունից՝ (-2,5) մինչև ուժեղ գերակայություն (+2.5))	Համաշխարհային բանկի օրենքի գերակայության ցուցանիշի աճը 1-ով, նվազեցնում է ստվերային տնտեսությունը ՀՆԱ-ի 1,583%-ով

Աղբյուրը՝ Reducing the Shadow Economy through Electronic Payments, 2016, pg 35

Այսինքն, քարտային վճարումներ/ՀՆԱ հարաբերակցության աճը նվազեցնում է ստվերային տնտեսությունը: Այս համատեքստում, 2010-2014թթ. որոշակի ընտրված երկրներում (Բոսնիա և Հերցեգովինա, Սերբիա, Բուլղարիա, Խորվաթիա, Սլովակիա, Սլովենիա, Լեհաստան,

Չեխիա) քարտային վճարումների աճող արժեքը միջին հաշվով հանգեցրել է ստվերային տնտեսության կրճատման՝ ՀՆԱ-ի 1,17 %-ով, օրենքի գերակայության ազդեցությունը կազմել է ՀՆԱ-ի ընդամենը 0,09-ը, մինչդեռ հարկերի ու սոց. վճարումների նկատելի փոփոխությունները բերել են ստվերային տնտեսության աճի՝ ՀՆԱ-ի 0,27%-ով[1]:

Ստվերային տնտեսությունը էլեկտրոնային վճարումների միջոցով նվազեցնելու գործիքակազմը հետևյալն է.

- աշխատավարձի և այլ վարձատրությունների էլեկտրոնային վճարում կատարելու պարտավորություն,
- աոցիալական ապահովության նպաստների էլեկտրոնային վճարում կատարելու պարտականություն,
- կանխիկ վճարումների շեմի սահմանում՝ մեկ գործարքի համար,
- հսկիչ դրամարկղերի տիրապետման և օգտագործման պարտավորություն,
- POS տերմինալների շահագործման պարտավորություն,
- հարկային խթաններ սպառողների համար, որպեսզի էլեկտրոնային վճարումները՝ կանխիկ վճարումների համեմատ ավելի գրավիչ դարձնեն
- հարկային խթաններ առևտրականների համար, որոնց դեպքում կնվազեցվեն առևտրային վճարների ընդունման ծախսերը, ինչն էլ կխթանի էլեկտրոնային վճարումների աճը և կկրճատի կանխիկ վճարումները:

Հարկային և սոցիալական ոլորտը

Սա ստվերային տնտեսության գոյության հիմնական պատճառներից մեկն է, ինչն աչքի է ընկնում իր տարաբնույթ ձևերով և մեխանիզմներով: Այստեղ ուշագրավ է վերջին շրջանում միջազգայնորեն լայն տարածում ստացած ԱԱՀ-ի խարդախության մեխանիզմը, ինչը հաճախ անվանում են նաև ԱԱՀ-ի «կարուսել»: Այն ԱԱՀ-ի վճարումից խուսափելու՝ տարբեր երկրներում բազմակի անձանց կողմից իրականացվող շղթայական վաճառքների/գործարքների (cross-border) խարդախության մեխանիզմ է, ինչն առանձնապես ակտիվ է ԱԱՀ-ից ազատման վերաբերյալ փոխադարձ պարտավորություն ունեցող երկրների շրջանակներում: Գնումները կատարվում են առանց ԱԱՀ վճարելու, ապա այն հավաքվում է՝ ԱԱՀ հետագա վճարման համար, սակայն հետո անհետանում է՝ առանց հարկի վերադարձի: Եվրամիության կանոնների համաձայն, նմանատիպ գործարքները բաժանվում են երկու տեսակի՝ ա) անհայտ կորած վաճառողի ներգրավվածությունը կոնկրետ տարածքում կատարվող գործարքի

[1] Տես Reducing the Shadow Economy through Electronic Payments, 2016, pg 35

խարդախության մեջ (MTIC), և բ) անհայտ կորած վաճառողի ներգրավվածությունը խարդախության մեջ՝ գործարքի տարածքից դուրս տարածքում (MTEC): Այստեղ շատ դժվար է ինչպես խարդախության, այնպես էլ՝ խարդախության մեջ ներգրավվածների վաղ բացահայտումը: Այս տեսակի խարդախությունները կարող են հանգեցնել շատ կարճ ժամանակահատվածում բարձր եկամուտների: Մասնավորապես, MTIC խարդախությունը Եվրոպայում գնահատվում է հարկային վարչարարության տարեկան ծախսերի շուրջ 60 մլրդ եվրոյով[1]:

Ստվերային տնտեսությունը պայմանավորող առանցքային գործոններից է *հարկային բեռը*, որը զուգակցվելով տվյալ երկրում տնտեսական աճի դանդաղ տեմպերին և բնակչության եկամուտների ցածր մակարդակին, առավել ընդգծված նշանակություն է ձեռք բերում՝ ինչպես ազդեցության «ուժի», այնպես էլ ազդեցության մասշտաբի առումով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ-ում վերջին մի քանի տարի առկա է հենց նման իրավիճակ: Հարկային եկամուտների կառուցվածքում շարունակում են մեծ տեսակարար կշիռ կազմել անուղղակի հարկերը */տե՛ս աղյուսակը/:*

Աղյուսակ 4

ՀՀ հարկային եկամուտները 2013-20177թթ. մլն. դրամ

	2013	2014	2015	2016	2017
Ընդհանուր հարկային եկամուտներ, այդ թվում՝	1101729,1	1178188,5	1201708,0	1205765,4	1276784,0
· ուղղակի հարկեր	647746,7 (58,8%)	687266,7 (58,4%)	728785,6 (60,6)	754932,3 (62,6)	787869,7 (61,7)
· անուղղակի հարկեր	453982,4 (41,2%)	490921,8 (41,6%)	472922,4 (39,4%)	450833,1 (37,4%)	488914,3 (38,3%)

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտե, «Տարեգիրք 2018թ.», էջ 387 *https://www.armstat.am/file/doc/99510818.pdf*

Հաշվի առնելով անուղղակի հարկերի առանձնահատկությունները, մասնավորապես, հարկային բեռը վերջնական սպառողին փոխանցելու հնարավորությունը, կարելի է փաստել, որ այն բնակչության կենսամակարդակի բարձրացման խոչընդոտներից է: Բնակչության ներկա կենսամակարդակի պայմաններում այն արդարացված չէ, ինչն էլ հանգեցնում է

[1] Տե՛ս Shining light on the shadow economy: opportunities and threats, OECD, 2017, pg 22

հարկերից խուսափման հնարավոր ուղիների փնտրտուքին՝ նպաստելով ստվերային տնտեսության ընդլայնմանը:

Հայաստանում հարկեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան ցույց է տալիս, որ միջազգային փորձի համեմատ, այս հարաբերակցությունը մեր հանրապետությունում՝ դեռևս բավական ցածր է: Սա նշանակում է, որ այն ունի հարկման որոշակի ներուժ, ինչը չի օգտագործվում և տեսականորեն կարող է լինել ստվերում:

Աղյուսակ 5

Չհավաքված եկամտի չափն ու բաժինը 2008-2015թթ. համախմբված բյուջեներում

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Չհավաքված եկամտի տեսակարար կշիռը հնարավոր բոլոր եկամուտներից	33,0	31,9	30,0	24,7	24,7	19,8	19,4	22,0
ՀՀ դրամ, մլրդ	394,0	332,8	344,5	298,0	219,5	272,8	284,3	338,6
ԱՄՆ դոլար, մլն	1288,0	915,9	921,9	799,9	795,2	666,0	683,6	708,5

Աղբյուրը՝ Микаелян Г., «Тенвая экономика в Армении», Ереван 2016 г., стр. 141-142

2008թ.-ին հարկման ենթակա պոտենցիալ եկամուտներից հավաքագրվել է 67%-ը, այսինքն, եկամուտները/գործունեության արդյունքները չհրապարակելու ու թաքցնելու պատճառով՝ 33%-ը չի մուտքագրվել բյուջե: Այս ցուցանիշը 2009թ.-ից սկսած անկում է գրանցել՝ 2014թ.-ին հասնելով 19,4%-ի, իսկ 2015թ.-ին ունեցել է 2,6%-ի աճ՝ հասնելով 22%-ի */տես գծապատկերը/:*



Գծապատկեր 3. Հարկային թերվճարումները և չհավաքագրված եկամուտները 2008-2015թթ.

Փաստորեն, չհավաքագրված եկամուտները դիտարկվող ժամանակահատվածի վերջում կազմել են 338,6 մլրդ դրամին համարժեք՝ 708,5 մլն դոլար:

Հարկ է նշել նաև, որ, ընդունելով հարկային բեռի ծանրության ազդեցությունը տնտեսության ստվերայնությունը մեծացնելու առումով, միաժամանակ պետք է ընդունել, որ չի կարելի հարկային բեռը խիստ կրճատելուց ակնկալել ստվերային տնտեսության ծավալների կտրուկ նվազում: Գործնականում, հարկային բարեփոխումներից կարելի է ավելի շատ ակնկալել ստվերային տնտեսության չափերի կայունացում, դրա ընդարձակվելու գործընթացի կասեցում կամ էլ (լավագույն դեպքում) որոշ չափով տնտեսության օրինական /պաշտոնական/ հատվածի ընդլայնում: Ուստի, հարկային բարեփոխումները պետք է զուգորդվեն ստվերային տնտեսության վրա ազդող մյուս գործոնների ազդեցության բարելավմամբ, որպեսզի զգացվի ստվերային տնտեսության ծավալների կրճատումը:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը և ինքնազբաղվածները

Ստվերային տնտեսության մեկ այլ դրսևորում է ոչ ֆորմալ զբաղվածությունը, որը պետության առաջ դրված կարևոր խնդիրներից է: Բնակչության զգալի մասը ներգրավված է Հայաստանում ոչ ֆորմալ աշխատանքային գործունեության մեջ: Բնակչության մոտավոր կեսը ազգային վիճակագրական ծառայությունում համարվում է ինքնազբաղված կամ ոչ ֆորմալ զբաղված (այս թիվը մի փոքր նվազել է 2009թ. 52,1%-ից մինչև 2017թ. 44,5%): Ոչ ֆորմալ զբաղվածությունը տարանջատվում է գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների, պայմանավորված այն փաստով, որ գյուղացիական տնտեսությունները պաշտոնապես համարվում են ինքնազբաղվածներ, ինչը պաշտոնական գրանցման և վերահսկման առումով բավական խնդրահարույց է: Խնդիրը ծանրակշիռ է նաև այն առումով, որ գյուղատնտեսական հատվածում ֆորմալ զբաղվածները ընդհանուր զբաղվածների շուրջ 50%-ն են: Գյուղատնտեսական ոլորտից դուրս ոչ ֆորմալ զբաղվածությունը տատանվում է 22/%-ից՝ 2008թ. մինչև 18%՝ 2017թ.-ին: Գյուղատնտեսական հատվածում նույնպես այն դրսևորում է նվազման միտում՝ 28,7%-ից՝ 2008թ. մինչև 26,2%՝ 2017 թվականին: Չնայած ֆորմալ տնտեսությունում տեղ գտած նվազման միտումներին, այն շարունակում է մնալ մտահոգիչ:

Աղյուսակ 6

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հատվածներում

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը	50,7	52,1	50,4	50,4	50,1	49,4	49,9	47,7	46,6	44,5
Գյուղատնտեսական հատված	28,7	32,1	32,7	32,7	30,8	29,8	27,9	29,8	28,5	26,2
Ոչ գյուղատնտեսա-կան հատված	22,0	20,0	17,7	17,7	19,3	19,6	22,0	17,9	18,1	18,3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԿ, «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2018թ.», էջ 112

Ոչ ֆորմալ զբաղվածությունը դրսևորվում է նաև պաշտոնապես գրանցված ձեռնարկություններում: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվարկներով՝ գրանցված ձեռնարկությունների 11 աշխատակիցներից մոտավորապես 1-ը ոչ ֆորմալ գրանցված է[1]: Իրականում, միշտ չէ, որ հնարավոր է գնահատել ոչ ֆորմալ զբաղվածությունը, քանի որ աշխատողները չեն կարող իմանալ ընկերության իրավական կարգավիճակը կամ նրա հետ պայմանագրի մանրամասները (եթե առկա են լինում): Կա ևս մեկ երևույթ՝ հարկերից խուսափելու նպատակով մասամբ հայտարարվող աշխատավարձը: Նման դեպքերում, որպես կանոն, աշխատողը պաշտոնապես ստանում է նվազագույն աշխատավարձ, իսկ փաստացի կանխիկ վճարումը կարող է գերազանցել մի քանի անգամ:

Ոչ ֆորմալ տնտեսությունը չի սահմանափակվում բացառապես աշխատաշուկայով: Այն կարող է ներառել առևտրի և ծառայությունների ոլորտը: Մասնավորապես, ինտերնետային շուկաները, ինչպիսիք են, օրինակ, list.am-ի գովազդային կայքը կամ Gind թերթը, որոնք հանդես են գալիս որպես ապրանքների և ծառայությունների առևտրի ոչ ֆորմալ շուկայի գործառնական տարածք: Նման կայքերում առաջարկվող ծառայությունները բազմազան են, այդ թվում՝ վերանորոգում, ուսուցում, միջնորդություն և այլն: Վերջապես, այդ ռեսուրսների միջոցով իրականացվում է անշարժ գույքի և մեքենաների առևտրի մեծ մասը:

Կատարված գործոնային ազդեցությունների և դրանց պատճառահետևանքային կապերի առավել ամբողջական և ամփոփ գնահատական

[1] Աղբյուրը՝ Микаелян Г., «Тенвая экономика в Армении», Ереван 2016 г., стр. 151

տալու նպատակով, դիտարկվել է կապը ստվերային տնտեսության և ոչ ֆորմալ զբաղվածության, զբաղվածության և գործազրկության միջև */տե՛ս աղյուսակը/*:

Աղյուսակ 7

Ստվերային տնտեսության, զբաղվածության, ոչ ֆորմալ զբաղվածության և գործազրկության մակարդակը 2008-2017թթ.

	Ստվերային տնտեսություն	Զբաղվածության մակարդակ	Ոչ ֆորմալ զբաղվածություն	Գործազրկության մակարդակ
2008	35,39	49,8	50,7	16,4
2009	41,04 ↑	48,1 ↓	52,1 ↑	18,7 ↑
2010	40,14 ↓	49,6 ↑	50,4 ↓	19,0 ↑
2011	38,46 ↓	51,4 ↑	50,4 ↓	18,4 ↓
2012	35,52 ↓	51,9 ↑	50,1 ↓	17,3 ↓
2013	34,56 ↓	53,2 ↑	49,4 ↓	16,2 ↓
2014	34,78 ↑	52,0 ↓	49,9 ↑	17,6 ↑
2015	35,96 ↑	50,9 ↓	47,7 ↓	18,5 ↑
2016	-	50,0 ↓	46,6 ↓	17,9 ↓
2017	-	50,0 ↓	44,5 ↓	17,8 ↓

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԿ, «Տարեգիրք 2012» էջ 51, «Տարեգիրք 2016», էջ 51, Leandro Medina, Friedrich Schneider, Shadow Economies around the World: New Results for 158 Countries over 1991-2015, 2017, pg 43

Ելնելով ցուցանիշների աճման և նվազման դինամիկայից, կարելի է ասել, որ ստվերային տնտեսությունը և ոչ ֆորմալ զբաղվածությունն ու գործազրկությունը ուղիղ համեմատական են, իսկ ստվերային տնտեսությունն ու զբաղվածության մակարդակը՝ հակադարձ համեմատական: Այստեղ հետաքրքրական է վերջիններիս մեջ եղած կախվածության բացահայտումը, մասնավորապես, թե ստվերային տնտեսության 1%-ի փոփոխությունը ինչպես կարող է անդրադառնալ զբաղվածության մակարդակի փոփոխության վրա */տե՛ս գծապատկերը/:*



Գծապատկեր 4. Ստվերային տնտեսության և զբաղվածության կապը

Ըստ կատարված ռեգրեսիոն վերլուծության, ստվերային տնտեսության 1 միավոր նվազման դեպքում տեղի կունենա 0,4979 զբաղվածության մակարդակի բարձրացում, իսկ, յուրաքանչյուր տարվա համար ստվերային տնտեսության ու զբաղվածության միջև կապը ցույց է տալիս, որ, օրինակ, 2010թ. ստվերային տնտեսության 1%-ի անկումը բերում է 1,66%-ի աճ՝ զբաղվածության մակարդակում: Կամ 2015թ.-ին ստվերային տնտեսության 1%-ի աճը բերում է զբաղվածության մակարդակի 0,93%-ի անկում և այլն:

Բավական հետաքրքիր է նաև ստվերային տնտեսության վրա գործոնային, այդ թվում, չհավաքագրված եկամուտների, ազդեցությունների գծապատկերը:



Գծապատկեր 5. Ստվերային տնտեսության գործոնային կապերը և փոխազդեցության միտումները

Ինչպես երևում է, 2008-2010թթ. ընկած ժամանակում ոչ ֆորմալ զբաղվածությունը գերազանցել է զբաղվածության մակարդակը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ ընթացքում աշխատաշուկայում գերակշռել են չգրանցված աշխատողները, 2010թ.-ի կեսերից դիրքային փոփոխություն է գրանցվել և զբաղվածության մակարդակը գերազանցել է ոչ ֆորմալ զբաղվածությանը, ինչն էլ իր հերթին նպաստել է գործազրկության մակարդակի կրճատմանը:

Ամփոփելով «ստվերի» գործոնային ազդեցությունների և նրա ծավալման պատճառա-հետևանքային դրսևորումների վերաբերյալ վերլուծությունը, կարելի է ասել, որ ստվերային տնտեսությունը Հայաստանում շարունակում է մնալ լրջագույն խնդիր՝ վտանգելով երկրի սոցիալ-տնտեսական բնականոն զարգացումը: Սա նշանակում է, որ «ստվերի» դեմ պայքարը պետք է լինի շարունակական գործընթաց և մշտապես դիտարկվի երկրում իրականացվող բարեփոխումների առաջնային գերակայություններից մեկը: Այստեղ կարևոր է, որ ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցառումներն, առաջին հերթին, ուղղվեն «ստվերածին» պատճառների կանխարգելմանն ու վերացմանը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
«Ամբերդ» հետազոտական կենտրոն,
ավագ փորձագետ-հետազոտող,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
samvelser@gmail.com

Քսանմեկերորդ դարին բնորոշ «համաշխարհայնացման» («գլոբալացման») պայմաններում որևէ երկրի ազգային տնտեսության բնականոն զարգացումը դժվար է պատկերացնել առանց միջազգային տնտեսական կյանքին ակտիվ մերձեցման: Վերջինս հատկապես կարևորվում է տնտեսության հեղափոխական զարգացման նկրտումներ ունեցող երկրների համար, քանի որ առանց գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների և կառավարման զարգացմանը հաղորդակից լինելու և ձեռքբերումներից օգտվելու, կտրուկ զարգացումը անհնարելի է:

ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական հեղափոխության գաղափարն իմ կողմից ընկալվում է որպես տնտեսության ներդրումային մթնոլորտի առարկայական բարելավման, նորամուծական տեխնոլոգիաների խրախուսման և համաշխարհային տնտեսության ինտեգրացիոն գործընթացներին խելամիտ մասնակցության շնորհիվ ազգային տնտեսության աննախադեպ տեմպերով զարգացման ապահովում: Խոստովանենք, որ դյուրին չէ այս մարտահրավերը, բայց միջազգային փորձը ցույց է տալիս, որ, անգամ դրան խոչնդոտող ներքին և արտաքին գործոնների պայմաններում, նաև անհնարին չէ: Այդպիսի լավագույն օրինակ տվել է Իսրայելը: Հայաստանը այս երկրի հետ համեմատած ունի որոշակի ընդհանուր առավելություններ և խանգարող գործոններ: Բավական է նշել, որ տարածքով շուրջ 27%-ով Հայաստանին զիջող Իսրայելն ունի ավելի քան 8.5 մլն բնակչություն: Այդուհանդերձ, 2018թ. տվյալներով երկրի ՀՆԱ-ն կազմել է 365 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով այդ ցուցանիշը գերազանցում է 40 հազ. դոլարը[1]: Թեմայի շրջանակներից դուրս է առավել մանրամասն անդրադառնալ Իսրայելի տնտեսության զարգացման հրաշքին, ուզում եմ շեշտադրել, որ այն ձեռք է բերվել

[1] https://knoema.ru/atlas/%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8C/%D0%92%D0%92%D0%9F

պետականության հռչակումից (14 մայիսի 1948թ.) մինչև օրս շարունակվող ռազմական հակամարտությունների, հաղորդակցության արտաքին ուղիների մասնակի շրջափակվածության և երկրի ներսում ազգամիջյան անհամաձայնությունների պայմաններում: Ուրեմն, ո՞րն է այս երկրի զարգացման բարձր տեմպերի մղիչ ուժը, որքանո՞վ է հնարավոր այն գործարկել մեր պայմաններում: Այս հարցադրման պատասխանը միանշանակ չէ, բայց աշխարհը միանշանակ ընդունում է, որ Իսրայելի զարգացմանը մեծ թափ են հաղորդում հետևյալ գործոնները՝

- գիտության և նորամուծական տեխնոլոգիաների զարգացման հանդեպ պետական հոգածությունը,
- հրեական սփյուռքի ֆինանսական աջակցությունը և ԱՄՆ-ի վարկային ու դրամաշնորհային մեծածավալ աջակցությունը (շուրջ 100 մլրդ դոլար),
- ագրարային ոլորտի բարձր մրցունակությունը և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների կիրառումը,
- առողջապահության ոլորտի զարգացման բարձր մակարդակը և աշխարհի մասշտաբով բժշկական ծառայությունների մատուցման եկամտաբեր շուկան,
- բարձր տեխնոլոգիաների արտահանման ծավալները և մրցունակությունը:

Այսպիսի հնարավորություններ և բացարձակ առավելություններ ունեցող երկրի հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերի զարգացումը միանգամայն շահեկան կարող է լինել: Սակայն երկու կողմն էլ որոշակի քաղաքական նկատառումներով ակնհայտ պասիվություն են դրսևորում: Թեև նկատելի է, որ վերջին երկու-երեք տարիներին որոշակիորեն ջերմացել են հայ-իսրայելական հարաբերությունները[1]: Առավել ևս հիմա, երբ տնտեսական հեղափոխության հենասյուներից մեկը նորամուծական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառությունն է, մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել Իսրայելի փորձը և փոխշահավետ պայմաններով ներդնել տնտեսության տարբեր ոլորտներում:

Այսօրվա իրականությունն այն է, որ տնտեսական ասպարեզում երկու երկրների համագործակցությունը դեռևս շատ թույլ է: Բավական է նշել, որ ապրանքաշրջանառությունը 2017թ. կազմել է շուրջ 9 մլն ԱՄՆ դոլար, որից հայկական ապրանքների արտահանումը՝ 3.7 մլն, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 300 հազ. դոլարով: 2015-2016թթ. տվյալներով Հայաստանում իսրայելական ներդրումները կազմել են ընդամենը 1.3 մլրդ դրամ[2]: Համեմատության համար նշենք, որ Ադրբեջանի և Իսրայելի ապրանքաշրջանառությունը ավելի քան 4 մլրդ դոլար է: Հայտնի է, որ

[1] Առավել մանրամասն տե՛ս https://www.mfa.am/hy/bilateral-relations/il
[2] http://finport.am/full_news.php?id=34672

Անդրկովկասում Ադրբեջանը իսրայելական զենքի ամենամեծ գնորդն է և նավթագազային վառելիքի հիմնական արտահանողը: Բացի դրանից, այս երկրների ռազմավարական շահերը համընկնում են մի շարք աշխարհաքաղաքական հարցերում: Իրավիճակն այլ է Հայաստանի պարագայում: Նախ, Իսրայելը Արցախի հարցում ակնհայտ ադրբեջանամետ դիրքորոշում ունի: Երկրորդ, ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեջանի, Հայաստանը որևէ էական դերակատարում չունի Մերձավոր Արևելքի սրված հակամարտությունների, հատկապես սիրիական ճգնաժամի թատերաբեմում: Երրորդ, Իսրայելի իշխող քաղաքական ուժերը չեն ճանաչում 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Իհարկե, խելամիտ ու փոխշահավետ տնտեսական համագործակցության համար վերոհիշյալ փաստարկները վճռորոշ նշանակություն չունեն, և անձնական շփումներով համոզվել եմ, որ հրեա գործարարները ակտիվ շահագրգռվածություն են ցուցաբերում Հայաստանի հետ գործարար կապերի զարգացման ուղղությամբ: Ավելին, բավականին օգտակար առաջարկություններ են եղել նաև Իսրայելի արտաքին գործերի և գյուղատնտեսության նախարարությունների կողմից: Դիցուք, 2002թ.-ին, երբ որպես ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ հրավիրված էի տասնօրյա ժամկետով մասնակցելու Իսրայելի ԱԳ նախարարության կրթական «ՄԱՇԱՎ» միջազգային հատուկ ծրագրի դասընթացներին, Իսրայելում Հայաստանի պատվո հյուպատոս Ցոլակ Մոմջյանի և «ՍԻՆԱԴԿՈ» ծրագրի ղեկավարության ջանքերով ոչ պաշտոնական հանդիպումներ ունեցա գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Այն ժամանակվա համար բավականին մատչելի գներով կաթիլային ոռոգման համակարգի ներդրման, հիբրիդային սերմերի տրամադրման, կարկտապաշտպան ցանցերի արտադրության և փակ համակարգով ձկնաբուծության զարգացման ներդրումային ծրագրեր էին առաջարկում: Ավելին, արտգործնախարարության «ՄԱՇԱՎ» ծրագրի ներկայացուցիչը առաջարկում էր դրամաշնորհային միջոցներով Հայաստանում գյուղատնտեսության խորհրդատվական կենտրոն ստեղծել: Այդ ծրագրերն իրականություն չդարձան հատկապես քաղաքական կամքի բացակայության պատճառով:

Իսրայելում իմ հաջորդ տասնօրյա ծրագիրը 2010թ.-ին էր: Գալիլե կառավարման միջազգային ինստիտուտի, կիբուց Միրզայի ուսումնական ավանում: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության պատվերով այս ինստիտուտի ղեկավարությունը պատրաստել էր բավականին համապարփակ ծրագիր և հաշվի էր առել գյուղատնտեսության կոնկրետ ոլորտներով ու տեխնոլոգիաներով Հայաստանի հետաքրքրությունները:

Ի պատիվ դասընթացների կազմակերպիչների պետք է նշեմ, որ այդ երկու այցելությունների ընթացքում նրանք կարողացան ոչ միայն տեսական, այլև գործնական առումով ինձ հաղորդակից դարձնել Իսրայելի գյուղատնտեսությանը՝ սկսած դաշտից ու այգուց, աշխարհահռչակ կաթնային ֆերմաներից ու ամենաարդիական ջերմոցային տնտեսություններից, մինչև ձկնաբուծական տնտեսություններ, ինովացիոն տեխնոլոգիաների նախագծման կենտրոններ, գյուղատնտեսական հումքի վերամշակման, փաթեթավորման արտադրամասեր, ագրոապահովագրության կենտրոնական գործակալություն, Թել-Ավիվի օդանավակայանի լոգիստիկ կենտրոն ու երեք տարին մեկ անգամ անցկացվող «Ագռիտեխ» միջազգային ցուցահանդես-գիտաժողով: Հատկանշանական է, որ այդ ուսումնական կենտրոններն ակտիվ կապ են պահպանում շրջանավարտների հետ և մինչև օրս էլեկտրոնային փոստով պարբերաբար տեղեկատվություն են առաքում:

Ի դեպ, ուսումնական կենտրոնների հետ համագործակցող գրեթե բոլոր կազմակերպությունները ոչ միայն ծանոթացնում են իրենց գործունեությանը, այլև յուրաքանչյուր այցելուի դիտարկում որպես պոտենցիալ գործընկեր և հետևողականորեն շեշտադրում առաջարկվող ապրանքների ու ծառայությունների, ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ՝ գնային ու երաշխիքային սպասարկման առավելությունները: Հատկապես օգտակար էր մասնակցությունը երեք տարին մեկ կազմակերպվող «Ագռիտեխ» միջազգային ցուցահանդես-գիտաժողովին, որը ներկայացված էր 26 բաժիններով և հնարավորություն էր ընձեռում՝

- ծանոթանալ գյուղատնտեսության ամենահրատապ հիմնախնդիրների նոր լուծումներին,
- ծանոթանալ գյուղատնտեսական և հետբերքահավաքային նորագույն տեխնիկային ու տեխնոլոգիաներին, հողապաշտպանական, ջրախնայողական և բերքի շուկայահանման առանձնահատուկ համակարգերին,
- ներկայացնել սեփական հնարավորությունները, պոտենցիալ գործընկերներ և գնորդներ գտնել:

Իմ անձնական տպավորությունների և տևական ուսումնասիրությունների համառոտ ամփոփումով փորձենք ներկայացնել ագրարային ոլորտում հայ-իսրայելական համագործակցության զարգացման հնարավորությունները:

Իսրայելի տնտեսությանը բնորոշ է տեխնոլոգիական բարձր մակարդակը, շուկայական տնտեսության պայմաններում՝ նաև էական պետական կարգավորումը: 2017թ. տվյալներով, Իսրայելի ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 373,75 մլրդ ԱՄՆ դոլար, որից 66,1%-ը բաժին է ընկնում

ծառայությունների, 31,4%-ը՝ արդյունաբերության և միայն 2,5%-ը գյուղատնտեսության ոլորտին: Ի դեպ, գյուղատնտեսության ոլորտում զբաղված է բնակչության 2%-ը, շուրջ 82%-ը զբաղված են ծառայությունների և 16%-ը արդյունաբերության ոլորտում: 2017թ-ին տնտեսական աճը կազմել է 4%, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 37292 ԱՄՆ դոլար[1]:

Իսրայելն այսպիսի զարգացում ունի շնորհիվ բնակչության կրթվածության բարձր մակարդակի, հրեաների հանրահայտ ձեռներեցության, դեպի ծով ելքի առկայության, ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ սերտ համագործակցության: Իհարկե, տնտեսական զարգացմանը որոշակիորեն խոչնդոտում են շուրջ 70 տարի շարունակվող հակամարտություններն արաբական երկրների և պաղեստինցիների հետ, խիստ սահմանափակ հողային (երկրի տարածքը 22 հազ. քկմ է, բնակչության խտությունը՝ 1 քկմ-ի հաշվով 395 մարդ) և ջրային ռեսուրսները:

Ըստ իս, հայ-իսրայելական ագրարային համագործակցության կիզակետում պետք է լինի տեղում Իսրայելի փորձի հետևողական ուսումնասիրությունն ու միջազգային կրթական ծրագրերին հայաստանցի գործարարների ու կառավարման համակարգի մասնագետների ակտիվ մասնակցությունը: Իմ հարցումները ցույց են տալիս, որ այդ ծրագրերին մասնակիցների թվով Հայաստանը զիջում է, ոչ միայն Ադրբեջանին ու Վրաստանին, այլև՝ Կենտրոնական Ասիայի երկրներին:

Կարծում եմ՝ ինտենսիվ այգիների նախագծման և հիմնադրման ծրագրերում պետք է փորձել ներգրավել իսրայելցի մասնագետներին, որոնք այս ասպարեզում ունեն մեծ փորձ ու հմտություն: Այդպիսի առաջին քայլը կատարվեց արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանի կողմից, երբ 2004թ. «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ-ն Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի Արևադաշտ համայնքի մոտ գնեց 2301 հա անմշակ հողատարածք ու հիմնադրեց առաջին 400 հա տարածությամբ խաղողի ինտենսիվ այգին: Անապատի յուրացման իսրայելական փորձով նախ մելիորացվեց Արևադաշտի կիսաանապատային ու քարքարոտ տարածքը: Ընկերության տարածքի ամենաբարձրադիր վայրում կառուցվեց 9 հազ. և 105 հազ. խմ ծավալով երկու ջրամբար, որոնք կարգավորում են ջրի մշտական մատակարարումը: Այնուհետև, նախնական ֆիլտրացումից հետո անհրաժեշտ ճնշման տակ ջուրը մղվում է այգու կաթիլային ոռոգման համակարգին: Այստեղ առկա են մի շարք տեխնոլոգիական նորամուծություններ, և այդ աշխատանքներն իրականացվել է իսրայելական կազմակերպության նախագծով:

[1] http://cyclowiki.org/wiki/%D0%AD%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BA%D0%B0_%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8F

Սակայն ինտենսիվ այգիների հիմնադրման իսրայելական տեխնոլոգիան կիրառելի է ոչ միայն զանգվածային, այլ նաև անապատացվող փոքր տարածքների համար: Այդպիսի ծրագիր մշակել և առաջարկել ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը: Ծրագրի համառոտ շարադրանքն անգամ թույլ կտա պատկերացում կազմել արդյունավետության մասին: Այսպես, ՀՀ-ի չոր մերձարևադարձային և ցամաքային կլիմա ունեցող տարածքների մոտ 12 հազ. հա հողերը ոռոգման ջրի անբավարարության և փոքր հումուսային շերտի պատճառով մնում են անօգտագործելի, իսկ կլիմայի փոփոխության պայմաններում դրանց գոտին գնալով ընդարձակվում է: Մինչդեռ անգամ անապատային պայմաններում կարելի է իրականացնել տեղային՝ միայն ծառի արմատների համար հասանելի շրջագծում, մելիորացիա և, կիրառելով կաթիլային ոռոգում, հիմնել ջերմասեր պտղատեսակների այգիներ: ՀՀ-ում այդպիսի տարածքներ առկա են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի և Սյունիքի մարզերում, որոնց օգտագործումը կարող է կլիմայի սոցիալական և բնապահպանական կարևոր նշանակություն ունենալ:

Կարևորագույն խնդիր է Իսրայելի ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրումը և ջրի կառավարման փորձի տեղայնացումը ՀՀ-ում: Բավական է նշել, որ Իսրայելը ոռոգման նպատակով ծախսում է Հայաստանից պակաս ջուր, սակայն արտադրում է 10-12 անգամ ավել բուսաբուծական արտադրանք: Գաղտնիքն այն է, որ ջրի օգտագործման արդյունավետությունը 95% է և մատուցվում է բացառապես փակ համակարգերով: Հայաստանում ոռոգման ջրի կորուստները ցույց է տրվում 80% և ջրային տնտեսության բոլոր կառույցները գործում են ավելի շատ ջուր վաճառելու շուկայական սկզբունքով: Դրան հակառակ, Իսրայելում ծայր աստիճան խնայողական է ջրի կառավարման համակարգը: Այստեղ ըստ ոլորտների քվոտավորվում է ջրամատակարարումը և, դիցուք, գյուղատնտեսության ոլորտում ըստ մշակաբույսերի սահմանված է ոռոգման ջրի թույլատրելի նորմաներ: Սահմանված չափաբաժնի գերազանցումը պետական մակարդակով խստագույնս հսկվում է, և ջուրը վաճառվում է ավելի բարձր գնով: Հետաքրքիր է, որ սկսած 170կմ երկարությամբ Մեծ իսրայելական ջրանցքից, մինչև մաքրված կոյուղաջրերն, աղազերծված ջրերը մեկ միասնական փոխկապակցված ցանց են կազմում և կարգավորվում են մեկ ընդհանուր վահանակից: Իսրայելը, ինչպես և Հայաստանը, որոշակի չափով օգտվում է նաև ստորգետնյա ջրերից: Սակայն, ի տարբերություն մեր շռայլության, որը հանգեցրեց մինչև վտանգավոր չափերի Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի մակարդակի իջեցման, Իսրայելում այդ մակարդակը պահպանելու համար ձմռան ամիսներին խորքային

հորերը ջուր են լցնում: Իսրայելի փորձը կիրառելի է հատկապես Հայաստանի գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներում: Այդպիսի ծրագիր նույնպես ներկայացրել ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և ՀՀ բնապահպանության նախարարության կլիմայի փոփոխության կենտրոնին: Համառոտ շարադրանքով ներկայացնենք այդ ծրագիրը ևս:

Հայաստանում ոռոգելի հողատարածքների ավելի քան 90%-ի վրա կիրառվում է մակերեսային ոռոգում, որի պատճառով ջրի կորուստները կազմում են 40-50%: Այդ կորուստները 1.5-2 անգամ ավելանում են գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում: Կլիմայի տաքացման միտումները մի կողմից պահանջում են 1 հա հաշվով ոռոգման ջրի ծավալի ավելացում և մյուս կողմից նվազեցնում են ջրի մակերեսային հոսքը: Ուստի, անհրաժեշտ է նախապատվությունը տալ ջրախնայողական տեխնոլոգիաներին և բարձրարդյունավետ մշակաբույսերին:

Նախալեռնային գոտու բարդ ռելիեֆային պայմաններում բավարար արդյունավետ կարող է լինել ոռոգման անձրևացման եղանակի ներդրումը: Սակայն այս եղանակի ներդրման համար լուրջ խոչընդոտ են հանդիսանում բարձր էներգածախսերը: Այս խոչընդոտը կարող է հաղթահարվել՝ կիրառելով միկրոանձրևացման «Գոլդեն սփրեյ» համակարգը: Վերջինս իրենից ներկայացնում է ճկուն խողովակ, որի վրա բացված անցքերի միջոցով կատարվում է հողատարածքի անձրևացում: Ջրաղբյուրից ջուրը վերցվում և անհրաժեշտ՝ 0.8-1.0 ճնշում է ապահովվում շարժական բենզինային միկրոշարժիչով պոմպի միջոցով: Խողովակի 1 մ-ի գինը 150 դրամ է: 1 հա-ի հաշվով կպահանջվի 100մ երկարությամբ 17 խողովակ (10000 մ.ք.: 600 մ.ք. = 16.7): Քանի որ դրանք կարելի է տեղից տեղ փոխադրել, ուրեմն առնվազն 4 անգամ կպակասի խողովակների պահանջը և կկազմի 16.7: 4 x 100մ x 150 դրամ=62.6 հազ. դրամ, բացի դրանից, անհրաժեշտ է 1 հատ բենզինային շարժական պոմպ մոտ 200000 դրամ արժեքով, որը սեզոնի ընթացքում կարող է սպասարկել 5 հա տարածք: Սարքավորումների ծախսը 1 հա-ի հաշվով կկազմի 62600+200000:5=112625 դրամ:

Կարծում եմ, որ ինչպես Իսրայելում, մեզանում նույնպես կհաջողվի գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում նոր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով կրճատել ոռոգման ջրի ծախսը և վարձավճարները, միաժամանակ ինտենսիվ երկրագործության վարման միջոցով գյուղացիական տնտեսություններում ապահովել բարձր եկամուտներ:

Ընդհանրապես, Իսրայելի կառավարությունը խրախուսում է գյուղատնտեսական արտադրանքների ինքնարժեքի իջեցումը և կարող է արգելել ցածր շահութաբերություն ապահովող մշակաբույսերի մշակությունը: Հայաստանի համար ջրախնայողության և ջրային տնտեսության արդյունավետ կառավարման հիմնախնդիրն արդեն օրհասական է, ուստի ուսանելի է Իսրայելի փորձը:

Բավականին արդյունավետ է նաև ագրոապահովագրության իսրայելական համակարգը: Այստեղ էական է պետական կարգավորումը, բայց ապահովագրավճարի հիմնական մասը բաժին է ընկնում արտադրողներին: Սա այն դեպքն է, որ ռիսկերի կանխարգելման ենթակառուցվածքների արդիականացումը խիստ կրճատում է ապահովագրական պատահարները և հնարավորություն է ընձեռում կազմակերպել հիրավի «խելացի գյուղատնտեսություն»: Ի դեպ, Իսրայելում գործում է ագրոապահովագրության մեկ կազմակերպություն՝ «Բնական ռիսկերի կառավարման հիմնադրամը» (KANAT), որի տեխնիկական հագեցվածությունը և մասնագետների բարձր որակավորումը թույլ է տալիս մշտական հսկողություն սահմանել երկրի ամբողջ տարածքում բնական ռիսկերի գրանցման նկատմամբ և օպերատիվ գնահատել դրանց հետևանքները: Շուրջ կես-դարյա պատմություն ունեցող այս հիմնադրամի տնօրեն Դավիթ Գինզբուրգը բնավ չհամաձայնեց ինձ հետ, որ Հայաստանում մեծ թվով փոքր գյուղացիական տնտեսությունների առկայությունը լուրջ դժվարություն է ստեղծում ագրոապահովագրության ներդրման համար: Նրա կարծիքով տեխնիկական առաջընթացը, հատկապես համակարգչային ծրագրերի և անօդաչու թռչող սարքերի կիրառությունը, առավել ևս արբանյակային նկարահանումները և այդ լուսանկարների ավտոմատացված մշակումը հնարավորություն է ստեղծում հսկողություն սահմանել ցանկացած թվով և չափերի տնտեսությունների ցանքատարածությունների վիճակին, ինչպես նաև գնահատել բնական ռիսկերի բացասական ազդեցությունը: Ի դեպ, Իսրայելը այն հազվադեպ երկրներից է, որտեղ գյուղատնտեսության ապահովագրությունը պարտադիր է, և երկրի ամբողջ տարածքում մշակվող բոլոր մշակաբույսերը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիները, ապահովագրվում են:

Ընդօրինակելի է իսրայելական «գիտություն-արտադրություն» համագործակցությունը: Սկսած սովորական դաշտից, այգուց, ջերմոցից, մինչև գերժամանակակից կաթնային ֆերման ու անապատում կառուցված նորամուծական ձկնաբուծարանները, հիրավի՝ գիտելիքահենք արտադրություն են: Իհարկե, դեռևս Հայաստանը չունի գիտության վրա ներդրումներ կատարելու Իսրայելի հնարավորությունները (ՀՆԱ-ի 4-5%), բայց

միանգամայն կիրառելի են աութսորսինգի և խորհրդատվական համակարգերը, որոնք կարող են նորամուծական տեխնոլոգիաների ներդրմանը նպաստել համեմատաբար քիչ ծախսումներով:

Ագրարային ոլորտում հայ-իսրայելական համագործակցության հնարավորությունները մեծ են, ուստի դրանք կյանքի կոչելու համար պահանջվում է քաղաքական կամք, համակարգված մոտեցում և նպատակային ներդրումներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների
միության նախագահ

Մեկ տարվա արմատական փոփոխություններից, հեղափոխական շրջադարձերից հետո հասել ենք մի հանգրվանի, երբ պետք է շարունակենք այդ փոփոխությունները, որպեսզի դրանք դառնան մնայուն: Իրապես, անհրաժեշտաբար, պետք է քաղաքական հեղափոխությունը շարունակվի տնտեսական հեղափոխությամբ: Եթե քաղաքական հեղափոխությունը շատ արագ, նույնիսկ մեկ օրում հնարավոր է ընտրությունով, իշխանության փոփոխությամբ ամրագրել և ասել՝ ահա, այսինչ ամսվա այսինչ օրը քաղաքական հեղափոխության սկիզբն է, և շատ արագ նաև կառուցվածքային և օրենսդրական փոփոխություններ անել, արդյոք կունենանք հեղափոխական նոր մթնոլորտ, նույնիսկ երբ արդեն չկա քաղաքական մենաշնորհ, քաղաքական հետապնդում, չկա համակարգային կոռուպցիա, երբ ամբողջ քաղաքական, իրավական համակարգը շարունակական փոփոխությունների ընթացքի մեջ է... Խնդիրը միայն դրանում չէ: Տնտեսական հեղափոխությունը երկարաժամկետ ընթացք է, տևական է, որովհետև պետք է փոխել առաջին հերթին տնտեսական հարաբերությունների սուբյեկտների աշխարհայացքը, մոտեցումները, պետք է փոխել տնտեսական օրենսդրությունը, ոչ միայն հարկային օրենսգիրքը, որը մեկ տարի է սպասված է և շուտով որոշակի խմբագրումներով կընդունվի, այլ տնտեսական ողջ դաշտը կարգավորող օրենսդրությունը, և սրա համար ժամանակ է պետք:

Ինչ անել այս կարճ ժամանակամիջոցում... Ամենահիմնարար մի քանի անելիքներից ամենակարևորը՝ պետք է պահպանել առկա մթնոլորտը, որը մենք վերջապես ձեռք ենք բերել: Ինչ ունենք արդեն: Առաջինը կնշեի հավասար մրցակցային դաշտը, հեղափոխության այսօրվա ձեռքբերումներից մեկը, որը շարունակաբար պետք է պահպանվի, որովհետև դա գործարարների ինքնաստեղծագործումն է, բիզնես ծրագրերի մշակումը, բիզնեսի ակտիվությունը, ինչը ինքնաբերաբար բիզնեսի զարգացում կբերի: Պատահական չէ, որ կառավարությունը դեռևս չի կարողացել շատ կոնկրետ բաներ անել, որովհետև տնտեսական միջավայրը բարելավելը ժամանակ է պահանջում, բայց մենք տնտեսական աճ ունենք: Թեպետ որոշները փորձում են կասկածել այդ թվերի թվաբանության վրա,

բայց, երբ ուսումնասիրում ու դիտարկում ես տնտեսության իրական մասնակիցներին, երբ մոնիթորինգ ես անում, այո, իրական տնտեսական աճ ունենք թե՛ ներկրումների, թե՛ սպասարկման ոլորտներում, թե՛ արտադրական տարբեր ճյուղերում: Միշտ եղել է կասկած պետական վիճակագրական ծառայության թվերի վրա, բայց ներկա և նախորդ իրավիճակները տարբեր են, չմոռանանք, որ երկիրը դեռևս հեղափոխական գործընթացների մեջ է, ունենք նաև հսկայական թվով ընդդիմախոսներ, որոնք ամեն կերպ փորձում են թերություններ հայտնաբերել, պարզապես, գործարար միջավայրում ակտիվությունն առկա է, ուստի, թվերը վստահություն են ներշնչում: Գործարարները մշտապես բարձրացրել են խնդիրներ, որոնք շարունակ խանգարել են այդ միջավայրի լիարժեք գործունեությանը: Պետք է ասել, որ դրանցից շատերին լուծումներ են տրվել, և անմիջապես արդյունքն ակնհայտ է եղել: Սակայն մի շարք լրջագույն խնդիրներ այդպես էլ շարունակում էին որպես հիմնական խոչընդոտներ մնալ, և, ահա, արդեն որպես տնտեսական հեղափոխություն, հաստատապես արձանագրում ենք, որ տնտեսական հավասար մրցակցային դաշտը վերջապես մենք արդեն ունենք, և,պետք է բոլորս ձգտենք, և, առաջին հերթին՝ պետությունը պետք է կարողանա ապահովել, որ այն անդառնալիորեն հաստատվի մեր իրականության մեջ: Մենք այլևս չպետք է ունենանք մենաշնորհային արտոնյալ դիրք ունեցող որևէ տնտեսություն, որևէ ճյուղ: Սա հիմնարար նշանակության անհրաժեշտություն է:

Երկրորդը, տնտեսական հարաբերությունները ինչպես անել-ի լուծումների մեջ գտնելու մեր ջանքերում անպայմանորեն անհրաժեշտ է գույքագրել մեր այսօրվա ներուժը և հասկանալ, թե իրապես տնտեսության կառուցվածքը փոխելու ինչ ծրագրեր պետք է մշակենք, որպեսզի ունենանք այնպիսի որակական աճ, որն ազդի կենսամակարդակի վրա: Դրա համար ես հեղափոխական եմ համարում նաև մտքերի այն բախումը, որ այսօր հասարակության մեջ կա՝ նույնիսկ հաճախ տարբեր բևեռումներ ունեցող: Իսկապես, պետք է հստակ կողմնորոշվել՝ ո՞ւր պետք է գնա Հայաստանը՝ հանքարդյունաբերությունը պետք է պահպանե՞նք, թե ամբողջովին պետք է ուժը դնենք, ասենք, գյուղատնտեսության, վերամշակման ոլորտների վրա՝ անմշակ հողերն օգտագործելով, թե բարձր ինքնարժեք պարունակող ինտելեկտուալ ներուժով ոլորտները զարգացնենք: Այստեղ է, որ տնտեսական հեղափոխության այս փուլում՝ Ինչ անելու մեջ գիտական, հասարակական միտքը և պետությունը պետք է քննարկեն և մշակեն ռազմավարական զարգացման ծրագրեր: Տարեկան ծրագրերը հասկանալի են, գերակա ուղղությունները հստակեցված են, բայց հինգ, վեց, տասը տարվա հիմնարար ծրագրեր են պետք, որոնք համատեղ

քննարկման և մշակման և քայլ առ քայլ դրանք առաջ տանելով՝ զարգացում ապահովելու կարիքն ունեն: Երրորդ կարևոր խնդիրը Ինչ անել-ում գործարարների, անհատ մարդկանց, անհատ ձեռներեցների աշխարհայացքի փոփոխությունն է, շատ է պետք, որ մարդիկ, տեսնելով բիզնեսի տարբեր ոլորտներում ձեռքբերումները, դրական արդյունքները, վերջապես հավատան, որ իրենց աշխատանքով ամեն ինչ կարող են անել, որ կկարողանան հասնել հաջողությունների, որովհետև պետությունն իրենց տալիս է հավասար պայմաններ, փորձում է ապահովել օրինականությունը և օրենքի ճիշտ կիրարկումը, ներքին և արտաքին շուկաներում ձգտում է հաստատել ազատ մուտքերի հնարավորությունը,որը մրցակցության շարունակությունն է, մնում է, որ մենք պարզապես աշխատենք: Ահա այստեղ է, որ պետք է աշխարհայացք փոխվի: Մեզնից շատերի մոտ դեռևս բոլշևիկ պապի թոռների մտածողության մնացուկ կա, պատահական չէ, որ շատերը դեռևս խոսում են, թե պետությունը պետք է մեծացնի իր մասնակցային բաժինը, որոշ ոլորտներ ազգայնացնի, սա բոլշևիզմ է: Պետք չէ պետությունից ավելի շատ պահանջել, քան սեփական կարողությունները գործի դնելը, սա էլ նեոբոլշևիզմ է:

Մեր գերխնդիրներից մեկը այսօրվա հայ գործարարի աշխարհայացքի փոփոխությունն է, և՝ անհնարինն անելու, մրցակցության մեջ մտնելու համար պայմաններ ապահովելը: Այո, այդտեղ բոլորը չէ, որ հաջողություն կունենան, անպայման ուժեղներն առաջ կգնան, մյուսները ստիպված կլինեն հրաժարվել կամ վարձու աշխատողներ կդառնան, բայց այս ներուժն արդեն ակնհայտ է, աճը երևում է, այս ազատությունը, որ տրված է, ստեղծագործություն է,ստեղծարարության հնարավորություն: Ազատություն ունեցել ենք նաև իննսունականներին, ավելի բարդ ժամանակաշրջանում, տոտալիտար հասարակարգից էինք անցում կատարում շուկայականի, և բավական լուրջ հաջողություններ ունեցանք, որոնք հետագայում զարգացնել չհաջողվեց: Այսօր նույն վիճակում ենք, բայց արդեն ձեռք բերվածի հիման վրա ենք աշխատանքը շարունակելու: Ինչ որ տեղ վարչապետի հետ համաձայն եմ, որ թիրախավորում է մարդ անհատին, մարդն ինքն իր մեջ պիտի հավատա իր ուժերին, ազատ մտածի, ազատ ստեղծագործի և աշխատի, մրցակցի: Հայերն ինչու են դրսում արագ հաջողության հասնում, այնտեղ մենք ընչազուրկ համերկրացի չունենք, արագ կողմնորոշվում են և գտնում իրենց վաստակի աղբյուրը: Խնդիրը, թերևս, խանգարող հանգամանքների բացակայության մեջ է: Ես արդեն նկատում եմ, նոր գործարարներ են հայտնվել, փորձում են գերհագեցած շուկայում իրենց տեղը գտնել, որովհետև արտոնյալների խավ չկա,և, պետությունը նրա աջակիցը դառնալ է ջանում: Պետք է հասկանալ, որ խնդիրը գերակա

դիրք ունեցողներին վերացնելը չէ, այլ նրանց առողջ մրցակցային դաշտ բերելը, կարագ, միս, բանան և այլն ներկրելու «արտոնյալներ» չպիտի լինեն, և, ահա, նկատում եմ, որ շուկան եռ է գալիս, ակտիվ աճում է: Մեր բիզնես գրասենյակում մի սփուռքահայ էր եկել, բեռ էր բերել, ասաց՝ դրախտ երկիր ունենալու մասին լուր չունեինք… Մենք պետք է նկատենք ձեռքբերումները, այդ դրախտ երկրի մասին հայ մարդը պիտի լուր ունենա, օրենսդրություն է փոխվում, օրենքի կիրառումն է գերակա դառնում, դատական համակարգի վերափոխում, պետության կառուցվածքի օպտիմալացում է տեղի ունենում, և բիզնեսն ինքն է իր աշխույժ գործունեությամբ, տանել բերելով, մրցակցելով, ցույց տալու, թե որ ոլորտում ունենք զարգացման հնարավորություններ:

Տնտեսական հեղափոխության առաջնահերթ խնդիրներից են արագ փոփոխությունները, մենք համաձայն ենք հարկային փոփոխությունների ընդունմանը, թեպետ այն դեռևս մշակման մեջ է, սակայն այն, ինչ կա, պետք է արագ ընդունել, հետո շարունակել մշակման գործը, որովհետև անորոշությունն ու սպասումները շահարկումների ալիք են բարձրացնում, այն աստիճանի, որ աղմկում են, թե համահարթեցում է տեղի ունենում՝ առանց հասկանալու, թե իրականում դա ինչ է նշանակում: Մինչև 2014 թիվը եկամտահարկը ամրագրված 20 տոկոս էր: Տիգրան Սարգսյանի կառավարության ժամանակ առաջին անգամ մտցվեց պրոգրեսիվ հարկման քաղաքականություն, և Հայաստանի լճացած պայմանների առաջին սոցիալական բողոքը եղել է դրա դեմ, երբ SS ոլորտի բարձր աշխատավարձ ստացող 500-600 ինժեներները դուրս եկան ցույցի, որովհետև դրանով առաջին հերթին իրենց աշխատավարձին էին խփում և այն որպես այդպիսին՝ արժեզրկում: Եվ այդ օրվանից մենք ընկանք խնդիրների մեջ, թե ինչ անենք,ինչ տոկոսադրույք սահմանենք, հետո հաջորդեցին բնապահպանական բողոքները, որովհետև երիտասարդ սերունդը հասկացավ, որ բողոքելով կարող է իր իրավունքները պաշտպանել: Հիմա կառավարությունը բերում է համահարթեցված 23 տոկոսը, ապագայում դա 20 տոկոս կդառնա: Պետք է հասկանալ, որ սեփականատերերը աշխատավարձով չեն հարուստ, նրանք փայաբաժիններով են հարուստ, և, նոր օրենսդրությամբ, դրանք այս տարվա հունվարից արդեն հինգ տոկոս հարկվում են: Բողոքելով նոր առաջարկի դեմ, փաստորեն, շարքային բարձր աշխատավարձով աշխատողներին են հարվածում, նրանց, ովքեր իրենց բարձրակարգ աշխատանքով համակարգեր են պահում՝ բանկային, SS ոլորտներում ներգրավված բարձրակարգ մասնագետներին, հաջող մենեջերներին, ովքեր ոլորտների հաջողություններն են առաջ մղում, նրանց դեմ եք պայքարում: Բարձրակարգ կադրային ռեսուրսը երկրում

ամրացնելու, ինչպես նաև երկիր բերելու կարևոր գործոն է նրանց կատարած աշխատանքի արժանվույն վարձատրությունը: Նրանց թիվն ավելացնելու խնդիրն ունենք, մինչդեռ հարվածում ենք այն հատվածին, ինչը լուրջ ձեռքբերում է պետության համար: Անվիճելի ճշմարտություն է, որ բարձրակարգ կադրային ռեսուրսը լուրջ հարստություն է երկրի համար, այն արժևորել է պետք՝ արժևորելով նրա ներդրումը երկրի զարգացման գործում: Ստիպված եղանք գործարարների և ՏՏ ոլորտի միություններով համատեղ հայտարարություն անել այս աղմուկի վերաբերյալ, որին զարմանալիորեն միացել էին նույնիսկ որոշ տնտեսագետներ: Նման անհիմն աղմուկներն անընդունելի են: Այլ բան է, որ, օրինակ, հարց բարձրացնեին, թե ինչու հարուստների գույքահարկը չեն բարձրացնում, լիովին ընդունելի հարցադրում, որովհետև իսկապես գույքահարկը չնչին տոկոսներ են, պետք է բարձրացվի, ինչը հեռահար ազդեցությամբ նաև կնպաստի չօգտագործվող գույքի, նաև չմշակվող հողերի, անտերության մատնված արոտավայրերի կամավոր-ստիպողական ակտիվացմանը: Հեղափոխությունը նաև այստեղ է պետք՝ ԻՆՉ անել-ի մտածողության մեջ: Պետությունը կարող է ինչ որ բան անել, եթե տնտեսապես հզոր է, տնտեսապես հզոր կարող է լինել, եթե հարկերի հավաքագրում է իրականացնում: Եկամտահարկի համատարած հայտարարագրմանն է վերաբերելու հաջորդ քայլը, մեր ծախսերը և եկամուտները պետք է համարժեք լինեն, վերջապես պետք է այս երկդեմ հռոմեական աստված Յանուսի վիճակը հաղթահարվի, դեռ խորհրդային տարիներից դա կեղծվել է, պետք է համատարած այդ կեղծված վիճակից դուրս գանք, ոչ միայն պետական ծառայողները, այլ ամեն շարքային քաղաքացի պետք է հայտարարարի ու պարզ լինի իր եկամուտների ու ծախսերի ներդաշնակության համար: Խորհրդային համակարգը տոտալիտար էր, սեփական պետություն չունեինք, արգելված էր մասնավոր աշխատանքով վաստակելը, ապրում և աշխատում էինք մի հոգեբանությամբ, որ ինչքան թաքցնեինք, այնքան լավ, բայց հիմա այլ իրողություն է, պետական պաշտոնյաները, կազմակերպությունների ղեկավարները և իրենք, և իրենց աշխատակիցները պարտավոր պիտի լինեն անցնելու այս մտածելակերպին: Համատարած հայտարարագրումը պետք է վերջապես իրողություն դառնա, ինչպես զարգացած օտար երկրներում է: Պետք է չամաչել հարցնել մարդուն, թե որտեղից է իր եկամուտը, որ շքեղ ծախսեր է անում: Եթե վաստակածի և ծախսերի միջև ներդաշնակություն չկա, նշանակում է ինչ որ ապօրինության հետ գործ ունենք: Ի վերջո՝ հարկերը գնալով կրթություն, անվտանգություն, սոցիալական, առողջապահական ոլորտ, վերադառնում են հասարակություն: Եվ, միակողմանի պահանջներ դնելով, թե պետությունը, կառավարությունը պետք

է փոխվեն, բայց մենք չփոխվենք, սա էլ է երկակիություն, ինչից օր առաջ ազատվել է պետք՝ մտածելակերպի փոփոխությամբ:

Տնտեսական հեղափոխությանն աջակից ԻՆՉ անել գիտաժողովն ու գործարարության և գիտական մտքի այս կերպ մեկտեղումը մեր կողմից շարունակական է լինելու, նպատակ ունենալով աջակցել իշխանությանը ռազմավարական ծրագրերի առաջադրման ու քննարկման, ինչ և ինչպես անել-ի հնարավորինս ճիշտ մշակման հարցերում, բայց հեղափոխությունը հաստատուն շարունակական կլինի, եթե մենք ինքներս փոխվենք: Նոր հեղափոխությունը ոչ միայն քաղաքական ու տնտեսական է, այն սկսվել է մարդ անհատի մեջ տեղի ունեցած փոփոխությամբ, որը հայտարարեց իր անհանդուրժողականության, փոփոխությունների պահանջի, իր երկրում հարմարավետ և ստեղծագործաբար ապրելու վճռականության մասին: Դա այն մարդ անհատի հեղափոխությունն է, որը ցանկանում է ուրիշ լինել, ուստի՝ հեղափոխությունն ամեն մեկիս մեջ է սկսվում՝ ընտանիքի, անհատի, հասարակության: Մենք պետք է փոխվենք, ուրիշ ելք չկա: Մեր փոխվելով է պայմանավորված նաև հաջողության եռամիասնության մյուս երկուսի՝ քաղաքական ու տնտեսական բաղադրիչների հաջողությունը, ինչն, ի դեպ, հենց նոր աշխարհայացքի տեր մարդու իրականացնելիքն է:

ԻՆՉ ԱՆԵԼ 2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

գիտագործնական խորհրդաժողով

Խմբագիր՝ **Լուսյա Մեհրաբյան**

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Արփի Անտոնյան
Էջադրումը՝ Նարինե Հովհաննիսյանի
Կազմը՝ Վիտալի Ասրիևի

Ամտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

9 789939 763958

Հայաստանի արդյունաբերողների
և գործարարների միություն

Երևանի պետական համալսարան
Տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետ

Անդարես